Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

891.99
Լհ-81
01 JAN 2009
19 NOV 2010

ԱՏՐՊԵՏ

ՋԱՒԱՀԻՐ

ՎԷՊ

1877-8 Ռուս Թուրքական պատերազմի ականջներից

ԱՐԿԱԾՆԵՐ

ՀԱՅԱՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԹԱԻՐԻԶ

Առրպատականի Հայերի Թեմական տպագատիտ

Ցիշատակ վաղամեռիկ Եղիսաբէթ Միրզաբեգեանի

1904

21.02.2013

21154

Дозволено цензурою 9-ого октября 1891 года.
С. Петербургъ.

53916-66



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

„Ջաւահիը“ վէպս գրած, ցէնզօրից տպագրելու արտօնութիւնը ստացած և Մոսկւա Բարխուդարեանցի տպարանը յանձնած էի ժամանակին՝ 1891 թուականին, բայց դրամական վիճակիս սղութեան պատճառո՛ւ յոյս չը տեսաւ։ Մանաւանդ որ տպարա[illegible] այնպիսի գին էր առաջարկում, որ անհնար [illegible] համաձայնել, դրա համար մնաց մինչև օրս, [illegible] միջոցներիս կանոնաւորելը։ Ուստի բաժանող սերից ներողամտութիւն եմ խնդրում, վէպիս տպ[illegible]ւթեան այսքան ուշանալու համար, որոնք ազնւա[illegible]բար մինչև օրս լռեցին։

[illegible]
[illegible]
[illegible]

Ներկայիս մամուլին յանձնելով այս վէպս, իմ երկե-րի ժողովածուի շարքին, չուզեցի որևէ փոփոխութեան ենթարկել և նոյնիսկ ցենզորից արտօնուած օրինակը յանձնեցի տպարան։

ԱՏՐՊԵՏ.

"1" փետրուարի 1904 Թ.

Թաւրէզ

. . . /այց ով է ր.

էլ չէ գալու այ.

, մի Շէյխ-իբօ,

. ստուհաս էլ չէ

. էլ դժոխային

. . .

. . . րսափի մէջ,

Հարևան

. . . էր,

. . .

. . .

. . . ա-

. . . բօ-

ՋԱԽԱՆԻՐ

ՎԷՊ

1877-8 Ռուս-Թուրքական պատերազմի անցքերից

ԱՐԿԱԾՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԱՐԿԱԾՆԵՐ

Ա.

ՋՐԲԵՐ - ԿՈՅՍ

յարդ

Բայց դժբա . . .

նը, այն գերեզմա . . .

օգնութեան անսար, Աստծու սիրուն օգնութիւն. հա-գանք, գտան . . . համար . . . Արաքսի ձորում Տանձոտ ծացին իրեն . . . իւղից բաւձրանում էր զարհուրելի կրա-ւեցին, լա . . . տի դեզերն, որ գիւղացին յունիս և յու-լիս . . . աւնե . . . ւմ հազար ու մի տանջանքով հաւաքել, կերպ եզմականների ճանկից ազատել, պատրաստել էր . . . ւա իւր անասունների պաշարը, այն կենդանիների, . . . ք հաւասար անդամներ են գիւղական ընտանիքի, . . . սարապէս քաշում են լուծը ռանչպարի հետ, դա-. . . կերպով դատում են մշակի հետ, այրւում էին բու-. . . ր կայծերով և պէծերով, ոլոր ոլոր պայծառ բոցե-

լով և թանձր մխով բարձրանում դէպի բարձունքը, գուցէ բողոքելու ամենագէտին.... : Իրիկնապահին, արևը մայր մտնելուց յետոյ, հրդեհի սոսկալի ալ ու կանանչ երանգները շրջակայ գիւղացիների աչքերն էին գրաւում և ամեն կողմից մորմոքալով մռմնջում էին.

— Վայ Մեհրալի, տունդ քանդւի, վայ Օսմանլի, բրիշակ գառնայ բունդ, թախտդ, որ Մանսուրի ու Մհրալու նման շների ձեռքը սուր ու թւանք չը տաս ու աղքատ մշակի, տունն ու տեղը չը քանդես: Ծանձոտցիք „Գեաւուր“ են, նրանց որպէս կրօնի հակառակորդների տանջում էք, տանջեցէք, խեղճ անասուններն, եզներն ու կովերն, գոմէշներն ու մատակներն, ձիերն ու մատեաններն ինչ մեղք ունին, որ նրանց էլ Աստծու տւած ըռզդը վառում, փչացնում էք: Մխա ու ծխա Ծանձոտ, քու աւերակներդ մեր որդիքը մատով ցոյց պիտի տան իրար և պատմեն քու գլխից անցածները, որդւոցորդի..: Այդ ով է ը-մանում, էգուց կամ էլ օր մեր գլխին էլ չէ գալու այս փորձանքը, մի Մհրալի, մի Մանսուր մի Շէյխ-Իբօ, մի կրակ ու բոց, մի պատիժ ու պատուհաս էլ չէ գալու մեր գեղը և մեր բնների ծխերն դժոխային բոցերով չէ բարձրանալու դէպի վեր ....

Բոլոր շրջակայ գիւղացիք ահի և սոսկման մէջ, հեռուից բարձունքներից դիտում էին իրենց արևան գիւղի կործանումը, մորմոքում էին, սրտերը լցւում, բայց ինչ կարող էին անել .... ձեռքերումը սուր կար, ետևները կռնակ չը կար, ախ էին քաշում վշտերում տապակւում: Բայց Ծանձոտի ծուխը բարձրանում էր և աստիճան աստիճան սաստկանում նրա

ցերը: Հեռւից կրկնակի էին երևում կրակի շողքերն՝ իրական և անդրադարձած Արաքսի Զիւրիւք-Սու վտակի ջրերում. այն կենսատու ջրերում, որոնք ոռոգում են կենտրոնական Հայրենի աշխարհը....

Բայց միայն բոցերով չէր վերջանում սոսկալի տեսարանը, լսւում էր զարհուրելի աղաղակներ թշւառ մարդկանց, որոնք բոլոր ուժերով բոռում էին— „Հաւ՛ր հաւ՛ր, հաւ՛ր“....: Ու այդ եղկելի ձայներին յաջորդում էին կովերի բառաչոցը, ոչխարների մայոցը, այծերի կտկտոցը, մատեանների վշտահար խրխնջոցը.....: Այս բոլոր աղաղակները, այս բոլոր հառաչանքները խառնւած կրակի ճաթճթոցների հետ զարհուրելի և սրտահար համերգ էր կազմում, մի սոսկալի տեսարան, որից ոչ թէ մարդ խոյս է տալիս, այլ չէ էլ ցանկանում ականատեսների և ականջով լսողների նկարագրութիւնները լսել ....:

Բայց թշւառ ժողովուրդի ողորմելի ողբի ձայնը, այն գերեզմանական սոսկալի հաւարների աղաղակը, օգնութեան աղերսանքը՝ ապառաժներում միայն արձագանք, գտան բայց շրջաբնիկ հայերը հառաչեցին. կսկծացին իրենց դրացիների աւերածը տեսնելով, արտասւեցին, լացին, բայց ոչ ոք համարձակւեցաւ մի մահակ վեր առնել և դիմել թշւառներին օգնելու.....: Ուրիշ կերպ էլ չէր կարող անել, ապա թէ ոչ կը բորբոքէր „Մհրալիների“ սիրտը, որոնք սրերը կարող էին դարձնել նրանց գիւղի կողմը և իրենց էլ կը վիճակւէր թշւառ Ծանձոտցիների վիճակը: Բայց հետաքրքրութիւնը ազգակցական կամ արիւնակցական կապերը, գուցէ երիտասարդական վառ, աշխոյժ լինաւորութիւնը, կամ սիրային

յարաբերութիւնները, մի քանի երիտասարդների ոչ շատ համարձակ քայլերը ուղղեցին դէպի հրդեհւած գիւղի աւերակները, որոնք ոլոր մոլոր ուղիներով հասան հրդեհի տեղը։

Ի՞նչ գիւղ, ի՞նչ բնակութիւն՝ կրակների հեղեղ և այդ հեղեղի մէջ գիւղական խրճիթներն, որոնց տանիքների չորացած չամ փայտերն, մոխոտ գերանները, սներն ու կոնդերն այրւում էին և արդէն հողերում գտնւած հիւղերը հողի հետ հաւասարեցնում։ Մարդիկ, կենդանիները կոտրած, խառն-խուռն ցրւած ոմանք այրւում են, ուրիշները հոգու հետ խաղում և աղիողորմ ձայնով երկինք թնդացնում։ Չը կան ո՛չ գիւղացիքն, ո՛չ էլ նրանց կեղեքող գաճիճներն, ամենքը խոյս են տւել, գուցէ գնացել են հանգստանալու, ժողովուրդը յաւիտենական խաղաղութիւնով..., իսկ աւազակները կազդուրւելու, հետևեալ օրը նորանոր աւերածներ կատարելու և նոր ուժերով զինւելու անզէն, անպաշտպան շինականից վրէժ լուծելու համար։ —Ինչո՞ւ, - որովհետև նա «Գեաւուր» է, — ինչո՞ւ, — որովհետև նրա կրօնակից Ռուսի սուրը կտրում է և վանում մօլի մահմեդականութեան դրօշը ամէն կողմից — ինչո՞ւ — որովհետև նրա եղբայններն ու արիւնակիցները Ռուսի բանակների գլուխներն անցած՝ արձակ համարձակ մտնում են բերդերն ու աւանները։ Արդահանը ընկել է, Ղարսն էլ ընկնելու մօտ է, թշնամու գնդերն հասնում են հա՛, հա՛ն Արզրումի դռները։

Հեռուից, ձորի խորքերից լսւում է մի խուլ աղաղակ, սրտաճմլիկ վայնասուն։ Ի՞նչ է կատարւում այնտեղ, գուցէ օգնութեան են կանչում, երկնքում

հրեշտակներն են խլացել՝ չեն հասնում, աշխարհի վրայ մարդիկ քարացել՝ չեն շարժւում, դժոխքի դևերն էլ ծնծաղները ձեռին ծափ են տալիս, հրւճում. պարում ու մի տեսակ պտոյտներ կատարում իրենց արբանեակների սխրագործութիւնները տեսնելով։ Ձայնը զարհուրելի է, ձայնը ահարեկ է, ձայնը որոտագին է, բայց չի կակղացնում ո՛չ ապառաժների սրտերը, ո՛չ ալիքներն ու կոհակները, ո՛չ անտառի ծառերն ու կոճղները։ Նրանից խոյս են տալիս վայրի գազաներն ու անասունները, թագնւում մարդիկ և թոյլ են տալիս, որ գազանաբարոյ աւազակը կատարէ իւր անգութ արարքները...։ Ահա թէ ինչ էր կատարւում Արաքսի ձորում, Նրասխի ափերի մօտ, մի ահաւոր ժայռի կողքին։ Թշւառ Արա՛զ, եթէ ջրերդ խաղաղ լինէր, եթէ յատակիդ վրայ դրոշմւէր այն բոլոր եղեռնագործութիւններն, որոնք կատարւել են քու ափերում, եթէ սուր աչքերն կարողանային դիտել այն բոլորն, որոնք դու պարտկել ես պղտոր ջրերումդ, ո՜հ որքան եղկելի կը լինէր քու վիճակը......։

Հա՛.... Ցանձոտցի Գալօ-քէհան, այն պատկառելի տանուտէրը, այն համեստ կառավարիչը բռնած իւր աղջկայ՝ Գոհարի ձեռը վազում էր, ցուպը ձեռքին առաջ գնում Արաքսի ոլոր մոլոր ափերով։ Նա իւր տկարացած աչքերը ամենայն ուժով բաց էր անում, դիտում և անընդհատ սիրտ տալով իւր աղջկան առաջ էր գնում։ — Մի՛ վախիր, Գոհարիկս, եսքեզ չեմ յանձնիլ այն աւազակներին, կը մեռնեմ և չեմ բաժանւիլ քեզանից, առա՛ջ, առա՛ջ. քիչ էլ որ երթանք, նրանք կը կորցնեն մեր հետքը և մենք բոլորովին ազատւած

կը լինինք ...։ Մի վախիլ, հոգիս, գնանք, գնանք։

— Ափար ջան, դու գիտես, որ աղջիկդ վախկոտ չէ, դու որ ինձ հետ ես, ինձ բան պակաս չէ, գնանք ես քու աղջիկդ եմ, ես էլ սրտիցդ ունիմ, մի, մի վախիլ, ես իմ պատիւս պաշտպանել գիտեմ, ես չեմ թո՛ղլ տալ, որ քու զառամած ճակատդ մի օր կարմրի, շտապի՛ր, սիրտ ա՛ռ, գնանք, գնանք ....։

Հայր և դուստր շտապ-շտապ գնում էին, առանց ուշք դարձնելու ճրներին ու ծնկներին դիպչող քարերին, ոտքերը կտրատող խեցիներին ու խիճերին, սրունքները ճանգռտող փշերին ու թփերին, գնում էին, վազում էին, առանց գիտենալու, թէ ուր ...։ Գալօն չը նայելով աշնանային զով եղանակին վրան ոչ մի ծանր շոր չունէը, նա իւր պաշտօնական աբան ճանապարհին մի կողմը գցել էր անզգայաբար, նրա մերկ ոտքերը ամուր պատել էին սև եչմէնիները, կարճ շալւարը չէր ծածկում մասամբ սրունքները, սև շալի գոտին մէջքին ամուր պատած էր կաշի կամարով, որի մէջ սովորաբար պահում էր Ղարսում շինել տւած սուր դանակը, գեղին շալ իշլուկի վրայ հագած էր մուխի կապոյտ զգեստը, որը գոտուց ցած չէր իջնում։ Նրա սպիտակ մօրուքը մթնումը ծածանում և կարծես մի տեսակ շողք էր արձակում, իսկ գլխի թաղիքի գտակի վրայ փաթաթած էր սև բուրթայ (մետաքս) աղլուխը։ Գալօ քէհան աջ ձեռքը դրած իւր աղջկայ Գոհարի ուսին, ձախ ձեռքով մահակը ման էր ածում և առաջ գնում։ Թշւառ Գոհարը, կորցրած իւր երեք կտրիճ եղբայրները, բաժանուած հարսներից և սիրասուն եղբօր որդկերանցից, հեռացած հայրենի օճախից և անբաւ բարիքներից,

զառամեալ հօրը ձեռքը բռնած գնում էր, մերկ ամեն զարդից ու զարդարանքներից, հերարձակ գնում էր, գնում էր դէպի անյայտութիւնը։ Նրա գլուխը բաց էր, կուրծք և թևերը մերկ, մի կապայ ունէը հագին և մի ծիրանեգոյն շալ գոգնոց կապած, բոլլիկ ոտքերով առաջ էր շարժւում։ Բայց ուր էին գնում երկուսները, միթէ չէին նկատում առաջների ապառաժը և ահաւոր անդունդը ....։ Ծերուկը երբեմն ոգեւորւած կրկնում էր,

—Գոհա՛ր, սիրտ առ, Գոհար ջան, վազի՛ր, Գոհարս, մի թուլանար, այստեղ դու ապացուցիր քու քաջութիւնը, ցոյց տուր, որ նամուսով հօր պատւաւոր աղջիկն ես։

— Գնանք հայրիկ, աղջկանդ դու լաւ ես ճանաչում, մահը ինձ համար հազար անգամ անպատուութիւնից նախապատիւ է. գնանք, գնանք, գալիս են, նրանց ձիերի ոտնաձայն եմ լսում, նրանց զէնքերի խշխշոցն է գալիս ....։

— Գնա՛նք, մի վախիլ, մեզ չեն հասնիլ ....։

— Գեաւո՛ւր, գոռաց մի որոտագին ձայն, քեաֆիրը (հայոյող) սպասիր, թէ ոչ այս րոպէիս կտոր կտոր գետդ ձկներին կերակուր կը թափեմ։ Կա՛ց, կացէ՛ք .... և բո՛ւնդ... որոտաց մարտինի հրացանից գնդակ, որը բարձրացաւ դէպի ապառաժի բարձունքը։

—Մի՛ դողդողար հոգիս, մի յուսահատիր, Գոհա՛ր, քիչ էլ, մենք ազատւած ենք, ապառաժից ո՛չ նրանք, ո՛չ էլ նրանց ձիերը կարող են անցնել ....

Հայր ու աղջիկ իրար խրախոյս տալով, առանց ուշադրութիւն դարձնելու իրենց հալածող ձիաւորների

գոչիւններին, ցատկրտելով ու սահելով անցնում էին ժայռերից, շտապում էին առաջ առաջ: Հրացանի երկրորդ հարւածն էլ մօտից արձակեցին, այնպէս որ արիւնարբու աւազակների ձայները պարզ կերպով հասնում էին խոյստուղների ականջներին և տագնապեցնում նրանց վշտահար ոգիները:

— Մերզա՛, ասաց մի խրոխտ ձայն, ոտքերդ մանր են և դու աւելի վարժ աչքի նման մագլելու այս քարքարոտներում: Ձին տուր Չմրահին, դու առաջ անցիր և շնորհդ ցոյց տուր:

Ծերուկը այս ձայնից սարսեցաւ ողջ մարմնով և դողդողալուն ձեռքից մի տեսակ մագնիսական զօրութեամբ այդ սարսափելի ցնցումը անցաւ Յոհարի ուսից նորա երակների մէջ: Երկու սրտեր միաժամանակ միևնոյն աստիճանով բաբախում էին, այն տարբերութեամբ որ ծերունու նուազ տաք ու թանձր արիւնը աւելի մեղմ էր հատարում իր շրջանը, քան թէ լեռնական օրիորդի սրտի ու թոքերի միջի արագընթաց հոսող հեղուկը: Մերզայի մօտենալը թէև զգում էին հայր ու աղջիկ, բայց յուսահատական վերջին ճիգը հաւաքած մի վարկեան անգամ չէին ուզում կորցնել, չրի ընթացքի հետ առաջ էին մղում:

— Այսաեղ են, այս կողմից են փախչում, գոռաց Մերզան, ահա հիմի կը բռնեմ, էլ առաջ գնալու ճար ու ճանապարհ չունին.

— Մերզա՛, քեզ մատաղ, վազի՛ր, ահա գալիս եմ: Չմրահ, իմ ձիուս սանձն էլ բռնի՛ր.

— Ազա՛ չան, անհոգ կաց, Ֆարաշը (ձիու անունն է) արաբական ընտիր տեսակից է և իր տիրոջ արարմունքը

նա հասկանում է և հաւատարիմդ տեղիցը չի շարժւիլ, մինչև որ այդ հայ աղջկան չը բռնես և չը բեռնաւորես նրա քամակը:

Ազան առանց լսելու Չմրահի խօսքերը, վրազում էր օգնութեան հասնելու Մերզային և ձեռք ձգելու Յանձոտցի գեղեցկուհուն: Հալածւածներն հալածողներից քան քալլ հեռու էին, բայց էլ առաջ գնալու կամ վեր բարձրանալու հնարք չկար, ետևից էլ հետամտում էին....: Դրութիւնը սարսափելի էր....: Արշալոյսը մօտեցել էր և գիշերային աղջամուղջը, խաւարը նոր նոր հեռանում էր: Արաքսը սարսափելի կատաղած ափի ապառաժներին խփւելով, ահեղ գոչիւններով մռնչում և աղմկելով հեռանում էր իր փոշիանման փրփուրոտ ալիքներով: Ծկար լոյսի մէջ երևում էր գեղանի օրիօրդի դիցավայել կազմւածքը, չինարի հասակը, բարձրը վիզը, լայն կուրծքը և բարակ մէջքը: Երկայն սև մազերը արևագալին փչած մեղմիկ զեփիւռը ծածանում էր, լայն ճակատը անմեղութեան դրօշմով պսպղում, թաւ ու թաւիլի նման կեր ունքերը բոլորում էին մեծ մեծ գինեղան աչքերը. երկայն թերթևիչքները անընդհատ բացւում ու խփւում, մարգարտափայլ քրտինքի հատիկները բոլորել էին նրա ճակատն ու քունքերն և արագ արագ շնչառութիւնով կարծես նրա բորբոքւած թոքերից բարձրանում էր խանձւածքի գազերը....: Ծուսահատական վարկեանը հասել էր: Ապառաժի գլխից հայր ու աղջիկ աչքերը չրջում էին չորս բոլորները և երբեմն երբեմն բարձրացնում երկնքի կողմը: Երկուսն էլ խոյս էին տալիս իրար աչքերը տեսնելուց, իրար դէմքի գծերը քնելուց, իրար վշտե-

րի արտայատուԹիւնները կարդալուց իրար երեսից, որպէսզի էլ չը սոսկացնէին իրենց ներքին տառապանքները։ Բայց ժամանակը շատ սուղ, գառն էր կացուԹիւնը։ Թէև դանդաղուԹիւնով, բայց աստիճան աստիճան լոյսը սաստկանում էր և տեսնող աչքերի առաջ պարզում զարհուրելի տեսարանը։ Գոհարը երկինքն ու ջուրը մի ակնԹարԹով համեմատելուց յետոյ, մերկ Թևերը տարածեց զառամեալ հօր վզովն և կանչեց ողբագին ձայնով։

—Ափար ջան, ազատիր ինձ, փրկիր ինձ,ահա եկաւ, նա է, Միհրալին է և յուսահատ գլուխը սեղմում հօրը սպիտակած երկար մօրուսի վրայ։ Թշւառ աղջիկը խելագարւածի նման շարժում էր գլուխը և պինդ փակցնում հօրը մերկ, մազոտ կուրծքին, որը տառապեալ աղջկայ ամէն շարժումի պահին՝ կարծես սրտի վրայ Թունաւոր Թրի խոր վէրքեր էր ստանում ու մաղկտում էր։ Ծերուկը արտասուքի խոշոր կաԹիլներն աչքերում երկինք էր նայում և կոշտացած շրԹունքներից ջերմ համբոյրներ դրոշմում դստեր մազերի վրայ։

—Ազատիր ինձ, մի յանձնիլ ինձ էդ գազանի ձեռքն, ափար ջան, կրկնում էր Գոհարը և սոսկումից ձայնը կտրւում, էլ կոկորդից չէր բարձրանում, ակռաները սեղմւում էին և շրԹունքները իրար կպչւում։

—Քեաֆիր, գեաւուր, այսքան էլ իսլամին չարչրել, ողջ գիշերը ես քու եաևիցդ եմ ման եկել, ձիերս ջարդել, ցրտից արիւնս է քամել....։

—Ափար ջան, մի տալ ինձ էդ անօրէնին, ափար, սպանիր ինձ, մորԹիր ինձ, չեմ ուզում,

ապրել էդ շան ճանկերում... էդ գազանի գրկում։

—Մի վախենալ, մի, քու մի մազին քամին անգամ դիպչելու չէ, գոռաց Միհրալին....։

—Ափար եկաւ, ափար շուտ արա ինձ....

—Արագ, ահա քեզ եմ տալիս, անարատ և կոյս, ասաց յուսահատ Գալօն և ապառաժից գցեց գետը ծերունին իբրև սիրուն աղջիկը։ Շատ բարձր չէր նրանց կանգնած տեղը և կատաղի ալիքները չուշացան գետի հոսանքի միջով տանելու իրենց ֆանկագին զոհը...

Կատաղեց Միհրալին, այն արիւնարբու վագրի նման, որ ձագերը ոչնչացողին է պատահում որսի պահին, մԹնեց նրա աչքերը, մռայլեց նրա սև ու գժոխալի դէմքը և գազանի նման յարձակւեցաւ ծերունու վրայ, դաշոյնի հարւածներով կտրատեց նրան։ Գալօյի արիւնը չը զովացրեց գազանաբարոյ աւազակի սիրտը, նրան փշրելով չը խաղաղեց Միհրալու ոգին, նա այնքան ժամանակ հետևել և իր գիւական վավաշոտ կրքերը գոհացնելու համար ողջ գիւղը այրել, քանդել, աւրել գիւղացիներին կտրատել և ցրւել էր անտառները, որպէսզի մի կերպով ձեռք անցնէ Գոհարին և հենց արդէն իր գրկում կարծած բոպէին, նորան ընդ միշտ կորցնելիս, կարելի է գուշակել, Թէ ինչ սոսկալի տագնապում էր գազանը։

Գոհարը գետն ընկնելու պէս իջաւ մինչև յատակը, ջուրը սաստիկ ցուրտ էր, բայց նրա բորբոքւած իրանը

չէր զգում այդ սառնութիւնը։ Գետի հոսանքը այդ ապառաժին դիպչելով ծուռում էր, ոլորւում։ Այդ պտոյտի մէջ մի քանի անգամ ոլորւելուց յետոյ, գետի յատկով յիսուն քայլի չափ առաջ գնաց Գոհարը նրա հոսանքով։ Սկզբնական անզգայութիւնը նորանից հեռացած էր արդէն, նա ոտիւնով ելաւ ջրի երեսը և առաջ էր գնում Արաքսի մէջտեղով, ալիքների միջով։ Բայց մեռնելը հեշտ չէ, հոգի տալը սոսկալի ..... ։ Մահը տեսնողը սոսկում է մահից և կեանքը քաղցրանում է չափազանց այդ զարհուրելի րոպէում ..... ։ Գոհարն ուզում էր ապրել, Գոհարը չէր ուզում մի այգպիսի վախճանով վերջ տալ իւր կեանքին։ Նամանաւանդ Գոհարը պատճառներ ունէր ապրելու, Գոհարը իւր կեանքը զոհել էր իւր սիրածին և նրան կեանք տալու համար հարկաւոր էր, որ ինքը ապրի, նրան բաղդաւորեցնելու, նրա հետ բաղդաւորւելու համար՝ կեանքն էր հարկաւոր, պէտք էր ապրել և վայելել այն սէրն, այն երջանկութիւնը, այն բաղդաւորութիւնը, ինչ որ երազել էին իրենց սիրող սրտերը։ Բայց սոսկում էր. Մհերլալի դաժան պատկերը իւր աչքի առաջն էր, վախը սրտումը։ Ալիքների միջից նա իւր գլուխը զգուշութեամբ եւս էր դարձնում և ապառաժների մէջ որոնում իւր հալածողին։ Բայց Արաքսի արագնթաց ջրերը, կոհակներն ու ալիքները, նրան հեռացնում էին զարհուրելի վայրից և նոյնանման ժայռերը խափխփում նրա խառնաշփոթ աչքերը։ Գնում էր ջրերի հետ երբեմն գետի երեսով, երբեմն ջրերի միջով և Արաքսը առաջ տանում նորան դէպի անծանօթ վայրերը։ Գնում էր Գոհարը ալիքների հետ, զարկւում էր աջ ու ձախ

առաջ տանում նորան դէպի անծանօթ վայրերը։ Գնում էր Գոհարը ալիքների հետ, զարկւում էր աջ ու ձախ, բայց ջուրը ծիծաղում էր իւր գոհին և մի տաշեղի կտորի նման խաղցնում նորան այս ու այն կողմը։

Գոհարը զգում էր, որ երբեմն ջուր էր կուլ գնում բերանը, թևերը ծանրացել և դժւար էին շարժւում, ոտքերը բոլորովին թմրւացել էին, նա իւր վերջնական ճիգը թափեց, որ ափը դուրս գայ, նա ոտքերով, գլխով, ողջ մարմնով զանազան ոստիւններ, շարժումներ արաւ մօտենալու ափին և բաւական մօտեցաւ, բայց յանկարծ մի հոսանք նորան քշեց տարաւ էլի գետի մէջտեղը և ալիքներն տատանելով մղում էին առաջ առաջ։ Նա աչքերը չորս կողմը պտտցնելով օգնութիւն էր որնում, բայց առաւօտեան վաղ ժամին, ով կարող էր լինել այդ վայրերում.... ։ Անձնատուր եղած ալիքներին նա գնում էր առաջ յուսահատ, երբեմն երբեմն աչքերը չորս կողմը մանածելով։ Անընդհատ ջուրը կուլ էր գնում նրա բերանից և նրա մէջ այնքան ուժ չէր մնացել, որ կարողանար շրթունքները սեղմել և արգիլել..... ։ Ծրբ բոլորովին ընկճւած անզգայացած առաջ էր գնում, յանկարծ մի խում մարդիկ երևեցան գետի ափում իրենց ձիերով կանգնած, սպասելիս, որ իրենց առաջնորդը նամազը վերջացնէ.... ։ Քրդեր էին դրանք, վայրենիներ, Մհերլալու նման գազաններ. իրենց զէնքերով, զրահներով, տէգերով, և վահաններով, թւանքներով, ու գաբաննջաներով, սրերովն ու զամաներովը զրահաւորւած, այնքան սոսկալի Գոհարի համար, որքան Մհերլալին և ընկերները բայց կեանքը, ապրելը այնքան ցանկալի էր, որ

ՏՅ 39/16-66
Государственная ордена Ленина Библиотека СССР им. В. И. Ленина Отдел книгохранения

էր անզգայացած դրութեան մէջ անգամ ճիգ թափեց. թեւերը շարժեց, գլուխն ոլորեց և մի տեսակ խեղդուած ձայն հանեց, այնպէս որ ըս-թափւեցան ձիաւորները և ամենքը աչքերը դարձրին նորա կողմը։

— Կօրօնէր, գոռաց աղօթող քուրդը, որ վերջա-ցրել էր նամազը, հաւար է կանչում, հասէք օգնեցէք, ազատեցէք դրան։ Հա՛, տղերքս, հասէք…։ Ձիաւորնե-րը սիրտ առին և մտան Արտաքսը ու դուրս հանեցին Գօ-հարի անշնչացած դիակը։

Բ

ԿԻՍԱՄԵՌ ԿՈՅՍ.

— Տղե՛րք, ասաց քրդերի իշխանաւորը, խլամ է փլահ, (հայ)․

— Բէգ, ասաց նրանցից մինը, այնպէս սպիտակ, այնքան գեղանի խլամ չի լինի, անպատճառ փլահ է։ Բայց ափսոս, դժւար թէ ապրի….։

— Խէ՛ր խօսիր, նա նւաղած է, ասաց մի ուրիշը, կախենք ոտքերիցը, կուլ տւած ջրերը քամւի, կառողջա-նայ։

— Հա՛ ձեզ տեսնեմ, Հասօ, Փրթօ, հա՛ տղերքս, ազատեցէք այդ աղջկան։

— Վալլահա՛, Բէգօ-բէգ․ ասաց ձիաւորներից մինը, ես կեանքումս այսպէս գեղեցիկ տեսել չեմ։ Գիւլ-Փէրի խանումից սիրուն է….։

— Աահա՛, Գիւլ-Փէրիի նման ողջ աշխարհում չը կայ…….։

— Չէ, Բէգօ-բէգ, լաւ աշէ, տես ի՛նչ աչքեր ունի, ի՛նչ ունքեր ունի. տեղն ու տեղն հուրի է, մէլայիք է (հրեշտակ)։

— Փահա՛ւ, բան ասիր, Գիւլ-փէրին մի հատ է, էգ կապուտկածն ի՛նչ է…..։

— Սպասիր ջուրը քամւի, ուշքի գայ ու կտեսնես։

Նախ ուլին ոտքերից Գօհարին, որի բերանից բաւական ջուր գնաց։ Յետոյ մի աբա փռեցին պառկե-ցրին և սկսեցին սղմրտել, որ ուշքի գայ։ Արեւը նոր բարձրացաւ հորիզօնից և իւր ոչ տաք ճառագայթները սփռեց ամեն կողմ։ Բէգօ-բէգը ման էր գալիս և զգուշութեամբ դիտում ջրից ազատուած աղջկան։ Նա հագած էր կապոյտ չէրքէզկի, կուրծքին շարած արծաթ փանփուշտկալներ, ուսերին դրած սպայական ուսնոց-ներ և կուրծքը զարդարած ասպետական շքանշաններով, գլուխը քրդական «քեչաքիւլահը,» վրան փաթաթած գոյնուզգոյն աղլուխներ բամբակից և մետաքսից։ Մին-չև ծնկները հագած էր ուղտի կօշիկներ, որոնց կռն-կի վրայ անցկացրել էր տաճկական հեծելազօրքերի կօշտ խթանները։ Կուրծքից երևում էր կարմիր գոլե-րով Հալաբի մանուսայ արխալուխը և ժամացոյցի ոսկի շղթան։ Ամենքը զգուշութեամբ հետևում էին նրա քայլերին, հպատակութեամբ լսում ու ամիջապէս կատարում նրա հրամանները։ Նա իւր համայնքի բէգ

էր, իշխանն էր, անսահման տէրը, պետն էր և կառավարիչը։ Ողջ համայնքի մէջ ոչ ոք չէր հանդգնել նրան հակառակ վարուելու, կամ նրա հրամանը չիրագործելու։

Պատերազմից առաջ նա Ղարսի փաշալի խնդիրքով իւր էլլիգից հաւաքել էր երեք հարիւր ձիաւոր և նրանց գլուխը անցած պատերազմել էր թշնամու դէմ, բայց երկու երեք ամիս չանցած, երբ Ռուսների զօրքը արդէն տիրապետել էր Ղարսի նահանգի մեծագոյն մասը, խորամանկ քուրդը իւր ձիաւորներով մտել էր Ռուսաց ծառայութեան մէջ, անմիջապէս ստացել Միլիցիալի Գնդապետի աստիճան, տարեկան երեք հազար րուբլի պէնսիա, զանազան պարգևներ և ամբողջ պատերազմի ժամանակ գանձից ձիաւորների համար ամսական իննսունական րուբլի փող, որից մի երրորդը նրանց էր հասցրել, մնացեալով ուռցրել էր գրպանները։ Բաւական չէր նրա պատերազմի մէջ կատարածները, նա նշանակուել էր խառնաշփոթ շրջանում Թախթի գիւղերի վերատեսուչ, որոնց կառավարում էր բացարձակ իշխանութիւնով։

Բէգօ բէգը մի քառասուն հինգ տարեկան բարձրահասակ մարդ էր, տապ արևը և բքալի հողմերը նրա գոյնը բոլորովին թխպացրել էին։ Թաւ պեխերի մէջ թէև սպիտակ մազեր երևում էին, բայց նա հինայով նրանց ներկելու և սևցնելու հնարքը գիտէր։ Դէմքի գծերը ժամանակից շատ վաղ զանազան խորշոմներով տարածուել էին ճակատի, թշերի և քթի վրայ։ Ունքերը երկարել էին չափից դուրս, որոնց դէպի վեր էր ոլորում։ Իրեն ձևացնում էր կրօնամօլ,

կատարում էր օրական հինգ անգամ Մահմէտի սահմանած աղօթքները, առանց մի բան անգամ հասկանալու, բացի „Ալահից“։ Մարմնով այնքան հաստ չէր, բայց արգէն կորցրել էր ցեղին յատուկ ճկուն և աշխոյժ բնաւորութիւնը։ Թուրք փաշաներից և իշխանաւորներից ընդօրինակել էր ծանր շարժումները, իբրև արեւելքի քաղաքավարական ձևեր և դրանով բոլորովին դանդաղկոտուել էր։ Բէգօ բէգը ծանրութեամբ շրջում էր Գոհարի չորս կողմը, հանդարտութեամբ քննում էր նորա դէմքի գծերն և մարմնի կազմուածքը։ Նա հակառակ իւր համոզմունքի խոստովանում էր ինքնիրեն որ Ջրից ազատուած աղջիկը, Գիւլ Փերի խանումից անչափ գեղեցիկ էր։ Նա ինքնիրեն ասում էր. — Այսքան սպիտակ, այսքան քնքուշ ու նազենի, գեռ ուշքի չեկած այսքան չքնաղ, հապա եթէ կազդուրւի, արեգակի շողքեր պիտի գոյ չորս կողմը։ — Այս մտքերով նա տատանւում էր, և խնդրում, որ մի կերպ ուշքի բերեն Ջրից ազատուածին։ Բայց Գոհարը տարածուած էր անշնչացած, ոչ ձայն, ոչ ծպտուն, ոչ շարժում, մինչև մի թոյլ շնչառութիւն ունէր, սատկիկ թոյլ, չը նկատելու չափ։

— Շէյխ, ասաց Բէգօ-բէգը, դու ոգիների գիտութիւնից հասկանում ես, դէհ, տեսնեմ քեզ, իմացիր ինչ է սրա ցաւը, աղօթիր, հրամայիր, ինչ ուզում ես սրա, միայն ապրեցրէ...

— Բէգ, այդ բանը Ալահի ձեռքումն է, նա է որոշում, նրա Ազրաէլն է գալիս ժամանակին մարգու հոգին տանելու։ Բայց իմ գիտութիւնով ես միայն կարող եմ իմացնել քեզ, որ անհոգ լինես, ապրելը

կապրի, նա շուտով կը շնչէ կանոնաւորապէս։

— Շէյխօ, այս տարի բաղտը դարձել է կողմս, Ալլահի հրեշտակի մատը գործերիս մէջն է, յաջողութիւններն իրար ետևից են գալիս և չափը չը կայ։ Այս աղջիկը նոյնպէս մի նուէր է, երկնքից ինձի ուղարկուած մի նոր պարգև է, նա պիտի ապրի և հարէմիս զարդը պիտի կազմէ։ Զգուշացիր չը լինի, որ դառնայ իմ բաղտի անիւը, ապա թէ ոչ, էլ առաջն առնելն անկարելի կը դառնայ։

— Անհոգ կաց, եթէ մի վնաս պատահի ջրի բերածին, կարող ես վիզս կտրել. ես գլխով երաշխաւորում եմ նորա կեանքը։

— Տղերք, ասաց բէգը, ձիերը պատրաստեցէք, գնանք, ժամանակն է ճանապարհ ընկնելու։

— Բայց այս թշուառին ինչպէս տանենք, ասաց Շէյխօն։

— Օսման բէգի Գոմիքը մօտ է, ես այսօր և գիշերս այնտեղ եմ մնալու, իսկ մինչև վաղ առաւօտ յոյս կայ, որ ուշքի գայ։ Այն ժամանակ ձին կը նստեցնենք և կերթանք։

— Բայց բանը մինչև Գոմիկ հասնելն է,

— Տղերքը շալկով պիտի տանեն մեր առաջից.

— Այդ կարելի է։

— Հասօ, ասաց բէգը, նախ հերթը քոն է։

Գոհարին, բարձին Հասօի շալակը նախապէս մանիշակագոյն բէհեզից մի մեծ ծածկոցի մէջ պատելով նորա մարմինը։ Փոփոխակի չորս երիտասարդներ իրենց շալակով տարին երկնային պարգևը, ջրբեր դիցուհին, և բեռի ծանրութիւնը բոլորովին անզգալի էր լեռնա-

կան բեռնակիրներին։ Երկու ժամ յետոյ ձիաւորների խումբը տասը վերստի չափ ճանապարհ կտրելով հասաւ, մտաւ Օսման-բէգի Գոմիկը (ամառանոցը)։ Ուսանները վաղուց մտել էին Կաղզման, այնպէս որ Օսման բէգի նման մի կրօնամոլ թուրքին շատ անախորժ էր Կաղզմանում ապրել և ամէն օր պատահել օղլատների ու կոզակների, նամանաւանդ միլիցի հայերի կամ շինի զարափափաղներին, այդ պատճառով չը նայելով եղանակին, ժամանակին, հոկտեմբերի սկզբներին, նա դեռ չէր վերադարձել Կաղզման, միտք էլ չունէր գնալու և տարաբախտաբար ձմեռելու էր իւր ընտանիքով այդ ամայի ամառանոցում։

Օսման-բէգը, որի ծագումը նոյնպէս քրդական էր, մեծ ընդունելութիւն արաւ իւր ցեղակցին։ Թէև շատ հաճելի չէր տեսնել իւր ազգակցին գնդապետի ուսնոցներով և ոսպետական զարդերով, բայց այն հանգամանքներումն էր գտնւում Օսմանեան երկիրը, որ Սուլթանն անգամ համաձայնում էր կուրծքն ու վիզը զարդարել եւրոպական պատուանիշներով, հակառակ իւր կղերական սխեմին։ Առանձին սենեակ յատկացրեց կանանոցում Գոհարի համար, որտեղ Օսման բէգի կիներն ու աղջիկներն անչափ խնամք սկսեցին տանել Թշուառ ջրբեր օրիորդին։ Բէգօ բէգի մարդիկն և ձիերը տեղաւորեցին Օսման բէգի տան մէջ։ Թէև չափազանց մեծարեցին, ամեն կերպով յարգանքներ տուին, Օսման բէգը թուրքական և պարսկական խորամանկ և խաբեբա ամեն տեսակ «պօլիտիկաներն» արաւ, բայց չէր հանդարտւում բէգի սիրտը, նա տանջւում էր Գոհարի հոգսերով և նրա դրութիւնով։ Անընդհատ Օսման բէ-

գէ փոքը աղջիկը՝ Զէյնան գնում-գալիս և տեղեկութիւն էր բերում ջրբերի մասին: Բէգօ բէգի երևակայութիւնը, ուշքը, միտքը, խելքը Դոհարի հետ էր, նորա համար էր խորհում, իրա բռնելիք ընթացքի և նորա ապագալի մասին մտածում:

Շէյխօն, որ անբաժան ընկերն էր Բէգօ բէգի, նրանից միայն մի բարձով յած էր միշտ նստում ամէն յարկում ու յարկինքում, իւր շողոքորդ գուշակութիւններով և կարծիքներով հանգստացնում էր իշխանաւորի սիրտը: Նա իւր ասածները հաւատացնում էր, որ արտագրում էր աստղերի ընթացքից և ոգեկան ազդեցութիւններից: Իսկ Շէյխօի ասածներին մեծ հաւատ էին ընծայում բէգը, նրա էլիքը (համայնքը):

— Շէյխօ, ասաց բեգը, ինչ է ջրբերի անունը

Շէյխօն քիչ կանգ առաւ, դիտեց երկինքը, խփեց աչքերը, յորանչեց, հազաց մրմնջաց և ասաց.

— Նորապէս գէղեցիկը „Ջուհար-Փէրի“ կարող է լինել:

— Նա մէկ „Ջուհար“ (Դոհար) չէ, նա, „Ջաւահիր“ (գոհարներ) փէրի է:

— Ջուհար, „Ջաւահիր“ մի խօսք է, թո՛ղ էր լինի „Ջուհար“, լինի „Ջաւահիր“, ասաց Շէյխօն:

— Նորա անունը Ջաւահիր - փէրի է, թէ Դիւլ Փէրին իմ կանանց իշխանուհին է, Ջաւահիր փէրին բոլորի թագուհին կը լինի:

Օսման բէգը եօթանասուն տարեկան ծերուկ էր, ողջ մարմնով դողդողում էր, երբ նկատում էր, որ էլ ծերացել էր, սպիտակել էին իւր մազերը և թուլացել անդամները: Ա՜խ ասում էր նա ինքն իրեն, թէ

մի տասը տարով կարողանայի ետ գնալ և ստանալ նախկին ուժերս, մի հրեշտականման գեղեցկուհի էլ ես կը բերէի հարէմս.....: Բայց շատ, շա՜տ շուտ անցան երիտասարդութեան օրերս....: Այս ասողը մի տասնեակից աւել կնիկ էր պատւացրել իւր կանանոցում անթիւ տանջանքներով..:

Կէս գիշեր էր: Պատից դուրս եկած քարի ճրագակալի վրայ աղաւնաձև չինի կանդեղի մէջ այրւում էր հաստ պատրոյգով ձիթի (կտաւատի իւղ) ճրագը: Լոյսը աղօտ էր, լաւ չէր որոշում սենեակի առարկաները: Ճրագի վատ հոտը և մրոտ ծուխը անընդհատ բարձրանում էր, տարածւում սենեակի օդի մէջ և մրի փոշին աննկատելի կերպով նստում բոլոր առարկաների վրա: Սենեակի առաստաղը կամարաձև տաշւած և յղկւած գերաններից էր կազմւած: Մեկ լուսամուտը առաստաղից էր, որը ցրտի պատճառով մի սալ քարով ծածկում էին գիշերը: Օդը սենեակի, ինչ ասել կուզի, որ սաստիկ ապականւած էր: Պատերը թէև սպիտակ գաջով ծեփած էր, բայց տարիների ընթացքում մրոտւել ու սևացել էր: Պատերի մէջ գաճի քանդակաւոր շրջանակներում զետեղւած էր երկու հայելի, որոնց մէջից անդրադառնում էր ճրագի լոյսը: Օջախում վառւում էր առանց բոցերի աթարը ու ծխում՝ զազրալի բուրմունք սփռելով սենեակի մէջ:

Սենեակը հակառակ հասարակ բնակարանների տախտակած էր և օջախի երկու կողմերում սենեակի երկարութեամբ կապած էր սէադիր (թախթ): Սէադիրների վրայ փռւած էր սպիտակ ձիւնի նման թաղիքներ և նրանց վրայ խալոտ քրդական օդոցներ, գունզգոյն ծաղիկներով: Իսկ սենեակի մէջ մի շագանակագոյն մեծ թաղիք էր տարածած, որը կարծես սենեակի չափովն էր կազմել տրւած: Աջակողմեան սէադերի վրայ տարածած էր ճոխ և փափուկ անկողին: Բմբուլ դոշակի երեսը իրանի կարմիր ղանաւուզից էր կազմւած, աստառը Հալեբու Ալաջայ (մետաքսի մանուսայ): Վերմակի երեսը Շամու (ոսկեթել-դիպակ) սէվայի էր, աստառը Լիոնի ընտիր սնդուսից: Բարձերը, սպասները բոլորը թանգակին կտորներից, շողշողուն ու փայլուն:

Անկողնում անզգայ ընկած էր Գոհարը, ոչ կենդանի և ոչ էլ կատարեալ մեռած: Երեք հասակաւոր կին ոչ շատ մաքուր հագնւած շրջում էին նորա չորս կողմը. հոտոտել տալիս նորան քացախ, տրորում նրա քունքերն և ճակատը թունդ քացախով, տրտում, տխուր, և յուսահատ նայում իրար աչքի մէջ: Թշւառ կիներն սաստիկ յուզւած՝ իրենց գիտեցած բոլոր միջոցները գործ էին դրել, բայց չէին կարողացել օգնել տառապեալին: Զգոյշ ման էին գալիս, ցած խօսում և նշանացի ակնարկներով իրար հաղորդում ամեն բան, սպասում էին աչքերն անթարթ յառած ջրբերի դէմքին: Բոլորովին անզգայութեան յաջորդել էր տաքութիւնը. որը աստիճանաբար սաստկանում էր: Յանկարծ Գոհարը աչքերը բացեց և մեքենաբար կրկին խփեց: Իսկոյն լուրը հասցրին Բէգօ-բէգին, որը «միւժտաջուն»

(աւետաբերին) մի կանանչ մանեթանոց ընծայեց: Քանի գնում էր տաքութիւնը աւելանում էր, բայց հիւանդի դրութիւնը շատ ծանր էր փոխւում: Շնչառութիւնը հետզհետէ աւելի զօրեղանում և քիչ քիչ լսւում էր նորա շշնջոցը: Անցան րոպէներ, անցան ժամեր և այդ միջոցներում մի քանի անգամ բացեց քիչ աչքերն և կրկին փակեց թշւառ աղջիկը: Եւ ամեն շարժում, ամէն փոփոխութիւն իսկոյն յայտնում էին Բէգօ-բէգին, որը իւր անկողնի վրայ առանց հանւելու տարածւած մտածում էր: Վերջապէս հաւախօսի ժամերում շրթունքները շարժելով երկու խօսք մրմնջաց Գոհարը.

— -Մի պուտ ջուր . . . . և լռեց:

Շրջապատող կիներից մինը Նունա անունով, որ Կաղզմանի մի հայ ընտանիքից փոքր հասակում առևանգւած և ընկած էր Օսման-Բէգի հարէմը, հասկացաւ աղջկայ խօսքերը և արծաթի թասով ջուրը ներկայացրեց նրա չորացած շրթունքներին և այրւած լեզւին:

Գոհարը խմեց, մի քանի կաթիլ և կրկին սեղմեց պռունկները: Այս համբաւը բոլորովին քաջալերեց Բէգօ-Բէգին, որը հանւեց և հանգիստ քնեցաւ: Կիները Նունային հիւանդի քով պահապան նշանակելով գնացին հանգստանալու: Նունայի արգանդը փակւած էր, նա ամուլ էր մնացել և ուրախ էլ էր, որ Տէրը խնայել էր նորան և չ'էր թողել աճեցնելու օձի ձագեր, սողացողներ թունաւոր իժեր այդ անիծւած յարկի տակ: Նորան սարսափելի վրդովել էր „Մի պուտ ջուր" բառերը, նորան յիշեցրին իւր բոլոր վշտերն, իւր տխուր անցեալն ու սոսկալի ներկան: Նա

զգացել էր, թէ ինչ տեսակ գազանի ձեռքն էր ընկել անմեղ աղաւնին, նա նախատեսնում էր անմեղ հրեշտակի սարսափելի վախճանը: Նուենան չ'ուներ իւր հարազատ ծնունդը, իր արիւնից մարմնացած գաւակը, նորա մայրական զգացմունքի պակասորդը լրացրեց Յոհարը, նա սիրեց նորան՝ որպէս իր զաւակը, գիմաց նորա վրայ՝ որպէս մայր և ուզեց սրտանց օգնել նորան և մասնակցել նորա վշաերին: Բայց ինչ կարող էր անել մի անբաղա կին մի թշուառ աղջկայ, ինչ ուժ ուներ նա, ինչ յոյս կար այդ ամայի վայրում.....:

Նուենան նոյն օրը, մինչև հետևեալ գիշերը չը բաժանուեցաւ Հիւանդից որի, տաքսուիեան աստիճանը ամենաբարձր կետին հասնելուց յետոյ՝ սկսել էր նւազել: Յոհարը շարժուում էր անկողնում, պլպլում էր աչքերը բայց ու խուփ անում, անմիտ, անիմաստ բառեր արտասանում, տաքանում, յաճախ դառն հառաչանքներ արձակում:

Ծետևեալ երիկունը կէս գիշերից քիչ առաջ մի խաղաղ քուն էր եկել Յոհարի վրայ, հանգիստ շնչառութիւնով անմեղ արարածը քնում էր, կարծես իւր իսկական մօր հսկողութեան տակ՝ հայրենի օճախում ննջում էր: Ամեն փոփոխութիւններ ժամանակին հաղորդում էին բէգին, որը նոյն օրը հակառակ իսլամական օրէնքի, չորս հինգ անգամ մտել էր Օսման Բէգի կանանոցը Յոհարի համար յատկացրած ննջարանը և աչքով տեսել Հիւանդին, ձեռքովը բռնել դաստակները, շփել ճակատը և կուրծքը....: Բէգօի կրքերն աստիճանաբար սաստկացել էին և որքան ժամանակը սահում էր, այնքան կատաղում ու բորբոքւում էին:

Այդ երիկունը յայտնել էր, որ բոլորը հեռանան հիւանդի մօտից, ինքը նորան հսկելու, ինքը նորան պահպանելու էր:

Դարձեալ կէս գիշեր էր, նոյն ճրագը, նոյն սենեակը, նոյն անկողնում հիւանդը. միայն երեք հասակաւոր կիների փոխարէն ինքը, Բէգօ-Բէգը շրջում էր սենեակում, ման էր գալիս անձայն շարժումներով և աչքերը չէր հեռացնում հիւանդի դէմքի վրայից:

Յոհարը կեծմռել էր, վարդի նման այտերը շարագունել էին, նուրբ շրմունքները կարծես ծիրանով ներկած լինէր, մազերը սփռուած էր բարձի վրա, մերկ թեւը տարածած վերմակի վրայ, կուրծքը բաց, փղոսկրի նրման յղկուն վիզը, մարմառի նման սպիտակ կուրծքը դիւթել, կաշկանդել էին Բէգօ բէգին: Նա կանգնում էր տասնեակ բոպէներով, անշարժ, անձայն, շնչառութիւնը անգամ ճնշած դիտում, զննում իւր հոգու հատորին, աշում, հայում ու չ'էր կշտանում: Չէր ուզում ոչնչով վրդովել նորա խաղաղ հանգիստը, չ'էր ուզում ոչ մի կերպ անհանգստացնել նորան: Բէգօ-բէգը հագել էր իւր ամենաթանկագին շորերը, գարդարել ոսկեթել հագուստներով, ներկել մազերն ու բեխերը, կուրծքից կախել իւր պատուանիշները, ուսերին դրել մեծ ուսնոցները, գլխին փաթաթել ամենաընտիր մետաքսի աղլուխներ, ձեքերը պորտի վրայ ստրուկի նման շարած՝ սպասում էր որպէս մի գերի իւր տիրուհու առաջ: Միայն ձէթի ճրթրագի ճրտոցն էր, որ երբեմն երբեմն խանգարում էր սենեակի մեռելային լռութիւնը:

Բայց ինչքո՞ր չ'էին անցնում այդ րոպէին Բէգի

մտքից. ինչքա՜ր չէր երևակայում նա: —Ա՜խ, ասում էր, եթէ Ջաւախը-փէրին ինձ չը սիրի, եթէ Հայկական, յամառութիւնով ատի ինձ, ինչ է լինելու վիճակս, կը կարողանա՞մ ես այլևս ապրիլ, կը կարողանա՞մ ես դիմանալ, կը կարողանա՞մ ես զսպել կրքերս.....: Այս ինչպէ՞ս կայ սիրտս այս աղջկայ վրայ, մարդ չէ սա, ոգի է, սա հողային չէ, սա երկնային է, սրա մէջ կախարդական զօրութիւն կայ: Ախ՜ Ալահ, ինչպէ՞ս սա բռնե ցիմ սիրտը, ինչպէ՞ս տիրացաւ իմ հոգուն, ինչպէ՞ս կապեց ու կապկպեց սիրտս.....: Ախ՜ Ջաւահիր, եթէ գիտենայիր, թէ ինչպէ՞ս եմ սիրում քեզ. թէ հասկնայիր, թէ զգայիր, ինչպէ՞ս հոգուով կապուեցի քեզ հետ, ո՜հ դու էլ ինձ պիտի սիրէիր, պիտի ինձ հետ հոգուով կապուէիր.....: Ախ՜ Բէգօ, Բէգօ, քեզ ինչ եղաւ քեզ ինչ պատահեց, դու այս ինչպէս գժուեցար և ընկար այս ֆլահ աղջկայ ոտքերը.....: Բայց թէ չը սիրեց, թէ ընդիմացաւ, թէ ծաղրեց իմ սէրը, արհամարհեց ինձ ..... ախ՜ այն ժամանակ կը մեռնիմ, կը սատկիմ, կը մթնի օրերս, կը սևանայ իմ փառքս.....:

Բէգօ-բէգը յուսահատ, շարունակելով իւր մտքի երևակայութիւնները՝ չոքեց սէգդիրի առաջ, մօտեցրեց շրթունքները Գոհարի կրծքին և մի համբոյր դըրոշմեց: Նա զգուշութեամբ մօտեցրեց Գոհարի աջը իւր արագ-արագ բաբախող սրտին, որի բորբոքումը աստիճանաբար սաստկանում էր: Բէգօն չը կարողանալով զսպել կրքերը, նա մեղմութեամբ մօտեցրեց կոշտ շրթունքները Գոհարի ճակատին, այն ամեղ ճակատին, որտեղ միայն մինչև այդ օր մօտեցել էին հայրական շրթունքները անթիւ օրհնէնքներով, և որ-

քան մօտենում էր գազանաբարոյ բէգը ամեղ օրիորդին, այնքան սաստկանում էին նրա կրքերը, այնքան նա կուրանում և անզգայանում էր.....: Ցանկալի այդ համբոյրների ազդեցութեան տակ ըմբռնափուեց Գոհարը և այլայլած աչքերը չորս կողմ պըտտացնելուց յետոյ, երբ նկատեց Բէգին իւր քովը կանգնած, լեզվապատառ գոռաց—Ես որտեղ եմ ես. .... և կրկին անշնջացաւ .....:

Բէգօն երբ իրեն անհասկանալի այդ երկու խօսքերը լսեց, կուրծքը ներս փլաւ, գլուխը վրայ կախեց, ձեռքերը շարեց կուրծքի վրայ, աչքերը մթնեց և էլ չէր տեսնում, չէր համարձակւում բարձրացնելու նայելու չորս կողմը, դառն մտքերն եկան տիրապետեցին նրան, նա արձանացած անշարժ մնաց կանգնած տեղը, Գոհարի գլխի մօտ, անկողնի քովը: Նրա երևակայութեան մէջ անթիւ սոսկալի պատկերներ, տեսարաններ նկարւեցան և նա խորասուզւեց վշտալի մտքերում: Այդ մտքերը ալեկոծում էին Բէգին, տատանում, բայց ո՛չ մի կերպ նա չէր կարողանում որոշ եզրակացութեան հասնել: Նա ասում էր.—եթէ իւր կամքով, սիրով չը համաձայնեց ինձ կին դառնալու, ինչ դիրք բռնելու է, ինչպէ՞ս համոզելու է....: Նթէ կամապաշտութիւնով դիմադրի, հակառակի, ինչպէս ուզղելու է..... բռնութեամբ.....: Այդ կարելի էր, եթէ *ամիծամած գեաւոսլաեր եկած չը լիներ*, եթէ նրանք սորա հաւատից չը լինէին.....: Բռնութեամբ չէ կարելի.....: Չո՛, Չո՛, Չո՛.....թէ կարողացաւ փախչել գնալ *Լազարովին գտնել*, պատմել, էլ ես ինչպէ՞ս պիտի կարողանամ նրա առաջն ելնել....նա ինձ կախել կը

տայ..... Բայց ինչքի՞ եմ վախենում, ինձ, ինձ նման մի մարդու, մի բէգի, այս նշանները կախողին նա կը սիրի, նա կին կը դառնայ..... կը թողնէ իւր կրօնը և առանց խօսքի կը համաձայնի ինձ հետ ապրել..... Հապա երեք հազար րուբլի պէնսիէս, խօ էդ որ իմանայ մի ժամ էլ չի սպասել..... բայց եթէ կրկին հակառակի ..... Թուլութիւն պէտք չէ, գատաստանը ձեռքովս կը տեսնեմ..... ոչ, ես չեմ համբերել, որ մէկն հանդգնի ինձ անարգել.....: Այո՛, այդպէս էլ հարկաւոր է.... էլ նրանից յետոյ ուզէ, չ'ուզէ պիտի սիրէ, պիտի փայփայէ, պիտի գգւէ և խոնարհւի: Ի՞նչպէս Ալլահը ինձ շնորհեց այս աննման աղջիկը աչքների մէջով, նոյնպէս բաղտս պիտի նորան մեղրի նման փափկացնէ, քաղցրացնէ և սիրեցնել տայ.....:

Գ

ՄԵՌԱԾ ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ

Առաւօտ էր: Երկինքը, ամպամած ոչ անձրև էր գալիս, ոչ ձիւն և ոչ էլ մութ մոխրագոյն ամպերն հեռանում էին և հեռացնում հովիտից զարհուրելի տխուր պատկերը: Ոչ գիշերւայ նման մութն էր, որ մարդիկ ճրագներն ու օճախներն վառէին և քաշէին

հանգստանալու և ոչ ցերեկւայ նմանութիւն ունէր: Օդը այնքան ցուրտ չէր, որքան խոնաւ, մառախուղն էլ թէև հեռացել էր, բայց իւր հետքերը բոլորովին չէին ցրւում: Դամիկը այնքան տխուր պատկեր ունէր, ձորը՝ Արաքսի հովիտը այնքան մելամաղձային դրութեան մէջ էր, որ կարծես բնութիւնը լաց էր լինում, ապառաժներն ու ժայռերն զգացել՝ արտասուում էին: Արաքսը խո՛ մռնչելով, թթւած դէմքով յառաջ էր վազում առանց չորս բոլորը ուշք դարձնելու, կարծես թէ իմանում էր, որ ամեն կողմ թագաւորումէր թախիծ ու կսկիծ, դրա համար խոյս էր տալիս չը նորոգելու իւր վշտերը և չը բեռնաւորելու նոր ցաւերով առանց էն էլ իւր մոլմռքած ու մաշած սիրտը: Հեռացել էին երկնքի քաղցրահաւս թռչուններն իրենց բոները, էլ չէր լսւում նրանց ճռւողումները, էլ չէին թռչում ու ցայտում նրանք օդում ծառից ծառ, այս ու այն կողմը: Կուչ էին եկել արօտներում ոչխարները, շարժւել չէին ցանկանում, նրանց շրթունքները չէին մօտենում դեղնագոյն կանանչ խոտերին, նրբանց ատամները չէին կտրտում ձմեռնամուտի բոյսերը: Լուռ էր բնութիւնը գերեզմանական անշարժութեամբ և ոչ մի կենդանու ձայն չէր խանգարում այդ յուսահատական հանգստեան ժամերը: Մարդիկ էլ անմռունչ հետևում էին բնութեան, թթւած, դէմքերը ծամածռած, անմռունչ նստել էին և առօրեայ գործերն կատարելու անգամ սիրտ չէր մնացել նրանց մէջ: Նայում էին իրար երես և իրար զգացմունքները զգալով անշշունչ բաժանւում իրարից, առանց մի բառ անգամ փոխանակելու:

Գոհարը լուր անկողնում էր, նա հագել էր շորերը, բայց ճար չունէր կանգնելու, ուզում էր բարձրանալ, բայց դողում էին ծնկներն ու ճաները: Ոչ ոք չը կար նորա մօտ, ոչ մի ձայն չէր լսւում նորա սենեակից կամ հարեւան սենեակներից: Նորա սենեակի երթը բացել էին, որտեղից աղօտ լոյս էր ներս սփռւել: Սոսկալի ջերմը դեռ չէր բաց թողել նորա կրանը, դեռ չէր խաղաղել նորա երակներում անտակտ հոսող արիւնը: Նորա հրեշտակային երեսը հոգեւարք հիւանդի դէմքին էր նըմանում, նորա աչքերը չէին բացւում դիտելու շուրջը: Ճնշւում էր մահամերձ տկարի նման և էլ չէր փայլում անմեղութեան դրոշմը նորա ձիւնափայլ ճակատի վրայ: Դողում էր նա ողջ մարմնով և թլթլում էր նորա միսն ոսկորի վրա: Բոլոր ճիգը թափում, յենւելով բարձին ու պատին, աշխատում էր կանգնել, բայց ուժը սպառելով կրկին գլորւում էր: Երբեմն երբեմն խաւարած աչքերը շրջում էր մութ սենեակի չորս կողմը, որոնում էր մէկին, ճիւաղին, սադայէլին, իւր արեւը խամրեցնողին, բայց ոչինչ որոշ չէր տեսնում, ամեն բան խառնաշփոթ էր երեւում նորա աչքերին: Սոսկալի տաքութիւնը, աննկարագրելի վիշտը, անդառնալի կորուստը և անձի թուլութիւնը ծանրաբեռնւած Գոհարի սրտին՝ ճնշւում էին, դառնացնում էին նորա ոգին, այնպէս որ նա որոնում էր, աչքերը ման էին գալիս Արաքսը, նրա անդունդներն, որ ընկղմէր նրա ջրերում, խորասուզւէր յատակում և անհետանար յաւիտեան՝ արեւի լոյսը չը տեսնելու պայմանով......: Բայց Արաքսը հեռու էր, յաւիտեան կորած էր իւր գթառատ հայրն, էլ Գոհարը չունէր մի սրտակից, մի արիւնակից, որ ի-

րեն հուէր, գցէր, յանձնէր Արաքսի մռայլ ալիքներին: Նա տարածւած անկողնի վրայ, երկայն, խիտ—առատ և սև մազերը սփռած ձիւնի նման կուրծքի և սպիտակ բարձի վրայ, նայում էր երկինք, նայում էր փոքրիկ երթից ամպամած ու խռոված բարձունքներին, տխուր ու ոգազգեցոյց բնութեանը և աղեկէզ սրտից հրաբուխի նըման ժայթքում էր, ժանգոտ մաղձը դուրս թափում [illegible] տալով:

—Ահա՛ քեզ սէր, ահա՛ քեզ սիրական, ահա՛ քեզ ամուսին......: Սրանից յետոյ առաւօտ իրիկուն գաժան դէմքով պիտի ներկայանայ քեզ բռնաւորդ, հոգէառդ, գազանաբարոյ կրքերով վառւած պիտի յարձակւի քեզ վրայ, պիտի գռռայ և աղմկէ, եթէ չաշխատես դուր գալ ճիւաղին: Ահա՛ քու օրդ, Գոհա՛ր, ահա՛ կեանքդ: Ապրել էիր ուզում, գետից ազատւել էիր տենչում, ջրից փրկւել էիր երազում, դէ՛հ դիմացի՛ր, դէ՛հ տար այս խայտառակ կեանքը, ստորացի՛ր, ընկի՛ր քըդի ոտքերը, լիզի՛ր նրանք, շողոքորթի՛ր, կեղծի՛ր, ժպտա՛, դու ինքդ քու կամքովդ յանձնեցիր քեզ նրան, դու ինքդ խնդրեցի՛ր, որ քեզ բռնեն, ջրից հանեն, բարի մահի ճանկից ազատեն......: Դէ՛հ առանց կարմրելու, ցոյց տուր սև երեսդ ամենին, փքւի՛ր, Բէգի հարէմն ես ընկել, նրա կին ես, նրա սիրական զարդը........: Էլ ինչ ես ուզում, տէրդ գնդապետի ուսնոցներով, շքանշանները կրծքին ու վզին, ողջ Թախտը, (Վանանդը) իշխանութեանդ տակը......: Քէյֆ արա՛, ուրախացի՛ր......: Էլ ինչ ես անում խաչը, ինչի՞դ է պէտք հօրդ հաւատն ու օրէնքը, ազգդ ու եկեղեցիդ, ջուր վեր առ, „աբդէստ" սովորի՛ր, „նամազ" կատարի՛ր......: Գոհա՛ր, Գոհա՛ր, ախ

թուլասիրտ աղջիկ, չը՞ դիմացա՞ր, որ մարտիրոսների կարգն անցնէիր և այս բոպէիս ծնողքներիդ հետ խաղաղ դրախտում երկնային փառքը վայելէիր.....: Զրիցն ազատւեցի՛ր, որ կրակն ընկնես և մինչև մահ, մինչև սև գերեզման սաղ սաղ այրւես, խորովւես, և տապկւես......: Մի՛ բողոքել, քու ձեռքովդ յանձնւեցիր գայլին, էլ իրաւունք չունիս տրտնջալու..........: Հօրդ խողխողելուց յետոյ, ջահէլ, ջիւան եղբայրներիդ սև մահին, սրին ու կրակին յանձնելուց յետոյ, ուզեցիր ապրել, դէ՜հ ապրի՛ր, դէ՜հ տար, դէ՜հ դիմացի՛ր........:

Տաքութիւնը հետզհետէ սաստկանում էր, զօրեղացնում Գոհարի տագնապները: Թշւառ կինը զառանցում էր, աղմկում և արտասանում անկապ անիմաստ խօսքեր: Եւ պատերն առանց արձագանքի լսում էին, լսում տառապեալ կնոջն ու մնջում...........:

—Հասի՛ր, օգնի՛ր ինձ, Արշա՛կ, ազատի՛ր ինձ, ո՞ւր ես, ինչի՞ ուշացար, ինչի՞ էդքան ետացար, շո՛ւտ, շո՛ւտ, ահա՛ նա, գալիս է, շտապի՛ր, մի՛ թոյլ տալ, որ էդ գազանը մօտենայ ինձ, իւր պիղծ շրթունքները մօտեցնէ ճակատիս,....: Արշա՛կ, Արշա՛կ, եկաւ, ինչի՞ ես արձանացել, բարացրու ձեռքդ, խէնջարդ, կոխիր էդ անօրէնի փորը, թափի՛ր դրա աղիքները, դուրս հանի՛ր դրա սիրտը, բե՛ր, բեր տուր ինձ, որ խորովեմ և ուտացնեմ իր дѣвственица.........: Մի՛ վախենալ, զա՛րկ, ես այս տեղ եմ, ես քու մօտդ եմ, մարդ չը կայ, թուրք չը կայ, զաբթիէ (ոստիկան) չը կայ...... թէ գան, ես նրանց կը բզկտեմ, դու էդ անօրէնի դատաստանը տես........: Մի՛ թո՛յլ տալ. սողալու և վրաս յարձակւե-

լու....: Արշա՛կ, Արշա՛կ, ինչի՞ չես մօտենում....Հա՛, դու ինձ անիծում ես, դու փախչում ես ինձանից, դու հեռանում ես պղծւածից.... ապականւածից....Արշա՛կ, Արշա՛կ ջան, Աստւած գիտէ ես, մեղք չ'ունիմ, երկնաւոր Թագաւորին յայտնի է, որ ես անմեղ եմ, ես քնած էի, թմած էի, ես նւաղած էի....ես....անզգայ նրա ճանկն էի ընկել.....: Արշա՛կ, Արշակ, ների՛ր ինձ, Արշա՛կ մի՛ ինձ թողել անպաշտպան. մի՛ շուռ տալ երեսդ ինձանից....մի՛ կրճտացնէ ատամներդ, մի՛....մի՛....

Եւ ցնորւածի նման բարձրացաւ, նստեց անկողնի վրայ, աչքերը ոլորեց իրենց բնի մէջ նայեց չորս կողմը, նայեց անթարթ դէպի մութ անկիւնը և բարձրանալով վազեց դէպի այն կողմը ու բարձրածունկ չոքած սկսեց ողբաձայն խնդրել:

— Ողճա՛ ինձ վրայ, Արշա՛կ, իմացի՛ր բոլորն, բոլորն ու ետև խփիր էդ սուրդ, նախ իմ դիակս փռի՛ր էստեղ և ետև էն գազանի լաշը գցի՛ր շների առաջ: Արշա՛կ....Արշա՛կ մի՛ նայիր ինձ վրայ, մէկ աչքերդ դարձրու երեսիս, լսի՛ր, իմացի՛ր խօսքերս, ետև վճռի՛ր, ինչպէս ուզում ես: Ախ՜ Արշա՛կ, գթա՛ ինձ, Արշա՛կ հեռացրու քեզանից այդ զարհուրելի մթքերը, զգաստացի՛ր, լսի՛ր Գոհարիդ, լսի՛ր թշւառիս երկու խօսքերը.....: Ախ՜, սև բաղդ, սև ճակատագի՛ր, էլ ո՞ւմ թողիր ինձ համար աշխարհի երեսին....Արշա՛կ, Արշա՛կ.....մի բա՛ռ մի խօ՛սք, մի ձա՛յն, մի պռօշներդ շարժիր, մի երեսդ շուռ տուր իմ կողմս.....Ախ՜ գռո՛ղ, ախ՜ անողորմ ճակատագի՛ր.....Արշա՛կ, Արշա՛կն էլ չէ ուզում տեսնել իմ սև երեսը.......:

Ընկաւ բերնքսւար և ընկած տեղը ժամերով

մնաց։ Բէգը հրամայել էր, որ ոչ ոք չը գնայ նորա սենեակը. Բէգօն ինքը կողպել էր սենեակի դուռը և հեռացել։ Այս սաստին պատիժն էր, որ անողորմաբար տալիս էր սիրուն սարկուհուն քուրդ իշխանուհին, նորան սորվեցնելու և իւր բացարձակ իշխանութեանը անպայման հնազանդեցնելու։ Նա չէր զիջանել, որ մի կին, մի թշուառ արարած համարձակէր նրան արհամարհել, նրա սէրը ծաղրել, նրա զօրեղութեան վրայ թքել.....։ Նա կնոջ, այդ անզէն, քնքոյշ և թոյլ էակի վրա, թէև երբէք չէր զիջանել ձեռք բարձրացնել, խստութիւններ գործ դնել, բայց ո՛րչափ պահանջող էր այդ նազելի սեռից, ուզում էր, տալ իրեն այն ջերմ հրապոյներն, փաղաքշանքներն և յարգանքներն, որոնց արժանաւորութիւն չ'ունէր։ Նամանաւանդ, նա իւր տեսակով, իրաւամբ պահանջում էր Գոհարից այդ բոլորը, որի կեանքն ինքն էր վերադարձրել, ալիքների և ձկների բերաններից խլել էր։ Գոհարի քթին զարկելու համար, հակառակ իւր սրտի զգացմունքներին, նա այս միջոցը գործ էր դրել, փորձ էր փորձել.......։

Դեռ կէս օր չը կար։ Բէգօ-բէգը տագնապում էր տխուր մտքերով, նրա մտածութիւնները Ջաւահիր փէրիի վրայ էր։ Երկար խորհելուց յետոյ, վճռեց ու դիմեց Գոհարի ննջարանը։ Դռան ծակերից սկսեց ներսը քննել և անկողնի մէջ չը տեսնելով իւր սրտի սիրածին, խռովւեց, կասկածներն աւելի սաստկացան։ Էլ համբերութիւնը կտրուած բացեց դուռը ներս մտաւ։ Մորմոքեց, երբ տեսաւ Գոհարին անկիւնում նւաղած, տարածւած։ Մօտեցաւ նրան, գրկեց,

անթիւ համբոյրներ դրոշմեց ճակատին ու գոց աչքերին, գրկով տարաւ անկողնում պառկեցրեց և գգուշութեամբ ծածկեց վերմակը նորա վրա։ Խռոված սըրտով չոքած նորա պառկած սնարի մօտ, գլուխը մեղմ կերպով շարժում էր, աչքերը արտասունքով, խեղդւած ձայնով, հառաչանքներով կրկնում.

— Ախ՛ եթէ գիտենայիր, որքա՛ն սիրում եմ քեզ, ինչպէ՛ս կպել է հոգիս քեզ վրայ, ինչպէ՛ս տանջում ես, վառում ես դու ինձ քու ընդիմութիւններով......։ Քեզ համար, սիրոյդ համար, սէրդ, քու սէրդ գրաւելու համար, ախ՛ Ալլա՛հ, Ալլա՛հ, ինչե՞ր պատրաստ չեմ անելու......սիրէ՛ր դու ինձ, սիրէ՛ր սրտանց և հրամայէ՛ր, հրամայէ՛ր ինձ, ի՛նչ որ ուզում ես....... Մի՛ ատել, մի՛ ծաղրել ինձ, քաղցր հայեացքով, աչե՛ր աչքերիս մէջ եւ ես, ես կը լինիմ աշխարհի ամենաբաղդաւոր մարդը......։ Ախ՛ Ջաւահի՛ր, ախ՛ հոգեակ, մի՛ ինձ տանջել.....։

Եւ ոգևորւած, երկու կոշտ ափերումը բռնած Գոհարի բամբակի նման սպիտակ և փափուկ ձեռքերը, համբուրում էր նորա մերկ կուրծքը, քսում ու հանգստացնում իւր դէմքը նորա փափուկ իրանի վրայ, անշարժ ու հեկեկալով մնում այդ դրութեան մէջ րոպէներով, գրեթէ նւաղած ու անզգայացած.....։ Բէգօ-բէգը ծարաւ էր Ջաւահիրի ջերմ սիրուն, բորբոքւել էր գազանի նման անզուսպ կրքերից ընկճւած։ Նա պատրաստ էր ամեն զոհողութիւնների, ամեն զիջողութիւնների, միայն թէ հաճէր Գոհարը պատասխանել փոխադարձ կրքերին։ Նա անպայման պահանջում էր, որ սիրէ նրան Գոհարը, սիրէ սրտանց և հրամայի իրեն,

վճարել այդ սիրոյ վարձը, ինչով որ ցանկանայ: Նա Գոհարին գոհացնելու, բաւականացնելու համար իւր ողջ ցեղը կը ծախէր, կը գերէր, իւր գլուխը ամեն տեսակ վտանգների տակ կը դնէր, միայն նորա ուրախութիւն պատրաստելու համար..... Գոհարի սէրը գրաւելու համար, որքան զիջողութիւնների պատրաստ էր, անչափ էլ կատաղի էր իւր սիրակալութիւնը: Նա մեղմաբար ձայն էր տալիս.

— Ջաւահիր ջան, աչքերդ լաց, մէկ հանգստացիր, ուշքի արի, մի մաշել ու հալել կեանքս, Ջաւահիր ջան, փէրի ջան, զարթիր, բայց աչքերդ, կէս օր է, չես ուզում մի բան ուտել....Ջաւահիր, Ջաւահիր:

— Ախ դժոխք, էլի դու, ասաց աչքերը բանալով Գոհարը և կրկին նւազեցաւ:

— Ալլահ, միթէ ինձ տանջելու համար ուղարկեցիր այս աղջիկը: Եթէ չը պիտի սիրէր, էլ ինչի՞ շնորհեցիր, բաշխեցիր, Ալլահ, ասաց վրդովուած ու դուրս գնաց Բէգօ-բէգը:

— Կորաւ, կորաւ ինձ համար ամեն բան, ինձ համար վերջացաւ աշխարհք, ինձ համար մթնեց արեգակը, խաւարեց լուսինը, էլ աստղս չի փայլում երկնքի աստղերի կարգում, էլ ծաղիկս չէ ցոլում շուշանների շարքում..... Մեռաւ Գոհարը, մեռաւ և թաղեցաւ, նա էլ չը կայ, նորա անունը չնչեց ապրողների ցանկից..... Արշակ, Արշակ, էլ Գոհարդ չը կայ, Գալօ Քէհյաի տունը բլեց, օճախը հանգեց, կրակը մարեց, ծուխը կորաւ և նրա աւերակների տակ

նրա թև ու թիկունքները, աներն ու գերաններն ընկան, այրուեցան, մոխիր դարձան, Գոհարն էլ մոխրի մէջ թաղուեց, պրծաւ: Էլ մի՛ դիմել դու մեր տունը, էլ մի՛ պատել դու քու սիրականին, քու հոգեկան ընկերին, քեզ խօսք տուող աղջկանը, չը կայ նա, նա վերջացաւ....: Գնա՛, Արշակ, գնա, գուր չեզ մի ուրիշ սիրեկան, մի ուրիշ գեղեցիկ կոյս, թող նա վայելէ քու սէրը, թող նա երջանկանայ քու շուաքի տակ, թող նա ցնծայ և բաղտաւորւի քեզանով, թող նա տիրի էն սիրտը, որ ինձ համար տրոփել է, բաբախել է, զգացել է, այրել է....: Ախ, Աստուած, ինչի՞ իմ կրծքի տակ էսքան փուխր, էսքան թոյլ սիրտ գրիր, եթէ ճակատիս էսքան դժբաղտութիւններ էիր գրել....: Արշակ. Արշակ ջան, ես տանջւում եմ, ես մորմոքում եմ, գոնէ դու՛, դու՛ բաղտաւոր եղիր, դու խաղաղ անցկացրու օրերդ: Գնա՛ր, գնա՛ր քեզ համար մի ուրիշ ընկեր, մի ուրիշ սիրական, որը մոռացնել տայ քեզ վշտերդ, մեռցնել տայ Գոհարիդ, սփոփէ ու մխիթարէ քեզ, հոգւով էնպէս գուէ փայփայէ, որ բոլորովին չնչէ մտքիդ Գոհարի յիշատակը....: Ախ մայրիկ, քար ծնէիր, աւելի լաւ չէը, իմ տեղս մի կտոր ապառաժ բերէիր, հազար անգամ երանելի չէիր լինել, էս ինչ գարդեր է, էս ինչ ծանր վշտեր է: Արշակ, Արշակ, նեղիր ինձ, քու գանձդ, քու սեփականութիւնդ քրդին կեանքի փրկանք տուր, ապրելու համար ծախեցի՛ ինձ, կորցրի՛ անմեղութիւնս....:

— Համարիր, կարծիր, թէ Արազ տարաւ, Արազամը անհետացաւ նշանածդ, քու սիրուհուն կուլ տուին ձկները, կերան նորան, կշտացան ու գնա-

ցան..... Մոռացիր, մոռացիր դու լիշատակս, ջընջիր սրտիդ և հոգուդ ջղերից պատկերս..... Գնա, գնա ուզիր Սէյրանին, սիրիր նորան, էլ թոդ չը նախանձէի նա ինձ վրայ, կատարիր նորա վաղուցայ փափագը, գոհացրու նորան, սիրիր նորան, նա խելագարի նման սիրելու է քեզ..... Սէյրան, Սէյրան, էլ մի՛ ախակալիր էլ մի՛ դժգոհալ, ահա Արշակն ազատ է, ես, ես հրաժարուում եմ նրանից, ձեռք եմ վերցրել նրանից, ես էլ նրան անարժան եմ, ա՛ռ նրան, բաղտաւորիր, բաղտաւորիր.....:

Էլ չը կարողացաւ շարունակել Գոհարը, նորա ձայնը կտրուեց, նորա աչքերը լցուեցին, հեկեկագ հառաչանքներով, ակամայ արտասուքները գլորուեցին նորա այտերից: Հայց էր լինում փոքր երեխայի նման, մոնչելով երկար «ախ» էր քաշում և ձեռքերով ծածկում երեսը: Ինչ ազմկալի դրուխեան մէջն էր այդ րոպէներում նորա ոգին, երևակայութեան առաջ ինչ սոսկալի պատկերներ չէին ներկայանում..... Ահա տեսնում էր, թէ ինչպէս իւր երեք եղբայրները Միհրալու ձիաւորների հետ կռւում էին արիւնլուայ եղած, ինչպէս նրանք ընկան իրար ետևից, ինչպէս չարագործներն անխնայ գետին էին գարկում իւր բիւրաւոր գեանքներով մեծացրած եղբօրորդիներին, ինչպէս փախչում էին հարսները զէպի այրերն ու ապաստաձները, ինչպէս պատ հարսին սկսեցին լլկել չարագործներն, ինչպէս հայրն ու ինքը խոյս էին տալիս ձորում և իրենց հալածում Միհրալին՝ չարագործների առաջնորդը: Ու Միհրալու ձեռքից ազատուելով Բէգոի ձեռքն ընկնելը..... կամ մուրի միջից ազատուելուց յետոյ, մրջուն

ընկնելը.....: Այս բոլոր տեսարանները ալեկոծում էին նորա մտքերը և քորքոքում սիրտը: Նա կանգնած տեղը արձանացած՝ դիտում էր մի առարկայ, խռովում և չէր կարողանում վճռահատել.....:

— Ինչի՛ կործանուեց Գալօ-Քէհալի տունը, ինչի՛ ընկան եղբայրները, ինչի՛ այրեցին հօրս օճախը, ինչի՛ կտրտեցին և Արաքսը լցին զոհամեալ հօրս, ինչի՛ քամուն տուին մեր տան մոխիրը, ում պատճառով.....: Իմ, մի աղջկայ, մի քաջի պատճառով էգքան աւերուխիւն, էգքան զարհուրելի ոճրագործուխիւններ, էգքան սոսկալի անգթուխիւններ..... Էգքան ահաւոր զոհողուխիւններից յետոյ, էս գժոխային վախճանը, էս ճիւաղի ճանկն ընկնելու, էս օրերը քաշելու համար.....: Չէ, Բէգօ, չէ, էժան չէ նստելու քեզ վըրայ Գոհարը: Նորան շատ թանկ են գնել իր հարազատները, նորա համար անչափ զոհողուխիւններ է եղել, անթիւ զոհեր կատարել.....: Ոչ, ո՛չ, հեշտ չէ սիրել ինձ նման աղջկայ առանց տուժելու.....: Ինձ սրտիս սիրածից, Արշակից, իմ հոգուց, իմ երևակայուխիւններից բաժանելը քեզ էժան չէ նստելու.... Էս գլուխը տեանի իւր սիրականին, իւր առելու գրկումը, և համբերեմ, որ Արշակս ինձ տեղ գրկի Սէյրանին: Սէյրանը, հրճւի, Սէյրանը բաղտաւորւի, Սէյրանը զոռոզանայ և Գոհարը, Գոհարը հեռւից դիտէ և սգայ, մաղկտի ու մորմոքի.....: Չէ, Բէգօ, չէ, Գոհարը չի կարող տանել դրանք, Գոհարը չի կարող մոռանալ..... Չէ, երբէք, երբէք ես չեմ նելել, ես սիրա ունիմ, իմ էլ երակներումս ջուր չէ, արիւն է շարժւում, իմ ուղղումս փոթորիկներ է բարձրանում, և բոլոր դառ-

նութիւններիս և վշտերիս պատճառը դու ես։ Դու ինձ անպաշտպան ձեռք ձգեցիր, մենակ էի, անօգնական, ոչ ոք չունէի և դու, գազա՛ն, թմրածս րոպէներում լլկցիր, ինձ նուաղած ժամում բռնաբարեցիր, զրկեցիր ինձ երջանկութիւնից և մեռցրիր ինձ կենդանի։ Ո՛չ, Բէգօ. ո՛չ, ջրից դուրս հանելը քեզ իրաւունք չէր տալիս, կիսամեռ աղջկայ վրայ գազանաբար յարձակուելու և խայտառակելու......։ Իմ պատիւս պաշտպանելու համար, իմ հայրենի օճախս բրիշակ դառնայ. իսկ դու, սադայէլ, աներկիւղ ինձ բանտի մէջ տանս ջես։ Վրէժ, վրէժ է պահանջում սիրտս, վրէժ և արդար հատուցում......

— Կեանքս վերջացած է, բայց ապրում է և պիտի ապրի սրանից յետոյ՝ վրէժս լուծելու, ընտանիքիս արդար պահանջը, օրինաւոր դատը վարելու, գլխու տեղ՝ գլուխ........։ Այո՛, ես տկար եմ, ես թոյլ եմ. ես շղթայուած և գերուած ստրուկ եմ, գեաւուր եմ, մի հայ աղջիկ, չնչին արարած........։ Այո՛, այո՛ սարսափելի չնչին........։ Բայց զգո՛յշ, զգո՛յշ, Բէգօ, զգուշացէք հոգեկան ջղերս քայքայողներ, ես գիտեմ վրէժ լուծելու եղանակը, ես գիտեմ, թէ ի՛նչպէս պատժելու է ձեզ պէս չարագործներին։ Ես մեռայ, ես մեռած եմ, միևնոյն է, բայց մահով կենդանութիւն տուիք ինձ, ձեռքումս արդարութեան սուր....։ Դո՛ւ, դու, Բէգօ, ինձ յաւիտեան բաժանես իմ սիրուց........։ Արշակիս ինձանից բաժանե՛ս.....։ Լա՛ւ, շատ լա՛ւ.........։ Արշակից բաժանելուց յետոյ, քեզ պէս վայրենու կին դառնամ, էդ հերիք չէ. կրօնս ուրանալ էլ ես հրամայում. խաչս ու աւետարանս, պապերիս հաւատն էլ թողնեմ և գամ կը-

ռատիդ դառնամ...... Լա՛ւ, կ'անեմ, ինչ պիտի անեմ, զօրը ձեր կողմն է, անճարացած պիտի հնազանդիմ...... մինչև որ.... մինչև որ կատարեմ բոլոր ցանկացածներս......։ Ախ՛ թէ մէկ Ղարսին կը տիրեն, թէ մէկ խաչը կը բարձրանայ Առաքելոց ժամի գլխին, թէ մէկ էս կողմերից կը հալածւի լուսինն ու աստղը, թէ մէկ քրիստոնեայ թագաւորի՝ Ռուսի դրօշը կը պարզւի Ղարսի բերդի գլխին, էն ժամանակ ես ու դու կը տեսնենք Բէգօ, իրար հետ կխօսակենք մեր կորկոտը.........։ Ո՞ւր է, որտեղ են Լօրիսն ու Լազարովը, մէկ Ղարս մտնեն, մէկ թրերը աջից ձախից էս անօրէնների արմատները կտրատելով առաջ գան, էն ժամանակ Բէգօ, լաւ դատաստան կը լինի մեզ համար........։ Ուխտս լինի քու չներդ վար անել տալը..........։

— Բայց առ այժմ....կեղծենք......։

Ե

ԿԱՊԻՏԱՆ ԴՐՈՋԴՈՎ

— Ջաւահի՛ր ջա՛ն, ասաց մի առաւօտ Բէգօ բէգը. հը գնանք տուն։

— Ես էլ էդ էի ուզում ասել, բէգ, քանի մէկ ինձ պահես օտարի տանը։ Երթա՛նք, երթա՛նք, աղա ջա՛ն.

—Ասեմ, ձիերը թամքին և պատրաստութիւններ տեսնեն:

—Ծառայի՛ր, շտապի՛ր, հասնենք տուն:

—Հա հոգիս, գնանք և ձեռքդ առ տանս ղէկը:

—Չէ, էդ խօսքը էլ չիմանամ, ես լաւ ծանօթ չեմ կարգիդ ու սարքիդ, ես դեռ անգէտ եմ, թո՛ղ կառավարէ նա, ով մինչև այսօր կանգնած է եղել օճախիդ գլուխը, դեռ ես նորան աշակերտութիւն պիտի անեմ, որ վարժւեմ տանդ գիրքի հետ:

—Ախ՜, ես լեզուդ ուտեմ, ես քու խելքիդ մատաղ:

—Չէ, անփորձ աղջկայ ձեռքը պիտի տաս, որ խայտառակէ անունդ, չէ, չէ Բէգօ, Ջոհարդ խելառ չէ, նա օգուտդ ու վնասդ գիտէ զանազանել, նա չի ուզիլ, որ մի սխալ գործ կատարւի յարկիդ տակ, մի վնասակար փոփոխութիւն լինի.....

—Բէգօն թող քու գերիդ դառնայ, Ջաւահի՛ր ջա՛ն, ես որ քեզ նման խանում ունիմ, աշխարհի վըրայ էլ ինձ ինչ է պակաս...:

—Լա՛ւ, լա՛ւ, շատ երես մի՛ տալ, գնա՛, գործերդ կարգի դի՛ր, երթա՛նք, տանը հազար ու մի գործ ունիս, ո՛վ է իմանում, ի՛նչ վնասների պատահեցիր էս շաբաթւայ մէջ:

—Գնա՛նք և իրիկունը կը հասնինք մեր տունը: Ասաց և մի համբոյր դրոշմելով Ջոհարի ճակատին, հեռացաւ:

—Օձի խայթւածքը գուցէ էնքան չը կսկծացնէ սիրտս, որքան քու պիղծ շրթունքներից թունաւորւում է հոգիս.....: Ախ՜ Աստուած, էս ինչ սոսկալի

վիճակ ես սահմանել ինձ համար......:

Ջաւահիրը զարդարւել էր մի քուրդ իշխանուհու ձևով, թէ շորերը, թէ զարդերը, թէ զուքսն ու կապուստը՝ բոլորը յարմարեցրել էր իւր իրանի վրայ այնքան կոկ ու վայելուչ, որ տեսնողը չէր կարող կասկածել քուրդից ծնւած չը լինելուն: Բէգօ-բէգը թշւառ կընոջ սիրտը գրաւելու համար, բացել էր իւր մանէթների սնդուկը, և առատ-առատ վճարել Ջաւահիր-փէրիի ամեն մի կտոր զարդարանքի համար: Բոլոր հագուստը մետաքսից և թանկագին կերպասներից էր կազմըւած և ամեն մի կտորի վրայ ամխոներով դերձիկները ոսկեթել էին բանել: Հագած էր կանանչ թաւիշից խրխալ, որի վրայ մատ դնելու բաց տեղ չը կար, վերից վար խիտ ծաղիկներ էր բանւած ոսկեթելով: Ստուֆայ (դիպակ) էնթարու թևերը հասնում էր մինչև գետին, որի պընկներին կարած էր ոսկեհատ պուրջեր, որոնց իւրաքանչիւրի վրայ շողշողում էին գոյնզգոյն գոհարներ, եաղութ, զմրուխտ, փէրուզ և ուրիշ թանկագին քարեր: Էնթարու կրծքի երկու կողմը վերից վայր շարած էր հինգ լիրանոց մէջիդիէի ոսկի ողակ-կոճակ քսանըչորս զոյգ: Վիզը զարդարւած էր ոսկի վզնոցով, որի մէջտեղի մանեակի վրայ շողշողում էին թանկագին շողակներ մանր ու խոշոր: Այդ մանեակից կախած էր մի լուսնաստղ ընտիր ադամանդներից կազմւած, որի երկու կողմից ծածանւում էին զանազան չափի հին ոսկիներ, գեղեցիկ նկարներով և քանդակներով: Մէջքին կապել էր Ջաւահիրը հինգ մատ լայնութիւնով ընտիր մարգարիտից հիւսած գօտի, որի ծայրերը երեք թղթանոց (մօտ մէկուկէս ֆունտ) սքանչելի քանդակներով և ընտիր ակ-

տուներով զարդարած ամէն *ձախճախներով*։ Մութ կապոյտ կաշմիրի շալ գոգնոցի վրայ, Արաքսի հովիտում աճած խոտերով գոյն գոյն ներկած ասրէ թելերով բանուած էր գեղեցիկ նկարներ խիտ ու վայելուչ։ Ոսկեթել և էնթարիի կշտի ճեղքուածքներից երևում էր ջաւալը փէրիի գեղին զանազան շապիկը և կարմիր ջանֆէս (մետաքսի փափուկ կտոր եւրոպական) վարտիկը, որը մասամբ ծածկում էր ոտքերին հագած, Արզրումում կարուած յղկուն երես զոնդուրաները (կօշիկները)։

Գոհարը պատի մէջի հայելում իրան լաւ դիտելուց յետոյ, ասաց.

— Ցեղն ու տեղ ջաւալիը փէրի, էլ ինչդ պակաս է Բէգո բէդ, քէյֆ արա, հրճուիր, ցնծայ, ջաւահիրի նման գերի ունես ինձ նման հարճ.....։ Բայց գուքսի ժամանակը չէ, պէտք է հաւաքուել շուտով կը գնամ դահիճիս տունը.....

Մի քուրդ ձիաւոր արագընթաց գնում էր Քէօմիւրլի գիւղի զառիվայրով։ Նա հագած էր պատերազմականի շորեր· իսկ զօրականներն պատերազմի դաշտում ամենահետաքրքրականներն են ամեն տեղ։ Քէօմիւրլեցի թիւրքմաններն անընդհատ վաղուց հացնում էին հայերից, — „Հան քեռին մտաւ Ղարս, Արզրում երբ են գնալու.....։“ Ինչ ժամանակ դեռ թիւրքերի վախը կար սրտերում, գարձուածներով էին խօսում, իսկ այդ օրերը կօզականերին հիւրասիրելուց յետոյ, էլ համարձակ ասում էին,—Ղարաջ դեռ չը յանձնուեց, Արզրումը բանալիները երբ է ուղարկելու Ռուսին։ Իսկ քուրդ ձիաւորը կրում էր ուսերին կարմիր *kyoշkուներ*, որը իմացնում էր թրքատեաց թիւրքմաններին, թէ գնացողը Ռուսաց բանակիցն է, Արծուի դրօշի մարդիկներից։

— Այ տղայ, ասում էր Քէօմի-ըլեցի Իբիշ ուսյին իրեն շրջապատողներին, մի բարի լուր է տանում այդ քուրդը, տեսնես ինչ է։

— Հան, չը լինի, Ղարսն առել են։

Քուրդը գնում էր ձիու սմբակների տակից փոշի ու հող բարձրացնելով։ Նա լուր էր տանում Բէգօ բէգի տունը, որ պատրաստութիւն տեսնեն, մաքրեն, խտակեն, մորթեն գեր ոչխարներ և որսորդներն դուրս գան նոր նոր որսեր բռնելու, Բէգը գալիս է իւր նոր հարսով։

Զանգաւ երկու ժամ, Քէօմիւրլու միջից անցաւ բէգը իւր ձիաւորներով, սերուհու հետ միասին։ Ամառօնը տղամարդու նման նստել էր ձին, փաթաթուել մետաքս կանանչ չարսաւում, երեսը ծաղկուն վալայով ծածկել մահկանացուներից, աներկիւղ քշում, մարակում իւր ձին՝ վարժ ձիաւորի նման և առաջ շարժուում Բէգօ-բէգի հետ։ Գիւղացուն, այդ եղանակում ինչ է պէտք, նա պարապ սարապ ընկած է դռնից դուռ, օդայից օդայ, խօսելու, վիճելու, դատելու, և կորցնելու ղուր տեղը իւր ժամամակը։

Ձիաւորները, անցորդները, ճանապարհորդները խլում են նրա ուշքը, միտքը և գիւղացին դրանց տեսնելու, դրանցից երկու խօսք լսելու, կարծիք իմա-

նալու, նոր լուր տեղեկանալու համար ի՞նչ զոհողութիւն չի յանձն առնել……

Այս տեղեկութիւնները հաւաքելուց յետոյ, նա խօսում է դրանց մասին, մինչև մի նոր բան պատահելը և այդպիսով անց կացնում ողջ ձմեռը: Բէգօ-բէգի խումբը առատ նիւթ էր մատակարարում և նրանք երկար խօսեցին դրա մասին……:

Ճանապարհորդը չի էլ նկատում, որ իրենով հետաքրքրւում են, նա անուշադիր մտնում է գիւղը և եթէ կարիք չունի, բան գնելու չէ, ուտելիքի կամ խմելիքի հարկաւորութիւն չունի, մի ժպտալի հայեացք է գցում շինական ամբոխի, իրեն դիմաւորողների, ճանապարհի մի կողմը կանգնող ու իրեն դիտողների վրայ ու հեռանում, որպէս թէ իւր տեսածները անշարժ, անզգայ բնութեան մասեր կազմեն. որոնք անմռունչ, անբարբառ յայտնում են, ներկայացնում են բնութեան գեղեցկութիւնը և ուրիշ ոչինչ……: Շինականը, գիւղացին անչափ ուրախ է, եթէ այդ անցորդը զիջանում է և ձեռքի շարժումներով, գլխով կամ լեզուով մի բարև է տալիս նրան, մարդատեղ է դընում. այդ բանը նա պարծենալով է պատմում իւր հասարակութեան շրջանում:

Բէգօ-բէգը ոչ շատ արագ քշելով ձին անցաւ գիւղի միջից: Իբիշ աղայի տանիքի վրայ ճանապարհի կշտովը կանգնած յայտնում էր գիւղացիներին իւր կարծիքը Ռուսների մասին:—Էլ մի վախենանք, Իսմայէլ, Րօստամ, Մուսա, Հասան, դուքրանչին խօստացաւ սրանից յետոյ միշտ գինի պահել, երբ որ ուզենանք, առատ առատ կը կարողանանք խմել: Էլ Թուրքերը չեն

կարող սանձել մեզ, ազատ որքան ուզում էք, խմեցէք: Էլ պէտք չէ մեզ ութ տասն օրւայ ճանապարհ գնալ գաղտնի գինի բերելու համար, մեր գիւղում կօզակներին մի տուղը մեզ էլ գինի պիտի տայ:

—Բէգօ-բէգը որտեղից էր գալիս, հարցրեց Թիւրքմաններից մին Իբիշից:

—Ով է իմանում, քուրդը էլի ի՞նչ սատանութիւններ ունէր: Քանի օր է ձորերումն էր, իրեն էլլիգի (համայնքի) մէջ էր ման գալիս: Նոր կնիկ է առել տանը վեցն ունէր. այս էլ եօթներորդն է:

—Քէյֆն էլ դրանն է, որ կողմն երթայ, իւր շուքն կածէ: Մինչև հիմի Թուրքերից էր օգտւում, հիմի էլ Ռուսներից:

—Իբի՛շ աղայի, զորդ դրան փաշայութիւն է տըւել Ռուսը, ուսերին այդ ի՞նչ կլապիտոն նշաններ է դրել……:

—Փաշայութի՛ւն, չէ մէկ՝ վէզիրութիւն: Բինբաշի (հազարապետ) է, թէ ղայմաղամ, քրդերը ուսեցնում են և խօսում:

Թուրքմանները չէին կարողանում հասկանալ, որ Սիւննիները, քուրդերը նոյնպէս բարձր դիրք բըռնէին Ռուսների մէջ, ինչպէս բռնած ունէին Օսմանցուի մէջ, այդպիսով Իբիշը կտրել էր ուզում Բէգօյի համարումը իւր համայնքի մէջ:

Բայց Բէգօյի խումբը առաջ էր գնում, շտապում էր դէպի նպատակը: Սաստիկ մտատանջութեան մէջ էր էլլիգի առաջնորդը. նա թէև իւր ձին մտրակում էր, ասպանդակներով անզգայաբար խփում էր, խփում եւ ... փորին, բայց մտքով ուրիշ տեղ էր:—Ի՞նչ էր

մտածում նա, ինչքի էր նրա դաժան դէմքը ալլայլել. ինչքի ահաբեկ շարժումներ էր անում, ինչ էր որոնում նրա վէս աչքերը հորիզոնի շուրջը, ինչի անընդհատ նա մտիկ էր տալիս ետ, առաջ, աջ ու ձախ: Ի՞նչ էր պատահել նրան, մի՞թէ Ջաւահիրը նրան չէր փաղաքշում, մի՞թէ Ջաւահիրից նա ապահով չէր, քանիսր վերջինս աշխատում էր դուր գալ նրան, յանձնւում էր անզուսպ կրքերին, խօսում էր հետը քրդական բուի բարբառով, հնազանդւում էր նրա կամքին, ընդունում էր նրա նւէրները ու զարդարւում, հրթապուրում այդ շլացուցիչ իրերով: Ինչի՞ գաղտագողի դիտում էր Ջաւահիրի շարժումները, ինչ կասկածանքների տեղի էր տւել թշւառ կինը իւր բռնակալին.....:

Դուցէ լսել էր նրա մեծախօսութիւնները, բայց քուրդը ինչպէս կարող էր հասկանալ նորա մայրենի բարբառը.....գուցէ տաքութիւնների մէջ զառանցածներից զգացել էր Բէգօ-բէգը վշտի սաստկութիւնը և սրտի սխակալութիւնը.....:—Ո՛չ, ո՛չ, այդ դողդողոցը, նրա ցնցումները առաջանում էին իւր սրտից, այն սրտից, որ անչափ սիրում էր Ջաւահիր-փէրիին և նորան ձեռքից փախցնելու, կորցնելու մտքից նա յուսահատւում էր:

Մինչ Բէգօ-բէգը զբաղւած էր դառն մտքերով, հեռւից մի խումբ ազէհներ վազ էին տալիս բլրակի շուրջը զանազան ոստիւններով: —Ազէհներ, ազէհներ-գուռացին երիտասարդներից մի քանիսը ձիերըն նրանց կողմն ուղղելով՝ մի քանի դնդակներ արձակեցին,բայց ճարպիկ գազանները վարկենական արագութեամբ անհետացան, մտան իրենց որջերը.....:

—Ախ՜, ասաց Հասանը, թէ թազիներս հետս կը լինէին, խո՛ հինգ տաս հատ տուն կը տանէի:

—Ծղէրք, գուռաց Բէգը, առաջ անցէք և քշեցէք ձեր ձիերն այն ձիաւորների կողմը:

Հեռւն հովիտի մուտքում երևում էին երեք ձիաւոր, կօզակի շորերով: Դրանցից մին ունէր ուսերին սպիտակ սագոններ, հետևապէս միւս երկու կօզակները առաջնորդում էին նրան դէպի Արաքսի ձորը: Այդ մարդը տակն ու վրայ արաւ Բէգօ-բէգի սիրտը, կասկածները նորոգւեցան և սաստկացան:—Ո՞վ է դա, ինչ մարդ է, հայ խո՛ չէ.....: Թէ հայ է, կանգնեց ու խօսեցաւ մեզ հետ, հարցեր տւեց, քննութիւնները արաւ.....կարելի է, իմացաւ, որ Ջաւահիրն էլ հայ է, կամ Ջաւահիրն երկու խօսք խօսեցաւ հայերէն..... այն ժամանակ, ո՛չ, ուշ կը լինի ազատել Ջաւահիրին, կամ գլուխս.....: Աւելի լաւ կը լինի, որ ես ցոյց տամ Ջաւահիրին, որ ոչ ոքից չեմ վախենում, նորա աչքի առաջ ցոյց տամ, որ ես.....ես աներկիւղ եմ..... ես քաջ եմ.....ես կարող եմ և կօզակների, և մեծաւորների հախից գալ, եթէ ուզենամ.. ...: Այն ժամանակ բոլորովին, բոլորովին կը յանձնւի ինձ և էլ երբէ՛ք չի մտածել այդպիսի մի բան.....: Բայց.....ոչինչ, ոչինչ, ո՛վ է իմանում, ինչ են իմանում, ո՛վ ում է ճանաչում, այս խառնաշփոթ ժամանակում մարդու գլուխը հաւի գլխից ո՛վ է զանազանում.....: Արիացիր Բէգո՛, գլուխդ ցոյց տուր սիրականիդ.....:

—Ծղէրք, ասաց Բէգօն, նշան բռնեցէք այդ կօզակներին, ես էլ թւանքս ուղղում եմ նրանց օֆիցերի

ճիշտ կրծքին,.....: Ձեզ տեսնեմ, տղերք:

Սը՜ս.....թո՜ւթ, փըթ, փը՜թ.....ելեք դնդակ մեսին սլացան օդի մէջ և խրտնեցրին ճանապարհորդների ձիերը.....

—Անհոգ կաց, Ջաւահիր-փէրի խանում, մի վախենալ, կրկնում էր Շէխոն, որ ձիաւորներից ետ էր ընկել և գնում էր Գոհարի հետ, թւանքներն են փորձում, նոր բէրդեանկա են տւել նրանց բանակից, անթիւ գնդակներ, տեսնում են, թէ լաւ գործում են այդ զէնքերը.....

Գոհարը լաւ չէր տեսնում գալոզներին, նրանք երեք-չորս հարիւր քայլ հեռու էին, իւր քողն էլ թանձր, մեյն գլխով նշան էր անում հարկաւոր հարսի նման, որ չէ վախենում գնդակից լեռնականի կողակիցը, իբրև թէ դաւով գուռնայ էին ածում նորահարսի առաջից գնացողները.....:

Գնդակները կրկնեցին, օֆիցերն ու կօզակները մի ընկան. իսկ միւսը ետ դարձաւ ձին սաստիկ մտրակելով.....:—Տղերք, հասէք նրա ետևից, շտապեցէք, մի ետանաք, գոռում էր բէգոն իւր ձիաւորներին, որոնք սրընթաց սլշաւում էին փախչողի ետևից: Բէգո-բէգը կարճ ժամանակում ետ կանգնեցրեց Ջաւահիրին ու Շէյխոյին ճանապարհի վրայ, ինքը առաջ անցաւ ընկածների կողոպուտը վեր առնելու: Կօզակը բաժին ընկաւ բոլոր ձիաւորներին, իսկ օֆիցերի արծաթի թուրը, ռէվոլւերը, հրացանը, քսակը, ոսկի ժամացոյցը, կնիք մատանին, շողակ մատանին, խուրջինը սպիտակեղէններով, շորերը, բոլորը Բէգոն վեր առաւ, յանձնեց իւր ձիաւորներից մէկին, որ զգուշութեամբ

տուն տանէ, իսկ օֆիցերին իւր կօզակի հետ գցեցին հեղեղի փորած խրամը, սատակած ձիերը ճանապարհից դուրս հանեցին, վայրի գազաններին կեր թողին, օֆիցերի մատեանի արծաթապատ թամքը վեր առաւ բէգը, միւսը բաշխեց իւր ընկեր ձիաւորին և շարունակեցին իրենց ճանապարհը.....:

Այդ բոլոր աշխատութիւնները այնպէս կատարեցին, որպէս թէ տասը օրին ճանապարհորդները կանգ առան եալլաւորների հիւղերի առաջ, մի մի թաս մածնի չալխամալ խմեցին և կրկին իրենց ճանապարհը շարունակեցին: Պատերազմի տարի, արիւն ու արիւնահեղութիւն.....:

Շողակ մատանին անմիջապէս Բէգո-բէգը անցկացրեց իւր սիրուհու՝ Գոհարի մատին ասելով՝

—Այս քու բաղադ էր, այս տարի ինձ գալիս է ամեն կողմից, ջուրն էլ է բերում, քամին էլ է բերում:

Գոհարը նազ անելով ընդունեց նւէրը, բայց ներսից էլի մի խոց բացւեց նորա սրտի վրայ և քամեց ու ցնդեց մի թաս արիւնը.....: Ճանապահները շարունակեցին, միայն Բէգո-բէգի աչքերը մնացին կօզակի ետևից գնացող քրդերի վրայ, չէին երևում նրանք էը կային, չէին վերադառնում: Աշնանային պարզ օր էր և Աղադևէի սարերի տակով գնում էին ձիաւորները: Հեռան գագաթի վրայ բարակ ձիւնի շերտը երևում էր, բայց դեռ փեշերն ու ստորոտը մերկ էին սպիտակ սաւանից և չորացած, գեղնած խոտերում արածեցնում էին մանկահասակ հովիւները իրենց հօտերը:

Ընդհակառակն, յետինքից քիչ յետոյ, մտաւ Բէգո բէգը Ղէյրաթի գիւղը, մեծ ուրախութիւն պատ-

ճառելով իւր *հղիգին*, նամանաւանդ գանգատաւորներին։ Բէգօ-բէգի բացակայութեան ժամանակ քրդերը չէին ցանկանում ներկայանալ մի հայի, բէգի քարտուղարին, մի լամուկի, որի երեսին մազ էլ կար։ Ի՞նչպէս կարելի էր խնդրելով մօտենալ մի տղայի, որի բոլոր առաւելութիւնները գիրն ու գրիչն էր.....։ Ձուռնէր գոնէ մի կատարեալ հասակ, սպիտակած մազերը և պատկառելի ձևերը, որ նրան տային այն յարգանքը, որը պահանջում էր նրա պաշտօնը...։ Բացի այս, պէտք է իմանալ, որ հային էլ, եթէ էլ ճանաչէին, չիմանային, որ նա Բերնացի Քոթանջի ուստա Սագօի տղան է, գուցէ մեծարէին, բայց ճանաչելուց, նրա ծննդեանդը գիտենալուց, նրա հօրը զանազան ապսպրանքներ տալուց յետոյ, էլ ինչպէս կարելի էր գնալ և գլուխ իջեցնել այդ տղային.....։ Բացի այս, պէտք էր թուրքերէն խօսել այդ քարտուղարի հետ, որը բաւական ճանրացնում էր գործը և չէին կարողանում որոշ իրենց մտքերը արտայայտել, իսկ բէգը խո՛ քուրդ էր և *կրմանջեան* էր խօսում։

Նամանաւանդ քարտուղարը այսօր շատ տխուր էր, ամենի հետ կուռում էր և ոչ ոքի հետ կատարեալ չէր խօսակցում.....։ Նրան շատ անգամ արտասուած էին տեսնում, շատ անգամ էլ հեռանում էր ձորերը առանձնանում և ինքնիրեն խօսում, գոռում, գորգոռում։

Նրան մի բան պատահել էր, նրան մի ինչ որ տարօրինակ եղելութիւն էին պատմել, բայց որ չէր իմանում, թէ ինչ էր եղել.....։ Ամեն օր բանակից հրամաններ էր գալիս, թղթեր էին բերում չափարներից,

պահանջներ էր լինում, գործել, կարգադրութիւններ պէտք էր անել։ Քարտուղարը բոլորի արագութեամբ բոլորը կատարելուց, կարևոր պատէրները տալուց յետոյ, պատասխանում էր այդ թղթերին երկտող, լակոնական, պատերազմին յարմար պատասխաններով և հեռանում իւր *դիւան-խանից*, ապսպրելով ձիաւորներին, որ հարկաւոր դէպքում գան իրեն պարեն ջրափի կողմերը.....։

Բէգի գիւղ մտնելը ուրախացրեց նոյնպէս չափարներին, ձիաւորներին, որոնք ցանկանում էին իրենց տոհմական պեսին ծառայել, ոչ թէ վարձկան լինել ու կատարել գեաւուր քարտուղարի հրամանները։ Մի խօսքով քրդական համայնքը ուրախութեան արտասուքը աչքներին մօտեցաւ իրեն աւագանու հետ Բէգին, աբայի փեշերը համբուրելով շրջապատած ներս տարան նրան հանդիսաւոր կերպով։ Մեծ ընդունելութիւն արեցաւ բէգի նոր կնոջն էլ, որին անմիջապէս տարան հարէմի ամենաշքեղ զարդարուած սենեակը։ Այն ննջարանը, որտեղ մինչև այդ ժամանակ անցնում էր երջանիկ օրեր բէգի նախկին կանանց իշխանուհին՝ Գիւլ-փէրի խանումը։ Բայց ինչպէս արեգակի բարձրանալուց յետոյ, աստղերի հետ կորչում է և լուսինը, այնպէս էլ Ջաւահիր-փէրին երևելուց յետոյ՝ ընկաւ Գիւլ-փէրու աստղն էլ, խաւարեցնելով ակն ու արևը.....։

Աւելի լաւ էր սրի հարուածով ճեղքել Գիւլ-փէրի կուրծքը և դուրս հանելով կարատել սիրտը, քան թէ զոհել նորան մի անճանօթի, անյայտ աղջկայ համար, որի ծագումն անգամ կասկածելի էր.....։ Գիւլ-փէրին, յայտնի Գէօլաշանցի Փալազ-բէգի աղջիկը ան-

պատուի, երեսից գցուի և նորա վրայ հրամայող դուշմա (նոր կին) գալ, դա մահացու էր նորա համար, էլ ապրելն անտանելի էր, էլ նորա կեանքն աղուլւած էր։ Քիւրդ կինը չի համբերիլ այդ ստորինանի ստորութեան, նամանաւանդ Գիւլ-փէրի, նման մի գոռոզ կինը չէր կարող գիջանել........։

Նա էր հռչակել Բէգօ-բէգի անունը, նորա գովասանքն էր անում բոլոր քրդական համայնքը, նորա աշխատասիրութիւնը. նորա արիութիւնը, նորա խելքը օրինակ էր բոլոր օջախներում և ամեն անգամ քուրդ այրերն իրենց կանանց խրատած ժամանակ՝ կրկնում էին.—Մէկ գնացէք, գնացէք մտէք Գիւլ-փէրի խանումի չադիրը, տեսէք ինչ կարգ ու շարգ է դրել այն օջախի աղջիկը, տեսէք ինչպէս ամեն գործ իւր ձեռքովն է շինում և չորս բոլորը գտնուողներին ինչպէս սովորեցնում է ամեն կարգ։ Նա կնիկ չէ, նա խանում չէ, նա մէկ անգին գանձ է։—Եւ այդ տիկինը և այդ խանումը, տասնը հինգ տարի աւելի իւր ժրաջանութիւնով Բէգօ-բէգի տանը սիւն կանգնած կինը, ասպարէզը թողնելու էր Ջաւահիր-փէրիին։

Ինչպէս նկարագրել այն տագնապը, որ կրում էր Գիւլ-փէրին, ինչպէս երևակայել այն կատաղութիւնը, զայրոյթը........։ Նախանձը, մանաւանդ Գիւլ-փէրիի նման մի վայրի կնոջ նախանձը, որ մարդուց երեք գեղեցիկ, առոյգ որդի, մի անտիական աղջիկ ունէր, ինչ զարհուրելի էր վիրաւորւած կնոջ նախանձը և ինչ սոսկալի ատելութիւն դէպի այն էակը, որ կաշկանդել էր իւր սիրած մարդու սիրտը։

Ն

ՑՆՈՐՒԱԾԸ

Բէգօ-բէգը իւր ընդունարանը, կամ ինչպէս ասում են գեղջկական բարբառով «Միւսաֆիրի օդան» յատկացրել էր դիւանատան, որտեղ և պարապում էր իւր օգնական քարտուղարը։ Բէգօ-բէգը շատ քիչ էր գալիս դիւանատուն. գալիս էլ սրա նրա գանգատը լսում, քարտուղարի որոշած և գրած վճիռը կնիքով վաւերացնում և սրպէս մի նորափեսայ, կամ մեղրամսում ապրող մարդ, անմիջապէս քաշւում էր հարեմը, Ջաւահիր-փէրի խանումի մօտ։ Կառավարութեան ղէկը, ծանրութիւնը, դառնութիւնը, մի խօսքով դժւարութիւնները ընկած էր քարտուղարի ուսին և նա տանում էր այդ բեռը մեքենաբար։ Ստանում էր թղթեր մեծաւորներից, կարդում, պատասխանները գրում Ռուսերէն, եթէ հարկ էլ կար, հրամաններ էլ էր գըրում Թուրքերէն կամ հայերէն՝ զանազան գիւղերի քէհաներին և այդ բոլորը շատ անգամ կատարում էր անզգայաբար և չէր էլ կարող յիշել նոյն իրիկունը, կամ հետևեալ օրը, թէ ում ինչ էր գրել։

Այդ քսան և մէկ տարեկան քարտուղար օգնականը բնիկ Ղարսի նահանգիցն էր, ինչպէս ասացինք գիւղացի և արհեստաւորի որդի, որը Ղարսի Սողոմոնեան Գրիգոր պատուելուց Զամչեանի քերականութիւնից դաս էր առել, Երզնկացի Աբգուլեան վարժապետից Թուրքերէն սովորել, մէկ երկու տարի էլ Ալէքսանդրոպոլ Ալէքսան խալֆի շկօլը յաճախելով՝ բաւական Ռուսերէն էր սո·

վորել և քաղաքային դպրոցը քննութիւն տալով, վը-կայական ձեռք բերել: Բանակի կառավարիչների ձեռքին դա մի լաւ գործակատար էր, ամենահարկաւոր մարդ, որը բաւական ժամանակ թարգմանչի պաշտօն կատարելուց յետոյ, վերջապէս իւր հայրենի գաւառի կառավարչի քարտուղարի աստիճանին էր հասել: Այն խառնաշփոթ ժամանակ, յայտնի բան է, ուշք չէին դարձնում արժանաւորի և անարժանի վրայ, բայց և այնպէս իւր գործին հաստատ ծառայող էր բէգի դեռահաս ղեկավարը: Բէգն էլ չափազանց գոհ էր, որովհետև քարտուղարն էր իւր երեսը պարզում ամեն տեղ, եթէ նա չը լինէր ամեն օր մի մի արգելքի կը պատահէր և, յայտնի բան է, կը կորցնէր նշանակութիւնը մեծաւորների առաջ:

Այս գեղեցկատես երիտասարդ քարտուղարը, պապատերազմական վայել հագնուած էր սև կոկիկ սիւրտուկ՝ երկու կարգ սպիտակ կոճակներով, կարմիր օձիքով, կապոյտ վարտիկ, կարմիր երիզով և երկայն կօշիկներ, որոնք չորս հինգ մատ ծնկներից վեր էին բարձրանում: Նոր նոր պէխերի տեղը սևացել էր, բայց ուսերին արդէն դրած էր խոշոր հիւսած чиновничьи пуговицы, որոնք պսպղում էին և շլացնում վայրենիների աչքերը: Բարձր հասակ ունէր, լայն կուրծք, երկայն վիզ և ձողի նման ուղիղ կազմուածք: Խոշոր աչքերից կարծես կրակ էր ցայտում, գերուկ թշերից վարդ էր թափւում: Գրաւիչ էր նրա շարժուածքը, խրոխտ քայլերը համակրելի ձևերը: Արշակ ադա էին կանչում նրան քրդերը, ակամայ և „ադա“ բառը ցած ձայնով հնչում, որպէսզի չը լինի թէ գեռուրի վրայ հաս-

տատուի այդ ազնւատոհմ տիտղոսը: Բայց թէև ադա չէր ծնւել Արշակը, ադա էր բնութիւնով, բարքով, ազնւութիւնը կարծես վրան ձևւած ու կարւած էր:

Առաւօտ էր, դիւանատանը իրար դէմ նստած էին պաշտօնեան և իւր ղեկավար քարտուղարը: Լըռութիւնը տիրել էր նրանց, բէգը անմռունչ ծխում էր չիբուխը, լիւլայի միջից այրոցքի փափուկ ձայնը տարածւում էր սենեակի մէջ, իսկ Արշակը իւր գլանակը ծխում և թէկն տւած բազմոցի բարձին, աչքերով հետևում էր արտաշնչած ծխին: Մտատանջութեան նշաններ էր երևում բէգի երեսի գծերի վրայ, նա տատանւում էր և չէր կարողանում որոշել վճռահատել իւր ծրագրած մտադրութիւնը: Արշակը աչքի ծայրովը դիտում էր բէգի շարժումներն և սպասում: Բայց բէգը մի բառ անգամ արտասանելու վճռականութիւն չունենալով, լռել էր և այդ լռութիւնը կարող էր շատ երկայն շարունակւել, եթէ անհամբեր Արշակը չընդմիջէր և չը խզէր:

—Ես չեմ կարող չը գնալ, եթէ հակառակում ես, էլ չեմ ծառայել, հրաժարականս կը գրեմ:

— Ախար լաւ, ես որ գնամ, իմ գործերս առանց ինձ դու կառավարում ես, բայց դու որ երթաս, ես ի՞նչ անեմ, ո՞վ պիտի կարդայ թղթերն, ո՞վ պիտի պատասխանէ: Դու գիտես նրանց բնութիւնը, характер [illegible]: Ես ի՞նչ գլուխս լամ. ես ի՞նչ պատասխան տամ....:

—Ախար ես դրանց գերին խո չեմ, ութն ամիս է, ծառայում եմ, երկու օր ինձ իրաւունք չեն տալ, գնալ ու վերադառնալ:

— Նրանք կը տան, բայց ես, ես ինչ անեմ, ինձնից պատասխան ուզելիս, ես ինչ պատասխան տամ…։

— Երկու օրն ինչ է, մի կերպ եօլայ կերթաս, գալողին ասա, որ հիւանդ եմ, շուտով պատասխանը կը տամ, կամ գործով տեղ եմ գնացել, քիչ համբերցրու, ուտացրու, քնեցրու, ես երկու օրից աւել չեմ ուշանայ։

— Ինչ ասեմ, ոչ կարող եմ ասել, գնա, ոչ էլ, մի գնալ։ Գնաս, այս պատերազմի ժամանակ է, վախենում եմ, ստիպողական գործ պատահի, զայրացնենք նրանց։

— Դու անհոգ կաց, բան չի լինիլ։

— Չեմ կարող կապել ոտքերդ, գնա, բայց երկու օրից էրբ կարող ես վերադառնալ…………։

— Խօսք եմ տալիս, էգուց չէ, միւս իրիկուն կգամ։

— Գնա, գնա, Ալլահը բարին կատարէ։

Արշակի դէմքից մռայլը բաւական հեռացաւ, Նա սկսեց մտքով կազմել իւր ուղեգիծը, այսինքն վաղուցւայ կազմածը կրկնել։ Նա այդ ուրախառիթ երեւակայութիւններով զբաղուած միջոցին, բէգը տեղից վեր կացաւ, գնաց դէպի հարէմ, որ շատ հեռու չէր։ Արշակը չը նկատեց անգամ նրա մեկնիլը, Նա մօտեցաւ բազմոցի ծայրին դրած սնդուկին եւ գրիչն առնելով սկսեց խազմզել, անորոշ գծեր։ — Պէտք է, գիշերս հարկաւոր է ճանապարհ ընկնել, կէս գիշերից առաջ կը հասնեմ, այնպիսի մի րոպէ, որ ոչ ոք մակաբերել չէ կարող։ Նա քնած չի լինիլ, կամ պատրաստուելիս կը լինի, կտուրից ձայն կը տամ եւ եղբայրը, սրտակից ընկերս՝ Գարեգինը տանից աղմկելու բաց կանէ դուռը։ Գալօ ափարը քնած կը լինի, նա չի խանգարիլ մեզ, հարսները խո հոգի են տալիս Գոհա-

րիս համար, նորա սիրտը ոչնչով չը պիտի վիրաւորեն։ Ախ՜, Աստուած, ինչպէս տակն ու վրայ է լինում սիրտս, ինչպէս թլթլում է, ինչպէս խփում է, ա՛հ, ես շատ անգութն եմ, ահա երեք ամիս է, ամբողջ հարիւր օր է, որ ես չեմ գնացել նորան տեսնելու……։ Ո՜հ, այս որքան ժամանակ է, որքա՛ն երկար ժամանակ է, որ ես, ախ՜, ես ինչի՞ այսքան ուշանայի։ — Այս տխուր մտքերով տագնապելիս ներս մտաւ Բէգօ-բէգը, ձեռքին ճանապարհին սպանած օֆիցերի սուրը, ռէւօլւերը եւ պատրոնիկը, դրեց բազմոցի վրայ ասելով.

— Արշակ ջա՛ն, ես վաղուց է միտք ունէի քեզ սիրոյս նշան մի նուէր տալու, բայց հանգամանքը չէր պատահում։ Կաղզման եղած ժամանակ մոզզալթից (աճուրդ) գնեցի այս արծաթապատ սուրը քեզ համար, ինձնից յիշելիք եւ այս ռէւօլւերը։ Դու որ կաս, Ալլահը գիտէ, որ սրտանց եմ ասում, իմ ամենաանգին բարեկամն ես եւ անփոխարինելի ընկերը։

— Շնորհակալ եմ, բէգ, այդ ձեր վեհանձնութիւնն է, որ այդպէս վարւում էք ձեր ստորադրեալի հետ, հոգւով շնորհակալ եմ։

— Դու ստորադրեալ չես ինձ համար, դու առաջնորդ ես, դու որ չը լինէիր, ես ինչպէս պիտի կառավարէի, ինչպէս պիտի գոհացնէի մեծաւորներիս սիրտը։ Այդ չնչին ընծաները, խնդրեմ վեր առ, ապագայում երբ Գիւմրի գնամ……։

— Բէգ, դուք բոլորովին պարտաւորեցնում էք ինձ. ասաց ու վեր առաւ ժպիտն երեսին ոսկեջրած արծաթապատ ու սաւադով բանուած թուրը։ Նա զըննում էր հրճուելով, ինչպէս մի երեխայ, իւր կարմիր

ղանաւուզ արխալուղի վրայ ուրախանում է։

—Ցանկարծ վրայի տառերը նկատելով ասաց.

—Կարծես, ինձ համար է շինուած, Д. С. Д., եթէ Дի պոչերը երկարացնել տամ, կը դառնայ A. Արշակ Սերգեևիչ Դելանով

—Մի՞թէ վրայի տառերը անւանդ յարմար են։

—Այո, այո, մեր Լէզգի Սուլէին կը տամ և մի տառը ուղղելուց յետոյ, ճիշտ իմ անունս վրան սաւատած կը լինի։

—Որ այդպէս է, այդ մարդու կնիք մատանին էլ եմ գնել, այն էլ քեզ բաշխեմ, ասաց ու գրպանից մետաքսէ թէլից հիւսած երկար քսակը հանեց, բաց արաւ կապը, արծաթ ու ոսկի դրամների միջից հանեց խրամում գլորած օֆիցերի մատանին և անցկացրեց իւր ձեռքով Արշակի ցուցամատին։ Արշակը ափսոսում էր, որ սկզբնատառ Aի փոխարէն Д էր։ Ռեւօլւերի վրայ էլ նոյն տառերը փորագրւած տեսաւ բէգի օգնականը։

—Ո՞րտեղ պատահեց քեզ այս բոլորը։

—Մի օֆիցեր տանում էր ուել արքունի փողեր, ծախում էր բոլոր ունեցածները, որ ճանապարհի ծախս դուրս բերէ և խոյս տայ Թուրքաստան կամ Պարսկաստան.......։ Աժան էին տալիս, բոլորը միասին վեր առայ։

—Բայց.....ախար աներեսութիւն կը լինի, դուք սրանց համար վճարել էք, թողէք վերադարձնեմ ձեզ։

—Արշակ ջան, աւելորդ են այդ խօսքերը, դու դրանք կը բանացնես ինձանից յիշատակ։

—Թուրը ընդունում եմ, բայց միւսները.........։

—Բոլորը միասին եմ գնել, բոլորը միասին էլ

բաշխում եմ, էլ դրա խօսքը չանենք։ Դու ինձ ասա, երբ ես գնալու։

—Հենց այսօր, անմիջապէս ճանապարհ պիտի ընկնեմ։

—Հետդ ո՞ւմն ես տանում։

—Յակօյին։

Լաւ, տա՛ր, նա շատ ղոչաղ տղայ է, վախ չը կայ։ Ուզում ես, Ոսօյին էլ տար։

—Չէ աւելորդ է, ինչ կարիք կայ երկու-երկու մարդ վեր առնել։

—Ինչպէս որ կամենում ես, բայց չուշանաս, երբ ես վերադառնալու, „սպիտակ եափունջաւորը“ թէ նեղացաւ, էլ էն ժամանակ վայ եկաւ վրաս։

—Ըգուց մի՛ սպասել, միւս օրը, եթէ չը մեռայ, այստեղ եմ.......։

—Ես գիտեմ, որ դու խօսքիդ հաստատ տղայ ես գնա՛, Ալլահը քեզ հետ։ Հասօ՛, Հասօ՛ ախուից սպիտակ արաբական նժոյգը քաշեցէք, նոր գնած արծաթապատ թամքը զարկէք, պատրաստեցէք Արշակ-աղի համար։ Յետոյ ետ դառնալով քարտուղարի կողմն շարունակեց, ինձ հետ ինչպէս նեղութիւնները կրում ես, այնպէս էլ վայելչութիւններիս հետ ընկերացի՛ր։ Քեահլանը քեզ եմ բաշխում։

—Բէգ, դուք ինձ բոլորովին պարտաւորեցնում էք։

—Դու էլ շատ արժանաւոր ես...։

Նոյն օրը ճանապարհ ընկան Արշակն ու Ցակօն դէպի Արաքսաձորը և կարճ, սակաւ անցուդարձ ունեցող ուղիներով, լեռների վրայով, ձորերով, վտանգաւոր կիրճերով և հովիտներով հասան իրենց նպատակատեղին։ Հեռուից, լեռան գագաթից Արշակը սկսեց դիտել այն գիւղը, որտեղ մէկ երկու ժամից մտնելու էր։ Երեկոյ էր, Քեօսայ-Տաղի կշտով արևը իջել ու մօտեցել էր հորիզօնին։ Սպիտակահեր ալևոր լեռը, տեղ տեղ իւր սև ու մուժ մանիշակագոյն ապառաժներով, արեգական վերջին ճառագայթների տակ շողշողում, ծըփում, կարծես ծածանւում էր, որի հեռաւորութիւնը խաբում էր դիտող աչքերին, թւում էր, թէ մուժ նարնջագոյն ամպերը պատած լինէին այդ ոսկեշող տեսարանները։ Ցածրում չէր լսւում դրախտի գետի որոտագոյն սահանքների ձայները, բայց արծաթի նման փայլում էին սպիտակ փրփուրների ու ալիքների սուր սուր ծայրերն։ Աշնան չորացած ու դեղնած խոտերով, թըփերով ու ծառերի տերևներով Արաքսի ձորը ստացել էր հիւծւած ու մաշւած այրի կնոջ դեղնած ու նիհարացած վշտալի դէմքը, որտեղ ամեն գծերի ու խազերի մէջ երևում էին ցաւերի լեղի արտայայտութիւնները։ Արեգակը իւր ծիծաղ դէմքով, սփոփիչ ու խրախուսիչ ճաճանչներով, որքանոր ուզում էր մխիթարել և յուսադրել, բայց հովիտը՝ ձմեռն ու սառնամանիքը—մահն ու սպիտակ սաւանը նախատեսելով, ժպտում էր, ժպիտն երեսին շնորհակալ լինում իւր յուսադրողից, միայն սրտով յուսահատ.....։ Գետափում հովտի խորքերում սառն քամիներից պաշտպանւած, ապառաժներով պատսպարւած տեղերում երևում էր կանանչ, դալար,

նորածիլ, խոտը ծաղիկը, որոնք առատ ցողերով փայլում էին և պահպանելու էին գոյութիւնը ձմեռւայ սառնամանիքի շրջանում։ Այդ վայրերում, իրենց պնդերեսութեամբ պահպանում էին Վարդեհերի դիցուհուն նւիրւած մշտագարնան դալարներն, որոնց գարնան ծաղիկները, խառնւում էին Վարդամօր ծաղկեայ փնջերում, անգութ հովիւներն վեր էին վարում իրենց ապառաժներում մագլցող ու ցայտող այծերն, որոնք անխնայ արածում և մնացածն էլ ոտնատակ էին տալիս, տրորում դիցանւէր թաւշանման փափկիկ բոյսերը։

—Բայց ինչ տեսաւ Արշակը· ինչ վիճակում երևեցաւ նրա աչքերին Ծանձոտը։ Ո՛չ մի տան օջախից չի բարձրանում ծուխը, այն մուժ ու թուղպ ծուխը, որ կենդանութեան նշան է, այն դէպի երկինք բարձրացող կապտագոյն մուխը, որ ցոյց է տալիս վերին Թագաւորին, թէ ինքը շնչող, զգացող, դատող և վաստակող մի ընտանիքի գոհաբերութիւնն է, նրա գոյութեան ապացոյցն է, նրա տոկունութեան և արիութեան պտուղը։ Այդ չարագոյժ անկենդանութիւնը Արշակի նախազգացումները հաստատում էր, վատ վատ երազները իրականացնում և մթնեցնում նրա հրացայտ աչքերը։ Բայց յոյսը, գոյութեան անթափանցելի սպարկը, նրա շըփոթւած աչքերին ներկայացնում էր ծխանման ուրու-ականներ, որոնք խաբում էին վշտալի երիտասարդին և մղում առաջ, առաջ դէպի դառնութեան բզուղն ու ծուծը։ Վարժ երիվարները քարքարոտ լեռների ստորոտներից կամ փէշերից արագ-արագ արշաւում էին, տանելու իրենց բեռնաւորներին դէպի գերեզմանական գիւղի աւերակները........։

Արևը արդէն մտել էր լեռների ետևը և մըթութիւնը տիրապետել հովիզօնին։ Երկնքի աստղերը տեղ-տեղ աղօտ փայլով պսպղում էին, կտոր կտոր ամպերը մեծագոյն մասամբ տարածել էին երկնակամարի զանազան կողմերը և թանձր քօղով կարել նրանց յարաբերութիւնը աշխարհի հետ։

Ճանապարհորդները մթութեան հետ առաջ էին գնում, Արշակը մօտենում էր իրեն համար պատրաստած խորխորատին.....։

Արշակը երևակայում էր, որ արդէն մօտեցել է այն ժամը, այն րոպէն, որին երեք ամիս շարունակ երազել էր.....։ Գոհարին, իւր սրտի հատորին, մի քանի րոպէից յետոյ գրկելն էր մտածում և երկու կարօտացած սրտերին իրենց փափագին արժանացնել.....։ Նա մակաբերում էր այդ հանդիպումը, նրա մտաւոր տեսողութեան առաջ գալիս էր այդ դիմաւորութեան պատկերը։ Նա զգացում էր, նա արդէն կարծում էր, որ երազած իրականութեան մէջն է և սիրտը բաբախում էր չափազանց արագութեամբ....։ Բայց դեռ երկար ճանապարհ ունէր գնալու, դեռ պիտի բարձրանային զառիվայրեր, իջնէին ձորեր, ձորակներ և կիրճեր։ Անմռունչ գնում էին, առանց ետևները մտիկ անելու, աներկիւղ քշում էին ձիերը և լուռթիւնը խանգարում էր միայն ձիերի ոտնաձայնը։ Ղաւաբը սաստկանում էր, մթութեան մէջ ոչինչ չէր նկատւում, բայց խելօք կենդանիները անշփոթ գնում էին իրենց քաջածանօթ ուղիներով։

— Ծակո՛, ի՞նչի ես լուել, բերանդ բաց, մի քանի խօսք էլ է խօսիր։ Անցածից գնացածից մի բան պատմիր։

— Աղա ջան, ես ի՞նչ գիտեմ, որ ի՞նչ խօսիմ։ Իմ տեսածները ի՞նչ պիտի լինի, գիւղի գեղ աղջիկներ, եալլի պար, դահուլ զուռնայ։ Այդ ամենը դու հազար հազար անգամ տեսել ես։

— Հենց էդ եալլիների ժամանակ շատ բան կը լինի։ Ասա, քեզ վրայ ձեր գեղի աղջիկները մանի չեն ասել, մէկը չը կայ, որ ճանապարհդ է մտիկ տալիս։

— Ի՞հ աղա ջան, մարդ է, սիրտ է, ո՛վ գիտէ։ Ես ուրթն ամիս աւել է, որ ձիու շալակից ցած չեմ գալիս, հա՛—Թուղթը տար, պատասխանը բեր, գնա՛ Ֆլանկին կանչիր, գնա՛, այս գործը տես,—այնքան ինձ այս ու այնն կողմը չլել են, որ ամեն բան մոռացել եմ.....։

—Ասել է, սպասող ունիս.

—Արփայ-չայը մեծանայ, սէլաֆը Ղազարապատը տանի, ես էլ ազատւիմ, նա էլ ազատւի.....։

—«Ես էլ ազատւիմ, նա էլ...» կրկնեց մտքի մէջ Արշակը և դարձեալ լռեց։ Նոյն լռութիւնով շարունակեցին ուղին երկուսն էլ։ —Ի՞նչ ունի այս տղան, որ կրկնում է, ես էլ ազատւեմ, նա էլ.....։ Ուրեմն նա էլ վիշտ ունի, ուրեմն սրանք էլ կարօտ են քաշում, Ծակօն էլ գիշեր ցորեկ սիրականի համար է մտածում։ Բայց այդ սոսկալի մխքը, այդ զարհուրելի յուսահատութիւնը ինչի՞ էր տիրել Ծակօյին....։ Ի՞նչն է ստիպում նրան այդ խօսքն ասելու.....։ Դուցէ սիրւած չէ փոխադարձ սիրով և անիծում է բաղտը.....։ Ո՛չ Ծակօյի ձևերը ցոյց են տալիս, որ կոզմնակի երար սիրում են.....։ Իրենց վիշտը ուրիշ պատճառ ունի։ Ղեղճ տղայ, ո՛վ է իմանում, որքա՜ն տառապում ես այդ մտքերով...։ Դուցէ հանգամանքները նրան էլ կապել են ինձ

նման, խեղճը չի կարողանում գնալ կարօտն առնել և-ուրախացնել սիրականին: Գոհար, Գոհար ջան, ո՞վ է իմանում, թէ դու էլ ինձ համար որքա՜ն տանջւեցար, որքա՜ն ճանապարհս աչեցիր ու լցւած սրտով ողբացիր, լացիր.....: Ո՛չինչ, ո՛չինչ, ամեն բան կը մոռանանք, ահա ես, ահա սիրտս,.....դու հանգամանքները դիտենալուց յետոյ, պիտի ներես ինձ, պիտի մոռնաս և պիտի համբուրես ինձ.....: Բայց արդէն բաւական մօտ ենք գիւղին, ճրագի նշոյլն անգամ չի երևում, ահ, որքա՜ն թանձր մէգ է պատել գեղին, ոչինչ չի երևում...: Հաւատարիմ շներն ոռնում են, մի ձայն անգամ չի գալիս:

—Արշակը Տանձուտի աւերակների տակն էր գըտնում, հարիւր քայլ էլ եթէ առաջ գնար, կը մտներ աւերակները, բայց նրա կասկածներ, նորոգւեցան և զօրեղացան: Նա դողում էր, նա սարսափում էր, ուզում էր յոգնած ձիու սանձը քաշել և կանգ առնել: Նրի-վարն զգում էր, կարծես, թէ դիմում էր քստմնելի աւերակները, որտեղ անմեղ զոհերի ոգիները իրենց սրտաճմլիկ դիրքերով պիտի մղկտացնէին զգայուն պատանեի փղձկուն սիրտը, դրա համար դանդաղ կերպով ակամայ փոխում էր իր նուրբ որուններն դէպի առաջ.....: Ընկաւ աւերակների մէջ, գլորւեց փլատակներում Արշակը յուսահատ և անզգայացած.....:

Այրաթից դուրս գալու երրորդ իրիկունը, Արշակը նոյն սպիտակ նժոյգը հեծած, իւր չափա՝ Յակոբի հետ վերադարձաւ պաշտօնատեղին: Նրա նախկին

մռայլ դէմքը բոլորովին գերեզմանական գոյն էր ստացել, նրա աչքերը բնի մէջ խորացել էին, նրա դէմքը էլ չէր փայլում, կորել էր այտերի կարմրութիւնը, նիհարել էր, նւազել էր, կռացել էր, էլ նոճու պէս չէր ծածանւում, էլ առաջւայ պէս խրոխտ քայլերով չէր մանգալիս: Ձիուց իջնելու պէս մտել էր ննջարան—գրասենեակը, կամ աւելի ճիշտը, Բէգօ-բէգի ընդունարան—դիւանատունը, տարածւել էր մեռելային անշարժութեամբ, նւաղածի նման ո՛չ զգում, ո՛չ խօսում էր, ո՛չ դատում և ո՛չ էլ հասկանում:

Զարհուրելի վիշտը նրան բոլորովին ընկճել էր, նա կրքերին ու ջղերին չէր կարողանում յաղթել: Այդ անզգայութեան միջոցին Բէգօ-բէգը եկաւ այցելելու օգնականին, բայց նրան այդ դրութեան մէջ տեսնելով անմիջապէս կանչել տւաւ Հղիզի ամենանշանաւոր դեղատուներին, պառաւներին, որոնց բոլոր ճարերը օգուտ չունեցան.....ակամայ խոստովանւեցին, որ անկարող են օգնելու բէգի դիւանադպրին:

Բէգօ-բէգը կանչեց Յակոբին և իրենց ճանապարհորդութեան բոլոր մանրամասնութիւնները հարցրեց: Յակոբ նկարագրեց ամենը և իրենց հաւաքած տեղեկութիւնը, իբր թէ Մխրալին փախցրել է Արշակ աղի նշանածին Արզուրում:

—Սէրը կը ցնորեցնէ մարդու, ասաց Բէգօ-բէգը պատմութիւնը լսելուց յետոյ, սիրոյ զօրութիւնը ես լաւ գիտեմ:

ՆԱԽԱՆՁՈՏ ՔՐԴՈՒՀԻՆ

Ինչ որ երևացել էր Ջաւահիր-փէրին Բէգօ-բէգի տանը, վիշտն ու թախիծը մի րոպէ անգամ չէր հեռացել Գիւլ-փէրիի սրտից։ Երբ Ջաւահիրը շորորալով ման էր գալիս տան մէջ, երբ նորա սէլվիի նման բարձր հասակը տեսնում էր Գիւլ-փէրին, աչքերը փակում, երեսը շուռ էր տալիս, որ չը տեսնէ նորա գերբնական շողարձակ դէմքը։ Տանը բոլոր հարսներն ու աղջիկները, հարճերն ու աղախինները ամենքը տալիս էին անկեղծ յարգանք, ամենքը Ջաւահիրին դուր գալ էին ուզում, ամենքը նորան սիրում և նորա համակրանքը ձեռք բերել էին աշխատում։ Ողջ գիւղում գովում էին նորա չքնաղ պատկերը, նորա աննման աչքերը, հաղւագիւտ ծամերը, բարձր վիզը, լայն կուրծքը, բարակ մէջքը, համեստ և մարդաշահ բնաւորութիւնը։ Նա ասում էին կին չէ, նա հասարակ արարած չէ, նա մի փէրի է, մի մէլայիք է, մի հիւրի, երկնային հոգի։ Բէգօ-բէգը խօ օր օրի վրայ երիտասարդանում էր և չէր իմանում ինչպիսի յաւերժական անկեղծ սիրոյ կապերով պնդացնել Ջաւահիրի սիրտը իւր հոգու հետ..։ Բորբոքւած տռփանքը մոռացրել էր բէգին Գիւլ-փէրիին, որի նախանձը օր օրի վրայ աւելանում էր և այրում մրկում նորա վիրաւոր սիրտը։

Գիւլ-փէրին պատմել էր տւել, մանրամասնորէն իմացել, թէ ինչպէս Գոհարին ջրից բռնել և իրեն կընութեան էր վեր առել Բէգօն։ Նորա նախանձոտ աչքե-

րը թէև արդարը որոշելու անընդունակ էին, բայց Գոհարի անուրանալի աննման.գեղեցկութիւնը նա խոստովանում էր և աւելացնում, որ Ջաւահիրը կին չէ, այլ անպատճառ ջրհարս, գետերում ապրող ջրպառաւի դուստր, փէրի, ոգիների ծնունդ։ Այդ բանը նա հաւատում էր և այդ կարծիքը պաշտպանում էր Բէգօ-բէգի բոլոր էլլիգը։ Ջրերում ու գետերում մարդիկ չեն ապրում, ջըրերն ունին իրենց բնիկները, ջրահարսները...։ Ամէն պառաւ, ամէն չարախօս կին իւր սեպհական ոճով էր նկարագրում այդ ջրի բնակիչներին, որոնք անմահ էին։ Ջաւահիրը նրանց աղջիկն էր, Ջաւահիրը նրանց ցեղիցն ու սերնդիցը.......։

—Միթէ Բէգօյի սիրտը ջինները չեն կապել, միթէ նրան ինձնից սառեցնողները ոգիներ չեն..........։ Ախ՜, Բէգօ, եթէ գիտենաս, թէ ինչ սոսկալի տանջանքում ես գցել ինձ, եթէ կարողանաս պատռել դրանց աչքերից վրայ գցած քօղը, այն ժամանակ Ջաւահիրին կըկին Արազին կը տաս, որ տանի և կը գաս հարազատ կնոջդ մօտ, որը տւել է երևակայածիցդ շատ, շա՜տ, որը ամեն րոպէ պատրաստ է զոհելու կեանքը քեզ համար։ Ախ՜, Բէգօ́, էս ինչ սև օրում թողիր գլուխս։

Թշւառ էր Գիւլ-փէրին, իրաւացի ողբում էր անտանելի վիճակը.......։ Խեղդւում էր վշտի ովկիանում, դրա համար մահւան դռան հասած ծովահեղձի նման երկնցնում էր ձեռքերը ալիքներին ու փրփուրները գրկում՝ ազատւելու յուսով։ Էլ փալ բացանող, էլ եղունգի, թասի աշող, էլ մօլլայ ու դէրվիշ, կախարդ, հմայող մնաց համայնքում, որ խանձւած կինը չը դիմէր, հազար ու մի տեսակ նւէրներով ու խոստումնե-

րով նրանց սիրտը չէր շահեր, բայց զուր, անօգուտ, անգութ բաղդը նորա փառահեղ օրերին վերջ էր տուել, աշխարհային ուժերն անկարող էին փոխել տալու նրա անփոփոխ վճիռը......։ Գիւլ-փէրին խորասուզւած էր անդնդում, չը կար միջոց նորան ազատելու, դուրս քաշելու այդ ողորմելի վիճակից.......

Մի օր առաւօտ վաղ մի ալևոր մօրուքով ծերուկ մօտեցել էր Բէգօ-բէգի դռան և անկիւնում տեղաւորւելուց յետոյ, երկայն հովւական շւին ձեռքում, մտաբերելով անցեալ առոյգ հասակը, լեռներն ու լեռնագագաթների լճակների մօտ արածեցրած ոչխարները, տապ օրը, զովաշունչ զեփիւռով աստեղազարդ գիշերը, լճակում անդրադարձած լուսինը և ալիքների վրայ ծըփացող ջրահարսներն ու հւրիները. ածում էր շւին, հնչեցնում աղիողորմ ձայնով, մրրկելով լսող ականջների սրտերը, հաւաքում էր նորանց իր շուրջը, ոգևորում և նորանց գութը հայցում դէպի իւր ալևոր գըլուխը։ Նրա շւիի ձայնը հասնում էր շատ հեռուները, նւաղած, թմրածներին սթափեցնում և գրաւում լսելիքները։ Այս գրաւիչ ձայնը հասաւ Գիւլ-փէրիի ականջին, որն անմիջապէս կանչել տւեց զառամեալ հովւին կանանոցը։ Հովիւը ցրտից պաշտպանւած, փորը կշտացրած․ բարեսիրտ տիկիններով բոլորւած, նորանց բարեհոգութեան և առատաձեռնութեան վրայ անկասկած, կրկին անգամ վեր առաւ շւին, շարունակեց իւր հիասքանչ դիցաբանական երգերը։ Նա շարունակում էր ջրահարսների գովասանքը․ նորանց գեղը, նկարագրում էր նորանց արարքները և նորանց բարձրացնում քանց մարգարէի խոստացած ջէհնէթի հւրիները։ Շւիի բազ-

մաձայն ելևէջները, երբեմն որոտագին, երբեմն ահեղագոչ. սուր, խրոխտ, մեղմ, մաղձոտ և մելամաղձոտ, լսողի կրքերը բորբոքում կամ թմրեցնում էին, կամ ոգևորում ու բարձրացնում։

Գիւլ-փէրին ուշի ուշով լսում էր երգերը, եղանակները ու մտածում։ Մութով հովւի հետ գնաց լըճակի ափը, նստեց լեռան շւաքի տակ, պահւեց տեսնող աչքերից, ականջիքը յառած սկսեց դիտել արծաթափայլ ալիքների մեղմ ծածանմունքը։ Այնքան բուռն էր նորա երևակայութիւնը, որ կարծես իսկապէս նստած լինէր այդ տեսարանի դիմաց և տեսնելիս ալիքների վրայ ծածանւող ջրհարսներին։ Այդ ոգիներին նա տեսնում էր հերարձակ, մերկ թևերով, բաց կրծքով վարդագոյն կամ երկնագոյն թափանցիկ բաճկոններով, որոնց մէջ ոսկին ու արծաթը, մարջանն ու մարգարիտը, ակերն ու ակռունանքը շողշողում էին։ Ահա այդ ոգիներից մին մօտեցաւ ափին և քարի վրայ նստելով, լեռան յատակից բղխած աղբիւրի ջրով սկսեց լւանալ երեսը, ցայել մազերն ու երգել....։ Ծերունի հովւի երգը առաջնորդում էր Գիւլ-փէրիի երևակայութիւններին. որը աստիճանաբար սաստկանում էր մեղմահնչիւն սրնգի ելևէջների թելադրութիւնով։ Ահա աղբիւրին մօտեցած կոյսը, հանեց թևերից, սրունքներից ոսկի գոհարաշար ապարանջաններն և աղբիւրի մօտի կաւիճքի մէջ թաթախեց ոսկեփոշի մազերը շփեց դրանք. լւաց աղբիւրի ջրերով և դրեց քարի վրայ։ Բաց արեց վզից գոյն-գոյն հլունքների կապոցները. դրեց ապարանջանների մօտ. տարածեց կուրծքը աղբւրի վազող ջրի տակ, լւաց վիզն ու ստինքերն, որոնք փայլե-

ցին հայելու նման շողքեր արձակելով.....: Ծետոյ նստեց քարի վրայ, ոգևորված երգը շարունակեց սանրելով խիտառատ մազերը: Նորա ձայնը թնդացնում էր ապառաժները և լսող ականջների քայլերը ուղղում դեպի լճակը: Ջրհարսն էլ վրշտ ունէր. ջրհարսն էլ սէր էր երգում.....: Ահա հեռուից մօտեցաւ մի հրեղէն ձիաւոր, որի ոսկեգոյն ձիու սմբակներն օդի մէջ ծածանելով առաջ էր գալիս դէպի ջրկոյսը: Նա զգուշութիւնով մօտեցաւ ջրհարսին գրկեց և մի ասեղ անցկացրեց նորա շորերում: Կոյսը նետաղեցաւ, երբ տեսաւ, թէ հակառակորդները, նախանձորդները մարդու ձեռքով իրենից վրեժ լուծեցին, ընկաւ ձիաւորի կրծքին անզգայացած:

Անգութ հովիւը առանց ուշք դարձնելու Գիւլ-փերիի վրդոված. տագնապած վիճակի վրայ, շարունակում էր իւր եղերական երգերը և նորա ոգեզմայլ դրոլթիւնից խրախուսած, մանրամասնութիւններով նկարագրում էր ոգևորուած սրտով: Գիւլ-փէրին նստած բազմոցի վրայ, արմունկը բարձին դրած, կզակը ձեռքին յենած լսում էր, տխուր և խոհուն դէմքով: Ծերունի հովիւը կանգ առաւ ջրկոյսի նետաղելու վրայ, ուզում էր ազատ շունչ առնել, մի ման կաթնով թրջել բերանը, կոկորդը ու ապա շարունակել: Հովւի ցանկութիւնները Գիւլ-փերիի հօր տնից բերած աղախինները րոպէական արագութիւնով կատարում էին: Անհամբեր, նախանձոտ կինը շրթունքները շարժեց և ասաց հովւին.

—Ծետոյ.....:

—Հաւերժահարսի չքնաղ տիպարը գժւացրեց ձիաւորին, որը մոռացաւ աշխարհը և ուզեց նորան ի-

րեն կին առնել.....: Ջրհարսը ակամայ այդ ազատ լեռնականին կին եղաւ, բայց երկար խաղաղ և երջանիկ օրեր չունեցաւ իշխանը.....: Մի օր, մի երեխայ խաբուեց շաքարից, մրգից ու ջրհարսի կրծքից հանեց հմայուած ասեղը, ջրհարսը խոկոյն աներևոյթացաւ: Իշխանն էլ նորա սիրով այրուած հետևեց նորան և լճակի ջրերում խորասուզուեցաւ:

—Դորանց երգերը.....:

—Դորանց երգերը խիստ սրտաճմլիկ են, դրա համար մեծ անձերն արգիլել են, անէծք են կարդացել երգողների, սորվեցնողների վրայ, այդ պատճառով ոչ ոք չը գիտէ, գիացողն էլ չի երգել....:

—Ու սիրահար ձիաւորն էլ լճակից չը վերադարձաւ.....: Անգունդից դուրս չեկաւ...:

—Ծարաբաղտաբար այո....գոնէ այդպէս են պատմում.....:

—Ծերունիկ, հեքաթդ շատ գէշ կտրեցիր, ամենահետաքրքիր տեղն անյայտ մնաց.....:

—Բունի սիրոյ վերջն այդ է, ասաց ծերունկը գլուխը երերցնելով:

—Իդ բանն էլ հարկաւոր է իմանալ.....:

—Լճակում սուզուեց, էլ ինչ իմանալու բան կայ...:

—Իսկ էնտեղ ինչպէս վարուեց ջրհարսը, ինչպէս վարուեց իշխանի հետ.....:

—Ինչպէս վարուում են արունք անողի հետ....:

—Բաւական է, բաւական է, բարի ծերունիկ, Աստուած պահէ որդիքդ.....:

—Աստուած պահպանէ բարեսիրտ ոգիներին, ասաց և հեռացաւ ծերունին, դառն մտքերում թողնելով

Գիւլ-փերի խանումին, որի վիշտը ծով էր դարձել։

Օր օրի վրայ Գիւլ-փերիի վիշտը սաստկանում էր, թշուառ կինը հալւում մաշւում.....։ Երբ տեսնում էր Բէգո-բէգին գերիի նման ընկած Ջաւահիրի ոտքերի տակ, երբ տեսնում էր այն կատաղի գազանին սանձաճ մի թոյլ արարածից, երբ տեսնում էր սէրը, տէրը կորած իրանից, անձնատուր եղած ուրիշի, կատաղի թիւնից և յուսահատութիւնից մազերն էր փետում, կուրծքը ճանգռտում, մատերն ոլորում, կծմրտում ու կապուտակացնում և այդ տանջանքներից ազատւելու համար շատ անգամ մահ էր խնդրում.....։

Գիւլ-փերին որքանոր նախանձւում էր զուլմալի վրայ, այնքան բուռն կերպով սիրում էր մարդուն՝ Բէգոյին, որի աչքից ընկնելու պատճառ էր եղել Ջաւահիրը։ Առում էր Ջաւահիրին կնոջ յատուկ կրքերով, բայց Բէգոյի վրայից չէր ուզում, որ ծանր քամի անցկենայ.....։ Ո՜րքան աշխատում էր զսպել կրքերը, նւազեցնել դէպի Բէգոն ունեցած զգացմունքները, բայց չէր կարողանում յաղթել բնազդմանը, էլ աւել բորբոքւում էր սէրը դէպի անգութ և կրքամոլ լեռնականը.....։

Անչափ և աներեւակայելի կերպով կատաղում էր մայրը, երբ շրջապատում էին նորան որդիքը։ Նրանց ճակատներն ու այտերն համբուրելիս հրայայտ աչքերն խփում էր, որ չը տեսնէ նրանց որբանման պատկերը։ Հօր բացակայութիւնը՝ այդ ընտանեկան ընկերակցութիւնից՝ կտրատում, ճղճղում էր նորա սիրտն ու թոքերը, նա չէր արտասւում այդ բորբոքած րոպէներում, բայց կարծես նաշատրով սիրտը վիրաւորում էին, այնպէս որ

կսկծալուց և մղկտալուց նւաղում էր զթոտ մայրը։ Անտարբեր էր Բէգոն դէպի կնոջ բոլոր յուսահատական ձևերը և աւելի սառնասիրտ վարւում նորա հետ։

Բայց Բէգոյի արհամարհանքից և մահացու անտարբերութիւնից աւելի կատաղեցնում էր Գիւլ-փերիին Ջաւահիրի յարգանքները։ Ջաւահիրը ցաւում էր վշտալի կնոջ վրայ և, որպէս իրենից հասակաւորի ու իրեն պէս թշուառի, չէր ուզում նոր-նոր խոցերով ծանրացնել նորա ցաւերը.....։ Բայց այն պատիւները, որ տալիս էր ջրբեր կինը մատակ-վագրին, էլ բորբոքում էր վերջինիս արիւնը։ Շատ անգամ Ջաւահիրը կռւում էր Բէգոյի հետ, Գիւլ-փերիին արած անիրաւութիւնների մասին և ստիպում, որ կատարէ այրական և հայրական պարտականութիւնները։ Երբեմն այնքան սաստկանում էր այդ վէճը, որի աղմուկից տանեցիք վազում էին, խաղաղեցնելու։ Գիւլ-փերին պաշտպանելով Բէգո բէգին, կռւում էր Ջաւահիրի՝ իւր բարեխօսի հետ։ Այսպիսի դէպքերում բէգը հեռացնում էր Ջաւահիրի մօտից նախանձոտ կնոջն և սկսում էր փաղաքշանքներով ջրբերի սիրտն առնել.....։ Բայց առանց ուշ դարձնելու Գիւլ-փերիի անսահման ատելութեանն ու անարգանքներին, Ջաւահիրը անփոփոխ շարունակում էր նորան տալ պատշաճաւոր յարգանքը խոհեմ կերպով....։

Գիւլ-փերին երբեմն երբեմն սկսում էր մտածել Ջաւահիրի բռնած դերքի, իր վրայ ունեցած համակրանքի մասին, որը այնքան նախատինքներից յետոյ կրկին շարունակում էր նախկին համեստ ձևերով պատւել և յարգել իրեն, որպէս թէ ոչինչ տեղի չէր ունեցել նորանց մէջ։ Այդ անբացատրելի կացութիւնը տը-

բաքեցնում էր Գիւլ-փէրիի նեղ սիրտը և աւելի դառնացնում կեանքը նորա աչքում:

Բայց Ջաւահիրի այս ձևերը աւելի սերտ կերպով կապում էր իւր հետ Բէգօլի սիրտը, որը, նորա անմեղութեան և բարեսրտութեան վրայ սքանչացած՝ պաշտում էր նորան որպէս երկնային ոգու, կամ ջէննէթի հիւրի-մելէքի.....: Գիւլ փէրիի սուր աչքերը այդ բոլոր քննելով, յուսահատւում էին, մթնում և խաւարը պատում էր ողջ աշխարհին...:

Այս տառապանքներից ազատելու համար Գիւլ-փէրին ուզեց, ժամանակաւորապէս հեռանալ, գնալ հեռանց տունը, քիչ առանձնանալ և ողբալով յուսահատ վիճակը, խորհել ազետալի ապագայի մասին.....: Այդ պատճառով եղբայրների մօտ գաղտնի մարդ ճամբեց, որ իւր եռւից խնդրակ ուղարկեն: Բէգօ-բէգը խնդրակներին քաղաքական հանգամանքների պատճառով՝ Գիւլ-փէրիին արձակելու անկարող լինելը խոստովանեց և ետ ճամբեց, նէէրների փոխարէն թեթև նէէրներ վերադարձնելով: Այս վերջին անպատուութիւնն էլ խոր խոցեց Գիւլ-փէրիի սիրտը, որի եղբայրները թեև կատաղեցին, բայց վրէժ առնելու ժամանակ չէր, նահանգը երկու պետութիւնների ահաւոր բանակները բռնած էին, Մ'իսրալու, Մանսուրի և Թօփուզի աւազակային խմբերը իրենց զարհուրելի արարքներով գիւղացիներին սարսափեցնում էին, և ոչ ոք չէր ցանկանում այդ ճգնաժամին հեռանալ օջախից, ընտանիքի կշտից, պաշտպանութեան կարօտ էր ամեն տուն:

Գիւլ-փէրին մտածմունքից գժուած չէր լմանում, թէ ինչ անէ.....: Նա մի ժամանակ նստեց հորաքը և

չարունակեց գործել մի մեծ խալի: Խալիի թելերի մանուածքը և ներկուածքը բոլորն իր ձեռքովն էր կատարել: Այդ խալիի ծաղիկներն և գոյներն այնպէս գեղեցիկ դասաւորեց, որ էլլիգի նշանաւոր կիներն ու աղջիկները գալիս էին տեսնելու և դրա օրինակը վերցնելու: Այդ աշխատութիւնների ժամանակ կարծես մասամբ հեռանում էին նորան խռովեցնող մտքերը, նորա երևակայութիւնները ռանգ ռանգ թելերի դասաւորութիւններով էին զբաղուած, նա երկնքի ծիածանը, դաշտի շուշանն ու նարգիզը գետեղում էր իր աշխատութեան մէջ և այդ դասաւորութիւնների հետ օրերն անցկացնելիս՝ չէր զգում, ո՛չ ցերեկուայ լոյսը, ո՛չ գիշերուայ խաւարը, ո՛չ արշալոյսը, ո՛չ վերջալոյսը, ո՛չ քաղց, ո՛չ կուշտ, ո՛չ էլ յոգնածութիւն: Ինչ որ էր հորաքում սանդերքի վրա բազուկները տարածած գլուխն էլ վրան յենած և ուտում խմում էր նոյն վայրում: Օրերն անցնում էին, գործը յաջող առաջ էր գնում և Գիւլ-փէրիի խանգարուած գաղտնութիւնն առանց քննելու շուրջը կատարածները, ամփոփուած էր այդ գործում: Ծաճախ գործի ժամանակ անզգայաբար նա սկսում էր բարձր ձայնով, գայլայլիկներով երգել և սգալ իր անողոք բաղաջ և այդ րոպէներում նորա գէմքը երբեմն հրեշտակի նման՝ հեզանում, երբեմն էլ սադայէլի նման բոցավառւում էր:

Այն օրը երբ Կարսի վրա յարձակւել էր Հազրովը իր գնտերով, այն օրը երբ արծւի դրօշով առաջնորդուած զինուորները մտան անառիկ բերդը, այն օրը երբ Կարսի միջնաբերդի վրա սպիտակ դրօշակ ծածանուեց, նոյն օրը խալին վերջացրաց Գիւլ-փէրին, նոյն օրը կարեց յենքի թելերը սանդերքից և սկսեց մատներով

մին՝-մին ոլորել և հիւսել գլխի մնացորդ թելերը։ Բէգօ-բէգը այդ օրը ձիաւորներով գանուում էր բանակում և յաղթականների հետ մտել էր բերդ։

Ուսուն բազմաթիւն հարսների և աղջիկների մտնում, ելնում էին Գիւլ-փէրիի գործարանը, գիտում ու սքանչանում նորա ձեռագործի վրա, որը գոյների նրբութիւնն էր գովում, որը նրանց դասաւորութիւնը, որը ծաղիկները, որը գործը, որը կտրուածքը և ամէն մարդ լաւ տպաւորութիւնով հեռանում էր։ Այդ զարմարի երևակայութիւններով հեռացողները, քիչ յետո ընկնում էին դառն մտքերի մէջ, որամադրութիւնները բոլորովին տակն ու վրա էր լինում, մոայլը պատում էր նորանց դէմքերը և սրտերի խորքերից մի դառն „ախ“ էին քաշում ու մրմնջում.

— Այսպէս կինն էլ անարգելի . . .։

Եւ այս հարցին ժամերով պատասխան չէին կարողանում տալ, իրենց համար մնում էր անբացատրելի . . .։ Շատերը կրկնում էին անմտանչ իրենց մտքում.

Այո, նա մի փէրի է, մի ջրհարս է, մի գիւտական ոգի, որ շղթայել է բէգի սիրտը, գերել և այս խանում կնոջ այս վշտալի օրերում թողել . . .։

Այս մտքերը շփւում, հաղորդւում և իրար ականջներում անէծք էին կարդացւում չար հոգիների գլխին . . .։

Կարսի խալիֆի դրօշի տակից ազատութեան համար կատարած փառահեղ հրախաղութեան գիշերը, Բէգօ-բէգը մեծաւորներից հրաման առաւ, անմիջապէս պաշտօնատեղին դիմելու և կարգը պահպանելու։ Քուրդը ձիաւորներով նոյն իրիկունը մտաւ գիւղ՝ կէս գիշերից քիչ անցկացած։ Ծանը բացի երեխաներից և ազախիններից ոչ ոք քնած չէր։ Գիւլ փէրին մանկական քաղցր քնով հանգստացած, երեխաների մօտ նստած սանրը ձեռքում, սանրում էր նրանց գլուխները և երգում։ Նորա երգը վշտալի և սգալի էր։ Նա պատից էր առել գործած խալին, որ ճրագի աղօտ լոյսի տակ փայլում էր մետաքսի ու ոսկեթելի նման։ Բէգօն ձիուց իջնելու պէս մտաւ Գիւլ-փէրիի ննջարանը և համբուրեց կնոջն ու քնած երեխաներին։ Այդ բանը բոլորովին ալլալեցրեց Գիւլ-փէրիին։

— Գիւլլի ջան, ասաց քուրդը, տղերքը լաւ են . . .։

— Դու էլ ինչ ես անում տղերքը, դու ունես հոգուդ սիրահարը, նոր կեանքդ ու արևդ։ Գնա, իմացիր նորա դրութիւնը, քեզ է սպասում, շտապիր սուլթանիդ մօտ, ընկիր գերիի նման ոտքերը, լիզիր նորա կոխած հողը։ Ինչքի՜դ են հարկաւոր երեխաները։

— Գիւլլի՛, Գիւլլի՛, դու գժւել ես, նախանձդ քեզ մոլորեցրել է, չես իմանում, ինչ ես խօսում։

— Գիւլլին մեռնէր և էս օրերը չը տեսնէր. Գիւլլիի մայրը Գիւլլիի տեղ մի կտոր քար ծնէր և Գիւլլիին չը գցէր էս սոսկալի օրերի մէջ . . .։

— Ախար Գիւլլի՛, էդ քու արածդ ո՛վ կանէ, էդ բաները, որ դահիճ ունեցող կինն արել է։ Դու չես իմանում, որ մեզ իրաւունք է տրւած, մի՛շտ նոր նոր կիներ առնել, որ իսլամի թիւը աւելանայ և ով շատ ժառանգներ թողնէ, նա աւելի մեծ փառքերի կարժանանայ երկնքում . . .։

— Ինսուլը քեզանից երես շուռ տւեց, երբ դու

խլամի դէմ սուր բարձրացրիր, սատանան էն օրը մըտաւ փորդ, երբ աշխարհի փառքերի համար անցար գեաւուրների բանակը, իսկ այժմ նոյն սատանան ջըրբեր ջրհարսի կերպարանքով տունդ է մտել, քեզ քարուքանդ անելու...

—Գիւլլի՛, Գիւլլի՛, լռիր ու մի՛ կարատիր սիրտս, մի՛ վիրաւորիր ինձ...:

—Դու ինձ անչափ վէրքեր ես տւել, թէ հեշտ է, ինքդ էլ գիմացիր...:

—Ուրեմն դու ինձ էլ չես սիրում, ուրեմն դու ինձ ուրացա՞ր.

—Սիրե՛լ, քեզ սիրել...դու գլխիդ յարգը չես իմանում, դու չը գիտես, թէ ինչ է սէրը...թէ ինչպէս մղկտացնում ես դու սիրտս...:

—Իմացա՛, իմացա՛,

—Ա՛խ, եթէ իմանայիր, թէ սէրն ինչ բան է, եթէ կարողանայիր ըմբռնել, թէ քեզ ինչպէս սիրում էր Գիւլլին...:

—Ուրեմն էլ չես սիրում, էլ կտրւեցա՞ն մեր սիրոյ կապերը,

—Դու խզեցիր՝ դու, որպէս տղամարդ, կարողացար քարացնել սիրտդ դէպ ինձ և գլորւեցիր մի դիւական ճիւաղի ոտքի տակ...,

—Լռի՛ր, լռի՛ր, ես քեզ չեմ մոռացել, քեզ առաջւայ պէս սիրում եմ, բայց դու կուրացել ես նախանձից, Գիւլլի, սրտումդ սատանայ է մտել: Թո՛ղ, թո՛ղ այդ ցնորքները, ե՛կ, ե՛կ հաշտւենք: Ոչ՛ դու չես կարող աշխարհի կարգը փոխել: Մարդկրէն մեզ պատւիրել է, մեր կարողութեան չափով կիներ առնել և առ-

ւելացնել հաւատացեալների թիւը: Մի հայի աղջիկ մեր դինին դարձնողին, նա քառասուն հիւրի աւել է խոստացել երկնքում...:

—Մ՛իթէ մարգարէն պատւիրել է, որ կինդ, այն կինը, որ քեզ առիւծի նման որդիք է տւել, փակես, բանտարկես և երկնքի երեսը չը տեսնելու դատապարտես...:

—Ո՞վ է քեզ փակում, ով է ճանապարհդ կտրում, Գիւլլի...:

—Էս խայտառակութիւնը գլխիս բերելուց յետոյ, ես ինչ երեսով կարող եմ դուրս գալ տնից, ինչպէս երևիմ բարեկամի կամ չարակամի,...:

—Գիւլլի, այնպէս ես խօսում, որ կարծես աշխարհում չեղած բան է պատահել...:

—Ողջ էլլիգը խօսում է, որ Բէգօ-բէգը Գիւլլիի երեսն անգամ տեսնել չէ ցանկանում...:

—Տեսա՛ր, տեսա՛ր, սուտ են խօսում, ահա ես քովդ, ծնկներիդ տակ, դէհ հաշտւիր, հաշտւենք ասելով մօտեցաւ բէգը և գրկեց Գիւլլիին: Որքանոր խոր խոցած էր քրդուհին, որ անո՛ր անբուժելի էր նորա վէրքը, բայց չի կարողացաւ ինքնիրան սանձել, նորա երեսի վրայ շողաց ուրախութեան կարճատև ժպիտը: Բէգօ-բէգը խրախուսւած այդ ժպտից ասաց.

—Տեսա՛ր, տեսա՛ր, որքա՛ն խելօք մարդ եմ, առանց մի՛ջնորդի հաշտւեցինք: Դէհ տեսնեմ ինձ ինչ ես նւիրելու, որ այդքան հեշտ սիրտդ տեղը բերի...:

—Ըրես էլ ուներ և հանաքներ ես անում...:

—Ո՛չ, կատակ չեմ անում, ինձ ինչ ես նւիրելու չո՛ւտ, չո՛ւտ...:

—Ինչ որ դու ինձ նւիրել ես ջրբերին տուն բերելուց յետոյ, էն էլ ես քեզ եմ վերադարձնում...։

—Նւէրը որպէս յիշելիք պահում են, չեն վերադարձնում, տես, ես քեզ համար Կարսից դեղին սոլթից համրիչ եմ բերել, որ սիրտդ նեղանալիս մէկ մէկ համարես, մինչև բարկութիւնդ իջնելը։

—Լաւ է, էլի, ես պառաւ եմ, օրերս համրիչը շուռ տալով և աղօթելով անցնեմ, մօլի քութառների պէս։ Շնորհակալ եմ, լաւ նւէր ես գտել։ Երևի Կարսն ու Արզրումը քանդեցիր, աւարի միջից հազիւ կարողացար գտնել ինձ յարմար մի նւէր...։

—Չէ՞ս հաւանում, ահա մի ոսկի բոզմադ, էլ խօսելիք չունիս։

Փսլղուն ոսկին քիչ շլացրեց Գիւլ-փէրիի աչքերը։

—Դէհ, ասաց Բէգօ-բէգը, դու ինձ ինչ ես տալիս...։

—Ի՞նչ ունիմ, որ ինչ տամ...։

Այս պատասխանը տալիս Գիւլ-փէրին նկատեց, որ Բէգօ-բէգի աչքերը նոր վերջացրած խալիի վրա էր, բայց նա իբր թէ չը նկատեց այդ բանը, շարունակեց.

—Էգուց քեզ համար մի լաւ արախչին կը կարեմ...։

—Պատրաստի, պատրաստի ոչինչ չունիս...։

—Ախա՛ր, ես ինչ ունիմ, ինչ որ ունիմ, քոնդ չէ՞,

—Այդքան ես ինձ սիրո՞ւմ...։

—Բէգօ, ինչ ես խօսում...։

—Ա՞յդ է ինձ սիրելդ, մի խալի անգամ խնայում ես,

—Խալին ես հետս գերեզման խօ չեմ տանելու, տունը ինչ որ կայ ամենը քոնդ չէ՞...։

—Չէ Գիւլլի, սրտումդ խէն ունիս, ծուել ես...։

—Թէ խալիի համար է խօսքդ, չորդ տանէ, քեզ փէշքաշ,

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, ասելով խալին վեր առաւ պատից և տարաւ փռեց այն թախտի ոտքերի տակ, որտեղ պառկում էր Գօհարը, Բէգօ բէգի վանդակի թռչնակը...։

Է

ԲԷԳԻ ՀԱՐԷՄԸ

Գիւլ-փէրին երբ լսեց, որ իր վշտալի օրերում գործած գորգը բէգը փռել էր հակառակորդի ոտքերի տակ, նա սրտի կսկծից նւաղեց և այնքան սաստիկ ազդեց այդ ցաւը նորա ջիղերին, որ մի քանի ժամ նորա աղախինները և բէգի ուրիշ հարճերը հազիւ կարողացան ջրով, ականջները ածելով, արինելով, կծմրտելով և ցնցոտելով ուշքի բերել։ Երեք անգամ նա սթափւեց այդ նւաղումից և կրկին կորցրեց ուշքը, մէկ ժամից յետոյ հազիւ կարողացան նորան իր անկողնում պառկեցնել։ Նա կատաղութիւնից փրփրել էր վագրի նման և ժանիքները սրած աչքերով ման էր գալիս իր հա-

կառակորդին պատռելու դիտմամբ․․․։ Բէգօ-բէգը ոչ
ինքը դուրս եկաւ այս տեսարանին մօտիկ տալու, ոչ էլ
Գոհարին դուրս թողեց։ Գիւլ-փէրիի այդ բողոքումից
հարեմականների քունը կտրուեց, ամէնը նորա վրա ցա-
սում էին, ամէնը խղճում էին, որ այնքան բարձրու-
թիւնից այդպէս ցած էր գլորել նորան բէգը․․․․։
Բէգօ-բէգի կիներից մի քանիսը թէև մասամբ ուրա-
խանում էին, որ այն գոռոզ կինը, որ իրենց այն աս-
տիճանի ճնշել, վզերին չոքել, խեղդել էր՝ իր ահեղ իշ-
խանութեան ժամանակ, քաշում էր մասամբ իր բըռ-
նաւոր բնաւորութեան արժանաւոր պատիժը, բայց ար-
դէն չափազանց էին համարում այդ հարուածը, նամա-
նաւանդ որ նախանձում էլ էին չքնաղ ջրբերի վրա,
որ այնպէս գիւթել և ստրուկ էր շինել արիւնկզակ
բէգին։

Բայց ամենից շատ ուրախանում էր այդ տեսա-
րաններից Ջէյխան․ Բէգօ-բէգի ամենից մատղահաս և
վերջին անգամ տուն բերած կինը։ Սա մի տասնուվեց
տարեկան աղջիկ էր, որի հայրը բէգի հետ զանազան
պայմաններով կապուած լինելով, չէր կարողացել մերժել
և ակամա աղջկա կռնից բռնելով՝ գցել էր գազանի
ճանկը։ Բէգօ-բէգը օրինաւոր նիքեահով թէև կապուած
էր Ջէյխայի հետ, բայց վերջինս չէր կարողացել նուա-
ճել բէգի սիրտը և չընկնել Գիւլ-փէրիի բացարձակ իշ-
խանութեան տակ։ Մինչև Գոհարի գալը շատ տարօրինակ
կռիւներ էր պատահել Գիւլ-փէրիի և Ջէյխայի մէջ,
և բէգը երբեմն մէկին, երբեմն միւսին նախատելով՝ միշտ
վերջ էր տուել այդ տեսակ անհամ անցքերին։ Այժմ Ջէյ-
խան ուրախանում էր, որ գոնէ իւր վրէժը Գոհարը կա-

րողանում էր լուծել։

Ջէյխան կարողութիւնից և իշխանութիւնից ըն-
կած մի բէգի աղջիկ էր, ոչ պակաս գոռոզ և ժրագլուխ,
քան Գիւլ-փէրին, որին գլուխ երբէք չէր ցանկանում
իջեցնել, միայն նորա նախանձին ու ատելութեան զոհ
չը գնալու համար խոհեմութիւնը ձեռք էր առել և
զգոյշ շարժւում։ Գիւլ-փէրիի իշխանութեան ահաւո-
րութիւնը և բէգի միւս կիների նորա ձեռքի տակ սո-
ղալը լաւ գիտենալով, նա իր ամէն մի քայլը առանց
չափչփելու չէր փոխում։ Յայտնի բան է, բէգն իր
կանանցից ամենից շատ սիրում էր Գիւլ-փէրիին, մնա-
ցեալները իրենց համարում էին որպէս կալք, կարասի,
անասուններ, կամ գործիք, որ պարտաւոր էին աշխա-
տելու այն տան մէջ, գատելու, յոգնելու և շատ քիչ
բան վայելելու։ Նորանցից մի քանիսը մի-մի, կամ եր-
կուս-երկուս որդիք ունէին բէգից, այդ էր իրենց մխի-
թարութիւնը, իրենց սէրը կենտրոնացած էր այդ զա-
ւակների վրայ, ուրիշ յոյս, ուրիշ վայելչութիւն ոչ թէ
չունէին, այլ չէին էլ կարող երևակայել, իսկ բէգին, որ-
պէս իրենց որդոց հօր համակրում էին։ Ջէյխան ոչինչ
չունէր, դեռ տարին էլ չէր լրացել նորա այդ տունը
գալուն և յոյս կամ փափագ էլ չունէր բէգից մի պը-
տուղ ունենալու։

Ջէյխան գրաւիչ կին էր, նորա խոշոր ու սև
աչքերից զարհուել էր Բէգօ-բէգը։ Նորա թաւ և կամար
ունքերը, յունական քիթը, քնքոյշ շրթունքները կա-
րող էր մի պալատական չքնաղ կնոջ նախանձը շարժել։
Իր տոհմական ցորենագոյնը, հայրական խաշները Ա-
լաջի փեշերի վրայ արածացնելիս, թէև էլ թխացել էր՝

բայց բնական այնպիսի չքնաղ շուք ունէր, որ կարծես հայելիի նման ողորկած լինէր նորա դէմքը: Սև սաթի նման փայլուն նորա մազերը միշտ ցրւած կարելի էր տեսնել նորա կուրծքի և թիկունքի վրա անկապ, անխնամ: Նա չէր սիրում սլճնւել, նորա վրայ չէր կարելի նկատել ոչ ոսկի, ոչ արծաթ և ոչ մի թանկագին զարդ, բայց մերկ վզից միշտ կախած ունէր կապոյտ և սև թալիսմանական հուլունքներ և կարմիր մարջանի հատեր՝ կէս բաց կրծքի վրայ, կանանչ, կարմիր շիւշէ ապարանջաններ՝ արձակ դաստակների վրա, պըղնձում պատած փէրուզ մատանին մատին և մի մեխակ քթին զմռւխտ խզմայի փոխարէն: Ջէյխանի բարձր հասակը, պինդ կազմւածքը, խրոխտ շարժւածքը և խիստ հայեացքը գրաւիչ էին, ոչ մի պարզամիտ մահկանացու չէր կարող չը յափշտակւել նորան տեսնելիս:

Լեռների աղջիկը հակառակ հօր կամքին, հակառակ իր ցանկութեան՝ թողել էր ազատ բարձրութիւնները և եկել ստրկական շղթան վզին գցել՝ Բէգօյի տան մէջ: Նա ստել կամ կեղծել չէր իմանում և այդ պատճառով էլ չէր կարողացել գրաւել Բէգօյին: Բէգի երեսին իր բանասրութիւնը հազար անգամ ասել և պարզ յայտնել էր, որ նրան ոչ թէ չէ սիրում, այլ ատում է: Այդ պարզամտութեամբ սկզբում ատրճանաբար բորբոքել էր Բէգօյի սէրը, բայց ստրուկների հրամայելու վարժ լեռնականը այդ անսանձ և կրակոտ մատեանը չը կարողանալով զսպել, և նորա սխալութեան, վրէժխնդրութեան չը մատնւելու համար, հետզհետէ մեղմացրել էր իր զգացումը, իսկ Գոհարին գանելուց յետոյ նորա գոյութեան մասին անգամ էլ չէր մտածում:

Կրակոտ կինը թէև սախթ էր որոնում վրէժ լուծելու Բէգօ-բէգից, բայց նորանք ապրում էին Խէյբաթ գիւղում, որտեղ սրտակից ոչ ոք չունէր, որ իրեն յարկ եղած ժամանակ մի բանով օգնէր, իսկ հայրենի տունը հեռու էր:

Յաճախ Ջէյխան առանց ուշք դարձնելու իրենց տան սովորութիւններին, վեր էր առնում մի կուժ, կամ մի պղնձի *գիւգիւմ* ուսին դրած իջնում էր իրենց գիւղի մօտ այն ձորը, որտեղ գտնւում էին իրենց գիւղի խմելու և բանեցնելու ջրի ակերը: Այդ ջրերը երբեմն ամառը սաստիկ շոգերին և ձմեռը ցրտերին ցամաքում էին, բայց տարւայ մեծագոյն մասը մատակարարում էին ամենապարզ և անարատ ջուր: Այդ ջրերի ընթացքով քուրդ կանայք յաճախ մանրուք էին լւանում և երբեմն տապ օրերին ձորերում այդ ջրերից կազմւած փոքրիկ լճակներում լողանում: Այս տեսակ լճակի լողաբանները տեղ տեղ պարսպւած էին անտաշ և անհարթ քարի պատերով, ծածկւած բարակ ձողերով և ճահիճում բուսած երկայն ջիլերով, որոնցից երբեմն աշխատասէր կանայք խսիր էլ էին գործում:

Դաշտից, կամ գիւղից այս խրամատը բոլորովին անտեսանելի է, չէ կարելի երևակայել անգամ, գիւղին այնքան մօտ այդպիսի մի ձորակ գտնւելը, մարդ մինչև չը մօտենա խրամատի ափին և չիջնի ապառաժ և սրակող կարւածքից, չի կարող նրա օձաձև խոտոր և ալիքանման մասերի վրա գաղափար կազմել: Այդտեղ իրար էին գտնում շատախօս հարսներն ու աղջիկները, այդ տեղ էին իրար պատմում վշտերը և ուրախութիւնները, այդտեղ էին բամբասում և բարեխօ-

սում մանկամարդներն առօրեայ հարցերի մասին: Զէլխան այս խրամատը մտնում էր սափորն ուսին, վշտահար, չափում էր դրա երկայնութիւնը, վազող, կարկաչող ջրերին մրմնջում էր իւր վիշտը, թափում էր սըրտի մաղձը, որ առնէր ու տանէր վտակը դէպի մեծ գետերն ու. ծովերը և սիրտը քիչ թեթևացած ծանրացած վշտերի բեռից, զւարթ բարձրանում էր լիքը ջրով լըցրած ամանը ուսին և մտազբաղ, միշտ խրոխտ քայլերով, վէհ հայեացքով դիմում այն տունը, որտեղ շընչելն անգամ դժւար էր իրեն:

Այդ ապառաժումն էր և Արշակի մխիթարանքը, նա էլ իջնում էր և այդ քարերի մէջ մտն գալով՝ նըստում, կամ տարածւում էր երկու խոշոր ժայռերի մէջ, այնտեղից դիտում երբեմն ջրի ընթացքը, այն տեղերն աճած կանանչը և ապառաժի շերտերը, որոնք անընդհատ թափւում էին և լայնացնում խրամատը, իսկ գարնան հեղեղները գալիս, քշում տանում էին թափթփւած յեռ քարի կտորտանքը:

Խրամատի ծայրը սկսւում էր լերկ ուղղահայեաց ժայռից, որի ստորոտից հինգ տասը տեղից բղխում էր անապական ջուրը, իսկ վերջը գիւղի սահմանից էլ հեռանում և միաւորւում էր Ոհմ (Գարսի) գետի ընթացքին:

Յաճախ Արշակը հրացանը ուսին որսորդութեան նպատակով, ընթանալով այդ խրամատի մէջից հոսող ջրերի հետ, հեռանում էր գիւղից և իւր չափարի՝ Յակոբի որած վայրենի բադերի որսով վերադառնում, որոնք պատւական կերպով եփում էին Բէգո-բէգի հարսմում բրինձի փլաւով և գոհացնում որսորդի ճաշակը:

Ներսուն տնւոր մի քրդական ձմեռանոց էր Խէլրաթի գիւղը, տափարակ դաշտի մէջ, որ ոչ մի հետաքրքիր վայր չունէր և մի գրաւիչ տեսարան: Այս դաշտավայրի արևելքում երևում են Հաջի Խալիլի և Աղա-դէվէի սարերը, հիւսիս՝ մինչև Կարս, հարաւ՝ մինչև Արաքսի ձորը տարածւում է դաշտավայրը և բաց է հորիզոնը: Աղա-դէվէի գագաթից հիանալի է տեսարանը, երևում է շատ հեռուները՝ Սողանլու անտառը, Զալղավուրի սարերը՝ Բուղա թէփէով, Արագածը. Արաքսի ձորի մասերը, Արարատի գագաթը և Բարդող սարերի Քեօսայ-դաղը հիանալի դիրքով, բայց հեշտ չէ միշտ վեց ժամ ճանապարհորդել, բարձրանալ Աղա-դէվէի գլուխը այդ տեսարանները դիտելու համար: Այդտեղ է այն նահապետական գարերում սպրած երանելիի շիրիմը, որտեղ ուխտ են կատարում անխտիր հայերը, Քուրդերի, Թուրքերի և Թուրքմանների հետ: Այդտեղ է այն ծերունի հայրիկի գերեզմանը, որը միշտ աղերսում է երկնքի թագաւորից՝ խաղաղութեան մէջ պահել աշխարհի պետութիւններն, արիւնահեղութիւններից հեռացնել ազգերի որդիքը և այդ հանգստարանի մօտ գտնուղ աղբիւրն ու աւազանը չոր ու ցամաք են խաղաղութեան տարիներում և առատ ու վճիտ ջրով լեցուում պատերազմների ժամանակաշրջանում: Ժողովուրդը հաւատում է, որ երանելիի արտասուքից է գոյանում այդ աղբիւրի ջուրը, երբ նա առատ արտասուքը աչքից թափելով խնդրում և թախանձում է վերին տեսչութիւնից վերջ տալ մարդկային կոտորածներին . . . :

Արշակը մի ուրիշ մխիթարական վայր չունենալով Խէլրաթում, նա ձմեռը ցուրտ ժամանակ էլ գե-

մում էր քարքարոտ խրամատը։ Այս տեղը մոտամբ նըման էր Ծանձոտի այն ձորին, որտեղ տեսել, սիրել, սիրուել և կեանքի ամէնից երջանիկ րոպէներն անց էր կացրել Արշակը, այն լիշատակները նորոգուում էին և իսկութեամբ գալիս էի նրա աչքի առաջ, երբ ձորումն էր լինում։ Այս իսկ պատճառով նա դիմում էր ձորը և այն տեղ կեանքը քիչ թեթևանում էր նրա համար։

Շրեք չորս ամիս առաջ բանակի հետ մտել էր այդ ճանապարհի մէջի գիւղը և այն տեղ մնացել մինչև այդ ժամանակները։ Երբ սկսել էր նա պարբերապես յաճախել այդ սիրելի վայրը ամառւայ շոգ ամիսներում, երբ գիւղացիների մեծագոյն մասը գտնուում էր սարերի վրա, վրանների տակ ոչխարների հետ, երբ գիւղում միայն ծերերը ու պառաւներ էին երևում, նա նկատել էր, որ մի գեղատի կին իրեն էր հետևում։ Այդ կնոջ բարձր հասակը, սև մազերը, լայն կուրծքը և բարակ բակ մէջքը իրեն ներկայացնում էր սիրականին՝ իւր Գոհարին։ Նոյնը աչքերը, քիմքը համարեա շատ տարբերութիւն չունէին, միայն Գոհարի ձիւնի նման սպիտակ դէմքը, վարդագոյն այտերը ու բարակ զալամով քաշած ունքերն էին պակաս։ Արշակը տեսել էր իր վրա ուղղած հայեացքը, որտէ խորքերից բաձրացած հառաչանքը։ Զգացել էր, որ Թշւառ կինը վիշտ ունէր, նա էլ սիրով տուչորւում էր...

Հետամտել էր Արշակը այդ գեղատի կնոջ, նորան իր բաղձանքին, սիրելուն հասցնելու փափագով և երբ իմացել էր, որ նա բէգի կինն էր, խոյս էր տուել այդ նպատակից և աշխատել էր աւելի քիչ տեսնուել նորա հետ, որպէսզի իր և բէգի մէջ վէճ և հակառա-

կութիւններ չը ծագին։ Բայց Հակառակ իր կամքին քրդուհին նրան անընդհատ հետևել էր, Արշակն էլ մեծ հաճոյք էր զգացել նորան դիտելով և աչքով նորան հետևելիս այնպէս էր թուում իրեն, որ իւր պաշտելի Գոհարին էր տեսնում։ Այն աստիճանի էր հասել այս տեսութիւնները, որ Արշակի սիրտը ճմլուում էր, եթէ մի օր քրդուհին ժամանակին չէր գալիս նրան երևելու։

Մի անգամ իրիկուա մթանը, բոլորովին առանձնութեան մէջ իրար դիմաւորեցին խրամատում Արշակն ու Զելխան։ Արշակը թէև ուզում էր բերանը բանալ և մի երկու խօսք խօսել, բայց չը կարողացաւ շրթունքները կամ լեզուն շարժել, միայն մի քաղցր հայեացք գցեց քրդուհիի վրա, որը միևնոյն կերպով նրան դիմաւորեց և երկուսի աչքերը մի երկու վարկեան իրար հարելով սրտերից անցածը զգացին...։ Շատ զղջաց Արշակը, որ չը կարողացաւ երկու բառ փոխել և նորա վիշտն իմանալ, բայց յոյս ունէր մի երկրորդ անգամ այդ քաջութիւնն ունենալու։ Երկրորդ, երրորդ անգամ էլ բաւականացան աչքերի խօսակցութեամբ և կարծես այդ րոպէներում յանկարծակի նրանց լեզուները կապուում էին։

Մի անգամ Զելխան այնպէս զգայեցաւ, ցնցուեց, որ պետի գլորէր, եթէ անմիջապէս չը գրկէր նորան Արշակը։ Բարեբաղտաբար մոտը էր և նկատող չը կար, ապա թէ ոչ Զելխան այդ տեսարանի պատճառով կը ձաղկուէր, իսկ Արշակը ով է իմանում...։ Քրդուհին նետուելու էր, եթէ ուսին դրած սափորից մի քանի բուռ ջուր չը թափուէր նորա մերկ կրծքի վրա և

չը թրջէր նորա մազերն ու շորերը։

—Խանում, ասաց Արշակը դողալով, ինչ պատահեց ձեզ, յոգնած էիք երևում, քիչ մնաց գլորէիք..։

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, աղա, սիրտս անցաւ, չը գիտեմ ինձ ինչ պատահեց։ Ներիր, որ քեզ նեղութիւն պատճառեցի...։

—Ոչինչ, ուզում էք, տուէք ինձ գիւգիւմը ես կը տանեմ ջուրը, մինչև ձեր ուժը վերանորոգուի, բոլորովին զգաստանաք...։

—Մի վախենաք, քրդուհին այնքան թոյլ չէ, որ ջրի սափորի տակ գլորուի,...։ Այդ բեռը չէր ինձ ճնշողը, սիրտս մի ինչ որ անծանօթ ուժից ընկճուեց...։ Այս խօսքերը կիսատ մնաց, քրդուհին չը կարողացաւ շարունակել և շնչառութիւնը խեղդած լսում էր այն ձայնը, որ քամին բերում էր։ Քիչ լռելուց յետոյ, ասաց.—Կարծեմ մարդ է գալիս երևի մեզ լրտեսում են, հեռացէք խնդրում եմ...։

Արշակը աներևոյթացաւ։ Մէկ երկու րոպէից ետև չորս ուրիշ կանայք եկան, իջան ձորը ջրի։ Սորանք նկատեցին Զէլխային, բայց ոչ ոք չը խօսեց նորա հետ, նորա գոռոզ բնաւորութիւնը ամենքին յայտնի էր։ Զէլխան մտաւ տուն, բայց հոգին ու սիրտը հետը չը կարողացաւ տանել, նորանք մնացին խրամատում՝ Արշակի մօտ։ Թշուառ կինը Արշակի ձայնը լսելու, նրա հետ երկու խօսք փոխանակելու համար պատրաստ էր կեանքը տալու. իսկ դէպքը այնպէս էր եկել, որ նրա գրկումը, կրծքին էր սթափուել նուաղելուց, նրա բազուկների մէջ և նրան սեղմուած...։

Քրդուհին մինչև Արշակին տեսնելը, սիրել էր մի-

այն իր խաշները, իր մահակը, սարերի արօտատեղերը, ծերունի հօրը և մօր գերեզմանը. որին կորցրել էր իր փոքր հասակում։ Սիրոյ մասին քիչ գաղափար ունէր և խաշնարածի որդիներից ոչ ոք չէր արժանացել նորա սիրտը գրաւելուն։ Բէգօ-բէգին ատեց նա այն օրից՝ երբ հայրը իր ոտքերն ընկած խնդրում և աղերսում էր, որ չմերժի իր խնդիրքը և կնութեան գնա բէգին։ Հայրն արտասունքն աչքերին նկարագրել էր աղջկան անելանելի վիճակը, անտանելի դրութիւնը և ծնողասէր գոռոզ դուստրը հօր օջախը կանգնեցնելու համար՝ յանձն էր առել զոհուել։ Նա յանձնուել էր բէգին, որպէս դահիճի, որի ձեռքում մահուան էր սպասում, իսկ անողորմ բէգը չէր մահացնում. այլ տանջում էր...։

Այս տանջանքների ընթացքում Զէլխան պատահել էր այն երիտասարդին, որը գրաւել էր սիրտը։ Արշակը տխուր էր նորա նման, Արշակն էլ տանջւում էր, պէտք էր այդ թշուառին մխիթարել...։ Մխիթարել գուցէ մխիթարուելու յոյսով և այդ յոյսը մղում էր Զէլխային դէպի երիտասարդը, որին սկզբում թէև քարասիրտ կարծեց քրդուհին, բայց վերջը համոզուեց, որ սխալուել է...։

Ը

ՍՈԽԱԿԻ ՎԱՆԴԱԿԸ

Այդ անցքից յետո Զէլխան ամէն օր պատահեց Արշակին, ջրի ճանապարհին, խրամատում, տան ետևը,

մարագի տակ, երբ առանձին էին գտնում իրար, մի քանի խօսք փոխանակում էին։ Խորամանկ քրդուհին այնպէս էր շարժւում, այնպէս արագ դիտում էր չորս կողմը, որ ոչ մի աչք չէր նկատում նրանց ընթացքը և ոչ ոք չէր կարող լսել այն փափախոտկի բառերն, որոնք միայն երկուսի ականջներին և սրտերին բաղխւում և սլանում օդի մէջ, անհետանում էին։ Բայց այդ կարճատև տեսակցութիւնը չէր մարում Ջէլխայի կրծքում բռնկած կրակը, օրից օր բորբոքւում էր այդ հուրը և լեռների դստեր խաղաղն ու հանգիստը կտրում...։ Ջէլխայի այս խաղերի նպատակը չէր հասկանում Արշակը, նամանաւանդ նրա սիրտը բռնւած էր, բայց տեղ չկար, որ մի ուրիշին էլ ընդունէր, իսկ այս հանգամանքը բոլորովին անյայտ էր Ջէլխային։ Նա սիրում էր Արշակին, կին լինելով բէգին, փոխադարձ սիրոյ յոյս ունէր այն երիտասարդից, գոնէ առանց իրենց ներկայ վիճակը փոխելու...։

Արշակի և Ջէլխայի փոխանակած խօսքերն այնքան կարճ էին, որ չէր իմանում մէկը միւսի նպատակը, իսկ իրար պատմութիւնից բոլորովին անտեղեակ էին։ Երկուսն էլ գիտէին, որ իրար համակրում են, բայց այդ համակրութեան պատճառը յայտնի չէր ոչ մէկին։ Զգում էին, որ երկուսն էլ տխուր էին և իրար սիրտ տալով այդ տխրութիւններից ազատւելու յոյս ունէին։

— Ջէլխա՛, ասաց մի երեկո Արշակը, (էլ իրար խանում—աղա չէին կանչում) դու ինչ ունիս սրտումդ, ինչ՞ այդքան տխուր ես...։

— Բէգանից օրինակ եմ առել, դու մի օր ծիծաղ երեսով չես ման եկել, ո՛չ գեղում, ո՛չ էլ ջրափում...։

—Միթէ սրտումդ գաղտնիք կայ թագնւած, որը չես ուզում յայտնել...։

—Գաղտնիք չունիմ, իսկ սրտումս եղածը ես ինքս էլ չգիտեմ թէ ինչ է... ասաց հառաչելով քրդուհին, մի որդ է, մի ճիճու է..., որ անդադար կրծոտում է ու խայթում...։

—Բայց մի պատճառ ունիս, առանց պատճառի չէ...։ Գուցէ մէկին կորցրել ես, մէկից բաժանւել ես, որին մինչև գերեզման ընկերանալու խօսք էիր տւել...։

Արշակը մի կերպով սրտի գաղտնիքն էր խոստովանում, բայց լեռնական դուստրը չէր ուզում հասկանալ, կամ աւելի լաւ, չէր ուզում իր յուսախաբ լինելն զգալ։

—Ու ոչ ոքից, միայն ցաւում եմ, որ հայրենի օջախից զրկւած, տանջւում եմ գայլի ատամներում, որը օձի նման սառն է և թունաւոր, իսկ ճիրաններից ազատւելու հնար չունիմ...։

—Ուրեմն չե՛ս սիրում բէգին.

—Գողիս պէս,

—Ուրիշի՞...։

—Ո՛չ... ուրիշի էլ չեմ սիրել մինչև այժմ...։

—Չէ՞ եղել աշխարհում մէկը, որ սիրտդ գրաւած լինի...։

—Հա՛յրս, անչափ սիրում էի նրան, իսկ նա գըցեց ինձ էս օձի բերանը...։

—Միթէ բէգի պէս մարդու դու սիրով հարս չեկա՞ր,

—Սիրո՛վ... ես եկայ սպանւելու, բայց դահիճս

զարճանում է ինձնով, ինձ մկի պէս խաղցնում է . . :

—Ուրիշները չեզ էրնէկ են տալիս, որ բէգի կնիկ ես, իսկ դու այդքան դժգոհ ես վիճակիդ . . . :

—Բէգի կնիկ . . . Մխիթ բէգը կին ունի: Նրա ամենասիրական կինը՝ Գիւլ-փէրին, նրա ամենատորը ըստրուկն է: Գիւլ-փէրին, որ հալէմում և կամնարաններում կրակ ու բոց է, բէգի առաջ կատու նման գըլորւում, շոյում է նրա ոտքերը, որ չլինի երես շուռ տա իրենից բէգը . . . : Հազար անգամ մեր հովիւների կինները երջանիկ են Գիւլ-փէրիից: Անկեղծ սիրում են ամուսիններից և երբէք չեն ուզել ընկնելու նրանց ոտքերը:

—Բայց ես լսել եմ, որ բէգը քեզ ամէն կիներից շատ է սիրում, իսկ դու նրան այդքան արհամարհում ես . . . :

—Մխիթ նա սիրել համանում է, . . . : Մխիթ կարելի է ասել, թէ բորենին մեւելներին սիրում է, ... մխիթ մարդի միսն ուտելը, մարդ սիրել է նշանակում:

—Բայց դու չափազանցում ես . . . :

—Այո՛, նա գալիս է, գլորւում է ոտքերիս տակ, աղաչում է, աղերսում է, որ իրեն սիրեմ, բայց չի մըտածում, որ բռնի սիրել չի կարելի, կեղծել և շողոքորթել ես բոլորովին անկարող եմ . . . : Ես որ նրան պատահած օրից ատել եմ, մխիթ կարող եմ ատելութիւնս ծածկել և չլայտնել նրան . . . : Նա կարծում էր, որ ոսկով և արծաթով, պսպղուն զարդերով ու շորերով կարող էր գրաւել սիրտս, բայց լաւ համոզւեց, որ ոչ խստութիւններով, ոչ էլ կաշառներով կարելի է սիրւել . . . : Նա այժմ յուսահատւել է, էլ չի ուզում

անունս անգամ տալ և շատ երանելի կը լինէի, ապահարզանս էլ թող իրեն գլխին խռով մնա, միայն թէ ինձ ազատութիւն տար, վերադառնալու սիրելի լեռներս, հայրական օբաս . . . :

—Անշուշտ սիրականիդ մօտ . . . :

—Քեզ ասացի, որ աշխարհի երեսին մինչև Խէյրաթի գալս ոչ ոքի չեմ սիրել . . . :

—Ուրեմն Խէյրաթում մի ուրիշին սիրեցիր և ուզում ես նրան կին դառնալ . . . :

—Ես չասացի, որ մէկին սիրեցի . . . :

—Ուրեմն սիրո՞ւմ ես մէկին, որի անունը չես ուզում ինձ յայտնել . . . :

—Լ՜ո՛, քեզ հետ խօսելը դժւար է . . . :

—Մխիթ խոստովանէիր, գուցէ ես կարողանայի օգնել և մուրազիդ հասցնել . . . :

—Դո՛ւ, դո՛ւ . . . բայց լռի՛ր, լռի՛ր, Գիւլ-փէրիի լըկտինները, կարծեմ, մեզ են լրտեսում, դու այդ քարերի տակը մտի՛ր, երբ ես գրանցից հեռանամ անվտանգ, կերգեմ ու դու կհետեւես շարունակելու մեր խօսակցութիւնը:

—Զէլխան թէև երգեց, բայց նորա երգի ձայնը քամին չթողեց ազատ հնչելու Արշակի ականջին: Արշակին տիրել էր անզգայացնող մտածմունքը, նա ենթակայութիւնով Զէլխայի մօտից Դոհարի մօտ էր գնացել և երբ Դոհարն էր նորա մտածութեան առարկան, աշխարհն աներևոյթանում էր . . . :

Զէլխան շատ անգամ այն երեք ամիսներում տեսել, խօսել և աշխատել էր ուրախ անցկացնել տալ Արշակին իր ժամանակը և նրան ուրախացնելիս, ինքն էլ

մասնակցում էր նրա ուրախութեան...։ Քրդուհին այնքան ճարպիկ և զգույշ էր, որ ոչ ոք, մինչև անգամ Արշակի հաւատարիմ չափարը՝ Ցակօն չէր կարողացել նկատել նրանց յարաբերութիւնները, որ համարեա երեք ամսից աւել էր տևել, մինչև Բէգօ-բէգի Դոհարին բերելը և Արշակի Ցանձատ գնալը։ Արշակի մեկ մխիթարութիւնն էր Զելխան, սխութիւնը մասամբ հեռանում էր, երբ Զելխային տեսնում, նորա հետ խօսակցում էր։ Ինքը մուրազի վրա էր, ինչպես ցանկանում էր մուրազին հասնել, այնպես էլ ցանկանում էր, որ այդ վշտալի կինը ազատուէր բէգի ճիրաններից, հասնէր իր մուրազին...։

—Արշակի երեք օրուայ բացակայութիւնը երեք տարիից աւել թուաց Զելխային, նա անընդհատ բարձրանում էր իրենց տանիքի վրա ու դիտում այն ճանապարհը, որ կողմից որ նա հեռացել էր և ցրտից լսմրսելուց յետո, տխուր տուն էր դառնում.....։ Թէև իմացել էր, որ գալու էր Արշակը, բայց ամօթից թէ երկիւղից չէր համարձակւում հարցնելու այդ արշաւանքի նպատակը։ Բացի այս ժամանակ էլ չէր ունեցել, նա այն օրն զբաղուած էր Դոհարով, մի տեսակ կանացի հետաքրքրութիւն, որ յատուկ է միայն իրենց սեռին։

Զելխան Գիւլ-փէրիի նման չէր նախանձում Դոհարի վրա, անտարբեր, բոլորովին պէտք չէր, եթէ Բէգօ-բէգը տասը նոր կին էլ տուն բերէր։ Բայց Քրդուհին ուզում էր իմանալ, թէ արդեօք այդ գեղանին անկեղծ սիրո՞ւմ էր բէգին, թէ ոչ...։ Դոհարը Բէգօ-բէգի աղախիններին, հարճերի և կանանց մէջ ամենից գեղա-

հաս, իրեն հաւասարկից և գեղանի գտաւ Զելխային, նորան համակրական դէմք ցոյց տուեց, որին սպասածից աւելի բարեսիրտ գտաւ։ Զելխայի դէմքը ցոյց էր տալիս, որ նորա սիրտը մաքուր էր ու անարատ։ Դոհարը իր բնազդման մէջ չսխալուեց։ Շուտով մտերմացան երեր հետ, բայց Քրդուհին սոխալած էր սրտի և հոգու գաղտնիքը բոլորովին թագցնել, մինչև անգամ պէտք էր մի կերպ մոռանալ, կամ մոռացութեան տալ այդ գաղտնիքը՝ իր նպատակին հասնելու տենչով։

—Ջաւահիր, ասում էր անկեղծաբար քրդուհին, մինչ դու գտտապարտուած ես այս գերեզմանում մատաղահաս կեանքդ թունաւորելու, այս գազանի ճանկում...։

—Ի՞նչեր ես խօսում, Զելխա, մինչ աչխարհի բոլոր կիները մեր օրումը չեն... ինչպես աչխարհը, այնպես էլ մենք...։

—Ջաւահիր, մի՛ ասել այդ բանը, ամէն կին մեզ պես ինչի՛ է տանջւում...։

—Բոլորն էլ մեկ օրումն են ապրում, կնոջ համար արևը սև է ծագում, լուսինը խաւար...։

—Ես այնքան կին եմ ճանաչում երջանիկ, որոնք սիրում են ու սիրւում են և իրենց մէջ ճոխ յարկի տակ անկախ թագուհի են...։

—Այո՛, քաղցած ու տառապից մինչև երեկո պարտաւորուած դառնապես աչխատելու...։

—Այո՛, աշխատում են, երբեմն էլ քաղցած են մնում, բայց չեն գտտապարտուած լացով, ագով անցկացնելու և մի պատառ հացն էլ, որ ուտում են, թունաւորուած չէ։

—Ը՜հ, Զելխա, մի այդպիսի խօսքերով վրդովիլ

թող, հոգիդ սիրես, կին ենք ստեղծել, մարդու ձեռքում, նրա իշխանութեան տակ և նրա ողորմութիւնով պիտի ապրենք: Աշխարհք նախանձում է մեզ վրա:

—Ը՜հ, թող ներս մտնեն հարէմի դռնից, տես ինչպէս են փախչելու...:

—Թէ ինձ կսիրես, այդ խօսքերը էլ մի՛ կրկնել ինձ, լաւ թէ վատ, մեր վիճակն այս է, տանելու ենք անտրտունջ...քանիոր փոխել անկարող ենք...:

—Զելխան զգաց, որ իրենից կատակածում էր Ջաւահիրը, պէտք էր նախ գրաւել նորա սիրտը, մտերմանալ և ապա մխիթարել իրար և վշտակցել...: Ջաւահիրը թէև զգում էր, որ անկեղծ էին նորա խօսքերը, բայց զգուշանում էր, որպէսզի կատակի տեղիք չը տա և մինչև անգամ կարծում էր, որ կարող էին այդ անտեղի խօսակցութիւնները լսել, աւելածներով բէգին հաղորդել նախանձորդները և կացութիւնը աւելի դառնացնել: Դուցէ բէգը խստութիւններ ձեռք առնէր և թոյլ չը տար իրեն նպատակին հասնելու, արդար վրէժը լուծելու: Բայց Զելխայի սիրտը չը վիրաւորելու համար քիչ անցնելուց յետոյ, ասաց:

—Զելխա՛, քանիոր դու ինձ ընկերանալու ես, քանիոր քեզ նման ազնիւ սրտի հետ մթնեցնելու եմ օրերս, բոլոր դառնութիւնները մոռանալու եմ, բաժանելով քեզ հետ ուրախութիւն և ցաւ:

Զելխան դառնապէս հառաչել էր, զգալով իրենց վիճակի սարսափելի դրութիւնը, որ զգացած ցաւերն անգամ անկարող էին մրմնջելու: Նա լիշել էր այն մեկ մխիթարչին, որ հեռանալու էր և աճապարել վերջին ակնարկը փոխել և բարի ճանապարհ մաղթել, եթէ ոչ ձայնով, գոնէ սրտի խորքերից...: Արշակը այդ ակնարկով քաջալերուած՝ Բէգօ-բէգի նժոյգին խթելով սլացել էր դէպի սիրեկանը և երեք օրւայ բացակայութիւնից յետոյ, անմխիթար և յուսահատ վերադարձել՝ մթնատած աչքերով, որոնք չէին անգամ նկատել այն աչքերը, որոնք երեք օր շարունակ իրեն ճանապարհն էին սպասել: Քրգուհին իր տխրագէմ բարեկամի սիրտը լաւ ճանաչելով, ոչ միայն չէր նեղացել նրա դէմ, այլ վշտացել էր, թէ ինչէ՞ բարեկամը այնքան սոսկալի վշտերով էր տագնապած, որ շուրջը նայելու անգամ ոյժ չէր մնացել սրտում...:

Մինչ քրգուհին առանձնացած ողբում էր իր և համակրածի թշուառութիւնը, Բէգօ-բէգի տանը և կանանոցում արդէն հնչեց Արշակ-աղալի մուտքը: Բէգը, որ Ջաւահիր խանումի քովն էր, զիջաւ կարճ ժամանակով ազատ թողնել սիրեկանին, գնալ տեսնել օգնականին, որ խոստացած ժամանակից էլ քսան և չորս ժամ ուշացել էր:

Երբ բէգը զբաղած էր օգնականին սթափեցնելու հարցով, երբ նրա դէրվիշներն ու մօլլաները թուղթ ու գիր էին անում, հմայիլ էին գրում, ջուր էին սրսկում Արշակի երեսին, Դոհարը «Արշակ աղա» անունը լսելով վրդովւել էր և նորա սրտում զարթել էին այն բոլոր յիշատակները, որոնք անջինջ կերպով դրոշմւել էին անտիկան կնոջ աչքի և ուղեղի մէջ: Այնքան սոսկալի կերպով բորբոքեցին նորա սիրտն այն յիշատակները, այնքան ճմլեցին նորա ոգին, որ նա քիչ մնաց նւազէր և գլորւէր, բայց նա կարողացաւ զսպել ջղերը ու դնաց բազմոցի վրա տարածւեց: Ինչէ՞ր չան-

ցան այդ րոպէին նորա մտքից, ինչ երջանիկ և դառն րոպէներ իրար չյաջորդեցին նորա երևակայութեան մէջ։

—Գուցէ, տղայ, Արշակն է, ինքն է, նա ծառայութեան մէջ էր, երևի այստեղ են փոխադրել....Է՛հ, ինչ եմ ասում, նրան չէին տալ օգնականի պաշտօն, նա բէգ չէ, Հասարակ դուրգարի որդին այդքան չէին բարձրացնել...։ Բայց ով կուզէ լինի, մի կերպ տեսնելու եմ, Հայ է, ինձ կը պաշտպանէ, էլ չի թողնիլ տանջուելու այս անօրէնի ձեռքում...։ Ա՜խ Տէր Աստուած, չը պիտի խնայես ինձ, չպի՞տի ազատես.... «Արշակ աղա», սա Գիւմրեցի է, կամ Ախալցխացի, Հայ է, իմ արիւնից, ինձ աւազանի եղբայր։ Աղա է, յայտնի բան է, մարդիկ ունի, նա կարող է ինձ ազատել, պէտք է նրան դիմել. Նրան տեսնել և նա էլ չի թողլ տալ ինձ գայլի ճանկերում,...։ Այն ժամանակ ես կերթամ Լազարովի, Լուբիցի մօտ, կը յայտնեմ, թէ ինչպէս բարբարոսաբար վարուեց ինձ հետ այս գազանը, չինը վար առնել կը տամ։

Երկար մտածելուց և որոշում անելու տատանուելուց յետո, գնաց Զէլխայի ննջարանը, որին առանձնութեան և տխրութեան մէջ գտաւ։ Քրդուհին յոյս չունէր մի այդպիսի այցելութեան և Ջաւահիրի աչքերը մատնեցին սրտի խորքերում յուզուած գաղտնիքի գոյութիւնը։

—Զէլխա՛, ինչի՞ այսքան ուշացար, միթէ չը գիտես, որ առանց քեզ տխուր է անցնում ժամանակս։

—Քացախը քովդ չէ՞, ես տեսայ, որ մօտդ էր, ներս չմտայ, Զէլնան էլ աշխատում էր սրտի բորբոքումը

չմատնել։ Նա ամբողջ մարմնով դողում էր։

—Գնա՛նք, գնա՛նք ինձ մօտ։

—Ոչ. էստեղ լաւ է. ջուր բերողներին դիտում և զւարճանում եմ։ Ինչքա՜ն ուրախ են այն աղջիկներն ու հարսները, աներկիւղ, ազատ գնում գալիս են, լուսնեակի լուսով գիշեր ժամանակ։

—Լա՛ւ, դու էլ երբ ուզում ես, գնում-գալիս ես, էլ ինչի՞ ես նախանձում նորանց...։

Զէլխան որովհետև Արշակի մասին էր մտածում, լռեց և կասկածեց, որ չը լինի՞, թէ Արշակի հետ ունեցած տեսակցութիւնը լրտեսները իմացրած լինէին Ջաւահիրին, որը մի կերպ բերանից խօսք դուրս առնել էր աշխատում։ Քիչ մտածելուց յետո, ասաց.

—Նորանց և ինձ մէջ մեծ տարբերութիւն կայ։ Ես գնալիս ամէնքը ինձանից փախչում են, կարծես ես բորոտ լինեմ, իսկ նրանք ազատ, ում հետ ասես խօսում են, իրենց ժամանակը ուրախ անցնելով վերադառնում։

—Է՜հ, էլի յիմար բաների վրա ես մտածում, Զէլխա՛, մոռացի՛ր դրանք.

—Ուզում եմ մոռանալ, բայց որ անկարող եմ։

—Հա՛, էդ ինչ Արշակ աղա է, ասին թէ «Արշակ աղան» եկաւ, նա էլ վեր կացաւ գնաց...։

„Արշակ-աղա“ բառից մի տեսակ ցնցում զգաց Զէլխան, բայց Ջաւահիրից ծածկելու համար շտապեց պատասխանել.

—Գնա՛ց սիրեկանդ, դու անմխիթար մնացիր և ցաւին չդիմանալով, եկել հարցնում ես, թէ ու՞ր գնաց։

—Հանաքը թո՛ղ հոգիդ սիրես, այդ ինչ մարդ է.

—Բէգիդ օգնականն է. ես ինչ գիտեմ։

Այդքան խօ Ջաւահիրը գիտէր, իսկ նոր բան Զէլխայից ինչպէս իմանալու էր, այդ էր մտածում․

—Ի՞նչ բան է օգնական-քարտուղարը․

—Բէգի տեղ նա է կառավարում, եթէ բէգը ուրիշ տեղ գնա, բէգի վէքիլն է (փոխանորդ)։

—Ռուս է՞, հայ է՞, ի՞նչ է․

—Հայ է,

—Տեսե՞լ ես նրան, Զէլխա՛,

Դարձեալ կասկածները բորբոքւեցան և Զէլխան քիչ էր մնում, որ վռնդէր Ջաւահիրին, բայց զգուշանում էր կասկածները սաստկացնելուց։

—Ինչի չէ, ամէն օր լուսամուտից տեսնում եմ նրան, երբ գնում է ձորը Յակօյի հետ որսորդութիւն սովորելու, երբ հաց ուտելու է գալիս բէգի մօտ։

Ջաւահիրը չէր կարողանում բացատրել, թէ ինչ պատճառով այդքան չոր կերպով պատասխանում էր իրեն Զէլխան։ Բայց և այնպէս սիրտը տրոփում էր, ուզում էր մի բան իմանալ, ուզում էր ծանօթանալ այդ հայի հետ, այդ ազատարարի, որին նախախնամութիւնը առաջնորդել էր Մէյրամի իրեն փրկելու։

—Ես օր մի ցաւ ունիս, քեզ հետ խօսել չի կարելի, ինչ որ հարցնում եմ, բոնի պատասխաններ ես տալիս, ինձնից նեղացել խօ չե՞ս․․․։

—Ես օր, էս րոպէին խելքս գլուխս չէ, Ջաւահի՛ր․ ինչ որ խօսում եմ, չը գիտեմ։

—Լաւ, էգուց երբ գլխիդ ցաւն անցնի, կը խօսենք, մ'լի․ արի գնանք ինձ մօտ, ես մենակ մնալ չեմ ուզում, դու էլ մենակ նեղանում ես։ Բէգի միւս կիները էրեխայ ունին, նրանցով մխիթարւում են, մենք էլ

իրար մխիթարենք, էլ ո՞ւմն ունինք այստեղ։

—Հոգի՛դ սիրես, ինձ թո՛ղ մենակ, ես էս գիշեր չեմ իմանում, թէ ինչպէս եմ անցնելու։

—Որ այդպէս է, ես քեզ մօտ կը մնամ և քեզ մենակ չեմ թողլ տալ։

—Աղաչում եմ, Ջաւահի՛ր, գնա՛, գնա՛, եթէ ես հանգստացայ, ինքս կգամ քեզ մօտ, եթէ․ ոչ էլի կարող ես գալ․․․։

—Տեսնում եմ, որ ինձ չես սիրում․․․։

—Արեւս վկայ, Ջաւահի՛ր, քեզ անձիս չափ սիրում եմ, քեզ համար պատրաստ եմ գլուխս զոհելու․․․։

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, Զէլխա՛ քեզ ըսպասում եմ, եկ ինձ մօտ, շո՛ւտ արի․․․։

—Ջաւահիրը գնաց սենեակը, բայց հանգստութիւնը բոլորովին կորւած, ման եկաւ, տարածւեց, ներս ու դուրս գնաց, ո՛չ մի հնարք չը կարողացաւ գտնել իմանալու, թէ ո՞վ, կամ ինչպէս մարդ էր օգնական—Արշակ աղան։

Թ

ԿԱՍԿԱԾՆԵՐ

Աստիճանաբար բորբոքւում էր Ջաւահիրը, ուզում էր մի կերպ տեսնել, կամ խօսակցել Արշակի հետ,

բայց մի՞թէ կարելի էր, հնարք կա՞ր....: Նա մէկ մտածեց, կրկին դիմել Զէլխային և նորանից օգնութիւն խնդրել, բայց կասկածեց նորանից, վախենալով որ իրեն մատնէ քրդուհին, որպէս մօլի խալամի դուստր: Այդ քայլը նա չկարողացաւ վճռել: Աղախինների և հարճերի հետ այնքան ծանօթ չէր, դեռ նորանց անուններն անգամ չէր սովորել: Վերջապէս վճռեց անձամբ մի փորձ կատարել և ընդունարանի դռնից, կամ լուսամուտից դիտել և տեսնել նրա դէմքը: Այս քայլն անելու համար նախ դիմեց խոհանոց, որտեղ ճոխ ընթրիք էին պատրաստում հիւրերի և օգնականի մասին հրաւիրուած բըժիշկների համար: Խոհանոցում նա մօտեցաւ, պատրաստած կերակուրները համտես արաւ, հաւանութեան նըշաններ ցոյց տուեց, բորբոքեց ղուլամների սիրտը, դուրս եկաւ: Այստեղից նա մտաւ գոմը, որտեղ մատակներին ու կովերին էին կթում, որպէս տանտիկին դորանց մի քանի հարց տալուց յետոյ, անցաւ ախոռը, որտեղ ծառաները նժոյգների մէջքերը բացած քորում ու շփում էին: Ախոռը բաւական մութն էր և ծառաները կարծեցին, թէ կով կթող կամ խար անող է, ոչ ոք ուշք չը դարձրեց նորա վրայ: Այստեղից մօտեցաւ Ջաւահիրը ընդունարանին, որտեղից մեծ աղմուկի ձայն էր գալիս: Բաւական ժամանակ ականջ դրեց, բայց ոչ մի ծանօթ ձայն չլսեց: Դռան մօտենալ անկարելի էր, մի քանի ծառաներ ներսից, դրսից կանգնած հրամաններ էին սպասում, իսկ տախտակների երկու կողմին թուղթ էր փակցնել տուել օգնականը, որ ախոռի աղբի հոտը իրեն շատ չնեղացնէ: Ջաւահիրը անցաւ Արշակին նըւիրուած նժոյգի մօտով և դիմեց ընդունարանի այն կողմը, որտեղ գտնւում էր Արշակի մահճակալ թախտը: Զգուշութեամբ ասեղով ծակեց թուղթը և սկսեց դիտել սենեակում անցածները: Նա տեսաւ ամէնից առաջ Բէգօյին, այնպէս թւաց, որ իբր թէ Բէգօն իրեն նկատել և սպառնում էր: Ամբողջ մարմնով ցնցուեց և ետ քաշուեց, բայց անմիջապէս այդ սարսուռն անցաւ՝ նա կրկին մօտեցաւ իրեն բաց արած պատուհանին: Կրկին բէգը երևեցաւ իրեն մի քանի բարեկամներով, չէյխերով և ուրիշ քրդերով: Նկատեց, որ բազմոցի վրա մէկը տարածուած էր, գլուխը արմունկին յենած, երեսը խօսակիցներին: Այդ մարդու թիկունքը, պարզուն կոճակները և ուսնոցները երևում էին, իսկ երեսը տեսնել կարելի չէր:

—Դա պիտի լինի օգնականը, ասաց, ինքնիրեն բայց չէ խօսում, որ մարդ գոնէ ձայնը լսի, ետ չի դառնում, որ երեսը տեսնի...: Սենեակում քրդերէն էին խօսում, ինչպէս երևում էր պառկողը հասկանում էր այդ լեզուն, ամեն մարդ նրան էր ուղղում իր խօսքը: Ջաւահիրը զարմանում էր, թէ ինչի՞ չէր պատասխանում նրանց: Խօսակցողը նկարագրում էր Կարսի առնելը և գովում էր Լազարեվի քաջագործութիւնները, որի գընդի մէջ էր եղել և ինքը....

Այս միջոցին մէկ երկու անգամ հազաց օգնականը և ետ դառնալով աղլուխը վեր առաւ ու թքեց մէջը, բայց այնքան արագ անցաւ ամեն բան, որ Ջաւահիրը չը կարողացաւ տեսնել նրա երեսը, նամանաւանդ սենեակն էլ այնքան լուսաւորուած չէր:

Բայց նորան կարող էին որոնել, կարող էին պտրել, կարելի է Զէլխան գնար նորա սենեակը և իրեն

չգտնելով, սկսէր որոնել տան զանազան մասերում....։ Բայց ոչինչ. ոչ մի արգելք չէր կարող իրեն բաժանել այդ տեղից, նա ուզում էր տեսնել օգնականի դէմքը, ուզում էր իմանալ, թէ նա ինչ տեսակ մարդ էր և ապա ծրագիրը կազմել, փախչել և ազատուել....։

Օգնականը՝ Արշակը խորասուզուած երևակայութեան մէջ, թէև այնպէս էր թւում, թէ լսում էր Լազարովի արկածների պատմութիւնը, բայց մտքով նա անցել Արզրումի և Երզնկայի սահմանները, Սիվազի սարահարթի վրա, Ալիս գետի ափերի մօտ, ման էր գալիս Միհրալիի փախցրած իր պաշտելի Գոհարին, առանց երևակայելու, որ Գոհարը իրենից մի գրկաչափ հեռու էր գտնւում և մի մատի հաստութեամբ տախտակով իրենից բաժանուած էր։ Այդ դառն րոպէներում, եթէ մէկը նրա ականջից կարողանար փսփսալ և յայտնել այդ գաղտնիքը, նա իսկոյն մի հարուածով կը փշրէր այդ տախտակները, կը գրկէր անբաժանելին և նորա հետ կսըլանար, կհեռանար աշխարհի այն ծայրն, որ էլ ոչ մի արարածի ձեռք չկարողանար իրենց բաժանել։

Անակնթարթ դիտում էր Ջաւահիրը, բայց Արշակը մտադիր չէր ետ դառնալու և դէմքը ցոյց տալու այն սրտին, որը կուրծքը պատռելու աստիճան բաբախում էր։ Արշակը բարձը ուղղելու համար քիչ բարձրացաւ, նրա դէմքը կիսով չափ տեսաւ Ջաւահիրը և մի կարճ ճիչ բարձրացրեց, երբ նժոյգն էլ նեղացած կարծես զգալով իր նոր տիրոջ և տիկնոջ անհանգստութիւնը, տափնում էր յատակը։ Ջաւա՛հիրի բարձրացրած ճիչը անյայտացաւ այդ ձայնի մէջ։ Շրթունքները սեղմած, կուրծքը աջ թևով պատած, ձախ ձեռքով սիւնը

գրկած մի սոսկալի րոպէ անցկացրեց Ջաւահիրը։ Խեղդւում էր, բայց ա՛յնքան դառն րոպէների վարժուել էր, ա՛յնքան հոգեկան տանջանքներ կրելու սովորել էր, որ կարողացաւ անմռունչ անցկացնել։

Տեսե՞լ էր նրա դէմքը, արդեօք նա՞ էր, թէ սըխալւում էր։ Գուցէ նրան շատ նման մի ուրիշ երիտասարդ էր և որ ինքը կարծել էր, թէ նա է։ Կարելի է երևակայութիւնը իրեն խաբել էր...։ Ո՞նչպէս կարելի էր, այդքան շուտ նրան չի՛ն տւած լինէին......։ Այս և սրանց նման հարցեր պտոյտ էին գալիս նորա գլխում, իսկ ինքը վճռել չէր կարողանում։ Դարձեալ պէտք էր սպասել, ձայնը լսել, ձայնը չէր խաբել......։ Երբ այս մտքերում խորասուզուած առանց բաժանուելու դիտում էր Արշակի շարժումները, մթնում պատերը շփելով առաջ էր գալիս մի ուրիշ կնիկ մարդ՝ Ջաւահիրի բռնած տեղը գրաւելու։ Գալողը աւելի վարժ և աւելի ազատ էր ման գալիս, բայց շատ զարմացաւ, երբ նկատեց, որ տեղն արդէն բռնուած էր։

Զէլխան ճանաչեց Ջաւահիրին, բայց նորան չըվախեցնելու համար լռեց և մի ուրիշ ծակ էլ ինքը բանալով ախոռի հոտին ճանապարհ տուեց աւելի ազատ մուտք գործելու դէպի բէգի ընդունարանը....։ Զէլխան էլ դիտում էր իր լուսամուտից, բայց ո՛չ Ջաւահիրի ագահութեամբ։ Յանկարծ Զէլխայի մտքից մի հարց անցաւ,—Ո՞ւմն էր դիտում Ջաւահիրը և ինչ պատճառով։—Այս հարցի պատասխանը դժուար էր գտնել, միայն զգաց, որ դրութիւնը անտանելի կլինէր, Ջաւահիրը իրեն լրտես կարող էր համարել, եթէ յանկարծ ետ դառնար և նորան տեսնէր։ Ետ դառնալ էլ չէր ու-

զում, առանց Արշակի վիճակի վրա մի լաւ տեղեկութիւն ունենալու։ Անմիջապէս մօտեցաւ և գրկելով Ջաւահիրին ասաց.

—Մի վախենալ, ես եմ,

—Զէլխա, փափաց նորա ականջում, դու այստեղ ինչ գործ ունես.

—Ուկայ լսելու, թէ ինչպէս է Արշակ ազայի առողջութիւնը, նա մի շատ բարի տղա է, եթէ տեսնես նրան դու էլ կհաւանես,....։

—„ Արշակ ազա ", „ բարի տղայ " մրմնջաց Ջաւահիրը, և կրկին մօտենալով իր ասպի չափով բաց արած պատուհանին, շարունակեց դիտել։ Ջաւահիրը չէր կարողացաւ լուծել թէ ինչ կապ կարող էր լինել Ջըրդուհիի և Արշակի մէջ, նա անհանգիստ ուզում էր քննել այդ բանը, բայց չէր իմանում ինչ հարց տալ։

Մինչ միտքն այս հարցերովն էր զբաղւած, անակնթարթ դիտում էր Արշակի շարժումները և ականջները սրած լսում էր մինչև անգամ նրա շնչառութիւնը, յանկարծ խոր սրտով հառաչեց և թիկունքի վրա պառկեց Արշակը։ Ջաւահիրը տեսաւ նոր երեսը, աչքերը, նոր աճած բեխերը, հաստատ համոզւեց, որ Արշակը գտնւում էր իրենից երկու քայլ հեռու, իսկ ինքը ոչ ոյժ ունէր, ոչ էլ կարող էր մօտենալ և գըրկել նրան ասելով. — Արշակ, ինչի ես հառաչում, ահա Դոհարդ....։

Այս միտքը այնքան արագութեամբ անցաւ նորա հոգու խորքերից, որ նա ուշքը կորցրեց և խկոյն —Արշակ ջան, կրկնելով սիրեկանի հառաչանքին արձագանք տւեց ու գլորւեց նժոյգի ոտների տակ.....։

Անմիջապէս Զէլխան նորան գրկեց մի երեխայի նման և վազեց, մուրթ անցքերից անցնելով, տարաւ ննջարանը և աշխատեց սթափեցնել նորան։

Ջաւահիրի առաջին ճիչը Արշակի ականջում հնչել էր մահւան վերջին ճգնաժամում կուսող և ընկճուղի ձայնի նման։ Նա երևակայութեան արդասիք էր համարել այդ ձայնը, կասկածելով մինչև անգամ ականջների վրա։ Երկրորդ անգամ պարզ և որոշ լսել էր Դոհարի ձայնը, որից զարհուրել և սարսափել էր։ Թէև հաւատացել և համոզւել էր, որ իսկ իր սիրեկանի շըրթունքներից էին դուրս եկել այդ բառերը, բայց Արշակին այնպէս էր թւել, իբր ինքը գերեզմանի մէջ հանգստացած րոպէին էր լսել այդ քաղցր ձայնը։ Քիչ յետո, երբ զգաստացել էր, արձանացած էր գտել սենեակում Բէգօ-բէգին, նրա հիւրերին, որոնք այդ ձայնի մասին, որոշ բացատրութիւն չէին կարողացել տալ։ Րոպէական լռութիւնից յետո, նա դուրս եկաւ և ախոռի մէջ, նժոյգի չորս կողմը ման գալով, վերադարձաւ տեղը, առանց կասկածները փարատելու։ Խեղդւած ձայնով էր արտասանել Ջաւահիրը երկու խօսքը, որ չէին կարողացել ուրիշները հասկանալ, բայց Արշակի ականջները այնքան վարժ էին այդ ձայնը լսելու և զգալու, որ սխալւել չէին կարող...։

Այս խառնաշփոթի ժամին սեղանը պատրաստում էին ծառաները և կերակուրներն սկսեցին բերել, դասել, այնպէս որ իբր մոռացութեան տւեց այդ ձայնը և ամէնը բոլորւեցին սեղանի շուրջը։ Թէև ընթրում էին, բայց Արշակի խելքն ու միտքը ուրիշ տեղ էր, նա չէր կարողանում հանգստանալ։ Արշակը անդադար շփում

էր ձեռքը, երեսն ու աչքերը, սեղանը և երբ համոզ-
ւում էր, թէ զարթուն էր, կենդանի էր, յուսահատ-
ւում, չէր կարողանում ինքնիրեն բացատրութիւն
տալ։

Արշակից նւազ շփոթւած չէր Բէգօ-բէգը, նա
շատ որոշ կերպով լսել էր կրկին ձայներն էլ, նա ճա-
նաչել էր սիրեկանի, իր ջրից ազատած կնոջ ձայնը,
բայց չէր կարողացել իմանալ, թէ որտեղից էր եկել
այդ ձայնը։ Ամէն կողմ տնդղել էր և ծառաները ամէն
կողմից բացասական նշան էին յայտնել։ Բէգն էլ էր
կասկածել իր ականջների վրա, թէև նրանք իրեն եր-
բէք խաբել չէին։ Բայց երբ առանձնացել էր, երբ մը-
տել էր ննջարան, հանգիստ ու անմեղ քնի մէջ գտել
էր Ջաւահէր-փէրիին, կասկածոտութեան վրա զայրա-
ցել և չոքելով սիրեկանի թախտի տակ՝ լռելեայն նորա
թոզութիւնն էր խնդրել՝ ձեռքը համբուրելով գոռոզ
լեռնորդին։

Ժ

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՑ

ՀՐԱՄԱՆ

Արշակը, որ հանգստութիւնը բոլորովին կորցը-
ցել էր, այդ իրիկունը չքնացաւ։ Նա տարածւած ան-

կողնի վրայ, աչքերը կիսաբաց երևակայում էր, աչքի
առաջ բերում այն բոլոր տեսարանները, որոնք ան-
ցել էին կարճ ժամանակի մէջ։ Սենեակը լամպով կի-
սատ լուսաւորւած էր, օջախում երկու-երեք կտոր ոս-
տեր ծխում էին, երթը փակած էր և սենեակում տի-
րում էր անտանելի հոտ, ապականւած օդ։

Նէս գիշեր էր, տանը ամէնը քնած, հան-
գստանում էին և շատերը ժամանակաւորապէս մոռա-
ցել էին իրենց վիշտը։ Միայն Զէլխայի քունը կտրւել
էր, նա էլ պառկած էր Արշակի նման և երևակայում։
Քրդուհին գիշերը՝ մուժն էր սիրում, որպէս բնութեան
հարազատ դուստր, ճրագ չկար նորա ննջարանում։ Ար-
շակից նւազ թշւառ և քիչ տառապում չէր լեռների
ազատ դուստրը։ Նորա կրծքում կռիւ կար, սարսափե-
լի փոթորիկ, սիրտն ու խիղճը իրար էին ընկել և նա
չէր իմանում յաղթանակը որին տալ....։

Զէլխան սիրում էր Արշակին։ Նա չգիտէր, կամ
աւելի լաւ նորա պէտքը չէր աշխարհի և ոչ մի հարկն
ու կարգը, իր սիրտը տաքացել էր Արշակի վրա, նա
համակրել և աստիճանաբար այդ համակրութիւնը բոր-
բոքւել, սիրս էր փոխարկւել, բնազդման թելադրութեամբ
սիրում էր և զգում, որ չէր մեղանչում...., Մխիթ իր
սիրտը չէր ստեղծել սիրելու համար, մխիթ բռնի կա-
րող էր սրտին ստիպել, որ չսիրէ համակրածին.....։
Այդ սէրը երկու. երեք ամսի ընթացքում այնպէս էր
արմատացել նորա սրտում, որ գլխել ու արմատախիլ
անել անհնար էր...ցմահ ամէն տեսակ տանջանք կրե-
լու պատրաստ էր այդ սիրո համար, բայց ուրանալ, մո-
ռանալ նա անկարող էր։

Ջաւահիրը սթափւելիս՝ երբ ինքնիրեն նկատել էր Զելխայի գրկում, երբ զգացել էր, որ քրդուհին իրեն փրկել և չէր թողել իր ծրագիրը յաւիտեան կործանւելու, էլ չէր սպասել, գրկել էր նորան և կրկին համբոյրները դրոշմել նորա ճակատին և շրթունքներին: Զելխան այդպիսի ջերմ և անկեղծ համբոյր կեանքումն ստացած չէր, նորա բարի սիրտը հոգւով զգացած սիրեց և խղճաց այդ թշւառ կնոջը: Նա վճռեց օգնել նորան և հասցնել բազձանքին, առանց իմանալու թէ՝ այդ որոշումը որքան թանկ էր արժելու իրեն....:

Ջաւահիրը համբոյրները դրոշմելիս նկատել էր այդ արտասուքի կաթիլները, որոնք գլորւում էին քրդուհիի աչքերից: Այդ արտասուքները հասատասալէս նորա բարեսրտութեան նշան համարեց և չխաբւեցաւ: Էլ առանց տատանւելու բացեց սիրտը, պատմեց բոլոր անցքերը Զելխային: Քրդուհին զգաց, թէ ինչ սոսկալի գրութեան մէջն էր հայի աղջիկը, բայց մեծ հարւած տւեց նորա արկածների պատմութիւնը քրդուհու սրտին էլ:

—Դու պիտի ազատւես, վրէժդ պիտի լուծես, մրմնջաց Զելխան Ջաւահիրի ականջում, մուրազիդ էլ պիտի հասնես....:

Վերջին խօսքերը արտասանելիս քիչ էր մնում, որ շնչասպառ ընկնէր Ջաւահիրի ոտքերի տակ, բայց առիւծի դուստրը հաւաքեց իր բոլոր ոյժը գիշատելու և ճանգռտելու այն սիրտը, որ բորբոքւում խառնւում էր այդ վճռից:

—Բայց Ջաւահիր, ասաց քրդուհին, այժմ ժամանակ է, որ դու գնաս, պառկես և խաղաղ քնել ձեւացնես, որպէսզի մարդ չը կասկածի մինչև որ ես, գործերը կարգի դնեմ: Ես այս իրիկուն Արշակի հետ կոխշենք մեր անելիքը: Բայց դու զգոյշ, աշխատիր էս իրիկուն էլ աւել դուր գալ և էլ բորբոքել նրա սիրտը...: Շտապիր, ուշ է, հիմի կգա նա պառկելու...:

—Զելխա, քեզ եմ յանձնւում, ինչպէս որ կուզես, կարգադրէ...: Օգնիր ինձ արդար վրէժս լուծելու:

—Գնա, պառկիր.....:

Ջաւահիրին պառկեցնելուց յետոյ, սոսկալի մրքեր էին պաշարել քրդուհիին: Արշակի տրամութեան ու տխրութեան պատճառները պարզւել էր, բայց իւր յոյսը բեկւել, փշրւել...: Սոսկալի անել վիճակում էր ընկել Զելխան, ոչ կարող էր Արշակի վրա ունեցած սէրը սպաննել, ոչ էլ իր սիրոյն զոհել Ջաւահիրին և գուցէ Արշակին էլ, նրան, որի համար պատրաստ էր ամէն զոհողութեան...:

Սիրոյ ահաւորութիւնը ինքը լաւ էր զգում և գիտէր, որ մի այդպիսի սոսկալի հարւած երկու կողմին էլ կը վնասէր և հետևապէս ինքն էլ նրանց հետ: Քրդուհին երկար տատանւելուց յետոյ, վճռեց ազատել նրանց երկուսին, իսկ իր ապագան թողնել բաղդի ու լիքների հարւածների տակ, ուր որ ուզէ, թող քշէ, տանէ...:

Քրդուհին աներկիւղ դուրս եկաւ հարէմից և ուրւականի նման գոմերն ու ախոռները անցնելուց յետոյ, եկաւ ընդունարանի դռան առաջ կանգնեց: Դուռը փակած էր, թէև ազատ ճրագի լուսով տախտակների միջից անկողնի վրա տարածւած տեսնում էր Արշակին, բայց չէր իմանում քնած էր, թէ զարթուն:

Դուռը բաղխել կամ ձայն տալ չէր համարձակւում, ուստի գնաց նժոյգի մօտով մկի կրկտնելու նման քերեց Արշակի պատկած բազմոցի տախտակը: Արշակը ըստկզբում ուշադրութիւն չդարձրեց, դուցէ չլսեց էլ: Երկրորդ և երրորդ անգամ էլ քերեց: Արշակը սթափւած նստեց և սկսեց չորս կողմը մոկիկ տալ: Դարձեալ քերեց անընդհատ, մինչև որ նա ոտք ելաւ և սկսեց այս ու այն կողմը քննել: Ջրդուհին շարունակեց, մինչև որ Արշակը ձայնի կողմը ուղղւեց և ականջը մօտեցրեց տախտակին:

—Դուռը բա՛ց, ճրագը մարի՛ր: Արշակը դողաց, բայց սարսափահար հրամանը կատարեց, դուռը բաց արաւ: Ջրդուհին ներս գալով ասաց.

—Ջեզ խօսելիք ունիմ, լմնայը մարի՛ր:

—Բայց այս ժամանակ, առանց ճրագի.....դուրս այտեղ....:

—Մարի՛ր և պատճառը կիմանաս, օճախի կրակի լոյսը մեզ բաւական է:

Արշակը կատարեց նորա հրամանը:

—Դու ինձանից մինչև այժմ վիշտ ծածկեցիր, բայց ես եկել եմ վերջ դնելու ցաւերիդ:

Արշակը ոչինչ չէր հասկանում, նա չպատասխանեց, սպասում էր բացատրութիւնների: Ջրդուհին վարկենական լռութիւնից յետոյ, շարունակեց....:

—Սիրուհիդ գտա՛ր, գտա՛ր Յոհարիդ...:

Երբ Յոհարի անունը Արշակը լսեց, դողդողալով ասաց.

—Աստծու սիրուն, մի՛թէ կարելի է այդքան տանջել, քիչ է մնում, խելքս թռցնեմ.....գժւեմ:

Ասա՛ Ջելխա, ո՞րտեղ է նա, ճանաչո՞ւմ ես նորան, թէ նորա անունը լսելով եկել ես ինձ տանջելու:

—Հանգարտւի՛ր, ես նորա տեղը գիտեմ. էգուց կամ մի՛ւս օրը դու նորան կազատես, կտանես ո՛ւր ցանկանում ես: Բայց հանգստացի՛ր, խելքդ շարժելու է, եթէ ո՛չ, բոլորովին կարող ես նորանից զրկւել.....:

—Ասա՛, Ջելխա, ասա՛, նա որտեղ է, մի՛ վախենալ, ես կարող եմ դիմանալ և հանգստութեամբ տանել ամէն բան:

—Նա այս իրիկուն, կամ առաւօտ կմտնի այս գիւղը.

—Այս գի՛ւղը,

—Դուցէ գիշերս էլ նորան գեղ բերած լինին,..

—Հոգիդ սիրես, Ջելխա, պարզ խօսի՛ր, դու նորան խա՛ չե՞ս տեսել.....:

—Ես նորա մօտիցն եմ գալիս...:

—Ուրեմն նա այստե՞ղ է,

—Սուս, լռի՛ր, նա այս տան մէջն է,

—Անգո՛ւթ, էլ ինչի՞ չես առաջնորդում ինձ նորա մօտ.

—Հանգարտ, այս րոպէիս Բէգօ-բէգը ջաւահիր խանում մօտ է, թէ անխոհեմ շարժւես, դու էլ, նա էլ, ես էլ, բոլորս էլ կարող ենք կորցնել մեր գլուխները և....

—Թո՛ղ, թո՛ղ ինձ, պէտք չէ՞ էլ այս գլուխը, իմ Յոհարս, իմ հոգեակս գազանի՞ ճանկում և ես ապրեմ: Էլ այս կեանքն ինձ հարկաւոր չէ....

—Արշա՛կ, հանգարտւի՛ր, բէգի տունը քառասուն գազան կայ, գլուխդ էլ կուտեն, ջաւահիրին էլ:

Հանդարտուի՛ր, մտածենք և ապա գործենք....:

Արշակը սաստիկ բորբոքումից ընկճուեց և էլ ոչ խօսելու և ոչ շարժուելու կարողութիւն մնաց նրա երակներում: Ընկաւ անլեզու և դառն հառաչանքներ արձակեց անզգայացած.....: Զէյխան հանգստացրեց նորան, քաջալերեց, ուշքի բերեց և մինչև արշալոյս չըհեռացաւ նորա կողքից: Արշակը երբ զգաստացաւ, լըսեց Զէյխայից Գոհարի անցքերի մանրամասնութիւնները և երկուսով իրենց բանելիք ընթացքի ծրագիրը պատրաստելուց յետոյ, բաժանուեց քրդուհին Արշակից, բարեխնամ մօր, կամ քրոջ նման և գնաց հանգստանալու: Այս միջոցին Գիւլ-փէրիի հայրական տնից բերած աղախիններից մէկը նկատեց Զէյխային գոմում, կասկածներ բարձրացան քաւթառի սրտում, որը խնդիրը չբեռնաւորելու համար՝ նոյն օրը յայտնեց իր տիկնոջը:

Գիւլ-փէրիին թէև յայտնի էր Զէյխայի տարօրինակ բնաւորութիւնը, բայց և այնպէս հետաքրքրուեց իմանալու, թէ ի՛նչ պատճառով նա այնքան վաղ մտել էր գոմը: Յայտնի բան է, Գիւլ փէրին ուղղակի չըդիմեց Զէյխային, նա լրտեսներով պատեց նորա սենեակը:

Առաւօտ շատ ուշ դեռ քնած էր Արշակը, թուցէ զարթուն էլ էր, բայց դեռ դռները բացել չէր: Ընդունարան դիւանատան դռան մի քանի գանգատաւոր մօտեցել, հեռացել էին, մի տաք գոմում սպասում մինչև արդարութեան դռների բացուելուն: Բէգօ-բէգը առաւօտ վաղ վեր էր կացել, ջաւահիրի հետ չայ խմել, զըւարճացել և բոլորովին երիտասարդացած դուրս էր եկել դէպի զանազան կողմերը ման գալու, հրամանի տակ գտնուած մելիքխաններների ձիերը, զէնքերն ու շորերը քննելու, որպէսզի կարևոր դէպքում իր մեծաւորի առաջ պարզերես կարողանայ դուրս գալ: Նրա մելիքխանները բոլորն էլ իր մարդիկն էին, ամէնն էլ իր ընտրից: Դեռ այդ այցելութիւնը չէր վերջացրած, եկան իմաց տուին, որ նահանգապետից մարդ էր եկել և թուղթ բերել:

Գրաբերի պատճառով, մինչև Բէգօ-բէգի գալը զարթեցրել էին Արշակ աղային, որը առանց ուշադրութիւն դարձնելու կարդացել էր *ցիրկուլեարը* և թղթաբերին պատասխանել.

—Լաւ, դու գնա.

—Աղա, պատասխան չես տալ, համարձակուել էր կրկին հարցնելու թղթաբերը, որը վարժուել էր միշտ բերած թղթերի պատասխանը տանելու:

—Քեզ ասացի, գնա, էլ աւելորդ ի՞նչ ես խօսում:

Թղթաբերը նեղացաւ, որ օգնականը իրեն վրա բարկացաւ, իրեն պաշտօնակից ուրիշ մելիքխանների ներկայութեամբ, բայց անմռունչ վերադարձաւ Կարս:

Բէգը մտնելով դիւանատուն հարցրեց, թէ ինչ էր ստացել նահանգապետից:

Կարճ և անորոշ կերպով պատասխանեց Արշակը, ասելով, որ մի օֆիցերի (սպա) սպանել են, Քէօմիւրլիի մօտերքը, Նահանգապետը հրամայում է շրջաբերականներով բոլոր գաւառապետներին, որոնել, գտնել մար-

դասպաններին: Մենք էլ պիտի փնտռենք:

—Պատասխանը տալիր, ասաց Ձայնը դողացնելով բէգը:

—Ինչ պատասխան տալի, ամէն թղթի խմ չեն պատասխանել: Մարդ կուզարկենք, փնտռել կտանք, եթէ մի բան իմանանք, կիմացնենք, եթէ ոչ, ինչ ենք պատասխանելու:

—Ուրեմն առաջ պէտք է փնտռել.

—Այո, այսօր դուք կամ ես, պէտք է ձի նըստել և գնալ Քէօմիւրլիի կողմերը, որտեղ անցքը պատահել է և մանրամասնութիւնները իմանալով, գրենք նահանգապետին....:

—Դու ուզում ես գնալ, ասաց բէգը հազիւ իրեն վրդովմունքը զսպելով:

—Եթէ կարելի է, դուք գնացէք, ես տակաւ եմ և այդպիսի գործերը, դուք աւելի աջողութեամբ կարող էք քննել և տեղեկանալ:

—Հաւ, ես կերթամ, ասաց բէգը և քիչ լռելուց յետոյ, աւելացրեց.

—Օֆիցեր են սպանել.

—Այո, Ղազախի օֆիցերի և նրա ձիաւորին....:

Բէգօ-բէգը ձի նստեց և իր չարագործ ընկերների հետ դիմեց դէպի Քէօմիւրլի:

ԺԱ

ՓԱԽՍՈՒՍ

Արշակը Բէգօ-բէգին այդ օրը Իսէյրաթից հեռացնելուց էլ մեծ յաջողութիւն չէր կարող երևակայել: Երբ Բէգօն իր հաւատարիմ ձիաւորների հետ գիմում էր դէպի չարագործութեան վայրը, Արշակը մեծ հաճոյքով դիտում էր նրանց չուն և այդ րոպէներում նրա ուրախութեան չափ չկար: Բէգօյին գիւղից հեռացնելուց յետոյ, անյապաղ պատրաստութիւններ տեսնելու էր Դոհարին այդ գազանի որջից ազատելու: Նա քիչ ժամանակ մտաւ ընդունարան դիւանատունը, լսեց զանազան գանգատաւորների, որոնց գործերն անյապաղ վերջացնելուց յետոյ, կապեց սենեակի դուռը և սկսեց պատրաստութիւններ տեսնել:

Ճաշի ժամանակ մի քանի անգամ անց ու դարձ կատարեց Զէլխայի դռան առաջից և քրդուհիին ակնարկներով միտքը հասկացնելուց յետոյ, իջաւ ձորը: Ձորի մէջ մի ժամի չափ խորհրդակցեցան Զէլխան ու Արշակը, որտեղից վերադառնալիս նկատեցին, որ իրենց լրտեսել էր այն ջադու պառաւը, որին արշալոյսին գոմի մէջ հանդիպել էր: Այդ լրտեսութիւնը բոլորովին դուր չեկաւ Զէլխայիին, որ միտքը դրեց անպատճառ վրէժը լուծել քաւթառից: Նա բոլորովին ուշք չդարձնելով պառաւի վրա, կուժերը ձեռին դիմեց տուն, առանձնացաւ:

Արշակը նորանից գրեթէ մի ժամ վերջը վերադարձաւ ուրիշ ճանապարհով որսական շանը հետը, այնպէս որ պառաւը կասկածեցաւ իր աչքերի վրա և կարծեց թէ սխալւած էր։ Միայն ինչ որ զգում էր, ինչ որ տեսնում էր, ճշտութեամբ յայտնում էր իր տիկնոջը։

Գիւլ-փէրին բանի տեղ չէր դնում քրդուհիին և նա չէր էլ հետաքրքրւում նորա արարքներով, բայց Զէլխայի և Ջաւահիրի այնքան շուտ-շուտ և այնքան երկար խօսակցութիւնները կասկածներ էին բարձրացրել նորա սրտում և նա կարծում էր, որ երեն համար մի թակարդ էին պատրաստում։

—Փաթմի, ասաց Գիւլ-փէրին պառաւին, Փաթմի, գնա՛ տես Ջաւահիրը սենեակումն է։

—Նա նոր գնաց Զէլխայի մօտ։

—Լաւ գիտե՞ս,

—Շատ լաւ գիտեմ,

—Դէհ, գնա՛, մարը Ջաւահիրի ծալքի տակ, քէչ յետո կգան, ինչոր կխօսեն ինձ կպատմես.

—Լաւ, Գիւլլի ջան, շատ լաւ.

Փաթիմն անելևւյթացաւ։ Նա մտել էր տախտակի դարաբի եաև, նստել սպասում էր։ Զէլխայի նըշանը՝ Գիւլ-փէրիի սենեակի հետ կցւած էր պատի մի ջի պահարանով և այդ պահարանից հեշտութեամբ կարելի էր լսել երկու սենեակների խօսակցութիւնները։ Զէլխան չէր ուզում անմիջապէս խօսել Ջաւահիրին երեկոյ պատրաստութիւնների մասին, նորա մտքից դեռ չէր հեռացել քաւթառի ժպտալի ակնարկը, որով պառաւը ուզել էր ասել—քեզ յանգանքի մէջ տեսա։ Նրբ

մտածում էր, թէ Փաթիմի այդ դժոխային արարքն ինչպէս պատժել, Ջաւահիրը մտաւ նորա սենեակը։

—Զէլխա, ասաց, որտեղ ես, քեզ պտրողը որտեղ կը գտնի, էս օր ինչի՞ չեկար ինձ մօտ, չգիտես որքան նեղանում եմ մենակ....։

Գուցէ ուրիշ հարց էլ տար, բայց Զէլխան անկատելի կերպով մտաը բերանն էր տարել և լռել հրամայել թշւառ կնոջ։

—Ջաւահիր ջան, չըի գնացի, մեր գիւղի խրամատը ես շատ եմ սիրում։ Նրբ նստում եմ քարերի ետևը և մտիկ տալիս իմ դէմը գտնւած ապառաժների բանքն և մտիկ տալիս իմ դէմը գտնւած ապառաժների կատրանքին, ամէն ցաւ մոռանում եմ,

—Ցաւում ես, որ ինչի՞ դու նրանց պէս անզգայ քար չես ստեղծւել և ապառաժին կպել.....։

—Հա՛, Ջաւահիր, դու ծիծաղում ես ինձ վրա.Է՞հ թէ դու էլ ինձ նման գառները արածէիր ձորերում և սարերի փեշերի վրա, քու էլ խելքդ մի՞թ ձորերում կլինէր.....։

—Ը՞հ, դու խելառ ես, սրտիդ նեղութիւնից չես իմանում, ինչ ես խօսում։ Վէր կաց, վէր, գնանք իմ օխ

—Շատ հարկաւոր է.

—Ձեռս գալու.

—Լաւ, լաւ, եկայ: Այս խօսակցութիւնը կատարելուց յետոյ, դուրս եկան գնացին Ջաւահիրի սենեակը: Նորանց դուրս գալուց յետոյ, Գիւլ-փէրին պահարանի դուռը բացեց և դուրս եկաւ, հետևեալ խօսքերը պատալով.

—Գոհանան Հաւեր, որ հաւկիթ ածել չգիտեն: Աշխարհը փոխել է, էս էլ նոր բան:

Բայց խօսակցութիւնը այլ կերպարանք ստացաւ, երբ դեռահաս կանայք մտան Ջաւահիրի ննջարանը: Զելխան զգուշութեան համար նախ ծալքը բացեց և մի քանի խօսք ուղղեց խալիների, կապերտների մասին և աչքով ամէն կողմը լաւ քննելուց յետոյ, փեղկերը բաց թողեց, նստեցին խօսակցելու: Փաթին այդ միջոցին քիչ մնաց ձայնը բարձրացնէր, բայց իր բաղտից Զելխան նորան չնկատեց, եթէ ոչ, քաւթառին կը խեղդէր թագ կացած տեղը: Ծալքի փեղկերի բաց մնալը, թէև նպաստում էր, աւելի հեշտութեամբ լսելու, բայց վտանգաւոր էր, եթէ հազար, կամ շունչը բռնէր և մի փոքր խիստ բարձրացնէր ձանյը, Զելխան նորան կենդանի չէր թողնել:

—Արշակին տեսա՞ր, ինչ ասաց.

—Բէգի գնալը մեծ բարեբաղտութիւն է, նա գիշերս չի կարող ետ դառնալ: Արշակը մթնելուն է պատում:

—Մթնելո՞ւն, բայց չի իմանում, որ ժամանակը կորցնելու չէ,

—Ասում է գիշերւանից յարմար ժամանակ չկայ,

մարդ չի կարող իմանալ, թէ որ կողմն ենք գնալու և ճանապարհը կտրող չի լինել:

—Զուր, զուր տեղ ժամանակը պիտի կորցնէ:

—Բայց լոյս ցերեկով բէգի եղբայրների առաջ. էևէքի միջից քեզ ինչպէս կկարողանա անվտանգ դուրս տանել: Նա ամէն բան լաւ է մտածել:

—Ինչպէս անենք, որ ես նրան տեսնեմ, նա որ ինձ լսի, անմիջապէս մենք կերթանք:

—Ցերեկով տեսութիւնից վտանգաւոր բան չը կա: Իլ էն ժամանակ լոյսդ կտրիր:

—Ո՞րտեղ գնալ է միտքը:

—Դեռ չէ վճռել, Կարս, կամ Բէռնա հօր մօտ . . .:

—Բէռնա՞,

—Նա չի ասում անպատճառ Բէռնա . . .:

—Ո՞վ է մեզ ընկերանալու,

—Ցակօն, իր չափարը,

—Ճանաչում ես նրան,

—Շատ ժիր տղայ է,

—Ի՞նքը քեզ ասաց.

—Ասաց, որ մինչև երկուն համբերութիւն ունենաս. հասկացա՞ր,

—Կհամբերենք . . .

Երկար խօսակցեցան, և մինչդոյն հարցերը մի քանի անգամ կրկնեց Ջաւահիրը, Զելխան էլ որին բարկութեամբ, որին մեղմով պատասխանեց: Բայց որովհետև հանգստութիւնները կորել էր, թողին գնացին, քիչ էլ Զելխայի լուսամուտից ջրկերներին դիտելու:

Փաթին քրտինքը ճակատը իջաւ ծալքից և

դուրս եկաւ, կատուի նման թաթերի ծայրերի վրա մանգալով անձայն, անշշուկ։ Գիւլ-փէրին դուրս էր գնացել, ոչ ոք նորան չէր դիմաւորեց, նա մտաւ ախոռը և հիւրանոցի դռան առաջ նկատելով Մստօյին, կանչեց իւր մօտ։

Մստօն Բէգօ-բէգի հայրական ազգականներից էր և ծառայում էր հոգուով բէգին, նրա ազջկան՝ Զուլօին ձեռք բերելու յոյսով։ Զուլօն սիրում էր Մստօյին և երկու սիրահարների գաղտնապահը Փաթին էր. որի ցանկութեան հակառակ բէգը չէր համաձայնում այդ զոյգի միաւորելուն։

—Մստօ, ասաց ձիդ հեծիր, շուտ գնա բէգին գտիր։ Թէ սիրում ես Զուլօյին, թէ ուզում ես նորա ձեռքն ստանալու համար բէգի աչքը մոնել, մինչև բէգին գտնելդ, մարդու բերան բանալու և երկու բառ խօսելու չես։

—Ի՞նչ կայ, Փաթի՛, դու չե՞ս իմանում, որ իմ բերանից մարդ բան չի կարող դուրս քաշել։

—Շատ խօսել չի ուզել, էլ ո՛չ ես, ո՛չ դու, ո՛չ էլ Զուլօն. բէգի ականջին ասա՛, որ Ջաւահիրը Արշակ աղայի հետ էս իրիկուն պիտի փախչի... սո՛ւս, թռչի՛ր...։

Մստօն երկու վայրկեան յետո ձին մտրակում էր դէպի Քէօմիւրլի։ Փաթին շրթունքները պինդ սեղմած այս ու այն կողմն էր մանգալիս, բայց Գիւլ-փէրին չկար։ Վերջապէս հարևանների տանը գտաւ նորան և նա լսեց անցքի բոլոր մանրամասնութիւնները։ Գիւլլին անչափ ուրախացաւ, երբ լսեց այդ լուրը, որ ղուման, Բէգօ-բէգի սիրականը պիտի փախչէր տա-

նից, դրանից մեծ բարերաստութիւն չկար։ Երբ նա տանից խոյս տար, այն ժամանակ բէգը կրկին կսիրէր նախկին սիրով իրեն, խաղաղութիւնը կհաստատուէր իրենց մէջ։

—Փաթի, ասաց Գիւլ-փէրին, գնանք քեզ բան եմ ասելու։ Փաթին հետևեց Գիւլ-փէրիին առանց վրանելու։ Նրանք գնում էին դէպի մարքները և տիկինը սաստիկ մտախոհ էր ճանապարհին, այնպէս որ միայն երբեմն երբեմ իրենց շուրջն էին մտիկ տալիս։ Պառաւը չէր հասկանում, թէ ինչ նպատակով այդ փոքր շրջագայութիւնը կատարում էին։ Գիւլ-փէրին գիտէր, որ բէգը տուն դառնալիս, եթէ Ջաւահիրը տանը գտնէր, ինչ որ խօսէին, ինչպէս վկայութիւնները որ տային, ինչ ապացոյցներ որ ներկայացնէին, նա ոչ մէկին հաւատալու չէր և Ջաւահիրը իր բարձրութիւնից երբէք խոնարհելու չէր։ Նա համոզած էր, որ եթէ բէգը ինքը Ջաւահիրին բռնէր, տուն եթերէր, դարձեալ այդ ջրբերի դուստրը նրա սիրտը հմայելու և գերելու էր։ Այս պատճառով չէր ուզում, որ մէկը արգելք լինէր նրանց խոյս տալուն, ընդհակառակն ինքն ուզում էր օգնել այդ փախուստին։ Բայց գիտէր, պառաւը համբերելու չէր. նա պիտի աշխատէր միջոցներ գտնել և խափանել Արշակի և Ջաւահիրի այդ մտադրութիւնը։ Գիւլ-փէրին բոպեական կերպով իր ծրագիրը կազմելուց յետո, պառաւի հետ գնացին մրաքները։

—ԵՒս էս բանալին ու դուռը բաց, ասաց Գիւլ փէրին։ Փաթին իսկոյն հրամանը կատարեց։ Պառաւը կարծում էր, թէ բարեսիրտ տիկինը գրացիներին կա-

Նստնտեսական մի ինչ որ գործիք էր խոստացել, ուզում էր ուղարկել իր ձեռքով։

—Առաջ անցի՛ր, ասաց տիկինը նորան հետեւելով։

Արարատեան աշխարհի գիւղերի կամ փռելու մարագները, ով որ չէ տեսել, պէտք է իմանա, որ դրանք գիւղերից բաւական հեռու, գետնի մէջ փորուած երեք չորս սաժէն խորութեամբ ստորերկրա մի տեսակ մառաններ են, փայտով ծածկուած և թանձր հողուած։ Դրանց տանիքները հաւասար են. գետնի հետ և անորոշ։ Այս մառանների մուտքը մի նեղ զառիվայր է, երբեմն կրկին դուռ ունի- մէկը մուտքի զառիվայրի գլուխը, միւսը ստորոտը։ Այս մառանում առաջնորդեց պառաւին և երբ մի մեծ սնդուկի առաջ կանգնեց, Գիւլ- փէրին գրպանները ման եկաւ և ասաց.

—Փաթի՛, բալինքներս մոռացայ, տեսար խայտառակութեան։

Պառաւը չպատասխանեց։

—Կա՛ց այստեղ, նստի՛ր քիչ կորկոտ աղա, ես գնամ բերեմ բալինքները, ասաց և դուրս եկաւ Գիւլ փէրին, մուտքի կրկին դռները կողպելով։ Զգաց հնազանդ պառաւը, որ բանտարկւեց, բայց հնարք չունէր ո՛չ դուրս գալու և ո՛չ օգնութեան կանչելու։ Գիւլ փէրին համոզւեց որ ոչ ոք էլ արգելելու չէր Զաւահիրին փախչելու Արշակի հետ։

Անտանելի երկար ժամեր անցկացրին այդ օրը Արշակը, Զաւահիրը, Զէյնաբ, Գիւլ-փէրին և Փաթին, ամէն մի ժամը տարիների նման երկարեց։ Սրտատրոփ ամէն մի վայրկեանի սահելը հաշւում էին, բայց համբերանքի հաշիւը կորցրել էին, ժամերը դժւար էին գլորւում։ Արդէօք քանի՛ քանի՛ անգամ այն օրը այդ բոլորը մօտեցան դռներին, բաց արին դուրս եկան, ներս մտան, երկինքը դիտեցին, լոյսը որոշեցին. առարկաների արեւի տակ թողած շուքը չափեցին, բայց նոյեմբեր ամսի կարճ օրերի մի քանի ժամերը շատ դժւար լրացան նրանց համար։ Իրիկուան դէմ Արշակը կանչեց չափարին իրեն մօտ, ասաց։

Ցակո՛, ձիերի գարին շատ կախէ, մթանը ճանապարհ ենք ընկնելու։ Իմ ձիս դու կնստես, ես էլ բէգի նւիրած նժոյգը։

—Իմ ձի՞ս,

—Նա այստեղ կմնա։

—Քրդերն դրան լաւ չեն նայել,

- Աւելորդ խօսելու ժամանակ չէ։

—Աղա ջա՛ն, ինչպէս որ քէֆդ է,

—Դէհ գնա՛, մի լա՛ւ քորի՛ր, շփի՛ր ձիերի մէջքը։

—Աչքիս վրայ։

Ցակօն հեռացաւ։ Արշակը արդէն բաւական մթնած համարելով՝ սկսեց պատրաստութիւնը տեսնել։ Նա ինչպէս որ հագնւած էր, այնպէս էլ ճանապարհ էր ընկնելու, վրան գլուխը փոխելու կարիք չկար։ Իր կապոցներից նա հանեց մի լեզգու սև արխալուխ մի մոխրագոյն չուխայ, սև ոսկրից փամփուշտակալնե-

բով, մի վարտիկ կարմիր երիզով, մի զոյգ երկար վըզով կօշիկ. մի գտակ բուխար մորթից վարդագոյն թաւիշի գագաթով, մի սուր, մի դաշոյն արծաթապատ և մի մտրակ, բոլորը մի կապոցի մէջ դրեց կապեց։ Քիչ մտածելուց և այս ու այն կողմը մտիկ տալուց յետո, վառօդամանը, մի զոյգ մուշտակաւոր մորթի ձեռնոցներ և մի ուղտի փափուկ բրդից բաշլիկ զետեղեց նոյն կապոցի մէջ։ Անդադար նոր ժամացոյց ստացած ուսանող երեխայի նման ժամին էր մտիկ տալիս, իսկ անիրաւ սլաքը կարծես յամառել, դանդաղ էր կատարում իւր շրջանը։

Բէգօ-բէգի եղբայրը այդ միջոցին ներս մտաւ և բարև տալուց յետո նստեց։ Այս այցելութեան բոլորովին չը հաւանեց Արշակը, բայց վռնդելու էլ անկարող էր, սպասեց իմանալու, թէ ինչ նպատակով էր իրեն մօտ եկել։

—Ի՞նչ է, Սադօ բէգ, ինչ ունիս,

—Տեղ պիտի երթա՛ս,

—Հա՛, գիշերս գնամ Բէռնա, մօրս տեսնեմ. լըւացքս էլ փոխեմ դառնամ։ Քանի օր է գէշ երազներ եմ տեսնում, սիրտս անհանգիստ է։

—Հա՛ն, լաւ, ես կարծեցի հեռու տեղ ես գընալու այս ժամանակ։ Բէռնա մի քայլ տեղ է, քեահլանի ոտքով կէս ժամում կհասնես։

—Բէգն այստեղ չէ, այս շաբաթ էլ գործ շատ ունինք, էլ չեմ կարող գնալ։ Գիշերս կերթամ, առաւօտ լուսուն ետ կգամ։

—Հա՛ւ, հազար բարի, Աստուած յաջողէ։ Սադօ բէգը դուրս եկաւ։

Երբ Սադօ բէգը ընդունարանից դուրս էր գալիս, ախոռում հարսին՝ Ջէլխային չնկատեց, որը իրեն դիմաւորել էր սխալմամբ։ Անմիջապէս ճարպիկ քրդուհին ետ կեցաւ և նրա դուրս գալուց յետո, Արշակի ձեռքից պատրաստած կապոցը առաւ, սրդեց դէպի հարէմ։

Մինչ սրտատրոփ Ջէլխան ու Ջաւահիրը պատրաստութեան մէջ էին, Գիւլ-փէրին կրակ ու բոց կտրած կանանոցում ամէն մէկի մի տեսակ գործով ըզբաղեցրած, բոլորի աչքերը մի կերպ կապել էր, որպէսզի ոչ ոք չնկատէր և արգելք չդառնար իւր ղուռնայի փախուստին։ Երկու դեռահաս կին, որ դողում էին Գիւլ-փէրիից, չէին կարող երևակայել, որ նա այսքան հոգւով նպաստում էր Ջաւահիրի փախուստին։

ԺԲ

ԱՆԱԿՆԿԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Մութը պատելով էր, ձիերին նստան Արշակն ու Յակօն և ճանապարհ ընկան դէպի Բեռնա։

Մինչև գիւղի աներևոյթանալը նրանք առաջ գնացին Բէռնաի ճանապարհով։ Յետո Արշակը ձին ետ

դարձրեց և Ցակօն ապշած, չհամարձակելով անգամ հարց տալու, նրան հետևեց։ Արշակը Խէյրաթ գիւղի հիւսիս արևմտեան կողմից իջաւ խրամատը՝ Ցակօյին հրամայելով, որ իրեն սպասէ։ Քամին փչում էր սոսկալի կերպով, ձիւնի կտորտանքը խփում Ցակօյի երեսին, բայց հրամայուած էր, պէտք է կանգնել և աչքով հետևել աղային։ Նժոյգի քայլերի ձայնը ճանաչեց Ջաւահիրը, որ կոզակի շորերն հագին բէգի եափունջին կռնակը, սպասում էր այն այրում, այն քարերի մէջ, ուրտեղ շատ ժամեր Ջէլխան ու Արշակը վշտակցել էին։ Թռչունի նման թև առած Ջաւահիրը թռաւ Արշակի գաւակը և նժոյգը սլանալով բարձրացրեց կարճ գառիվայրից բեռը։ Ցակօն անմիջապէս նրան հետևեց։

—Ցակօ, իջի՛ր ձիուց, գնա՛ գեղ, քու ձիդ թամքիր և մեզ հետևիր, Բէռնաի ճանապարհով։ Սադօ բէգին ասաւ, որ եղբայրս ոտքով եկել էր ինձ կանչելու, դադրած էր, քու ձիդ նրան տուիր։ Իմացա՞ր։ Յետո դառնալով իւր սիրուհուն ասաց։

—Դու պինդ կաց, ես իջնեմ, իմ ձիս հեծնեմ,

Րոպէական արագութեամբ իջաւ և իր ձին նստելով առաջ քշեց ասելով.

—Շտապի՛ր, մեզ հասիր Ցակօ։ Չմոռանաս ասածներս։

—Խելքս գլուխս է, աղա՛, դու անհոգ կա՛ց։

Մտրակի հարուածների տակ կայծակի արագութեամբ սլացան երիվարները դէպի քաղաք։ Գոհարը այնպէս էր արշաւում, որ կարող էր մի ղօչաղ միլիցոնների նախանձը գրգռել։

Քէօմիւրլի գիւղը իրար էր անցել։ Մուխթար աքսաքալի, համփա թուրքմանները հաւաքուել էին գիւղի ամէնից հարուստ Փոդուր Իբիշի դուռը. խորհուրդ էին անում, թէ ինչ պատասխան տային բէգին, այն մարդասպանութեան՞ համար, որ պատահել էր իրենց գիւղի սահմանում։ Շատ առաջարկութիւններ և շատ խորհուրդ տուողներ եղան, բայց ո՛չ ոք յանձն չառաւ բանակցել բէգի հետ այդ հարցի համար։ Վերջապէս որոշեցին, որ Իբիշն ու նրա աներ՝ Ալին, ինչպէս որ կկամենան բէգի սիրտը առնեն և ճանապարհեն, այնպէս որ այդ գործի պատճառով իրենց գիւղին ու գիւղացուն վնաս չպատահի։ Ամէնը յանձն առան ուրախութեամբ տալ իրենց բաժին ընկնելիք այն կաշառք-հարկի մասը։

Իբիշը պատրաստութիւն տեսաւ, սենեակը մաքրել տուեց, օջախը վառեց, խալիներով ու մաքուր կարպետ բարձերով զարդարեց բազմոցները։

Եկաւ բէգը, իջաւ նոթերը կիտած և սաստիկ կատաղած։ Ո՛չ ոք չէր համարձակւում նրան բան խօսել. Իբիշն էլ երկու ձեռքերը կրծքի վրա շարած, առաջը կանգնած հրամաններին էր սպասում։

—Անիրաւնե՛ր, ասաց բէգը կատաղած Իբիշին, սա էլ Օսմանլին չէ, որ առանց վճարելու ձեր

ամբարներն ու ախոռները դարտակէ, ամխներով սոխրա, բէգար. բանիք(առանց վարձատրութեան), զորքը տներումդ փորը կշտացնէ։ Փա՛ռք Աստուծու, ամէն մէկդ այնքան զարի ու ցորեն, հերթ ու խոտ ծախեցիք, որ հազարներ գլստեցիք։ Այս տեսակ մէկ ողորմած և արդարադատ կառավարութեան մարդին էլ անմեղ տեղը կկտրտեն . . . ։

Ոբէշը լուռ ու մունջ, յանցաւորի նման լսում էր, առանց աչքերը բարձրացնելու։

—Սա էլ թուրքը չէ, որ ձեզի *բիթաքրա*(առանց գրքի) կամ անհաւատ ասելով հալածէ, էլ այնքա՛ն գինի ու արաղ խմեցէք, այնքա՛ն խոզի միս կերէք, որ հոգիներդ դուրս գայ, էլ ինչ կուզէք . . . ։ Ես էս ու էն չեմ հասկանում, պիտի մեղաւորին գտնէք ու յանձնէք։

—Բէգ, մենք ձեր ծառաներն ենք, դուք մեզ լաւ էք ճանաչում, ի՛նչ բեռ որ դնէք մեր վզին, սիրով կտանենք, բայց այդ մեղքը մի՛ գցէք մեր շլինքին . . . ։

—Ես ձեզ լաւ եմ ճանաչում . . . ասաց բէգը, էլ շատ էր խօսելու, բայց անակնկալ Մստոյի գալուստը, շփոթմունքը նրա սիրտը տակն ու վրա արին։ Անմիջապէս հարցրեց նրանից.

—Ի՞նչ կայ, ինչ է պատահել.

--Ծածուկ ասելիք ունիմ, Փաթին վրազ ուղարկեց . . . ։

—Ոբէշ դուրս գնա՛։ Տան տէրը հեռացաւ։ Ասա՛, ինչ լուր ես բերել.

—Փաթին ասաց, որ Արշակ աղան այս երեկուն

Ջաւահիր խանումին պիտի փախցնէ,

—Ի՞նչ յիմար-յիմար դուրս ես տալիս . . .

—Փաթին սուտ չի խօսիլ, ականջովը լսել է նրանց խորհուրդը . . . Փաթին ինձ ասաց, որ թռչունի թևով քեզ այս լուրը բերեմ . . ։

—Հասօ, ձիերը քաշեցէք, գնա՛, դու ձիդ նստի՛ր, Մստօ, ասաց բէգը և պատրաստութիւն տեսաւ ճանապարհ ընկնելու։

—Ոբի՛շ, ասաց բէգը։ Տանտէրը իսկոյն ներս մտաւ։ Ինձ Կարս կանչել են, դու մարդասպանը չցոյց տուի՛ր, քեզ պէտք է ուղարկեմ բանտ, մինչև ճշմարտութիւնը խոստովանիս։ Այս միջոցին բէգը իրև *քամչին* էր կապում, բայց աչքը Ոբէշի ձեռքն էր դիտում։ Ոբէշը ձախ ձեռքը գրպանում դողում էր ողջ մարմնով, բէգի աչքի տակի այդ հայեացքը նրան քաջալերեց և նա մօտեցաւ բէգի *քամչիը* ուղղելու և այդ միջոցին տասը հատ հարիւրանոց դարսած ու ծալած զգուշութիւնով տեղաւորեց բէգի գրպանը։ Երբ զգաց բէգ, որ գրպանում տեղաւորւեցին հարիւրանոցները, շարունակեց.

—Ես գնում եմ, պիտի պտրես, պիտի քննես և ինձ տեղեկութիւն հասցնես . . . ։

—Մեզ այդ կրակից ազատի՛ր, բէգ, մենք քեզ ենք ապաւինած։

—Քեզ ասում եմ հարց ու փորձ պիտի անես, եթէ կասկածներ լինի, ինձ պիտի իմացնես . . ։ . . ։ Ու բէգը վերադարձաւ իւր ձիաւորներով։

Երեք գլխաւոր ընկերների հետ բէգը, ճանապարհին մնացեալ ձիաւորներից առաջացած, կազմեցին իրենց ծրագիրը։ Նրանց խօսակցութիւնը տևեց մինչև Խէյրաթ հասնելը։

—Ո՛չ, չէ կարելի գեաւուրի մի մազին դիպչել, եթէ Արշակի քիթն արիւնի, լաւ գիտցէք, որ մեզ բոլորիս կախել կտա, կամ թւանքի բռնել կտայ Տօլկովնիկովը. բէգ, ասաց նա ինձ, քեզ եմ յանձնում քեզանից կպահանջեմ։

– Այն ժամանակ Ջաւահիրին պէտք է....։

—Արշակը այն ժամանակ մեզ բոլորիս Սիբիր քշել կտա, գիտէք, ինչպէս շունն է, զակոնները բոլորը փորումն է։ Մանաւանդ Ջրբերը իմ բաղդս է...

—Երկուսից մէկը պիտի զոհւի. հնարք չկայ։

—Երկուսն էլ պիտի ապրեն- ասաց վճռական բէգը, մեր գործը պիտի լինի այս գիշեր խլել նրա ձեռքից Ջաւահիրին, ուրիշ ոչինչ....

—Թէ դէմ գնէ, չյանձնի....։

—Մէկ կրակ էլ չպիտի արձակւի մեր կողմից, ոչ ոք սուրը պիտի հանէ պատեանից։ Օսմանցու մէջ չենք, Ռուսաստ է, որան Մոսկով են կանչում, բարակ քննութիւններ ունի, դուք չէք հասկանալ, ձեր խելքի բանը չէ։

—Հրամայէ, ինչ որ ուզում ես, մենք պատրաստ ենք հնազանդւելու։

—Ջաւահիրիս, որ խլէք առանց վնասելու ոչ մէկին, մնացեալը ես գիտեմ, թէ ինչպէս կանեմ։ Ամէն բանից կազատւենք, ես չեմ թոյլ տալ, որ ձեզանից մէկի քիթը արիւնի, կամ մէկն բանտարկէն։

Աւելորդ խօսելով ժամանակը կորցնելու չէ, դե՛հ, քշեցէք, ուշ է, չենք հասնիլ։

Իրիկւա մութը պատելու հետ էր, դեռ տասը վերստից աւել ճանապարհ ունէին գնալու։

—Մատօ, գնա՛ տես, ինչ տեղեկութիւն կա, մանրամասն հարցրու, մեզ լուր բեր։ Քո լուրին ենք սպասում, քշէ....։

Մատօն սլացաւ, նա իւր գլուխը ուզում էր ցոյց տալ Ջուլօյի հօրը։ Ջուլօյի սիրու համար գլուխը զոհելու պատրաստ էր, բէգի և նրա չարագործ ընկերների խօսակցութեան նիւթը չէր պակասում։ Մութը թէև սաստկանում էր, բայց բէգը չէր շտապում, նա ուզում էր միշտ տեղեկութիւններ ստանալ։ Մատօն գիւղին երկու վերստ մնացած դիմաւորեց բէգին և շտապեց բերած լուրերը իմացնելու։

—Արշակը իւր եղբօր հետ Բէռնա է գնացել, Ցակօյին էլ տարել է։ Ջաւահիրը տանը չկա։ Սադօ-բէգը ամէն կողմը մարդիկ է հանել, ոչ ոք նորան չէ տեսել։ Մեծ խառնաշփոթութեան մէջն են։ Արշակի գնալը կէս ժամ հազիւ լինի, նրա ետևից ձիաւորները գնալիս ես տեսայ։

—Ո՞ր կողմն էին գնում ձիաւորները,

—Բէռնա։

—Հասօ, քշէ ձիդ, Չէրմալի չհասած նրանց ճանապարհը կարելու է։ Անպատճառ նրանք քաղաք գնացած կլինեն։

Ձիաւորների հետ բէգը սրարշաւ դիմում էր դէպի Չէրմալի, բէգի խումբը երկուսի բաժանւած, սլանում էր դէպի իրենց նպատակը։ Ոչ

ոք խօսելու փորձ չէր անում, ամէն մարդ ձիու թիկունքին կպած մտրակում էր ընկերներից ետ չմնալու համար և անասուններն էլ կարծես վախենում էին, չէին բաժանւում միմիանցից։ Դէս ժամի չափ արշաւեցին, ամէնը աչքերը սրած, լուսնեակի ոչ շատ լուսաւոր շողի տակ սպիտակ ձիւնի երեսին սև կետեր էին մանգալիս, բայց ոչինչ չտեսան, բան չէր երևում։ Ձորի մէջից գիւղի շների հաչոցի ձայները լսւեցին։

Արդեօք ճանապարհորդներն այդ տեղ խո՞ չեն ապաստանել, հարկ էր իմանալ։ Մատօն այս յանձնարարութիւնը նոյնպէս շատ շուտ կատարեց։

Նրկու ձիաւոր երիտասարդ չինովնիկները կէս ժամ առաջ գիւղի քովից անցել, գնացել էին դէպի Կարս։

—Անպատճառ նրանք կլինին, Յակօն ուրիշ ճանապարհով գնացած կլինի։ Ձեցէք ձիերը, մտրակեցէք ուշ է, չփախցնենք ձեռքից։ Մինչև քաղաք մի ժամի, ժամ ու կէսի ճանապարհ է մնացել։

Ձառիվայրից բացձրացան իջան ձորը, կրկին բարձրացան, առանց մի րոպէ ձիերի սանձը քաշելու և թոյլ թողնելու, որ անասունները կարողանան հանգիստ շնչել։ Արշաւում էին սրընթաց։

Ժողովրդներն ընտիր տեսակից էին, այսպիսի օրերի և պարագաների համար պահւած։ Շնչասպառ քշում էին երիվարներին, ասպարէզը կարճ էր, կարող էին որսը իր բունը փախցնել և սարսափելի կրակն ընկնել։ Հեռուն երկու շարժուն կետեր երևեցան, բէգը լաւ քննելուց յետո, գոռաց.

—Շարժւեցէք տղերք, Մատօ, Հասօ, առաջ անցէք։ Կարծես նրանք էլ տեսել էին իրենց հետևողներին, սլանում էին։

Տղերք, չլինի կրակէք, գոռաց խրոխտ կերպով բէգը։ Երէկ տասը րոպէ նոյն ընթացքով սլանալին կիսրողանային շրջապատել փախստականներին։ Արշաւողները գտնւում էին քաղաքի սահմանում, «փաշալղի շայիրներում», քաղաքից եօթը վերստաչափ հեռու, Կարսչայի ափերում։

—Ձլինի, մի վախենալ, ասում էր Արշակը Ջաւահիրին, մեր դժւարութիւնը կամուրջն անցնել է, դէնը վախենալու բան չունինք։

—Արշակ, ինձ մի թոյլ տալ կրկին անգամ այդ անօրէնի ճանկն ընկնելու . . . :

Ձիաւորները համարեայ լիսուն քայլի չափ հեռու էին գտնւում փախչողներից։ Արշակը հրացան ուներ, բայց գործածելը չգիտէր։ Վախեցնելու համար երկու երեք գնդակ արձակեց, բայց պատասխան չստացաւ։ Յակօյի ընկերակցութեան անհրաժեշտութիւնը գդաց, բայց ուշ էր։ Ձուրդերը շրջապատեցին նրանց, Բէգօ-բէգը սպշեր մնացել էր, Ջաւահիրը չգտնելու պատճառով։ Մատօն ճանաչեց և իմացրեց բէգին, որ կօզակի շորերովը իր սիրելի կինն էր։ Ձրդերը վրա տւին, արհամարհելով Արշակի գնդակներն ու սուրի շարժումները, մօտեցան բռնեցին ու քաշեցին ջրբերին։

Արշակը չկարողացաւ տեսնել բէգին, որը ջուրդերի մի մասի հետ ետ տարին Ջաւահիրին, մնացեալները Արշակին հալածելով դիմեցին Կարս։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍԽԱԼՈՒԱԾ ԴԱՏԱՒՈՐՆԵՐ

ԺԳ

ՓԱԹԻ

Գիւլ-փէրին փախչողներին ճանապարհ դնելուց յետոյ, վազեց մարաքից դուրս բերեց Փաթին ասելով.

—Միտքս բանի գործի հետ էր, քեզ էստեղ մոռացա.

—Քիչ մնաց մենակութիւնից լեղիս պատռուէր, ասաց զայրացած պառաւը:

—Մոռացիր, ներիր ինձ, էնքան խառնուած էի, որ արածս ու դրածս չէի հասկանում:

—Լաւ, լաւ, քէֆդ որ վրադ, սիրտդ որ տեղը չլինի՛, ամէն բան կմոռանաս:

Փաթին զայրացել էր, բայց Գիւլ-փէրին իր սրտուկից, հօր տանից բերած աղախինից վախ չունէր: Նա չէր կարող ոխակալուել իր դէմ և խրատունք էլ չունէր: Երբ Փաթին դուրս եկաւ մարաքից, դեռ տանը նոր էր յայտնուած Ջաւահիրի փախչիլը: Փաթին զգաց, որ այդ գործին Գիւլ-փէրին էլ էր մասնակցել, բայց թէ ինչո՞ւ, կամ ինչպէ՞ս, իրեն անյայտ էր: Ուզեց Գիւլ-փէրին խածնել, բէգի ոտքերի տակ տրորել տալ, բայց վախեցաւ իր տիկնոջ ոխակալութիւնից, Գիւլ-փէրին եթէ բորբոքուէր, կարող էր ըգկտել և ոչ ոքի չէր խնայել:

Պառաւը գնաց քննելու, թէ Ջէլխան էլ խո՛ չէ՞ր փախել: Այս հետաքրքրութիւնը գոհացնելու համար քիչ մնաց, որ գլխին փորձանք բերէր:

Ջէլխան մութ տեղը մի փայտ գցեց, բայց նպատակին չհասաւ, պառաւը խոյս տուեց զգալով, որ մեծ մրրիկի էր սպառնալու: Մսոն վերադարձել և կրկին գնացել էր, հետևապէս պառաւը նպատակին հասել էր. եթէ Ջաւահիրին էլ ետ չբերէին, գոնէ Զուլօին և [illegible]օյին իրար հասցնելու պիտի համաձայնէր բէգը: Տան [illegible]ար անցումը, աղմուկը և խռովութիւնը աչքի առաջ ունենալով՝ Փաթին գնաց, մի անկիւն քաշուեց, սպասելով վախճանին:

Տուն դառնալու պէս, իսկոյն բէգը Փաթին կանչել տուեց: Պառաւին հազիւ գտան և ներկայացրին բէգին: Մանրամասն ամէն բան նկարագրեց պառաւը, միշտ աշխատելով Գիւլ-փէրին արդարացնել:

Ջէլխայի խաղը յաւելուածներով նկարագրեց:

Բէգը շտապում էր. ժամանակը կորցնելու չէր, ամէն բան կարգի էր գնելու:

—Մոտօ, ասաց իր ազգականին, որին մինչև այդ ժամանակ դեռ մարդու տեղ չէր դրել. գնա ձիերը լավ կշտացրու, գողրածները տանը մնան, թամբերը ուրիշ ձիերու վրա զարկ. չորս հինգ ձիավորների, ում որ կամենում ես, տար, որ ձիերը պատրաստեն: Շուտ, կրակի պես շարժվիր:

Մոտօն ուրախությունից թռչկոտում էր: Այդ ժամանակ Բեգօ-բեգը բաց արավ սնդուկը և ամենաթանկագին երեք ձեռք կնիկ մարդու շոր հանեց, զանազան ուրիշ զարդերի հետ և Փաթիին տալով ասաց.

—Սրանք Խալաթը (նուէր վարձատրութիւն): Դու սրանից ետև իմ տանս գլուխն ես, ամէնը քեզ են հնազանդելու: Գնա, շորերդ փոխիր, պատրաստվիր գիշերս ճանապարհ ընկնելու: Գնա, անմ ջան, գնա, դու էլ սրանից ետ իմ մայրս ես: Թող ամէնը տեսնեն. որ ես ում որ ուզեմ, ինչքան կբարձրացնեմ նորա պատիվը:

Թշվառ ստրուկը կեանքումը այդքան [illegible], այդքան քաղցր խոսքեր և ընդունելությունն [illegible] տեսել չէր: Նա ուրախությունից ընկավ բեգի ոտքերին ու ասաց.

—Ես քու գերիդ եմ, բեգ, ես իմ պարտքս կատարել եմ, միթէ ես արժեմ այդ մեծարանքին, որ դու ինձ տալիս ես: Մինչև մահ քո ստրուկն եմ, հավատարիմ ծառայելն իմ հոգուս պարտքն է: Միթէ այսքան տարի քու հացով չեմ ապրել....:

—Ժամանակ չկա, Փաթի գնա ու վրադ փոխիր: Ամէն մարդու պիտի ասես, որ Բեգօ բեգը քո որդին է,

գնա հագնվիր բեգի մոր վայել կերպով:

Եվ դիմադրել անկարելի էր, իսկոյն գնաց փոխեց շորերը և զարդարված ներս մտավ: Բեգը հրամայեց Ջելխային իսկոյն պատրաստել ճանապարհ ընկնելու: Ջրդուհին սկզբում զայրացավ այս հրամանի դեմ, Բայց երբ լսեց, որ Ջավահիրին է ընկերանալու, ուրախությամբ պատրաստվեց: Երբ ձիերը դուրս քաշել հրամայեց բեգը, պառավը քաջալերված ասաց.

—Մի խնդիրք ունիմ....:

—Ասա, սաս, քո խոսքդ չեմ մերժիլ, ասաց բեգը:

—Մատօին ու Ջուլօին բաղտավորացրու....:

—Քու աղադ, քու աղջիկդ, ինչպես որ ուզում ես:

—Ո՛չ, ո՛չ, ես խնդրում եմ, որ խոսք տաս....:

—Քանի որ կամենում ես, ես էլ տված պրծած եմ....:

—Ո՞ւր ենք գնում, ասաց պառավը:

—Ալաշկերտ,

—Դու գալու ես,

—Ո՛չ.

—Ո՞վ է գալու մեզ հետ,

—Մատօն, դուն, Ջաւօն ու Ջելխան:

—Նրանք երկուս, ես պառավ ու մենակ

—Ում ուզում ես, հետդ տար

—Ջուլօին ու մօրը՝ Ղզմային.

—Նրանք էլ թող պատրաստվին, ասաց վճռական բեգը:

Այս գիշերին քսան-երեսուն ձիավորով ճանա-

պարհ ընկաւ բէգը դէպի Արաքսի ձորը։ Արշալոյսին անցան սառուցի վրայից դիմեցին դէպի Գոմիկ՝ Օսման բէգի տները։ Ջաւահիրը կրկին գտաւ այն բարեկամին, որ մի քանի օր իրեն խնամել էր հիւանդութեան ժամանակ։ Նոյն օրն ու գիշերը Օսման բէգի մօտ մնացին ձիաւորները, հետեւեալ առաւօտ դէպի Ալաշկերտ ճանապարհ ընկնելու մտքով, իսկ բէգը նոյն օրն վերադարձաւ Քէօմիւրլի վրայով դէպի Խէյրաթ։

Մ'ստօն, բէգի փեսան ու հաւատարմատարը, ստացած հրահանգների համաձայն առաջնորդում և կառավարում էր բէգի թողած վեց հոգուց կազմուած ձիաւորներին, որոնց օգնութիւնով հետեւեալ օրը անցան բքալի Բարդող լեռներից, որտեղ քիչ մնաց սառեցնէին թշուառ կիներին և թաղէին սառցակոյտերի տակ։ Միայն Ջուլօն չմսեց, մուրազին հասնելն այնքան էր նորան ուրախացրել, որ էլ ցուրտ չէր զգում։

Այդ իրիկունը շատ ուշ ժամանակ, տասն երկու ժամ ճանապարհորդութիւն անելուց յետոյ դադրած, յոգնած քրդերի խումբ, մտաւ Ղարա —Ք է հ է ն ն է մ քրդական ձմեռանոցը՝ բէգի բարեկամ Ասադ-բէգի տունը։ Ասադ-բէգի տանը երեսուն ժամ հանգիստ առնելուց յետոյ, ճանապարհ ընկան և վերջապէս հասան իրանց նպատակատեղին՝ Ղարասու գիւղը, համանուն Արածանու մի փոքրիկ վտակի վրա, Ալաշկերտից երեք՝ չորս ժամ հեռաւորութեամբ։

Ղարասույում գետեղւեց բէգի ընտանիքի այն մասը, որտեղ բանտարկելու էին Ջաւահիրը և Ջէյխան անյայտ ժամանակով, մինչև նոր տնօրինութիւն։

Փաթին որպէս սկեսուր կամ բանտապետ՝ հիանալի կերպով վարում էր իւր պաշտօնը, Բէգից ստացած հրահանգների համաձայն, առանց մի մազի չափ շեղւելու, իսկ իւր օգնական Մ'ստօն ձողի նման դողում էր իւր պաշտօնի առաջ։

Մինչ Բէգօ բէգը իւր ստրուկներին վարում էր դէպի Արաքսի ձորը, դէպի Օսման բէգի գոմը, նրա դաշնակից ընկերներն երեք չորս ձիաւոր, բէգի խորհրդով դիմում էին դէպի Բէռնա։ Սորանց ճանապարհը կարճ էր և այնքան երկիւղալի էլ չէր, նամանաւանդ որ ճանապարհորդական ծանրութիւն չունէին, կամ պարզ խօսքով կիներով չէին բեռնաւորուած։ Ճանապարհին նրանց պատահեց Ցակօն, որ գնալով Բեռնա տիրոջը չէր գտել և կասկածների մէջ տատանւելով հաւատարիմ ծառան ետ էր եկել իմանալու, թէ ինչ էր պատահել իւր տիրոջը։ Խումբը աչքի առաջ ունէր Ցակօյին և չշփոթւեցին, երբ նրան նկատեցին։

—Ցակ՛, դու ես, ասաց խմբապետ Հասօն,

—Ես եմ, ո՞ւր էք գնում,

—Արշակ աղայի մօտ, բէգը մարդ է ուղարկել Քէօմիւրլից, կանչել է, որ միատեղ գնան Կաղզման։ Աւազակների հօտն առել է, Թօդանից և Ն է ն ի ջ է ի ց լուր է եկել, այնտեղ երեք հայդարանցի քրդեր են բռնել։

—Մի երթաք, Արշակ աղան տանը չէ,

—Որտե՞ղ է, ու՞ր գնացած կլինի…

—Ես էլ չգիտեմ, ասաց մոլորուած Յակօն, ինձ ասաց, չտապիր, ետեւիցս եկ, ես մինչեւ ձիս թամքեցի ճանապարհ ընկաւ, նրան կորցրի, էլ չգտա։

—Դատարկ մի խօսի, երեւի տանը քէֆ ունի մեզանից պահում ես եւ չես թողնում, երթանք ուրախութիւնից ետ թողնենք աղային։

—Հաւատացէք, որ նա տանը չէ։

—Ո՞ւմ հետ գնաց,

—Չեմ գիտեր, մի ինչ որ ջահել օֆիցեր էր, ղազախ էր, մթնում լաւ չտեսա։

—Է՜հ տանը կլինի, քշեցէք ձիերն, ասաց Հասօն։ Յակօն էլ ստիպուած ետ դարձաւ դէպի Բեռնա։ Արշակի հայրը, մայրը, եղբայրը բոլորը զարմացած այս անակնկալ այցելութեան վրայ, կասկածների եւ ենթադրութիւնների ծովն ընկան։

Մինչ Հասօն Յակօի հետ ներս մտած խօսակցում էին, դրսի ընկերներից մէկը ձիերի գաւակին կապուած զանազան իրերը քանդեց եւ տարաւ Արշակենց հարթնոցի պատերի ու հարթի մէջ պահեց։ Հասօն երկար բարակ հարց էր տալիս եւ տնեցիք բոլորն հետաքրքրուած նրանով, ոչ ոք ուշք չէր դարձնում դուրսը գտնուողների վրա։ Չարագործը իւր գործը աւարտելուց յետոյ, գնաց․

—Հասօ, ցրտին մենք շատ ենք կչկչալու։ Շտապիր գնանք։

Հասօն հասկացաւ, որ գործն աւարտած էր, ուղղակի դուրս եկաւ եւ վերադարձան։ Ամէնն այնպէս կարծեցին, որ Արշակը քաղաք գնացած լինելու էր,

այն երիտասարդի հետ, որին տեսել էր Յակօն։

Հետեւեալ օրը մինչեւ ճաշ, ոչ մի լուր չկար։ Յակօի մտքից անթիւ կասկածներ անցան, նա գիտէր, որ իւր աղան առանց իրեն ո՛չ մի տեղ չէր գնալ, իրենից էլ գաղտնի գործ բռնած չէր այնքան երկար ժամանակի ընթացքում։ Նա զգում, որ մի տարաբաղդութիւն եկած էր իւր տիրոջ գլխին։

Ճաշի ժամանակ Բէգօ բէգը Խէյրաթ հասաւ եւ անմիջապէս կանչեց իւր մօտ Յակօին։

Միեւնոյն պատասխանները տուեց, ինչ որ տուել էր Հասօին։ Բէգն իմացաւ, որ Ջաւահիրի եւ Զէյնալի դաւադրութեան մէջ մաս չունէր Յակօն, նա եթէ մասնակցած լինէր, կընկերանար Արշակին մինչեւ Կարս։

Բէգը փորը կշտացնելուց յետո, ձիաւորների եւ Յակօի հետ դիմեց Կարս, Արշակին գտնելու եւ նահանգապետին տեսնելու։ Կարսի առնելու գիշերը նրան հրամայել էին առանց իրաւունքի դուրս չգալ իւր պաշտօնավայրից, բայց հինգ օր չանցած նա կրկին դիմում էր Կարս, երբ իւր օգնականն էլ բացակայ էր։ Պատերազմի խառնաշփոթ օրեր, ո՞վ էր իմանում արածը կամ անելիքը․․․։

ԺԴ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ջաւահիրն ուշագնած և նւաղած Արշակից բաժանելուց և առևանգւելուց յետո, չորս հինգ ձիաւոր Արշակին հալածեցին մինչև քաղաք։ Երբ „Ղանլի Թաբիալի“ տակ հասան, ամրոցի պահապանները հրացանի ձայները լսած լինելով դուրս եկան և ամրոցի հրամանատարի կարգադրութիւնով տասը—տասնհինգ զօրք դիմեցին դէպի աղմուկը։ Քրդերը զօրքերին տեսնելուն պէս թողին փախան, իսկ զօրքերը Արշակին բռնելով ներկայացրին իրենց գլխաւորին։ Ամրոցի կառավարիչը լսեց Արշակի երկար պատմութիւնը, նրան ուղղակի մի ֆէլդֆէբէլի հետ ուղարկեց բերդի հրամանատարին։ Օրապահը և բերդի հրամանատարի թիկնապահը Արշակին ուղարկեցին իւր գլխաւորի՝ Նահանգապետի մօտ։

Արշակը նահանգական ատեանում մարդ չըգտնելով դուրս եկաւ և հանգստանալու սաստիկ կարիքն զգալով դիմեց դէպի Զուխուր մահալէն, գառիվերից բարձրացաւ սարսափելի նեղութիւններով մինչև

Փալանչոնց աղբիւրի մօտ, իւր ազգական Բեռնացի Ղազարի տունը մտաւ։ Ղազարը այդ անակնկալ հիւրին ընդունելիս շատ չզարմացաւ։ Ռուսները Կարս մտած օրերն էր, օրական հազարաւոր մարդ գալիս էր քաղաք, դուրս էր գնում։ Ղազարը գիտէր, որ իւր ազգականը ծառայութեան մէջն էր, բայց չէր իմացել, որ բարձրացել էր մինչև չինովնիկի աստիճանի և Թախտի դատաստանի օգնական էր նշանակւած։

Արշակը յայտնեց, թէ սաստիկ յոգնած էր, բացի քնելուց և հանգստանալուց ուրիշ բան չէր ցանկանում։ Ղազարի կինը ամենաթանկագին կտորներից կազմւած անկողնի պարագաները դուրս հանեց ծալքից և փափուկ տեղ պատրաստեց իրենց մեծ օդախում հիւրի համար։ Արշակը համարեա անզգայ ընկաւ քնեց։

Առաւօտը վաղ Արշակը զարթել և իւր ծրագիրը պատրաստել էր։ Նա ուղղակի գնաց նահանգապետի մօտ, որին անարգել ներկայացաւ և սիրալիր ընդունելութիւն գտաւ։

Նահանգապետը ազատ էր, Արշակի տխուր դէմքը և ոչ սովորական ազատ շարժմունքը նկատելով ասաց.

—Մեր տղայ, ինչի ես այդքան նեղացել, ինչ ունիս.

Արշակը չպատասխանեց, նա չէր իմանում ինչպէս սկսէր։

—Երևի վիճակիցդ գոհ չես, ուզում ես ինձ մօտ տեղափոխւել․․․։

—Չգիտեմ ինչ խօսեմ ․․․․․ ասաց Արշակը։

—Ինչ որ գիտես, խօսիր. բան մի՛ պահիր փորումդ, այն ժամանակ կթեթեւանայ սիրտդ եւ կուրախանայ հոգիդ։

—Խօսելիքս շատ երկար է, ձեր գլուխը ցաւացնել չեմ ցանկանում.....։

—Տղէրք, չայ բերէք Արշակին։ Հանդարտ նստիր ու պատմիր։ Ես այսօր մարդ չեմ ընդունել. մինչեւ քո պատմութեան վերջը...։

Արշակը երբեմն նստած, երբեմն ոտքի վրա մէկ մէկ նկարագրեց այն բոլոր անցքերն, որ պատահել էին իրեն եւ Զաւահիրին։ Պատմութիւնը բերեց աւարտեց, թէ ինչպէս ինքը քաղաք մտնելով անցկացրել էր գիշերը եւ ներկայացել էր միակ տիրոջն ու պաշտպանին։

—Ապրիս. ասաց նահանգապետը ծիծաղելով, շատ ժամանակ է „ռոման“ չէի կարդացել. նամանաւանդ քիւրդ Բէգօ բէգի հարեմական կեանքից մի այդպիսի վէպ չեմ կարծում, որ գրուած լինի աշխարհի երեսին։ Տարօրինակ է. անհաւատալի.

—Չեմ կարող ուրանալ, թէ վիպականի ձեւ չունի պատմածս, բայց ձեռքս կուրծքիս դրած ասում եմ ձեզ, հաւատացէք, որ այս բոլորը ճշմարտութիւն է առանց կասկածի։

—Ես քեզ հաւատում եմ, Արշակ, բայց ուրիշները.....։

—Բաւական է ինձ, եթէ դուք հաւատում էք. ես ինչ գործ ունիմ ուրիշների հետ։

—Այժմ ի՞նչ ես մտածում անել։

—Խնդրեմ ինձ մարդ եւ իրաւունք տաք, որ

գնամ պտրեմ եւ նշանածս ազատեմ գազանի ճանկերից։

—Այդքա՞ն շուտ, այդքան արագ։

—Անմիջապէս...։

—Այդ իմ գործը չէ, այդ մասին պիտի պատերազմական քննիչը կարգադրութիւն անէ։

—Տուէք ինձ մի յանձնարարական, ես անմիջապէս գնամ քննիչի մօտ եւ խնդրեմ, որ անյապաղ գործի ձեռնամուխ լինի, թէ ոչ, Գոհարիս գլխին մի փորձանք կարող է պատահել,

Նահանգապետը լսեց եւ սկսեց մտածել։ Արշակը սրտատրոփ մտիկ էր տալիս նրա աչքերում, սպասելով վճռական պատասխանի։ Լռութիւնը խզեց դռան բացւելը, սպասաւորն իմացրեց նահանգապետին կանցելարի կառավարչի գալը։ Երկու րոպէից ներս մտաւ։ Պաշտօնական անյապաղ եւ անյետաձգելի թղթերը առանց կարդալու ստորագրեց նահանգապետը, որոնք անմիջապէս էլ ուղարկեցին կանցելեար, հասցէներին շուտով հասցնելու համար։ Համառօտ կերպով, բաց չըթողնելով գլխաւոր կէտերը, միեւնոյն պատմութիւնը նկարագրեց Արշակը նրան էլ։ Արշակը գրաւած էր երկուսի էլ հաւատարմութիւնը, նրա վրայ կասկածել չէին կարող, բայց օգնելու անկարող էին։ Փաստ չըկար։

—Եթէ ցանկանայ պատերազմական քննիչը, կարող է, ասաց կանցելեարի կառավարիչը, մի այդպիսի քննութիւն սկսել։ Մեղադրողը եթէ ոչ-պաշտօնական անձնաւորութիւն լինէր, հեշտ էր. բայց մի գաւառապետի, ինչպէս կուզէք հաշւեցէք, այսօր նա

գաւառապետ է, մի յայտնի անձնաւորութեան դէմ ծանր է գործ սկսել, նամանաւանդ բանակի յայտնի գեներալները նրան ճանաչում են և նա իւր քուրդ ձիաւորներով պէտքական մարդ է։

—Ուրեմն մենք ոչինչ չենք կարող անել։

—Ոչինչ . . . ։

Դահլիճի դուռը կրկին բացւեցաւ։

—Պատերազմական քննիչը,

—Ներս հրաւիրիր. ասաց նահանգապետը։

Քննիչը ներս մտաւ խոլին յարգանքը տալով նահանգապետին։ Զորս հինգ վարկեանում առօրեայ գործերը բացատրեց, որոնց ամէն մէկի մասին իւր նըկատողութիւնները յայտնում էր նահանգապետը։

—Բայց մի՞թէ կապիտան Դրօզդովի մասին դեռ տեղեկութիւն չստացաք, սպանութեան տեղի, դիակի, վէրքերի բժշկական և վարչական պրոտոկոլները ստացրիք։

—Արշակ Սերգէի՛չ, ինչի՞ մինչև այժմ պրոտոկոլը ստացրիք։

—Երեկ ստացանք թուղթը, կակազեց Արշակը, լաւ չէր յիշում բովանդակութիւնը, բէգը անձամբ գընաց քննութիւն անելու։

—Քէօմիւրլին որքա՞ն հեռու էր, որ երեկ չըվերջացրիք այդ գործը։

—Բայց Քէօմիւրլին Կաղզմանի գաւառապետի սահմանումն է, ծամծմեց խօսքը բերանում Արշակը։

—Ի՞նչ նշանակութիւն ունէր, քանի որ գնացել էր. պէտք էր վերջացնել։

Քննիչը Արշակի գործից խոյս տւող պատաս-

խանները չհաւանեց նա իւր ակնոցի տակով մի սուր հայեացք ձգեց պատանու վրայ։

Բայց այդ դեռ մնա, շարունակեց նահանգապետը, ձեզ սխոր կանչել տալի, լաւ որ դուք եկաք, մի խառն գործ պատմեց ինձ պ. Դիլանովը պէտք է լրջութեամբ հետևիլ այդ գործին . . . ։ Արշակ Սերգէյէ՛չ դու պատմիր։ Արշակը երրորդ անգամ կրկնեց իւր պատմութիւնը։

—Գոհարին քեզանից բաժանելուց յետո ո՞ւր տարան հարցրեց քննիչը։

—Չգիտեմ, յայտնի բան է նահանգից խո՛ չհանեցին։

—Այս խառնաշփոթ ժամանակ ո՞րտեղ պէտք է նորան գտնել . . . ։ Կամ վստահ ե՞ս, որ այդ Չէլեան, որ ձեզ օգնել է. կկրկնէ այդ բանը դատարանի առաջ։

—Առանց այլ և այլի . . . ։

Գործին պաշտօնական ձև տւէք, ես կսկսեմ քննութիւն, եթէ փաստեր ունենամ։

Նոյն օրը կարևոր թղթերը գրւեցին։

Երեկոյեան պատերազմական քննիչը թղթերը ստանալուց յետոյ, անմիջապէս ձեռնամուխ եղաւ գործին. որպէսզի կարևոր հարցերի պատասխանն ստանալուց յետոյ՝ Արշակին արձակէր, որ հետևեալ օրը անյապաղ դիմէր դէպի պաշտօնատեղին։ Երկու ժա-

մի չափ մանրամասնութեամբ քննիչը քննեց, լսեց Արշակին և պատասխանների տակն ստորագրել տւած ուզում էր արձակել, իմաց տւին, որ բէգը ուզում էր քննիչին տեսնել։

—Ոչխարը իւր ոտքով է գնում սպանդանոց, ասաց մտքումը Արշակը, բայց չէր իմանում, որ այդ առակը ինքն էր ներկայացնում։

—Մտի՛ր այս սենեակը, ասաց քննիչը, թող քեզ չտեսնի Բէգօ բէգը։

Արշակը հնազանդեցաւ։ Բայց պէտք է ասել, որ Ջաւահիրը թէև Քէօմիւրլի գիւղի ճանապարհի վրա մարդասպանութիւնը տեսել էր, բայց բանի տեղ չէր դրել ու պատմել։ Արշակը բոլորովին անտեղեակ էր այդ գործից։ Բէգը ներս մտաւ բարևեց և քննիչի ցոյց տւած աթոռի վրա նստեց։ Քննիչը թարգմանով էր խօսում բէգի հետ։ Մի քանի սովորական խօսքերից յետոյ քննիչը հարցրեց՝ թէ ինչ էր կամենում բէգը։

—Թօզան և Նէնիջէ գիւղերում մի քանի կասկածաւոր տներ կան, որոնք ուզում եմ խուզարկել, ասաց բէգը. եկայ ձեզ խնդրելու, որ ընկերանաք։

—Ի՞նչ գործի մասին է, ասաց քննիչը։

—Կապիտանի գործի մասին, Դրօզով է Դրօվօղ է, չեմ կարող հնչել։

—Հաստատ ապացոյցներ կա՞ն։

—Այո՛, ես բոլորովին հաւատացած եմ։ Իմ հաւատարիմ մարդիկն ինձ գաղտնի տեղեկութիւն տւին։

—Կմտածեմ, ասաց քննիչը, առաւօտ ձեզ տեղեկութիւն կտամ։

—Լա՛ւ, ուրեմն առաւօտը կգամ, ասաց բէգը ոտ-

քենլու, խորին յարգանքը տւեց, գլուխը թեքելով։

—Նստէք, քիչ խօսենք, ասաց քննիչը և գլանակով պատւեց բէգին։

Բէգը ծխում էր, հանգիստ նստած իւր տեղը։ Քննիչի աչքը նրա դէմքի և աչքերի արտայայտութեան մէջ ոչ մի վրդովեցուցիչ շարժում չէր նկատում։ Բէգը նրա քննող հայեացքը նկատելով՝ ծիծաղաշարժ կատակներ սկսեց, որպէս զի սխալեցնէ քննիչի խուզարկու հայեացքը։

—Ինչպէ՞ս, ասաց ծիծաղելով բէգը, հաւանեցի՞ր քիւլահիս, գոյն գոյն աղլուխները, թէ ոչ։ Յայտնի բան է, մի մէտաքս նաշխուն թաշկինակ դուք էլ էք տալու ինձ յիշատակ, գլխիս փաթաթելու համար, եթէ յաջող վերջացնենք քննութիւնը։

—Ինչի՞ չէ, ինչի՞ չէ, մի մեծ կարմիր ու կանաչ ծաղիկներով։

—Ձեր ինձ տւած յիշատակը շատ թանկ արժէ, նրան գլխիս վրա եմ պահելու.

—Լաւ, լաւ, ասաց ծիծաղելով քննիչը ես էլ թանգակին արժանաւոր բան կտամ . . . ։ Քննիչն էլ ուզեց կատակով բան հասկանալ և խօսք կորզել բէգից, ուստի շարունակեց ծիծաղելով. — Բայց կասկածում եմ որ իմ նւիրած թաշկինակը հաւանի ջրից ազատած կինդ, դու էլ նորան նւիրես։

—Անհոգ կացէք, նա այնքան թաշկինակներ ունի, որ աչք չի տնկել իւր ազատարար ամուսնի փաթաթանի վրայ։

—Ուզէ՞ք, այդ ինչ բան է։ Անցեալ իրիկուն մի հրաւէրում կանայք պատմում ու սքանչանում էին, թէ

դուք մի գեղանի աղջիկ ազատել էք Արաքսից և ձեզ կնութեան առել: Ուղիղ է, մի՞թէ կարելի է այդպիսի առասպելի հաւատալ...:

—Ուղիղ է, շատ ուղիղ է, բայց մի՞թէ ինձ ճանաչում էին այդ տիկինները: Այդ խո՛ մեծ բախտ է:

—Է՜հ, ո՛վ չէ ճանաչում ձեզ, ձեր հռչակն ամէն տեղ տարածուել է, պատասխանեց քննիչը ծիծաղելով:

—Է՜լ ինձի ի՞նչ է պակաս, եթէ այդքան մեծ անուն ունիմ բանակում:

—Զորս հինգ կանայք մինչև անգամ մտադրուել են ձեզ հիւր գալ ու ձեր ազատած կնոջը տեսնել:

—Բարի, հազար բարի, թո՛ղ հրամեն,

—Մի քանիսներն ասացին, որ սխալ կլինի, կամ սուտ այդ լուրը, եթէ ոչ արդէն սրանք այցելած կլինէին:

—Ցաւում եմ, որ տիկինները չեն կատարել իրենց միտքը, բայց եթէ կարող էք, կրկին նորանց տեսնել, խնդրեմ ասացէք, որ իմ դուռս միշտ բաց է, թող բարեհաճեն այցելել իմ Ջրից ազատած կնոջն, երբ որ կամենան:

—Է՞հ, կատակը թողէք, մի՞թէ ուղիղ է:

—Այնքան ուղիղ, է որքան որ ես ձեր սենեակում նստած եմ:

—Որ այդպէս է, ես կդրդուեմ էգուց իրիկուն այն տիկիններին, որ անպատճառ կատարեն իրենց այցելութիւնը:

—Նախապէս շնորհակալութիւնս յայտնում եմ ձեզ այդ մասին:

Այն միջոցին երբ քննիչը մտածում էր աւելի առաջ տանել իւր կիսատ քննութիւնը, սպասաւորը ներս մտաւ և ասաց.

—Այսօրուա կօզակը թախանձելով խնդրում է անմիջապէս ձեզ տեսնել և երկու խօսք ասել:

—Ասա՛, թո՛ղ քիչ սպասի:

—Ասում է, անյետաձգելի երկու խօսք ունի, հանգիստ չի տալիս ինձ:

—Տար քո սենեակը, ես այնտեղ կգամ: Այս րոպէին կգամ, ասաց քննիչը բէգին և դուրս եկաւ:

—Ձերդ բարեծննդութիւնը, կապիտանին ըսպանողներից մինը ձեր գաւթումն է, ասաց կօզակը աջ ձեռքը գտակին դրած ուղղահայեաց կանգնած:

—Ինչի՞ց ճանաչեցիր, դու ասում էիր, որ հեռու էիր գտնւում և նրանց դէմքերը լաւ չէիր տեսել.

—Արծաթակոթ մտրակից, որը ես իմ ձեռքով հազար անգամ ներկայացրել եմ իմ պարոնին: Վրան գրուած է մինչև անգամ պարոնիս անունը A. C. D.

—Լաւ ճանաչո՞ւմ ես.

—Ինչպէ՞ս չճանաչեմ մշտական բանացրած մտրակը...

—Նա այստեղ ի՞նչ է շինում:

—Քուրդ բէգի հետ եկաւ:

—Բէգի մա՞րդն է... մրմնջեց քննիչը:

Այս գործը սաստիկ թնջկուած է, այստեղ մի շատ հետաքրքիր բան կա, որ բէգն եկել է ինձ տանելու և աչքերս կապելու: Պէտք է անմիջապէս գործն սկսել...:

—Այստեղ կա՛ց, երբ ներս կանչեմ դու կգաս, ասաց քննիչը և մտաւ իր տարօրինակ հիւրի մօտ։

Անմիջապէս մի թուղթ գրեց բերդի հրամանատարին և քսանը հինգ հրացանակիր զինուոր պահանջեց։ Թուղթը վայրկենական արագութեամբ տարաւ սպասաւորը և քսան րոպէ չանցած զինուորները պատեցին քննիչի տունը։ Զօրականը ներս մտնելով յայտնեց, որ պատրաստ է կատարելու քննիչի հրամանները՝ Քննիչը զօրականին տեղ տուեց նստելու իր հիւրերի շարքին։

Քննիչը դուրս գալով իր սպասաւորին ասաց, որ կօզակի ցոյց տուած մարդը առաջնորդէ իր մօտ։ Երկու վայրկեանից ներս մտցրին Յակօյին քննիչի սենեակը։

—Ո՞րտեղ ես ծառայում, հարցրեց քննիչը Յակօյից։

—Բէգի մօտ, նրա միլիցիօնների գնդում։

—Օգնական գրագրիս չափարձ է աւելացրեց բէգը։

—Զիւո՞ր ես։

—Այո՛։ Այս միջոցին քննիչը մօտեցաւ և մտրակը ձեռքից առնելով ասաց.—Ի՞նչ լաւ մտրակ ունիս, որտեղի՞ց գնեցիր.

—Իմս չէ, երեկ իրիկուն ես իմս տւի Արշակ աղայի եղբօրը, այդ էլ վէր առա նրա սենեակից...՝ Այս միջոցին ներս մտաւ կօզակը։

—Արշակ աղան ո՞վ է։

—Օգնական գրագիրս, պատասխանեց ծանրութեամբ բէգը։

—Այս մտրակը ճանաչում ես, հարցրեց քննիչը կօզակից.

—Այո՛ Ձերդ բարեծննդութիւնը, հանգուցեալ տիրոջս՝ Դրօզդովինն է.

—Արշա՛կ Սէրգէի՛չ, ներս հրամայեցէք, խնդրում եմ։ Արշակը ներս մտաւ։

—Ո՞րտեղից է ձեզ այս մտրակը։

—Ձերդ բարեծննդութիւն, տիրոջս սուրը, նրա դաշոյնը, նրա կամարը, ասաց կօզակը մատով ցոյց տալով Արշակի զէնքերը։

—Պարո՛ն Դիլանով, խնդրում եմ բացատրութիւն տաք, ո՞րտեղից է ձեզ այդ զէնքերն ու զարդերը։

—Այս զէնքերը ինձ նուիրեց բէգը, որոնք գնել է աճուրդից Կաղզմանում...

—Բէգ, դուք գնել էք այս զէնքերը Կաղզմանում...

—Ո՛չ, ես Կաղզմանում ոչինչ չեմ գնել և ո՛չ էլ Արշակ աղային բան նուիրել։ Գուցէ սխալւում է.,։

—Արշա՛կ Սէրգէի՛չ, իմանում էք, ասացէք ուրեմն, խնդրում եմ, ո՞րտեղից է ձեզ այդ զէնքերը։

—Ձերդ բարեծննդութիւնը, տիրոջս մատանին, նրա փամփուշտակալները...։ ասաց զինուորը։

—Ասացէք, պատասխանեցէք, պարո՛ն Դիլանով ձեր լռութիւնը լաւ նշան չէ...։

—Բայց արդէն ասացի, պարոն քննի՛չ, որ այս բոլորը ինձ նուիրեց Բէգօ բէգը, սրանից չորս-հինգ օր առաջ, իսկ եթէ նա ուրանում է, ուրեմն ես պարտաւոր եմ հաստատել ասածս։

—Այո՛, այո՛, ապացո՛յց, պէտք է հաստատել, պէտք

է համոզել, որ բէգը ձեզ նւիրել է: Ո՞վ կար այն ժամանակ ձեզ մօտ, երբ բէգը նւիրեց ձեզ այս գէնքերը:

—Ո՛չ ոք, մենք երկուսս առանձին էինք գիւղում, նրա տանը...:

—Բայց չեմ կարծել, որ բէգն ուրանա, նմէկ նա նւիրել է ձեզ դրանք...:

—Ինչո՞ւ էք խօսում, ինչպէս կարելի է, ասաց բէգը...:

—Ներեցէք, պարոն Դիլանով, որ ես պարտաւորւած եմ օրէնքների անունով ձեզ ձերբակալել... խնդրեմ յանձնել ձեր գէնքերը:

Արշակը յանձնեց բոլոր գէնքերը քննիչին և հետևեց զօրականին, որ քննիչի ակնարկութեան համաձայն տարաւ բանտ: Յակօբին էլ առաջնորդեցին Արշակի ճանապարհով:

Բայց բէգը ո՛չ բոլորովին հանգստացած սրտով բաժանուեց քննչից:

Դրա համար այս օր կակազում էր նահանգապետի տանը, երբ Դրոզդովի մասին հարցեր էին տալիս.... ասաց ինքն իրեն քննիչը գլուխը երկու ձեռքերին յենած, գրասեղանին կռթնաց քննութեան թերթերը աւարտելուց յետո:

ԺԵ

ՔՆՆԻՉԸ

Արշակին և Յակօբին բանտարկելուց յետո, մանրամասն կերպով հարցեր տւեց քննիչը Դրօզդովի կողակին, Բէգօ բէգին և նրա մարդկանց, որը չորս հինգ ժամ տևեց և այդ քննութիւնը արձանագրելով յոգնած, դադրած ընկաւ քնեց: Բայց քննիչը չէր կարողանում հանգստանալ, նրա խիղճը խայթում էր, նրա համար դեռ մութ կէտեր կային: Քննիչի մտածութեան գլխաւոր կէտն այն էր, թէ ինչ պատճառով Արշակը, որ լաւ գիտէր, թէ պարում էին այդ մարդասպանութեան չարագործներին, աներկիւղ զինւորւել էր սպանւածի զէնքերով և համարձակ ներկայացել էր քաղաքի ամէն մի առեանում: Դա մի այնպիսի յանդգնութիւն էր, որ ամենաճարպիկ չարագործներն անգամ չէին կարող սիրտ անել կատարելու: Արդեօք անմեղութեան, թէ աչքակապ աճպարարի խորամանկութեան նշան էր այդ բանը: Քնի մէջ անգամ նոյն երազներով զբաղւեց քննիչը և առաւօտ շատ տխուր վերկացաւ անկողնից:

Հետևեալ օրը քննիչը մանրամասն կերպով աչքից անցկացրեց իւր արձանագրութիւնները և գնաց

Նահանգապետին իրերի ընթացքը նկարագրեց։ Նահանգապետը խնդրեց, որ մանրամասն արդարութեամբ ամէն բան քննէ և թող ոճրագործը կրէ արժանաւոր պատիժը։ Արշակի տեղ անմիջապէս նոր մարդ ուղարկեցին, իսկ Բէգօ բէգին դեռ քաղաքից հեռանալու իրաւունք չտւեց քննիչը։ Այդ օրը կրկին քննեց Արշակին քննիչը, որից բացի նախորդ երիկւա խօսքերը ուրիշ ոչինչ չկարողացաւ լսել։ Բացի մի հանգամանք, որ Արշակը պնդում էր, թէ Նոյեմբերի հինգին ողջ օրը եղել էր Ղէյրաթ գիւղում և դուրս չէր գնացել, նոր կասկածներ ծնեցրին քննիչի սրտում։

Կօզակը առաջի քննութեան ժամանակ ասել էր, թէ չարագործութիւնը պատահել է Նոյեմբերի հինգին կէս օրից յետո և մինչև վերջը պնդում էր, որ այն օր էր պատահել ոնցքը։ Կօզակի բերած փաստերը համոզիչ էին և ապացոյցները գրաւոր։ Արշակն էլ գրաւոր ապացոյցներով էր խոստանում հաստատելու, որ ինքը նոյն օրը պաշտօն էր վարել, գործ էր վճռահատել, այդ բանը կարող էին վկայել և այն գիւղացիք, որ գործի պատճառով եկել էին Ղէյրաթ իւր մօտ։ Բէգօ բէգը այնքան պարզ կերպով ասաց քննիչին, որ ինքը օրերի համրանքին կեանքումը երբէք ուշադրութիւն չէ դարձրել, որ քննիչը չկարողացաւ չհաւատալ կամ կասկածել։

—Գոնէ, ասաց քննիչը, չես յիշում, ինչ օր էր....։

—Ձեմ կարող յիշել։ Ո՞ւմ մտքից կանցնէր, թէ նրա գիւղից դուրս գալու, կամ ետ դառնալու օրերը հարկաւոր կլինէին, ինչոր ասեմ, խիղճիս դէմ է, պիտի

տանջւի, հոգիս...

—Լաւ դու, ո՞ր օրը մտար Ջաւահիրի հետ Ղէյրաթ։

—Այդ օրն որ յիշեմ, դրա հետևեալ օրն էլ կգիտենամ։ Իմ գիւղ մտնելուս երկրորդ օրը ճաշին Արշակ աղան դուրս եկաւ գիւղից։

—Արշակը որտե՞ղ էր ապրում։

—Մեր տանը, իրեն համար առանձին սենեակ ունի, այնտեղ է և մեր գիւանատունը։ Բայց շաբաթը երկու երեք գիշեր էլ գնում էր իրենց տունը Ծնողնեբի մօտ, որ մեր գիւղից մի ժամի, կամ ժամ ու կէսի ճանապարհ է։

—Որտե՞ղ,

—Բէռնա....Բէռնա մռմնջալով քննիչը մօտեցաւ քարտէզին և Ղէյրաթի արևմտեան կողմը մատը դրեց։

—Դելանովը ձեր տան մէջ կահ կարասիք ունի՞։

—Անկողին, սնդուկ, շորեր, գէնքեր պահարանում, մանր մունր թղթեր, նամակներ կան...։ Բայց թանկագին բան չէր թողնում մեզ մօտ....։

Քննիչը չէր նկատում, թէ որքան զգուշ, խորամանկութիւնով խօսքեր էր քցում կոպիտ քուրդը և ամէն խօսք ուշադրութեամբ լսում ու արձանագրում էր։ Յաջորդին Արշակին ընկեր և մեղսակից էր կարծում քննիչը։ Սա պնդում էր նոյնպէս, թէ իրենք ամսի վեցին էին դուրս եկել Ղէյրաթից և այդ օրը տանից դուրս գալիս առաջին անգամ էր տեսել Արշակի վրա այն զէնքերն ու զարդերն, որոնցից նախորդ իրիկունը մերկացրել էր քննիչը իւր աղային։ Ընկեր ընկերին այդպէս էլ պաշտպանելու էր, կարծում էր քըն-

նիչը և շատ բնական էր համարում...:

Բայց այնքան վստահ և այնքան պարզ կերպով խօսում էր Յակօն Արշակի նման, որ քննիչը ակամա մասամբ հաւատում էր Յակօյի յուցմունքները և կասկածում բէգի վրա, որ չլինի թէ նա նւիրած լինի այդ զէնքերը Արշակին: Դուցէ, ասում, էր քննիչը մտքում, քուրդն է սպաննել Դրօզդովին, նա է կողոպտել այդ զէնքերը նրանից, բայց ինչո՞ էր նւիրում Արշակին և բոլորը միասին: Մի՞թէ այդ կողոպուտը յանձնեց ամբողջապէս Արշակին, իրեն մաս չպահեց..: Պէտք է, պէտք է մանրամասն հետևել, այդ պատանին ինչից ստիպւած պիտի այդպիսի չարագործութիւն անէր, նա որ դեռ քսան տարեկան հասակում այնքան բարեբազդ վիճակում է գտնւում...:

Աստիճանաբար քննիչի կասկածները շատանում էին և խիղճը անընդհատ խայթում էր: Սեղանի նստաւ այդ օրը, բայց չկարողացաւ ճաշել, խելքը միտքը գործի հետ էր և իւր տանջանքին վերջ տալու համար կրկին կանչել տւեց իւր մօտ Արշակին: Այնքան անվրդով և այնքան պարզ կերպով նկարագրում էր Արշակը բոլոր պարագաները, որ էլ բորբոքում էր քննիչի սիրտը և նրա հետաքրքրութիւնը աստակցնում, որին գոհացնելու համար քննիչը վճռել էր գործին մանրաքննին հետևել մինչև վերջը:

—Դու վստահ ես, որ Ջաւահիրին եթէ խօսեցնեմ, նա կբողոքի բէգի դէմ, կխոստովանի քեզ հետ փախչելը և Բէգօ բէգի խմբի ձեր վրա յարձակւելը...

—Ինչպէ՞ս թէ կխոստովանի, ազատեցէք նորան պ. քննիչ անհաւատի ճանկերից և նա ամէն բան կը-

պարզէ, հիմնովին ձեզ կհամոզէ...:

—Ես նորան կխօսացնեմ...:

—Ուրեմն նա այստեղ է,

—Ո՛չ, բէգն ասաց, որ նա գիւղումն է...:

—Շտապեցէք, պ. քննիչ, շտապեցէք, նա չի դիմանալ, նա կմեռնի այս սոսկալի հարւածից: Ազատւելեան վերջին ժամում նորան կորզեցին ինձանից... Ա՜խ, երանի՜ չէր, որ ես փոխանակ Ալէքսան խալֆի մօտ այնքան տարի գրել կարդալ սովորելու, գող մօտ այնքան թւանք գցել և թուր շարժել սովորած լինէի: Եթէ ես կարողանայի գնդակներս նպատակին հասցնել. մի՞թէ Բէգօ բէգի ձիաւորներն ինձանից կկարողանային դոհարս խլել... Անչափ թշւառ եմ պ. քննիչ, այսպէս ապրելուց չապրելն հազար անգամ նախապատիւ եմ համարում: Հրևակայեցէք, ձեզ որ ես մահս աչքս առած, այնքան տանջանքով հազիւ գազանի որջից կարողացա նորան դուրս հանել, փախցնել, երբ կարծում էի, թէ ազատած էի նորան, էլ ոչ ոք նորան ինձանից բաժանելու չէր և աներկիւղ պիտի վրէժս լուծէի չարագործից... յանկարծ Կարսի մարտկոցների տակ, «Փաշալուխ-չայիրների» մէջ, ճամապարհս կտրեցին և կրկին խլեցին ինձանից իմ հոգեակին.... Կարծես անիրաւները խորհուրդ էին արել ինձ չվնասել, հայոյեցի, սուրս քաշեցի, ոչխարների գնդակներ արձակեցի, բայց նրանք առանց շփոթւելու, առանց ուշադրութիւն դարձնելու ծիծաղում էին ինձ վրա և ծաղրում թուլութիւնս... Որքա՜ն բարեբազդ կլինէի, եթէ մի սրի հարւածով, կամ մի գնդակով գլորէին և հանգստացնէին ինձ... Ձիս նրանցից

խոյս էր տալիս, սանձել չէի կարող կատաղի երիվարին, որ ինձ թշնամուց էր փախցնում, բայց խեղճ կենդանին չէր իմանում, որ ինձ հոգուցս էր բաժանում...:

—Ուրեմն լաւ համոզուած ես, որ քեզ չի դաւաճանել քո սիրականը...:

—Պարո՛ն քննիչ, մինչ կարծում ես, որ հայ աղջիկը կզիջանի անօրէն վայրենուն կին դառնալ: Օգնեցէք և ազատեցէք նորան, այն ժամանակ լաւ պիտի համոզւէք, թէ խորամանկութիւնով ինչ սարսափելի թակարդը գցեց ինձ այդ անխիղճը...:

Քննիչը Արշակին կրկին դէպի բանտ ճանապարհ դնելուց յետո պատրաստուեց գիւղը դնալ և անձամբ քննութիւնները կատարել:

Անմիջապէս Բէգօ բէգի տունը գնաց քննիչը և Արշակի սենեակը սնդուկները, կապոցները, շորերը և զէնքերը բոլորը խուզարկեց, բայց կասկածելի ոչինչ չգտաւ: Նրա մի քանի նամակները և թղթերը նկատողութեան անգամ արժան չհամարեց:

—Բէգո՛ բէգ, ասաց քննիչը, երկուսն ինձ Արշակը մի խնդիրք էր գրել այս գործի մասով, այնպէս որ իմ պարտականութիւնս ինձ սպիտում է ուրիշ քննութիւններ էլ կատարել ձեր տան մէջ. ներիր ինձ, ես ոչ մի կերպ չեմ ցանկանում քեզ վրդովել, բայց օրէնքն սպիտում է...: Արդար մարդը քննութիւնից և քննիչից չի խոյս տալ...:

—Ձեզ չեմ հասկանում, պ. քննիչ, խնդրում եմ պարզ ասէք, ինչ էք մտադիր անելու...:

Բէգօ բէգը երբ թէ չէր հասկանում քննիչին և նրա խօսքերը իրեն վիրաւորանք համարելով բար-

կութեան և զայրութի նշանները էր արտայայտում...:

—Ես կարծում եմ, որ դուք որպէս ծառայող մարդ հասկանում էք, թէ ինչ է պարտականութիւնը ինչ բան է օրէնքը: Դուք ձեր մեծին էք հնազանդում, ձեր փոքրը ձեզ և այդ ամէնը որոշում է օրէնքը: Շթէ կարգերը չլինի, ո՛չ մեծ կլինի, ո՛չ փոքր և ո՛չ մի գործ առաջ չի դնալ: Այս պատճառով դուք գիտես, որ մենք օրէնքին կապուած ենք, օրէնքին էլ հնազանդելու ենք....:

—Բայց ինչ էք ուզում անել, ասաց աւելի զայրացած բէգը...

—Պէտք է ձեր տունը քննել, մի քանի մարդիկ կանչել և քննութեան առնել...:

—Մի քանի մարդի՞կ,

—Այո՛ և մի քանի կին...:

—Բայց դուք չէք իմանում, որ մեր կանայք նամէհրէմ են, մարդու երես չեն դուրս գալ և խոսել....

—Ղադին ու քննիչը մէկ է: Ձեր Շէրիաթի առաջ խօսող կինները, մեր օրենքի առաջ էլ կարող են խօսել...:

—Բայց գիւղում, այնպիսի տեղ ինձ այդքան անպատւել, չգիտէ՞ք որ մենք ամէն բանի կհամբերենք, բայց երբ հարցը պատւի վրա է, երբ գործը *ասահա* է հասնում. էլ չենք դիմանալ...:

Բէգը սրտով որքան որ ուրախանում էր, արտաքին դէմքին վրա այնքան սաստկացնում էր բարբոքման ձևերը:

—Շթէ չհնազանդիք օրէնքին, եթէ օրէնքի

դէմ շարժուէք, դուք որ օրէնքի պաշտօնեա էք, ձեզ որ այս գաւառը յանձնուած է, այն ժամանակ երեւակայեցէք ինչ կլինի մեր դրութիւնը...: Էլ ով կհնազանդի այն օրէնքներին, որ մենք ենք պաշտպանելու, երբ մենք ինքերս նրանց մեր ոտքի տակ գցենք...:

—Բայց նահապետական ժողովուրդը... Նրանք չեն հասկանում օրէնքը, նրանք կթքեն մարդու երեսին ասելով, որ նամուս չունի...

—Նրանց պէտք է հասկացնել...

Լռեց բէգը և մի րոպէ յետո ասաց թարգմանին:

—Ասիր պարոն քննչին, որ ես թոյլ եմ տալիս յօժար կամքով նրան կատարել ցանկացած քննութիւնը, միայն այն պայմանով. որ նա համոզուի, իմ վրա արատ չկա: Ես զգում եմ, որ նա կասկածում է և կասկածները փարատելու համար թող քննէ, ինչպէս որ կամենում է...:

—Շնորհակալ եմ պատասխանեց քննիչը, լաւ գիտցիր, որ արդարութիւնից մազի չափ չեմ շեղուելու և չարագործներն էլ երբէք անպատիժ չեն մնալ:

ԺԶ

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Քննիչը նստեց Արշակի աթոռի վրա, բաց արեց թղթակալը և սկսեց գրել քննութեան պրոտօկոլները: Բէգօ բէգը նստած էր իւր սովորական տեղը, անվրդով դիտում էր քննիչին: Նրա քարտուղար օգնականը, Դրօզդովի կօզակը քննիչի թարգմանը և ձիաւորը ոտքի կանգնած անմռունչ սպասում էին արդարութեան պաշտօնէի հրամաններին: Սենեակին տիրում էր լռութիւնը, միայն քննիչի գրչի թղթի վրա շարժուելուց առաջացած ճռճռոցը խանգարում էր այդ մեռելութիւնը: Քննիչը ականջները սրած գրում էր և դրսից լսած ամէն մի փոքր աղմուկի ժամանակ նա աչքը տնկում էր դռան վրա, բայց դուռը բացող և ներս մտնող չկար: Մի քանի թերթեր գրելուց յետո, երբ գործն աւարտեց, նա պարապ չմնալու համար սկսեց կարդալ գրածները: Այս ընթերցմունքը կէս չեղած դուրսը աղմուկ բարձրացաւ և մի երկու րոպէ յետո մի կօզակի ատրճանաւոր ներս մըտաւ: Քննիչը նրա հետ մի քանի խօսք փոխանակելուց յետո, երբ տեղեկացաւ, որ մի քանի տասնեակ կօզակ

պատրաստ էին իւր հրամանները կատարելու, ստոււտիճանաւորին ճանապարհ դրեց և ինքն էլ աներկիւղ շարունակեց իւր գործերը։

Սենեակում եղողներին բոլորին դուրս անելուց յետո, սկսեց թարգմանի միջոցով հետևեալ հարցերը տալ Բէգօ բէգին և ստացած պատասխանների հետ արձանագրել։

—Ձեզ, որպէս վկայի, մի քանի հարցեր ունեմ տալիք, յոյս ունիմ, որ ճշմարտութիւնը չէք թագցնել ինձանից։

Բէգը պատասխան չտուեց, միայն գլուխը խոնարհելով և աչքերը շարժելով նշան արաւ, որ պատրաստ է կատարելու նրա հրամանները։

—Երեկ չէ առաջին երիկուն, ձեր կինը Ջաւահիր խանումը փախել է Դելանովի հետ ձեր տանից...։

Բէգօ բէգը այնպիսի զարմացական կերպով ծռմրեց և այլայլեց դէմքը, որ քննիչը քիչ մնաց, որ ծիծաղը չզսպելով բարձր քրքջար, բայց գործի ծանրութիւնը աչքի առաջ ունենալով նա զսպեց իւր մըկաններն և սպասեց պատասխանի։

—Ո՛չ, ո՛չ, ասաց վերջապէս գլուխը շարժելով բէգը, այդպէս բան անկարելի է։

—Դուք տանն էի՞ք։

—Ես տանը չէի, ես Կաղզմանի ձորը Թոդան և Գոմիկ գիւղերն էի գնացել Դրօզդովի գործի մասին։ Բայց եթէ այդպիսի մի բան պատահած լինէր, երեկ ինձ կյայտնէին։ Բացի այս Կարս գալուց առաջ ես տեսա Ջաւահիրին տանը ուրախ, զւարթ և բոլորովին անվրդով, իր գործերով զբաղուած։

—Ուրեմն Ջաւահիրը չէ՞ փախել ձեր տանից անցեալ գիշեր։

—Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ...։

—Դուք Ջէլխա անունով կին ունի՞ք։

—Այո՛։

—Նորա վրա կասկածներ, կամ ուրիշ...։

—Բայց դուք գիտէ՞ք, որ չափը անցնում էք. իմ ընտանեկան պատիւս, իմ նամուսս, իմ անունս...

—Ինչի՞ էք զայրանում, ո՞վ է ձեզ անպատուողը։ Այստեղ ես, դու, քո օգնականը և իմ թարգմանը, էլ ո՞վ կա...

—Ախար, ի՞նչ կին փախցնել է, ի՞նչ կասկածներ, իմ ընտանիքի մէջ խռովութիւն է՞ք բարձրացնելու, ի՞նչ է։

—Հանգստացէ՛ք, մենք չենք արատաւորել ձեր պատիւը արդարութիւնն էլ կբարձրացնի ձեր համբաւը։

—Բայց իմ բոլոր կանանցից ես գոհ եմ, ոչ ոք էլ նորանցից դժգոհ չէ ինձանից...

—Աւելի լաւ, մեղաւորը զրպարտութիւնների համար էլ սոսկալի պատիժ կստանա։ Ուրեմն անախորժ դէպքեր չէ պատահել և դուք ձեր ձիաւորներով չէք գնացել Դիլանովի ետևից ետ բերելու Ջաւահիր խանումին։

—Ուրեմն երախտամոռը զրպարտութիւններ է անում, ուզում է դրանցով իւր յանցանքները ծածկել...։ Ափսոս այն հացին, որ նա կերել է իմ սեղանից, ուրիշ ոչինչ չգտաւ, ուզում է իմ հարէմս արատաւորել։ Ո՛չ, պարոն քննիչ, ո՛չ, սուտ է, զարհու-

բելի զրպարտութիւն... Կինները զրպարտութիւններ են անում, որովհետև ուրիշ միջոց չունին վրէժ լուծելու, բայց տղամարդը ինչպէս անամօթաբար յանձն է առնում այդպիսի լրբութիւններ կատարել, ինչո՞վ է հաստատելու այդ խօսքերը...

—Այդ գիշերը ձեր Դոմիկում լինելը կարող էք հաստատել:

—Օսման բէգի տան էի իջևանել և հաջի Վէլի բէգն էլ այնտեղ էր:

—Ո՞վ կար ձեր տանը երիկ մարդ անցեալ գիշեր:

—Ղազարոս էր, մեր մարդիկը բոլորը տանն էին: Ես չորս-հինգ ձիաւորով էի գնացել քննութեան:

Երեք հոգի տանից միևնոյն կերպ վկայութիւն տուին և ամէնքը ուրացան Ջաւահիրի փախուստը: Յօսող վկաներին քննիչը փակում էր մի առանձին սենեակում, որի դռներն ու երդիք հսկողութեան տակ էին:

—Բէգ, ասաց քննիչը, խնդրում եմ կանչել տաք Ջաւահիր խանումին:

Բէգը հրամայեց, որ կանչեն: Մի քանի րոպէից եկան իմաց տուին, որ չէ գալիս, ամաչում է: Կրկին խստիւ հրամայեց, որ անպատճառ գա: Վերջապէս երեսը ծածկած և սպիտակ ասրի *հիրամոմ* փաթաթուած մի կին եկաւ, անցաւ Հասօյի և ընկերների առաջից: Կինը դանդաղ մի ուրիշ պառաւի առաջնորդութեամբ գիմեց ընդունարան-դիւանատուն:

—Հասօ, Հասօ, ես վախենում եմ այս գեաւուրի աղջիկը մեզի ձեռք տա, ասաց մի քուրդ բակի մէջ, երբ անցնում էր Էհրամաւոր կինը:

—Համօ, Սադօ բէգին ասա, որ գնա Բէգօ բէգին դուրս կանչէ: Համօն Սադօ բէգին նշան արաւ, որ մօտենա Հասօյին: Սադօ բէգը մօտեցաւ խմբին և լսեց Հասօյին, որ իրան ասաց.

—Ասածու սիրուն, դուրս կանչել տուր Բէգօ բէգին:

—Ղազախը գիւղը լցել է, այդ գեաւուրի աղջիկը թէ մեզ ձեռք տւեց, էլ ազատութիւն չունենանք, մեզ բոլորին կտանեն բերդը կլցնեն ու Սիբէր կքշեն:

—Մարդ ներս չեն թողնում, ներս գնացողներին էլ հնարք չկա դուրս գալու:

Մինչ դուրսը չարագործները դողերը սրտում չէին իմանում Բէգօ բէգին ինչպէս դուրս կանչել և բացատրութիւն խնդրել հանգստանալու համար, քննիչը պատճառաբանութիւններով խնդրում էր բէգից, որ մի քիչ ժամանակով դուրս գնա, որպէսզի կիները աներկիւղ կարողանան խօսել, որ ապագայում կրկին քննութիւնների առիթ չլինի այդ պարագան: Բէգօ բէգն իբր մեծ նեղութիւնով գիջաւ այդ էլ, բայց սրտանց շատ ուրախ էր, դուռ բացելիս նկատել էր, որ իրեն դուրս էին կանչում:

Հասօն, Համօն, Սադօն և նրանց գործակիցները շրջապատեցին բէգին և բացատրութիւն էին պահանջում, թէ ինչի՞ համար գիաւուրի աղջկան դուրս գալ քննիչի առաջ: Հասօն Համօն և ընկերներն Ջաւահիրին Արշակի ձեռքից խլելուց և բէգին յանձնելուց յետո, ինչպէս յիշում են ընթերցողները գիմել էին Բէգ-

նա Արշակենց տունը ուրիշ գործ տեսնելու և տեղեկութիւն չունէին բոլորովին, թէ բէգը կիներին ճանապարհ էր դրել դէպի Ալաշկերտ՝ Ղարասու գիւղը: Այս բանը բէգը ծածկել էր մինչեւ անգամ իւր եղբօրից:

—Դուք մի վախենաք, ասաց բէկը. եթէ ես վրատահութիւն չունենայի, չէի կանչել....:

—Այդքան բաւական չէ, ասաց Համօն, կնիկ մարդու բնութիւնը միթէ ձեզ լայտնի չէ:

—Աւելորդ խօսք պէտք չէ, մեզ լսում են, ասաց ու գնաց դէպի դուռը:

Բէգը եթէ կարծում էր, որ այդ բանից նրանց վնաս չէը հասնելու, իրենք համոզելու պարտաւոր էին:

Քննիչն Ալէքսանդրապոլցի թարգմանը, որ Արագածի լանջերում ապրող քուրդերի մէջ բաւական ժամանակ գիւղական դրագրի պաշտօն էր կատարել, առանց նեղելու խօսում էր քուրդերէն էլ, թուրքերէն էլ: Կեղծ Ջաւահիրը, իսկական Ջաւօն բացի քուրդերէնից ուրիշ ոչ մի լեզու չէը իմանում: Քննիչը արձանագրութիւն վերջացնելուց և նորի նախաբանը գրելուց յետո հարցրեց.

—Անունդ ինչ՞ է,

—Ջաւահիր, ասաց Ջաւօն,

—Քանի՞ տարեկան ես,

—Տասն ութ,

—Ինչ ազգի ես,

—Քուրդ,

—Ո՞ր տեղացի ես,

—Ալէքսանդրապոլից, Բէգօ բէգի կինն եմ.

—Ծնողներդ որտե՞ղ են ապրում,

—Ես նրանցից փախա, որ ազատեմ, ոչ նրանք իմ կենդանի լինելս գիտեն, ոչ էլ ես ուզում եմ նրանց տեղն իմանալ:

—Բայց պէտք է իմանալ, քեզ համար խնդիրք են տւել և գործ է բացւել, եթէ չասես, լաւ չէ:

—Զիլանցի են, ծնողքերս վրանները ժողոված և դէպի Մուշ ճանապարհ ընկած օրը ես նրանցից փախա և Բէգն ինձ ազատելով կին առաւ.

—Բէգից գո՞հ ես:

—Աստծուց յետո ամենից շատ նրան, եմ յարգում:

—Ուրեմն դու հայի աղջիկ չես,

—Ի՞նչ էք խօսում,

—Բայց իմացէք, որ եթէ հաստատւի, թէ դուք հայ էք, մեծ պատիժ կստանաք,

—Ես քուրդ եմ ծնւել, քուրդի աղջիկ եմ և ով կկարողանա հաստատել, թէ ես քուրդ չեմ,

—Անցեալ երիկուն ինչ պատահեց ձեր տանը.

—Ոչինչ,

—Արշակ աղային դու ճանաչում ես,

—Ո՛չ,

—Նրա հետ տեղ գնացել ես,

—Երբէք,

—Նա քեզ չէ փախցրել տղամարդու շորերով.

—Ի՞նձ.

—Այո՛, քեզ,

Ես այս տանից և իմ սեռեակից դուրս ոտք դեռ չեմ կոխել: Այս ժամանակ իբր ոստիկ նեղու-

թիւնից, երեսի քրտինքն էր սրբում կեղծ Ջավահիրը: Դէմքի քօղը բաց արաւ վայրկենական արագութեամբ և քննիչը տեսաւ քօղի տակ ծածկուած սքանչելի պատկեր: Այս տեսարանի տպաւորութիւնը սաստիկ յուզեց քննիչին և նա կասկածեց, որ գուցէ կինը վախենալով չէր կարողանում ճշմարտութիւնը խօսել:

—Դու դուրսը տեսա՞ր կօզակներն ու զօրքերը:

—Այո՛, տեսա,

—Մի՛ վախենալ, թէ հաստատ դու հայ ես և քեզ բռնութեամբ պահում է բէգը, մի՛ վախենալ, ասա՛, այս րոպէին կհրամայեմ քեզ քաղաք կտանեն և ծնողներդ որտեղ որ են կգտնեն ու կյանձնեն:

—Ինչե՞ր էք խօսում, ես իմ ազատարարիս թողնեմ ու քաղաք գնամ, ծնողական կրօնս ու ազգըս ուրանամ... Ես քուրդ եմ, քրդի աղջիկ եմ և քրդի կնիկ: Խնդրում եմ սուտ պատմութիւններ մի՛ հնարէք և Արշակ ազաներով մի՛ անպատւէք ինձ:

—Քննիչը թէև համոզուեց, բայց մի վերջնական փորձ ևս ուզեց անել: Քեզ մէկ երկու օր յետո քաղաքում Արշակի ու ուրիշ ծանօթներիդ մօտ դէմ ու դէմ խօսացնելու եմ, այն ժամանակ, եթէ նրանք հաստատեն, ի՞նչ ես պատասխանելու:

—Մի՛ կասկածէք, ո՛չ ոք չի յանդգնել ինձ հայ կանչել:

—Որ այդպէս է, էլ ասելիք չունիմ:

Կեղծ Զէլխան էլ խօսեցաւ կեղծ Ջաւահիրի նման:

Քննիչը մնած բոլորովին տարակուսած: Մի քանի ուրիշ վկաներ հարցաքննելուց և հարևանցի

կերպով իւր գործի մէջ նրանց ցուցմունքը գետեղեղելուց յետո, նոյն գիշերը հանգստացաւ բէգի տանը:

Բէգօ բէգը ուրախ իւր յաջողութեան վրա, գառներ մորթել տուեց, մեծ պատրաստութիւններ տեսաւ և շատ լաւ հիւրասիրեց հիւրերին: Քննիչը պարտաւորուեց տասն անգամ շնորհակալութիւն և հարիւր անգամ ներողութիւն խնդրել:

Բէգօ բէգը թէև նպատակին մասամբ հասած էր, Արշակի իրական պատմութիւնները բոլորը հէքեաթների կարգն էր անց կացրել, նրան ստախօս և խաբեփա ներկայացրել էր քննիչի մօտ, բայց դեռ գործին ցանկացած ընթացքը չէր կարողացել տալ:

Նա տանջւում էր, բայց չէր իմանում ռուսերէն խօսել, որ կարողանար խօսակցութեան ընթացքում մի կերպ քննիչին համոզել և ուրիշ խուզարկութիւններ անել տալ: Թարգմանը, որ մի տեսակ միջնորդ էր, չէր կարող լրացնել այդ պակասը:

Ընթրիքից յետո սկսեցին խօսակցել և զուարճանալ քննիչը, կօզակների ատրճանաւորը, Բէգօ բէգը, նրա օգնական քարտուղարն և քննչի թարգմանը: Քննիչը այնպէս արաւ, որ չթողեց էլ այդ գործի մասին խօսելու, հակառակ Բէգօ բէգի ցանկութեան: Խօսում էին պատերազմական անցքերի մասին, Մուխտար ու Իսմայիլ փաշաների և Օսմանցուի բանակի թշուառ վիճակի վրա:

Երբ գիշեր բարի առելով բաժանւում էին, իրարից, Բէգօ բէգը կատակով ասաց·

—Պարոն քննիչ, ձեր խօսքը չկատարեցի՛ք, ոչ թաշկինակ բերի՛ք գլխս փաթաթելու, ո՛չ էլ տիկիննե-

բին ասացիք, որ մեզ այցելելու պատիւն անեն...

—Ձեմ մոռանալ, չեմ մոռանալ, ասաց քննիչը յոյս ունիմ, որ շուտով կկատարեմ խոստումներս...

ԺԷ

ՓՈՔՐԻԿ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

—Բէգօ-բէգ, ասաց առաւօտեան քննիչը, երբ պատրաստւում էին դիւղից գնալու, մի փոքր այցելութիւն ևս ունիմ կատարելիք քեզ յանձնւած գաւառի մէջ, խնդրում եմ մեզ առաջնորդէք Բէռնա:

—Գլխիս վրա, ասաց բէգը ձեռքը ճակատին տանելով, ձեզ կընկերանամ, եթէ հարկ լինի մինչև քաղաք:

—Բայց ձեր օգնական քարտուղարն էլ պէտք է գա, գուցէ կարիք լինի:

—Մեր ձիերն ամէն ժամանակ պատրաստ է, դուք միայն հրամայեցէք.

Քննիչը կօզակներին արձակեց, որոնք անմիջապէս դիմեցին Քէօմիւրլի, իրենք էլ երկու ժամ վերջը գնացին Բէռնա և շրջապատեցին Արշակի հօր տունը:

Բարի լուրը այնքան արագ չի տարածւում, որքան բօթն ու չար-խաբարը: Գուրթան շինողն, որքան որ բարեկամներ ունէր գիւղում, նրա կրկինը չարկամ ունէր:

Համփաներն ու քէհաները տրաքւում էին նախանձից, թէ ինչի իրենք էլ չէին նախատեսել ժամանակին Ռուսի գալն և իրենց որդիքը չէին ուղարկել Գիւմրի՝ Ռուսերէն սովորելու և այդ օրը մեծ մեծ պաշտօններէի գլուխ անցնելու: Արշակն, որ ուսանող ժամանակ արձակուրդներին գիւղ վերադառնալիս ընկերակիցներից մեծագոյն մասի ծաղրին և արհամարանքին էր միշտ արժանացել, որպէս ծոյլ, գործից փախչող, տէրտէրի ու տիրացուի նման հեշտ ճանապարհով պատրաստ սեղանին դիմող, յաղթողների հետ հայհոյի պատրաստ սեղանին դիմող, յաղթողների հետ հայրենի գիւղը մի այնպիսի պաշտօնով, պսպղուն կոճակներով և ուսնոցներով ներս մտնելիս, ամէնքին արմանքի ու զարմանքի մէջ թողել և գիւղի աղջիկների երգերին նիւթ էր տւել, չէր կարող քիչ նախանձորդներ չունենալ: Այդ նախանձորդներն, որ իրենց չար կրքերը սրտի խորքերում թաղելու էին ստիպւած, ոչնց սիրտը այդ չար կիրքը կրծոտում, հալում, մաշում էր աննկատելի կերպով, մի այսպիսի աղետալի բօթի էին սպասում, որ երկար ժամանակ իրենց վերքերից հաւաքւած մաղձը դուրս թափեն և լիեթևանան նրա ծանր ճնշումից:

Դեռ Արշակը նոր էր մտնում բանտի շէմքից, երբ չարախօսներն ճնճղուկի թևերով սլանում էին այդ գոյժը տալու արիաջան հիւսնին: Նոյն գիշերը գիւղի ամէն տան օճախում հաւաքւած խօսում էին

Արշակի մասին։ Փորձւած և շատ բան տեսած հիւսնը գութան էր շինում գրայիններից մէկի համար, երբ լսեց այդ վատ համբաւը։ Պատմողը բարկութիւնից տրաքւում էր, թէ ինչ՞ հայրական սիրտը չէր ճմլըւում այդ գոյժը լսելիս և ինչ՞ չէին թուլանում նրա թևերն, որ վար գլորէին ձեռքից ուրաքն ու փայտը։ Ընդհակառակը ծերունին առանց գործը թողնելու, երբ լսում էր խօսակցի պատմութիւնը ձեռքի տաշած փայտը վեր առնելով կրկին սկսեց տաշել և կոկել...։ Այդ բոլորովին հանդարտութիւնը նկատելով չարախօսն էլ բորբոքւած մի քանի աւելացներով վերջացրեց իւր նկարագրութիւնը, որոնց երեք մեղմ խօսքերով պատասխանեց հայրը․

—Չարագործն անպատիժ չի մնալ...։

Աւելի լաւ էր մի քուղա սառը ջուր ածել այն բամբասողի գլխին, քան անվրդով այդ խօսքերով ճանապարհ գցել։ Ոչնչով չէր կարողանում բացատրել այդ սառնասրտութիւնը և այդ բանը աւելի վշտացնում էր չարախօսին քանց նախկին նախանձը։

Զգաց հօր սիրտը մեծ վիշտ, նա ճմլւեց, բայց բարեսիրտ հայրը վստահ էր, որ անմեղ էր որդին և գիտէր, որ նա չարագործութիւն անելու անընդունակ էր։ Հասկացաւ որ մի դաւադրութեան, մի սոսկալի զրպարտութեան զոհ էր գնացել, բայց համոզւած էր որ անմեղութիւնը ուշ, թէ շուտ յաղթանակելու էր։ Նրա համոզմունքը կազմւել էր փորձերով և դեռ կեանքում այդ արդարադատ օրէնքից զարտուղութիւն չէր տեսել։ Մինչև վաթսուն տարեկան դառնալը Արփա-չայից մինչև Սօղանլու անտառը, Արազի

ափերից մինչև Չըլդըրի լճի ափերի մէջ գտնւած տարածութեան վրա էր ապրել, մի տարածութիւն, որի մէջ հազարից շա՛տ շատ աւել գիւղեր էին զետեղւած, դեռ թո՛ղ քաղաքներն ու քրդերի ձմեռանոցներն ու ամառանոցները։ Վաթսուն տարւա ընթացքում որքա՛ն մարդիկ եկել ու գնացել էին, որքա՛ն չարե՛ր ու բարինե՛ր. նա չէր յիշում ոչ մի չպատժւած չար, կամ չարդարացած բարի.....։ Շատ անգամ նա լսել էր։

—Կարսի Ղադին յիսուն ոսկի առել և Մէհմէդ-Ալի աւազակին, որ Մշեցոնց Տրդատին կորտել էր Մշկոներում, բաց է թողել....։

Մի քանի ամսից էլի պատմէլ էին,

—Կաշառ ուտող Ղադիի տունն են մտել, իրեն կոտրել, սնդուկը դատարկել և փախել...։ Ասում են Մէհմէդ-Ալին է անողը, բայց նա մէկ ամիս առաջ Արզրումում է գնացել և դեռ չէ վերադարձել....։

Գիւղացւոց խօսածները քաղաքից եկած նորութիւններն են, միշտ պատմում են, ինչ որ լսում են։

—Մէհմէդ-Ալին երդւում է կերել էլ գողութիւն չանելու, այս տարի էլ Մէքքէ հաջ է գնացել...։ Սրա խօսողին մի փորձառու պատասխանում է․

—Շան պոչը տասը տարի мешандали (մամուլ) մէջ էլ որ դնեն, չի շիտկի։ Նա մեծ գողութիւններ է ուզում անել, հաջ է գնում, որ կապի միամիտների աչքը...։

Մի քանի տարի յետո կրկին պատմում էին.

—Հաջի Մէհմէդ-Ալին Կարսի հայոց եկեղեցին է կողոպտել, իրեն բռնել են, բայց նշան չկա, թողնելու են....

Եւ վերջապէս.

—Հաջի Մէհմէդ Ալին շանսատակ է արել Քոռ-Հասէօն, «Բուղա Թէբէ» սարի մաղարաներու մէջ, երբ կխսելիս են եղել Շամցի չոդարից կողոպտած ե-րեք հազար ոսկին...:

Հիւսնը ամէն բանին հետևել էր մինչև վերջը, որ միշտ իւր համոզմունքի իրականանալովն էր վերջացել: Այսպիսի հազարաւոր օրինակներ ունէր, էլ կասկածելու անկարող էր:

Իսկ հիւսնի կինը իւր մարդու պինդ սրտից չունէր, նա սկսեց ճղճղալ. գորգոռալ, լալ, ծեծկռտել բայց վերջապէս ինչ կարող էր անել, եթէ ոչ սգալ և օրական մէկ երկու ժամ ողբալուց յետո համբերել՝ մարդու նման յուսալով...: Դեռ բորբոքած դրութեան մէջ էին, երբ Բէգօ բէգը քննիչի և իւր օգնականի հետ եկան խուզարկելու Արշակի հայրական անաղարտ յարկը: Հիւսնը միևնոյն հանդարտութեամբ ընդունեց նրանց, ինչպէս ընդունել էր Հօթաբէրին և թոյլ տւեց, որ ազատ խուզարկեն: Բայց սարսափելի դժգունեց, երբ տեսաւ, որ բէգի ձիաւոր քրդերը մաքարում, իրենց թագցրած ծակերից քննիչի մարդկերանց օգնութեամբ դուրս հանեցին Դրօզդովի գանազան իրերը: Զգաց ծերուկը, թէ ինչ սարսափելի մեքենայութիւններ էր կատարած, հասկացաւ, թէ որքան ճնշելու էին իւր որդուն, տանջելու անմեղին և էլ չդիմացաւ նրա գթառատ սիրտը այդ զարհուրելի հարուածից, ընկաւ....:

Քննիչը բոլորովին համոզւեց, որ մարդասպանութիւնը կատարել էր Արշակը և էլ առանց տատանելու խուզարկութիւնը մանրամասն կատարելուց յետո, արձանագրութիւններն օրէնքի համեմատ կազմեց և հեռանալով վերջ տւեց իւր փոքրիկ այցելութեան...:

Ուրիշ օր չանցած քննիչը կայացրեց իւր մեղադրական զեկուցումը, որով Արշակին և Ցակօլին ներկայացնում էր դատաւորներին որպէս կապիտան Դրօզդովին սպանողներ....:

ԺԸ

ԴԱՀԱՆԱԽՈՐԸ

Քննիչի մեղադրական զեկուցումից յետո, ամէնքը խոյս էին տալիս Արշակին տեսնելուց, նա մարդասպան էր համարւում և ստոր աւազակ, որ չանկարծակի հրացան էր դատարկել մի ճանապարհորդի վրա, նրա դրպանում ունեցած մի քանի սև փողը, կամ նրա կողոպուտը չափշտակելու համար: Ստոր գողութիւն, որ սովորաբար բնակութիւններից և ընկերականութիւնից վռնդւած անձնաւորութիւններն են կատարում: Արշակին նրանցից էլ ստոր էին համարում, որովհետև նրանք կարիքից ստիպւած, կամ մարդկութիւնից վրէժխնդիր՝ կատարում էին այդ չարագործութիւնը, իսկ սա արել էր այդ բանը անպատճառ, կամ

հարստանալու դիտմամբ։ Ի՛լ ամէն մարդ աշխատում էր մոռանալ, նրան հետ ուղեցած յարաբերութեան հետքերը ջնջել։

Երեսից ընկած և մոռացուած Արշակը դատապարտուած էր միջնաբերդի բանտում մարդկային տեսութիւնից արգելուած ապրելու։ Նա որպէս աստիճանաւոր զետեղուած էր մի առանձին սենեակում, որտեղ ոչ մի անհատ ներս չէր մտնում և իւր օրական ուտելիքը, խմելիքը դռնից յանձնում էին նրան։ Միայն ամիսը մի անգամ դուրս էր գալիս բանտից աւազակների խմբի հետ, գնում բաղնիք, լողանում և շորերը լւանում։ Այս ակամա զբօսանքն էլ կմերժէր, այս բաւականութիւնից էլ ձեռք կքաշէր եթէ վարչութիւնը առողջապահական և կենսական տեսակէտից չստիպէր նրան կատարել այդ բանը, Արշակը ամօթից և զայրոյթից այդ երթևեկութիւնը կատարելիս աչքերը գետնից չէր բարձրացնում և չէր ուզում տեսնել, կամ հանդիպել փողոցում ծանօթ, կամ անծանօթ դէմքերի։ Նրան այնպէս էր թւում, որ փողոցներում ամէնքը իրեն մատով ցոյց տալով ասում էին.

—Աւազակ, մարդասպան....։

Իրեն կանչում էին «մարդասպան», որ կեանքումը ոչ մէկ մարդկային արիւն չէր թափել, այլ մի հաւի, մի թռչունի գլուխ անգամ չէր կտրել...։ Այս սոսկալի մաքերով նա տանջւում իր բանտում, առանց մի կողմից օգնութիւն ստանալու, կամ յոյս ունենալու։

Քննիչը երբ վերադարձել էր հիւանի տանից

իւր հետ բերելով Դրօզդովի զանազան իրեղէնները, կանչել և հարցրել էր նրանց մասին. Արշակը ապշել մնացել էր, երբ լսացել, էր որ դրանք գտել էին իրենց մարաքում։ Իսկ երբ տւել էր քննիչը իւր նախքննութիւնների պատճէնը, Արշակը շւարել էր կարդալով Ջաւահիրի և Զելխայի պատասխանները։ Նա համարեա այդ պատճէնները այնքան անգամ կարդացել էր, որ բերանացի առանց մի բառ սխալւելու կարող էր սկզբից մինչև վերջը կրկնել, բոլորի վկայութիւնները։

Բայց Արշակին նոյնպէս անլայտ և անբացատրելի էին գործի հանգամանքների մեծ մասը, նա որքան որ մտածում էր, չէր կարողանում մի պարզ որոշ եզրակացութեան գալ, թէ ինչպէս էին անցել Բէգօ բէգի ձեռքը Դրօզդովի զէնքերն ու զարդերն։ Նա որպէս Բէհնացու որդի լաւ ճանաչում էր իւր դրացի քուրդին և գիտէր թէ ինչպէս արիւնկզակ գազանը առանց խղճահարւելու ամէն բան կարող էր անել, բայց ետքը էր կատարել այդ գործը, մի պարագա, որ անթիւ կասկածներ էր ծնեցնում ինչպէս քննիչի, նոյնպէս և Արշակի գլխում։

Կօզակը հաստատում էր, որ Նոյեմբերի հինգին կէս օրից յետո ժամը երեքի մօտ տեղի էր ունեցել չարագործութիւնը։ Արշակը շատ լաւ համոզւած էր և առանց երկբայելու գիտէր, որ այդ օրը միևնոյն ժամին Բէգօ բէգը իւր մարդկերանց հետ Դոմիկից բերում էր Ջաւահիրին դէպի Ղսէյրաթ։ Ջաւահիրը ասել էր, որ իրանից բոլորովին չէր բաժանւել քուրդը և Արշակն էլ համոզւած էր, որ կասկածոտ բէգը

ոչ ոքի չէր հաւատալ այդ դէպքում իւր փախցրած աղջիկը։ Ճանապարհին եթէ նրանք կատարած լինէին այդ գործը, Ջաւահիրը նրան գոնէ երկու խօսքով յատնած կլինէր և այս անցքը։ Իսկ եթէ ինքը Բէգօ բէգը չէր կատարել այս մարդասպանութիւնը, ո՞վ էր նրան յանձնել մի գիշերւայ ընթացքում Դրօզդովի կողոպուտն, որոնք բէգը հետևեալ առաւօտ մէկ մէկ նւիրել էր Արշակին։

Արշակին յայտնի էր, որ նահանգում, նամանաւանդ գաւառում գործւած ամէն չարագործութիւնների մասին մանրամասն դաղտնի տեղեկութիւններ հասնում էր բէգի ականջին և կողոպուտի իւղալի բաժինը աննշմարելի կերպով մտնում էր նրա ամբարը։ Բայց այդ բոլորը կատարելու համար ժամանակի կարիք կար։ Նախ պէտք էր աւազակները կողոպուտը մի քանի օր լաւ թագցնէին, յետո բաժանէին և երբ նկատէին, որ քննութիւններ և խուզարկութիւններ է սկսւում, կամ հոտը բարձրանալու էր, այն ժամանակ պիտի գայլին փսխելու բէգի ոտքերի տակ տրածների այն մասը, որ չէին կարողացել մարսել...։

Իսկ այս դէպքում ժամանակ չէր անցել, քանի ժամ էլ չէր անցել չարագործութեան րոպէից, երբ բէգը իւր ծոցի քսակից հանել էր թշւառ սպանւածի կնիք մատանին և անցկացրել իւր մատը։ Բացի այդ կողոպուտը ամբողջապէս անցել էր բէգի ձեռքը, կօզակի ցուցման համաձայն, դուրս մնում էր միայն փողի քսակը. որտեղ երկու կամ երեք հարիւր րուբլուց աւել փող երբէք կարծել չէր կարելի։ Սրանցից հետևում էր, որ բէգը անձամբ պիտի կատարած

լինէր այս քաջագործութիւնը, կամ իւր ներկայութեան կատարւած...։ Դուցէ ճանապարհին առաջ ընկած քրդի ձիաւորները կատարել էին այդ բանը, Ջաւահիրը վշտից և մտածութիւնից խլացել, չէր լսել, չէր տեսել, բայց ինչպէս էին գնացել Դրօզդովի մնացեալ շորերը և զէնքերը իրենց մարաքը մտել.....։ Ո՛վ և ինչպէ՞ս էր տարել, որ իրենք չէին իմացել...։

Այս բոլոր հարցերը օրերով և ամիսներով անդրծ երիտասարդին զբաղեցրել էին և նա քանի խորքերում առանձնացած երևակայութեամբ՝ ամէն անգամ հասել էր չարագործութիւնների վայրերը հետազօտելու, իրեն համար գաղտնիք մնացած մասերը լուսաբանելու համար, բայց միշտ վշտի ահաւորութիւնը նրան ընկճելով չէր թողել պարզելու, թմրեցրել էր, չէր թոյլ տւել մի որոշ եզրակացութեան հասնելու։ Նւ այդ ցաւերը նրան էլ խորը հարւածելով կանշնչացնէին, եթէ մի ուրիշ զգացում, գառնութիւնը, լեղիութիւնը, ցաւը, կսկիծը մոռացնել տւող մի զգացում նրան ամէն ժամ նոր կեանք չներշնչէր ապրելու, գուցէ կրկին ազատւելու յոյսով...։ ազատւելով Գոհարին էլ փրկելու և արդար վրէժը լուծելու դիտմամբ...։

Արշակը ապրում էր այն յոյսով և այն մտքով, որ ինքը պարտաւոր էր վերջապէս մի կերպ ազատել Ջաւահիրին, այն կնոջը, որ իրեն հոգւով սիրում էր, որը տանջւում էր գայլի տատմներում, որի մասին աշխարհի երեսին քայի իրանից ոչ ոք մտածելու չէր և որը ոչ մի բարեկամ, ազգական. կամ տէր չունէր...։ Իսկ դրանից յետո վրէժխնդիր լինել այն մար-

դուց, որը դաւաճանութեամբ և նենգութեամբ սիրահարներին բաժանել և թողել էր այդ սոսկալի վիճակում...

Բայց ինքը պիտի դուրս գար բանտից. իրեն արդարացնելու էին դատաւորները, թէ յաւիտեան էլ ազատութիւնից զրկւելու էր.... Այս էր նրա առօրեա խնդիրը, նա մտածում էր ամէն բանից առաջ պարզել գործը դատաւորներին, պատառելով այն քօղը, քրդական վրանի այն սև ծածկոյթը, որի տակ թագնւած էին խորամանկ բէգի բոլոր մեքենայութիւնները:

Զաւահիրի և Չէլխայի վկայութիւնները կարդալիս, նա կարծում էր. որ թշւառ կիներն ուրիշ կերպ ո՛չ կարող էին խօսել, ո՛չ կարող էին շարժւել և վկայել, քանի որ նորանք գտնւում էին Բէգօ բէգի յարկի տակ: Այս պատճառով նա քննիչին մի խնդիր գրեց և մանրամասն բացատրեց հարէմական կանանց ստրկական վիճակը, նամանաւանդ Բէգօ բէգի նման մի կատաղի մարդու դիրքը իւր կանանոցում, կանանց աննախանձելի վիճակը և սարսափելի կացութիւնը: Այդ բոլորը համոզիչ կերպով նկարագրելուց յետո, խնդրեց քննիչից, որ նորանց քաղաք կանչել տա և իւր ներկայութեանը հարցաքննէ, ազատ ամէն ճնշումից:

Քննիչը ուշք չդարձրեց այդ խնդրի վրա, երեք ամիս անպատասխան թողեց: Այդ ժամանակ Ռուսաց զօրքերը մտնում էին Արզուրում և Կարսի նախկին նահանգապետին էլ ուրիշ պաշտօն յանձնելով Կարսից հեռացրել էին: Արշակը խնդիրք ուղարկեց պրօկուրօրին (դատախազ), որը հրամայեց քննիչին կատարել այդ խնդիրքը: Բայց արդէն այդքան բան յա-

ջողացնելը վեց ամիս տևեց, այնքան ժամանակ, որ ազատ մարդը կարող էր յուսահատւել, ուր մնաց կալանաւորը: Բայց քննիչը ստիպւեց կանչել կիներին...

Քննիչի առաջը տեսարանը փոխւեցաւ, Արշակը պնդեց, որ նորանք Զաւահիրն ու Չէլխան չէին: Բէգօ-բէգն անտարբեր ասաց.

— Զաւահիրին ջրից դուրս հանողները դուռն են կանգնած, կարող էք հարցնել: Իսկ Չէլխան Ղօզլիջեցի Մուսա բէգի աղջիկն է, հօրը կանչեցէք, թող նա վկայութիւն տա....:

Քննիչը որ համոզւած էր Բէգօ բէգի արդարութեան վրա, անմիջապէս խօսեցրեց Հասօյին և Համօյին, որոնք բէգի տւած դասը կրկնեցին: Չէլխային էլ սրանք անձամբ ճանաչելով քննիչը յարկ չհամարեց կանչել Մուսա բէգին: Այս միջոցին յիշեց Արշակը Նունային, որ խնամել էր Օսման բէգի տանը Զաւահիրին և բարկութիւնից բորբոքւած, առանց մըտածելու ասաց.

Պարոն քննիչ, Հասօն և Համօն Բէգօ-բէգի ստրուկներն և գործակատարներն են, պիտի խօսեն այն, ինչ որ իրենց թելադրէ բէգը: Բայց ես խնդրում եմ, որ կանչեցէք Օսման բէգի կնոջը՝ Նունա խանումին, որ հայի աղջիկ է և խնամել է Զաւահիրին ջրից ազատւելուց յետո, երբ նա գտնւում էր Գոմիկում, Օսման բէգի տանը...

Քննիչը թէև արձանագրեց այս խօսքերը, բայց աւելորդ համարեց ասելով:

—Պարոն Դիլանով, դուք միշտ հեռաւորներին էք դիմում, երբ մօտենում են, ասում էք, ստում են

և դարձեալ ուրիշի դիմում: Բայց պէտք է վերջ տալ...

—Պարոն քննիչ, ինչ էք ասում, ուզում են ձեզ պէս ինձ էլ հաւատացնել, որ այս կարճ ու բալակ կինն է Ջաւահիրը, բայց ես ձեզ ասում եմ, որ Ջաւահիրը իմ շորերս հագնելիս, չէր նկատում, որ այն շորերը ուրիշի համար ձևած լինէր....: Թող դա Սուռնան, նա ձեզ կբացատրի խօսքիս ճշմարտութիւնը....:

Բէգօ-բէգը ունքերը կախեց, նա այս պարագան չէր մտածել, եթէ անմիջապէս հեռագրել հնար լինէր Կաղզման և Սուռնային քերել տալ Կարս, ամէն բան կպարզուէր, բայց ոչ հեռագրատուն կար, ոչ էլ քննիչը մի այդպիսի քայլ անել էր մտածում...:

—Լաւ, ասաց քննիչը, դա վերջի դործ է.... Բէգօ բէգը ազատ շունչ առաւ, մինչև երկու օր նա այնպէս կարգի կդնէր դործը, որ էլ վախի տեղ չէր մնալ: Իսկ Արշակը մեռելատիպ հեռացաւ և այս քննութիւնից, որ գլուխ բերելու համար այնքան աշխատութիւն էր կրել...: Այս յոյսը թէև դարձեալ իրեն խաբել էր, բայց չյուսահատուեց...

ԺԹ

ՆՈՒՆԱ

Ամիսները գլորւում էին, Արշակի բանտարկութեան տարին լրանալու մօտ էր: Ռուսները Արզուրումը թողել էին, թուրքերի հետ հաշտութեան դաշնագիրը վերահաստատուել էր Բէրլինի դոնկրէսում, պատերազմողները հեռացրել էին իրենց բանակները, սահմանները նորոգուել էին և որոշուել: Պատերազմը վերջանալով Արշակը յոյս ունէր, որ էլ չէին եռացնել իւր դործը և շուտով դատաստանը կտար այդ գործի վճիռքը, որով մահ, կամ նոր կեանք կսկսէր: Բայց այնքան ալիւնահեղ պատերազմից յետոյ, խաղաղութեան հետ անմիջապէս ամէն բարեկարգութիւն հաստատել հեշտ չէր: Նոր նահանգ երկիր, նոր սիրտ բացէին ամէն տեսակ հիմնարկութիւններ, ժողովուրդի պահանջի և կարիքի համաձայն. տարիներ էր պէտք, որ առու պատրաստուէր ջրերին՝ հեշտութեամբ գալու, անցնելու... Ժամանակի կարիք կար, որ աստիճանաբար ամէն բան կարգի մտնէր:

Արշակն էլ որքան խնդիր տեսց, ուշք չդարձրին, հիմնելով որ նրա նախորդ խնդիրների քննութիւնից ոչ մի արդիւնք չէր ստացել և գործը ոչնչով չէր փոխել, ընդհակառակը էլ ծանրացել էր.... Նա ինքն էլ մտածում էր, կարող են դարձեալ մի ուրիշ կին ներկայացնել Նունայի տեղը, ինչով այն ժամանակ նա կարող էր հաստատել, որ այդ կինը Նունան չէր, կամ ուրիշը... Օսման բէգը Բէգո բէգի բարեկամն ու ընկերը, գուցէ և դաշնակիցն ու խորհրդակիցը, մեծ մի հայի կտրի համար կվճռնէր Բէգո բէգին, որ ոտի տակ ընկներ: Թէ Նունային չկարողանային ճնշել, որ իրենց ցանկութեան համաձայն խօսի, պիտի ուրիշ միջոցներ ձեռք առնէին: Հետևապէս ըզգում էր, որ գործ բան էր և այս յոյսը....

Բայց երբ մի դեռահաս երիտասարդ իւր ամէնաքաղցր օրերում խաւար անդնդում մնեալ և անօգնական այնքան ժամանակ գառն վշտերով տանջուի և այդ բանտի մի անկիւնից երբեմն երբեմն մի տեսակ աղօտ լոյս ցոլա ակնթարթական արագութեամբ, յորոշ և գուցէ իսկ խաբուսիկ, մեծ նա չի ձգտիլ հասնել դէպի այն լոյսը, ցանկալի ազատութեան տենջով... Արշակն զգալով անգամ այդ յոյսի իրականանալու անհնարաւորութիւնը, չէր կարող վանել իւր սրտից այդ միտքը: Նունան, ասում էր երբեմն ինքն իրեն, իւր կեանքը վայրենի Օսմանի ճանկում անցկացնելով զգացած է, նրա դառնութիւնը, նա չի թողնել, որ այդ լեղի բաժակը խմի և ջաւահիրը: Ձի որ թշուառ կինը իւր վշտերը, խղճի խայթը նկարագրել էր ջաւահիրին, այն տեղից մի կերպ խոյս տալու

և իւր հարազատների գիրկն ընկնելու մտադրութիւնը յայտնել: Ձի որ Նունայի եղբայրները, քոյրերն և ազգականները ապրում էին հազմանում, նորա տեղ չէին կարող մի ուրիշ կին ներկայացնել, այն ժամանակ Նունայի ազգականները կմերկացնէին Բէգո բէգին այն քօղից, որի տակ ծածկում էր իւր գազանական ատամներն ու ճիրանները....

Նունան Արշակի աչքից ոչ արթուն, ոչ էլ քուն ժամանակ չէր հեռանում... Կալանաւորի յոյսը կեդրոնացել էր նորա վրա...

Արշակը մտացած էր աշխարհի երեսին ամէնի համար, թէև նրան լիշում էր, սիրում և պաշտում ջաւահիրը, նրա օգնութեանը սպասում էր այդ թշուառ կինը, բայց նա աշխարհի երեսին չէր, նա ապրում էր մեռելների հետ գետնի տակ, այն տարբերութեամբ, որ մեռելները խաղաղել էին, իսկ նա դեռ տանջւում էր... Ինչ աշխարհի երեսին, եթէ կային սրտեր որոնք տրոփում էին Արշակի համար, դրանք իւր քոյրերի և եղբայրների սրտերն էին, բայց քոյրերը ամուսնացած էին, այսինքն ծախսած, իրաւունք ու ազատութիւն չունէին իրենց եղբօր հասնելու, մտածելու, կամ գործելու, լոկ վշտակցում էին, իսկ եղբայրներն էլ փոքր երեխաներ էին, չէին կարող միջոցներ գտնել իրանց եղբօրն օգնելու և ազատելու....

Արշակի երկրորդ եղբայրը՝ Գուրգէնը, որ տասն և վեց կամ տասնը եօթը տարեկան մի պատանի էր, կաթւածահար հօրը երեք չորս ամիս խնամելուց և դերեզմանն հանգստացնելուց յետո, էլ չդիմացաւ,

թողեց քույրերի խնամքին իւր մօրն ու եղբայրներին, դիմեց Կարս, որևէ կերպով եղբօրն օգնելու յոյսով: Գուրգէնը գիտէր, որ երկու փոքր եղբայրները փեսաների մօտ հօտաղ մտնելով, կարող էին այնքան միջոց գտնել, որ սոված չթողնէին իրենց մօրը, էլ իրեն կարիք չկար տանը մնալ, պէտք էր կալանաւոր եղբօրն ձեռ կարկառել... Պատանեկան ազնիւ ձգտում և ամենավսեմ քայլ. զոհել եղբօր ազատութիւնը վերադարձնելու նպատակով և ազատել նրան այն մեքենայութիւններից, որոնց մէջ կաշկանդել թողել էր օձի նման խարամանկ փաշաների խորագէտ գործակատարը...:

Գուրգէնը այնպէս էր զգացել Բէգօ բէգի սարսափելի հարուածի ցաւը, որ նա սրտի խորքերից վիրաւորուած, կեանքը բոլորովին նուիրել էր եղբօրն ազատելու և քուրդից վրէժը լուծելու մտքին: Նա ուրիշ ցանկութիւն չունէր, միայն ազատել եղբօրը և քուրդին տանջել... Գուրգէն այն ժամանակ կմխիթարուէր, այն ժամանակ կհանգստանար և այն ժամանակ կուրախանար, երբ անմեղ եղբօրը կարողանար ազատել և նենգաւոր բէգին արդար և արժանաւոր հատուցում տալ:

Արշակը երջանիկ էր, որ իրեն համար Ջաւահիրի սիրտը բաբախում և Գուրգէնի միտքը մտածում էր. եթէ ինքը անձամբ չլուծէր իւր վրէժը, գոնէ եղբայրը յաջորդաբար պիտի մղէր իւր սկսած կռիւը և ուշ կամ շուտ փոխադարձ հարուածը պիտի վերադարձնէր... Արշակը իւր բարեսիրտ եղբօրը սիրտը արդար բարկութեամբ բորբոքուած լինելը նկատելով, ի-

րեն անմահացած էր կարծում և անչափ ուժ ու քաջասրտութիւն էր ստանում, որ չէր զգում իրեն շրջապատող նեղութիւններն ու տանջանքները և ուշքը միտքը կենտրոնացրած իւր գործին, մտածում էր միջոց գտնել և մերկացնել բէգին գաւի կեղծ մորթից...

Կարս գնալուց յետո Գուրգէնը յոյսը դնելով պաշտօնականների վրա, մտել էր ծառայելու մելիցիոնների խումբի մէջ և ամսական ռոճիկից աւելացածը հասցնում էր Արշակին, որ նեղութեամբ չապրի բերդի տանջանքների մէջ:

Գուրգէնը յաճախ գործերի պատճառով ձին նըստած մեկնում էր գաւառները և երբեմն այդ ճանապարհորդութիւնները շաբաթից աւել էր տեւում:

Քաղաքում եղած ժամանակ որոշուած օրերը դիմում էր բերդ և ամողջ ժամեր խօսելով, քաջալերում էր Արշակին: Կալանաւորի ատրճանը, հանդարտ բնաւորութիւնը, քաղցր լեզուն գրաւել էր բանտապետի սիրտը, այնպէս որ անկասկած միշտ ազատ թողնում էր խօսակցելու ժամերով եղբայրներին իրար հետ:

Այս խօսակցութիւնների ժամանակ Արշակը եղբօրից զանազան տեղեկութիւններ էր հարցնում իրեն գործի մասին և Գուրգէնը չիմացածը աշխատում, տեղեկանում և հաղորդում էր: Այսպէս Արշակը շարունակում էր իւր յարաբերութիւնը աշխարհի հետ և իրեն հանդիպած արկածների մանրամասնութիւնները քննում տեղեկանում եղբօր միջոցով:

—Գուրգէն, ասաց մի անգամ Արշակը եղբօրը, Կաղզման գնալու չե՞ս:

—Թէ պէտք է, այսօր ճանապարհ կընկնեմ դէ-
Արագի ձորը.

—Դարձդ պիտի թողնեմ... չէ, լաւ չէ, կարող
ես նեղութեան մէջ ընկնել...:

—Դարձս ինչի՞ եմ թողնում, կխնդրեմ մեր հը-
բամանատարից երեք օր ժամանակ, կամ եթէ Պաղըշ-
ման թուղթ լինի ես կտանեմ և այդ միջոցին ինչ որ
հարկաւոր է, կջանամ գլուխ բերել...:

—Պէտք է մի մարդ տեսնել, մի քանի մար-
դիկ, բայց անուններըը չգիտեմ...:

—Ո՞նչ տեսակ մարդիկ. գոնէ պիտի գիտենամ,
թէ ինչ գործի մարդիկ եմ պատրաստում:

—Զգուշութեամբ պիտի իմանաս գոմիկ ապրող
Օսման բէգի սրանից տասնը հինգ քսան տարի առաջ
փախցրած Սունա անուն հայ աղջկա հօր կամ ազգա-
կանների տունը: Պիտի նրանից տեղեկանաս, թէ
Սունան դեռ Գոմիկումն է, իրենք ճանաչում էն
Սունային, ինչ նշաններ ունի դէմքի վրա...:

—Լաւ, թէ հնարք լինի, կգնամ Սունային էլ
տեսնեմ...:

—Առանց Օսման բէգի աչքին երևնալու...:

Գուրգէնը մի յարմար առիթ գտնելով գիմեց
Պաղչման և մի քանի մարդու ծածկաբար հարցնելուց
յետո, գտաւ Սունայի եղբօրը: Թշւառ կնոջ հարա-
տը չուզեց մինչև անգամ խօսել այդ մասին, չկա-
րողանալով ծածկել դալուկին ու վիշտը և Գուրգէնը
պարտաւորւած գիմեց երկրորդական ազգականների, ո-
րոնք չգլացան յայտնել իրենց գիտացածները: Վերջա-
պէս գտաւ նրանց մէջ մէկը, որ ասաց, թէ մի ամիս

առաջ տեսել է Սունային և հեռը խօսակցել Գոմի-
կի ճանապարհին մի պատի տակ: Այս լսելուց, յետո
նա ուղակի գիմեց դէպի Գոմիկ: Որպէս ճանապարհորդ
ծառացող մտաւ բէգի յարկի տակ հիւրասիրելու, մի
պատառ հաց կտրելու և շարունակելու իւր ընթացքը:
Բէգը թէև հիւանդ պառկած էր, բայց հիւրանոցի
դուռը բաց էր ամէն ճամբորդի համար: Օգոստոսի
ամսուն էր: Օսման բէգի հարճերն և աղախինները
բոլորը դեռ սարի կողքին բաց արած վրաններում էին
ապրում: Տանը մնացել էին մէկ երկու պառաւ, Սու-
նան և մէկ էլ մի ուրիշ դեռահաս քրդուհի, որը խը-
նամում էր պառաւներից մէկը մօտեցաւ կօ-
պեա գործելով զբաղած մի կնոջ և հարցրեց.

—Սունա խանում, մինգիսականին ինչ տանք ու-
տելու: Սունա անունը լսելիս ականջները սրեց Գուրգէ-
նը և լսեց նորա պատասխանը.

—Ինչ սերուցք, չորս ձուով ձուաձեղ, պայմազ
և հաց...:

Պառաւը հեռացաւ կատարելու իրեն պատւի-
րած հրամանը:

Տանը տղամարդ չկար, ամէնքը գաշտում քա-
ղի, կալի, կաի հետ էին: Գուրգէնը սիրտ արաւ և մօ-
տենալով Սունային ասաց.

—Մօրքոյրը, թէ չեմ սխալւում, դու ինքդ ես,

—Դուն ով ես:

—Լաւ՝ տես, կարելի է ճանաչես....

—Ինձ, երբէք չեմ տեսել, ինչպէս ճանաչեմ:

—Նա քեզ աչքից ու ունքից ճանաչեցի, դու էլ

չես կարող ինձ չճանաչել...։ Քո անունը Սուննա չէ՞...

—Ա՛յ տղայ, ասաց Սուննան, որ լսել էր մօրքոյրը բառը, չլինի դու մեր Սիմայի որդին ես.

—Ճանաչեցիր։

—Տես, տես ինչ մեծացել, տղամարդ է դարձել, թոռը, թուանք...։ Մօրքոյրը քու արեւիդ մատաղ, ախ... Հառաչեց Թշւառ կինը և էլ չը կարողացաւ շարունակել։

—Ուրիշ լաւ, քէֆդ լաւ է, ասելով մօտեցաւ Դաւրգէնը Սուննային և սկսեց դիտել և շոյել գորճած կարպետը։

—Լո՛հ, ասաց վշտահար կինը, լաւ, էնքան լաւ, որքան լաւ է մարդու ձեռքն անցած և վանգակում փակւած կաքաւը... կեր, կուտ, ջուր կա՛... էլ ինչ է պէտք...։

—Իմ մայրս էլ գորճում է խալի, բայց ես նրա գորճածների մէջ այսքան գեղեցիկ բան տեսել չեմ...։

—Ա՛խ, Սիմա ջան, Սուննան անուշիդ մատաղ, ասելով քաշեց ու չերմ համբոյր դրոշմեց Դաւրգէնի ճակատին և այտերին։ Նստիր, նստիր տեսնեմ ինչ էք շինում, ինչպէս էք անցկացնում ձեր օրերը, մտքերիդ անցնում է ձեր ոչ ու փուչ Սուննան, նորա անունը լիշում էք երբէք, թէ անիծում ու մոռացման էք տալիս նորա լիշատակներին...։

—Դաւրգէնը, որ մանրամասնաբար քննել էր Սուննայի ազգականների վարքերն ու բարքերը, բնաւորութիւնները ու սովորութիւնները, այնպէս վարւեց,

որ թշւառ կինը ոչ մի կասկած չունեցաւ։

—Անշա, կանչեց այդ միջոցին Սուննան և պատուաւ յրդուհին գալու պէս ասաց. գնա մի վառեկ էլ մորթիր, կարմրցրու, քրոջս որդուն լաւ սեղան պատրաստիր...

Անշան հրամաններըը լսել հեռացել էր։ Սուննան մանրամասն քննեց և չմացաւ իւր ազգականների վիճակը։ Ղօսակցութիւնը ընդհատւեց և քիչ լռեցին երկուսն էլ մտածելով խօսածների և լսածների մասին։ Այս միջոցին յարմար առիթ գտնելով, ասաց Դաւրգէնը.

—Հօրքո՛ւր, ես քեզ մօտ մի խնդիրքով եմ եկել։

—Ի՞նչ կա, ինչ ունես, ասա տեսնեմ...։

—Նախ խօսք տուր, որ պիտի կատարես, չպիտի մերժես...։

—Ի՞նչ որ ձեռքիցս կգա, խնայելու չեմ, որդի, ասաց թշւառ կինը և „Որդի" բառը այնքան քաղցրութեամբ և այնքան զգածւած արտասանեց, որ սարսակոյս չմնաց Դաւրգէնի սրտում։

—Մօրքո՛ւր, անցած տարի, աշունքը Բէգօ բէգի չրից հանած ապչիկը, որ ձեր տունն բերեց, նորան տեսա՞ր։

—Ինչպէ՞ս չէ, ինչքան աչքատեցի մինչև լանալը, բայց երանի մեռնէը էն տափրութիւնների մէջ և տատղանալով չըննկնէը էն անօրէն գազանի ճանկը...։

—Նորան որ տեսնես, կճանաչե՞ս...։

—Ինչպէ՞ս չէ, ես նորան ինձ ապչիկ կսնչեցի

և նա խոստացաւ ինձ երկրորդ մայր ճանաչել.... Ա՛խ Աստուած, էս էնչ անօրէնների ձեռքը մեզ թողիր.

—Դիտէ՞ք այժմ նա որտեղ է,

—Մէկ գիշեր եկան իջան մեր տունը և առաւօտ անցան սարը դէպի Ալաշկերտ, բայց ո՛ր գեղը, չը գիտեմ....

—Ալաշկե՛րտ,

—Այո՛, էնպէս լսեցի, ականջիս էնպէս եկաւ. Ջաւահիրի հետ մէկ ուրիշ քուրդ կնիկ էլ կար, որ չէը բաժանւում խեղճ աղջկանից, դրա համար երկար չկարողացա հետը խօսել.

—Նրա անունը գիտէ՞ք,

—Հաւատացէը, մխաքս չէ, բայց մի սիրուն սև սև աղջիկ էր, դուրեկան դէմքով։

—Զելխա՞ խո՛ չէը,

—Հա՛, հա՛ Զելխա....։

Ի

ՆՈՐ ՔՆՆԻՉԸ

Հոկտեմբերի վերջերը 1878 թուականի նախկին պատերազմական քննիչը փոխւելով մի ուրիշն էր եկել, որի աջ աչքը փչքած էր։ Նոր քննիչը գործերը սառնձնելուց յետոյ, սկսեց ծանօթանալ նրանց հետ և ամէն կալանաւորներին մէկ մէկ կանչել տւեց իւր մօտ, լսեց նրանց խնդիրքն ու բողոքը և աշխատեց թշւառների վիճակը մի կերպ բարւոքել...։ Մինչև բերդում եղող բոլոր բռնւածները, իրանց զանազան պահանջները կրկնեցին, որոնց հնարաւորները կատարւեցան, իսկ անկարելիներն էլ մերժւեցան։ Արշակն էլ ներկայացաւ քննիչին։ Այնքան բանտարկւածների մէջ միայն Արշակը կարողացաւ առանց թարգմանի ճշտութեամբ իւր գործերի հետ ծանօթացնել քննիչին։ Քննիչը Արշակին անչափ բարի մարդ երևաց և սկզբում այն աստիճան միամիտ, որ Արշակը մտքումը ասաց.

—Երկու աչքով տեսնողն ինչ կարողացաւ քննել և պարզել, որ այս միականին ինչ անի։

Բայց երբ նրա լրջօրէն գործի քննութեանը

հետևելը նկատեց, նա ոգևորված ամէն բան նկարագրեց ճշտութեամբ։ Այդ լսելուից յետոյ յայտնեց և իւր վերջնական խնդիրը, յանկարծակի գնալ Օսման բէգի տունը և քննել նրա Սուննա անուն կնոջն, որը Դուրգէնին պատմել էր Ջաւահիրի հետ պատահած վերջին անցքերը... Քննիչը սկզբում լսեց այն բոլոր խուզարկութիւնների պատմութիւնները, որոնք կատարել էր Արշակի ծրագրով Դուրգէնը և որոշեց անել այդ վերջնական թափանձաձաձ քննութիւնն էլ, բայց ոչ գաղտնի և յանկարծակի խուզարկելով Օսման բէգի տունը, այլ Սուննային քաղաք կանչել տալով։

—Ես ինչպէս որ կարգն է, կքննեմ և քո այդ վկային, դու անհոգ կաց, չարագործը օրէնքի ձեռքից խոյս տալ չի կարող։ „Կքննեմ“ բառը յուսագրեց կալանաւորին և նա կրկին դիմեց իւր օրէնը, սպասելով այդ քննութեան վերջին։ Քննիչը Կաղզմանի գաւառապետին գրեց, որ Սուննային ուղարկել տա քաղաք իւր մօտ։ Բէգօ բէգը, որ այդ օրերը պաշտօնանկ էր եղած և վարչութեան աջակցութիւնից հեռացած՝ ունէր իւր բարեկամները քիչ ոռճիկով և տարին պաշտօններով զանազան դիւաններում ծառայողներից, որոնք անմիջապէս հաղորդեցին այդ լուրը։

Բէգօ բէգի թափանձանքների համաձայն Օսման բէգը անմիջապէս Սուննային ուղարկեց Թուրքական Բասեն իւր մեծ որդու մօտ և լուր տարածեցին, իբր թէ Սուննան մեռել և թաղել էր։ Գաւառապետը Կաղզմանի մէջլիսի (ժողովի) յայտնի թուրք անդամների վկայութեան համաձայն պատասխանեց քննիչին, որ վկա կոչուած կինը մեռել էր... Արշակը

չհաւատաց այդ լուրը, իւր կասկածները բացատրեց քննիչին, որը Արշակի նման պատճառներ չունէր կասկածելու գաւառապետի պատասխանի վրա։ Երկար բացատրութիւնները, անթիւ կարծիքներն և թափանձանքները Արշակի վարքը ստորագրեցին քննիչի աչքում։ Քննիչը վերջապէս եկաւ այն եզրակացութեան, որ Դրոզդովի, եթէ ոչ սպանողն էր Արշակը, գոնէ այդ չարագործութիւնը կատարողների համախոհ ընկերը, կամ կարգադրողն էր...։

Ել գաւառ տեղ Արշակը չդիմեց ոչ ոքի, տեսնելով որ իւր խօսքերը լսելու և հաւատալու ոչ ոք չէր համաձայնելու, տանից դրսական և իրական փաստերի։ Նրա մեծ մեծ պահանջները հեշտ չէր կատարել, քննիչը, կամ գաւառապետը ինչպէս համաձայնէին անանց մի փաստի նոր նետուած բարբարոս քրդերի բնակութեան մի վայրում, բայց անել մի գերեզման, իմանալու համար, թէ իրաւի այնտեղ թաղուածը այն կինն էր, այն Սուննան էր, որին վկա էր առաջարկում Արշակը։ Ո՞վ պիտի կարողանար մի կամ երկու ամիս առաջ թաղուած մեռելի դէմքից ճանաչել, թէ նա իրաւի այն հալի աղջիկն էր, որ քսանի չափ տարի Օսման բէգի հարէմում տանջուել էր։

Արշակի յոյսը կենդրոնացած էր Սուննայի վրա և Սուննայի վկայութիւնները կարող էր բոլորովին այլ կերպարանք տալ գործին։ Եթէ Սուննան կարողանար դալ քննիչի մօտ, կամ դատարանի առաջ յայտնել այն բոլորն, ինչ որ գիտէր, ինչ որ պատմել էր Դուրգէնին, եսկոյն կձերբակալէին Բէգօ բէգին և գործը բոլորովին կփոխէր իւր պատկերը։ Բայց Սուննայի շինծու մահը

Արշակի յոյսը կոտրել, բոլորովին կոտրել էր և դրա սոսկալի ազդեցութիւնից էր, որ նա զանազան կասկածներ ու կարծիքներ էր յայտնել քննիչին, որոնք այնքան տարօրինակ և ալանգատ էին երևեցել և քննիչի Արշակի վրա ունեցած համարումը բոլորովին ոչնչացրել։

Դարձի այս տեսակ անլալոզ ընթացքը սաստկացնում էր Արշակի արդար բարկութիւնը և նա բոլ բոքւած էլ մեծ ջանքով ընկզմում էր մտածութիւնների մէջ, մի ուրիշ յաջող ճանապարհ, կամ ելք գտնելու յուսով։ Մի ժամանակ նա յուսահատւում էր մըտածելիս, երբ կարծում էր, որ գուցէ Բէգո-բէգը ըսպանել ու անշնջացրել էր Ջաւահիրին ու Զելխային, բայց երբ Սուսնայի պատմութիւնից նա տեղեկացել էր իւր գրկից խլած գիշերը նորա Ալաշկերտ ասրելը, էլ ուրիշ բան չէր խորհում, եթէ ոչ ազատւել բանտից, Ջաւահիրին ազատելու և իրանց դժբաղդացնողին ու այնքան տանջողին էլ սոսկալի կրակում ալրելու....։

Արշակը Դուրգէնին ուղարկել էր Ալաշկերտ, պատւիրելով, որ գիւղից գիւղ մանգա Ջաւահիրի տեղը գտնելու, կամ նորա մասին մի տեղեկութիւն բերելու յոյսով։ Դուրգէնը մի ամիս առաջ բաժանւել էր եղբօրից, գեռ չէր վերադարձել, իսկ նրա Կարս լինելը անհրաժեշտ էր, պէտք էր որ նա գնար նայնպէս և Սուսնայի մասին տեղեկութիւններ հաւաքելու։ Միջնարերդի դռան կողքով բարձր պարիսպի մօտ գտնւած տներից մինչև իրիկուն աչքն ուղղած դէպի Թախթի (Վանանդի) հարթութիւնը Ղանլի՝ և Ջուխուր-Յապմանի

ամրոցների մէջով դիտում էր ամէն գալող ձիաւոր ու հետի ճանապարհորդներն և երբ նրանք մօտենում էին քաղաքին, կարելի էր լինում որոշել նրանց, յուսահատ երիտասարդը հառաչում էր և էլի ձիւնի սառնով պատած գաշտի երեսին աչքով մանգալիս մի ուրիշ սև կէտ։ Օրերը քաղաք մտած և դուրս եկած ճանապարհորդները համարեայ էր անցկացնում Արշակը, իսկ եղբայրը չկար, դեռ չէր երևում։

Այս սոսկալի դրութեան մէջ երբեմն այնքան տանջւում էր, այնքան յուսահատւում էր, որ խելագնւրկ ուզում էր մի կերպ սպրալ և դուրս թռչել իւր սենեակի վանդակապատ լուսամուտից, այնտեղից գլորւելով այն ահագին բարձրութիւնից կատր կատր փշրւել և յաւիտեան անհետանալ, բայց անմիջապէս պիտակցութիւնը յաջորդելով խրախոյս էր կարդում նրան, համբերելու էր յորդորում և քաջութեամբ դիմագրելու ամէն վշտերի, մինչև վերջի ծուծը։ Ջաւահիրը ներկայանում էր նրա աչքերին գլխակոր և ողորմալին օգնութիւն և ազատութիւն էր խնդրում։ Բէգո բէգը սատանայական դէմքով ծաղրում էր նրա անկարողութիւնը, ակարութիւնը և թուլութիւնը։ Այս երևակայութիւններից բորբոքած՝ ապրել էր ուզում, ապրել, ազատել և վրէժը լուծել։

ԻԱ

ԳԱԽՐԳԷՆ

Ըստ նավուն պատմածներուն համաձայն, Արշակի հետ ծրագիրը կատարելուց յետոյ, ճանապարհ էր ընկել Դաւրգէնը դէպի Ալաշկերտ և իջևանել էր նախ այն տունը, Ղարա-Ջէհէննեմում, որտեղ գրեթէ մի տարի առաջ իջևանել էր Յատահերը Բէգօ-Բէգի ձիաւորների հետ։ Պէտք եմ անել ընդհանրապէս, որ քրդական ձմեռատնակներում ամէն տան հետ ընդունելու սովորութիւն չկայ, ընդհանրապէս իրենք գիւղացիք էլ ձմեռը իրիկունները հաւաքւում են այն տներում, որտեղ կան սենեակներ։ Ծանապարհորդը Թուրքահայաստանում դէմառ դէպի այն գիւղը, որ ամէնից մեծ է և ամէնից ճոխ։

Դաւրգէնը, որ փոքր հասակից սովոր էր հոգ հետ դիմել ամէն գիւղ, նրան օգնելու դանագան երկրագործական գործիքները շինելիս, այդպիսի մանրամասնութիւնների այնքան վարժ էր, այնքան դիւղական Աղանների ու Բէգերի առաջ էր բարձրացել, որ նա անեղկիւզ հրամայել էր իսկոյն ձին հոգալ և առատ պա-

րի ու գարման տալ։ Նա քնդունարան մտնելիս համալսարանի կերպով բարևեց և նստաւ տան ամենաարժանաւոր գետնի ամենաարժէքաւոր գորգը։ Ասլամականութեան չէր վայել, որ բէկը ուշ հինէր գետնին, բայց նրա կօզակի չորերը, կարմրածալ գոտկը, պապրուշն կենքերն ու գարդերը՝ ուշի բարձրացրին նրա սենեակի կոլոլը հիւրերին և Բէգը ճարահատեալ լեռլեռը բարձրեց բազմոցից։ Դաւրգէնը նստելու պէս՝ լռելեայն բարև եկաւ տասցին Բէգի բոլոր բազմականները հիւրին, որ փոխադարձաբար բաջարին լիքէմենոչներով բարևեց։ Ամէնքը հետաքրքրւում էին նրա հագուստով, կապուտաւոյ, պենքերով և ամէնքը շատացած մտիկ էին տալիս այն երիտասարդին, որ այդքան ճոխ զարդարուած անցնում էր աներկիւղ սարերն ու ձորերը։

Դեռ Ասլանը նոր էր լծուել այդ գործանքները, դեռ լծուրքերը կատարեալ չէին տեղաւորել իրենց տեղերը, գոյքերը այդ կամերում և դեռ քուչիները չէին մուտացել այն ուշադրութիւնը, որ Ասլանը կը լծուել էր իրանց մրանելու։

Ամէնքը ակնածութեամբ չէին վերաբերում հիւրի հետ և աշխատում էին այդ ճանապարհորդին դուր գալ։ Դաւրգէնը «ասլանպաշին» պատմեց ուրիշներին, անխտիր լծեցի դրանցով էր շրջում նրանք ուսերին, ճանապարհորդութիւնը քուչերի և լծուրքների մէջ։ Բէգը, որ մի սահմանապահ կամ մի պաշտօնեայի տեղ դրեց Դաւրգէնին, քիչ յետո հարցրեց.

— Ձեր հրամանքը դէպի որ փարձն է գնում։

Պատասխանեց։

— Ես շինական Թալիպաշ Ղուրան Ջանապհիցիք

ինձ, Բէգ հարցրեց նրան Գուրգէնը։

—Ճշմարիտը չեմ կարող յիշել, միտքս չէ գալիս։

—Անցած տարի այս օրերը, մի գիշեր էլ ձեզ հիւր եղա Մոսօ բէգի հետ, Բէգօ-բէգի խանումներին անցկացնելիս...

— Հա, հա, յիշում եմ. յիշում եմ։ Բայց ինչպէս միտքս պահէի, մի գիշեր եկել անցել էք, ում միտքը մնաց...: Բէգօ բէգն, ինչպէս է, լաւ է։

—Շատ լաւ, շատ քէյֆով, շատ էլ բարեւ ունի։

—Նրան պաշտօնից, ասում են, դուրս են արել ուղիղ է։

—Ինքը դուրս եկաւ, մի Ղայմաղամի (գաւառապետի) պաշտօնն ինչ է, որ նա լայեղ անէր ու մընար։ Փրանկի փաշան մեծ պաշտօն առաջարկեց, բայց նա չընդունեց, նրան խոստացել են Ղարսի բոլոր միլլիօնների գլուխ նշանակել։

—Հա՛ն, ես չասի, որ թշնամու խօսք է, մի հաւատաք. ասաց Բէգը, նրան օրից օր մեծ մեծ պաշտօններ են հասցնելու։

—Ի՞նչ էք ասում, նա ոչ գործ էլ չանէ, տարին հինգ-տասը հազար մանէթ թոշակ են տալիս, այնքան փող ձեր Արզրումի վալին էլ չէ ստանում։

— Տասը հազար, ասացին ամէն կողմից։

—Ամէն ամիս Ղարսի Խանան գնում է և ախլուխը լիքը մանէթները լցրած գալիս է տուն....!

—Ես լաւ գիտեմ, ես ինքս շատ անգամն իմացել եմ, ասաց բէգը և հաստատեց Գուրգէնի կարծիքը։

—Բէգը մեծ ընդունելութիւն ունեց Գուրգէնին, բէգի արժանավայել պատւով. նա կարծեց, որ բէգի կողմից մի լուր էր տանելու Մոսօ բէգին։ Որպէս բէգից եկած պատգամաւորի, բէգի վայել պատուեց։ Գուրգէնը աներկիւղ անցկացրեց գիշերը և պատուիրեց քնելիս, որ առաւօտ վաղ ձին ջրեն ու գարի տան, որպէսզի ճանապարհից ետ չմնա և շուտ հասնի նըպատակին։ Ողջ գիշերը տանջւում էր այն մտքով, թէ ինչպէս իմանար տան տիրոջից նրանց գնացած կողմը, բայց այդպիսի մի հարց կարող էր կասկած զարթեցնել և վտանգի ենթարկել իւր կեանքը, նա եզրակացութեան չհասնելով որոշեց լռել և սպասել պատեհ առիթի։

Առաւօտ երբ շտապեցնում էր, որ ձին դուրս քաշեն, հիւրընկալն ասաց.

—Ի՞նչ ես շտապում, գնալիք տեղդ Թոփրագ գալէ չէ, երեք-չորս ժամի ճանապարհ է, կերթաս, կհասնես։ Կաց մի քիչ նախաճաշ արա, փորդ ամրացրու էլի գնա։

—Ախար, ուրիշ տեղ էլ եմ գնալու.

—Լաւ, գնալիք տեղդ գիտեմ, Ղարա-Սու, մինչև իրիկուն կհասնիս...

—Լաւ, լաւ, բերէք, կուշտ ճանապարհ ընկնելը խելօք բան է, ասաց Գուրգէնը և մտքումը հըրճւում էր „Ղարա-Սու“ անունը կրկնելով։ Տեղն իմացել էր պէտք էր այժմ միջոցներ գտնել Ղարա-Սու գնալու և Ջաւահիրին գտնելու։

Գուրգէնը Ղարա-Ջէհէննէմից առաւօտ վաղ ուղղւեց դէպի Ալաշկերտ և ճանապարհին Խաչլի գիւ-

դից առանց Թաքրազ-Դուլա հանդիպելու ուղղուեց դէպի Մամեթխան և այդ տեղից Զալկանի, որտեղ և գիշերեց:

Հետևեալ առաւօտ Դուրգէնը դիմեց դէպի Ղարա-Սու գիւղի գիրքը և Մատօի բնակարանը քննելու: Ճանապարհին նա թափեց ուսերից պագոնները, կուրծքից ունեցած զարդերը պահեց հեծաբիսի մէջ և համարձակ ուղղուեցաւ դէպի նպատակատեղին: Մէկ երկու ժամից մտաւ Ղարա-Սու և խնդրեց գիւղացիներից ցոյց տալ գիւղի Ռէիսի տունը: Այնտեղ հաւաքուեցան գիւղացիք լսելու այդ նոր ճանապարհորդին:

—Մի երկու հարիւր գլուխ եզ ու կով է հարկաւոր, ասաց Դուրգէնը տանուտէրին, իմ պարոնս ուղարկեց ինձ այս կողմերը, լսելով որ այստեղ կարելի է գտնել: Արդեօք ձեր գիւղում էլ չկայ ծախելու տասը կամ քսան գլուխ ապրանք:

—Կգտնուի, ասաց տանուտէրը. բայց որտեղ է քու պարոնը:

—Կաղզուանի և Սարիղամիշի զօրքերի միսը և ուրիշ ուտելիքը իմ տէրս է մատակարարում, Ղարսի ամբողջը դատարկել է, եկա Ալաշկերտ:

—Նեղութիւններ մենք էլ շատ քաշեցինք, ձմեռս շատ մարդու ապրանքը քիչ է, մեր գեղում ծախողներ շատ կլինի, քանի գլխից էլ աւել կարելի է գտնել, բայց Հօկտեմբերի կէսը անցել ենք, էլ ցուրտ է. ինչ ճանապարհով է անցնելու մալը:

—Սարից:

—Որ ուշացնէք, էլ չի անցնել:

—Ինչի ենք ուշացնում, այս շաբաթ կվերջացնենք ամէն բան: Ուրիշ գեղերում կարելի է մնացածը գտնել, աւելացրեց Դուրգէնը:

—Հաւատացիր, ամէն գեղից քիչ քիչ կարելի է ճարել:

—Այդ լաւ չէ, մարդ մի գիւղից գտնէ ու տանի ազատուի, որքան լաւ է:

—Այն տարին չէ, գտածից էլ պէտք է շնորհակալ լինել...:

—Մատօն լաւ էր ճանաչում Դուրգէնին, այդ պատճառով էլ նա զգուշանում էր, բայց սիրտը եռ էր գալիս, ուզում էր մի կերպ տեսնել Ջաւահիրին: Բայց Ջաւահիրին տեսնելը հեշտ բան չէր: Տանը տէրը նահապետական սովորութեան համաձայն նախաճաշ պատրաստել տուեց իւր հիւրին և սովորականից աւել պատիւներ էր տալիս, որ կարողանա իւր վաճառքը դրացիներից քիչ ձեռնտու պայմանով ծախել: Մինչ նախաճաշում էր Դուրգէնը, ասաց տան տիրոջը, որ հաշուի, թէ ով որքան կարող է ծախել: Տան տէրը թւում էր մէկ մէկ ամէն մի դրացու անունը և ամէն մարդ յայտնում էր մէկ կամ երկու գլուխ ապրանք:

Յանկարծ ասաց տան տէրը.

—Մատօ բէգն էլ ունի ծախու ապրանք. նրան կանչեցէք:

Դուրգէնը դողաց, ներկա եղողներից մէկն յայտնեց, որ Մատօն առաւօտ վաղ գնացել էր Մոլլա-Սու-

լէյման, թէ ինչ գործով. ոչինչ չասաց։

Այդ աւետիսը ուրախացրեց Գուրգէնին, որ քիչ հանգստանալուց յետոյ ասաց.

—Մստօ բէգի տանը ուրիշ մարդ չկա՞.

—Մշակներ ու մանր տղերք կան, նրանք բանից տեղեակ չեն։

—Չէ՞ կարելի գնալ հարցնել նրանց տանը, — ասաց Գուրգէնը։

Տանտէրը որ աշխատում էր դուրս գալ, ասաց Գուրգէնին։

—Ինչի՞ չէ, եթէ կուզես գնանք, ամէն մարդ իւր ծախելիք ապրանքը ցոյց տա և յետոյ սկսենք գին որոշել։

Գուրգէնը որը հաւանելով, որը փնտրելով հասաւ մինչև Մստօ բէգի տունը։ Ծառաները իմացրին Փաթիին, որ գալոցը մօտ էր տանելու և ուզում էր տեսնել և նրանց ծախու ապրանքները։ Փաթին ակամա հրամայեց, որ ախոռից դուրս հանեն ամուլ և դեր կովերը։ Մինչ Գուրգէնը աչքերը այս ու այն կողմը շրջելով դիտում էր կովերը, Զէյխան երկու քուղան թևերը անցկացրած՝ դուրս եկաւ տանից և դիմեց դէպի ջուրը։ Իսկոյն Գուրգէնը նորան նկատեց և ուրախութեան մի ճիչ էր արձակելու, եթէ Փաթին խօսակցութեամբ գործի մէջ չմտնէր ասելով.

—Հաւանեցի՞ր կովերին, դէհ, մինչև էգուց կայ գինը, մինչև, որ տղաս Մստօ բէգը գայ։

—Շատ բարի, պատասխանեց Գուրգէնը միշտ աչքի պոչովը հետևելով Զէյխային։

—Զէյխան աւտկեց ջուրը լցրած անմիջապէս

վերադառնալիս նկատեց օտարականին, ճանաչեց նրան և իսկոյն զարմացման և ուրախութեան նշան արաւ, որը անմիջապէս հասկացաւ Գուրգէնը։ Ոչ ոք չկարողացաւ Գուրգէնի և Զէյխայի իրար հաղորդածը հասկանալ։ Փաթին կովերը ներս անել տալուց յետոյ տուն մտաւ։ Գուրգէնը ուրախութիւնից հարբած դիմում էր տանտիրոջ տունը՝ մտածելով իւր բռնելիք ընթացքը։ Զէյխան տուն մտնելու պէս գնաց գրկեց Ջաւահիրին, որ յուսահատ նստել կալպետ էր գործում և ականջին զգուշութիւնով փսփսալով աւետեց Գուրգէնի գալը։ Ջաւահիրը նախ կատակ կարծեց, բայց իսկոյն համոզուեցաւ, երբ Զէյխայի սրտի արագ արագ բաբախելը նկատեց։ Զգացին թշուառ սրտուկները, որ իրենց չէին մոռացել և իրենց հետքը պտրում էին։

—Դողում էր Գուրգէնը, սոսկում և չէր իմանում, ինչ հնար գործ դնի, որ կարողանա տեսնել Ջաւահիրին, այն հարսնացուին, որի մօտ մի ժամանակ գնալիս անչափ ուրախութիւն էր զգում։ Մինթէ՞ նա առանց տեսնելու թշուառին պիտի մեկնէր գիւղից, ինչ կասէր եղբայրը մի այդպիսի վախկոտ, թոյլ բնաւորութեան համար, ի՞նչ կասէր Ջաւահիրը, նա որ Արշակի կարօտով և նրանից օգնութիւն ստանալու յուսով մըթնեցնում էր իւր սև օրերը, ինչ կարծիք պիտի կազմէր իւր տագեր համար, որն այնքան թոյլ էր, որ չորս օր ճանապարհ էր եկել և առանց հարսին տեսնելու ետ դարձել։

Գիւղացիք բոլորուեցին Գուրգէնի, շուրջը որ իրենց առ և տուրը գլուխ բերելու ջանան և իրենց մալերը ձմեռուա սովից մի կերպ ազատեն, բայց չէին զգում,

թէ ի՞նչ ցաւ ունէր Դաւթենը։

—Ես ցուցակ կգրեմ և կերթամ։ Մէկ երկու օրուայ երթ երկու հարիւր գլուխ ոչխարի տեղ պրծի չըջակայ գիւղերում, այն ժամանակ առ ու առաւրը կարճ երկան կվերջացնեմ, մարդ կուղարկեմ, որ փողերը բերեն սահմանի ձեզ յանձնելու, մալերն էլ դուք էք սահմանի իմ սիրոյն յանձնելու...։

ԻԲ

ԿԵՆԴԱՆՈՒ ՍՏԻՊԵՆԵՐ

Ամեուն կարճ օրը աստիճանաբար մթնեց և խաւարը պատեց ողջ գեղին։ Դաւթենը չէր իմանում ինչ միջոց գտնել, որ հնարաւոր լինէր Ջաւահիրը տեսնել։ Հարիւր անգամ տանից դուրս էր եկել, տանիք բարձրացել, չորս կողմը մտիկ ուել, Ո՛ւռաթ տան չուրջը պիտեր, բայց լուսահատ՝ ոչինչ չէր նշմարել, չկար, չկային, չէին երեւում... Մեկի մտիկ ոչինչ չէր գործում, իսկ յանգիստ մի անձնաւոր գիւղում, ուր երկրում՝ ապրուստի վտանգաւոր էր և բոլորովին անօգուտ։ Այդպիսի անտեղի յանգիստը կարող էր խոպան իր և եղբօրը յոյսը կտրել և առանց լուծելու իրենց արդար վրէժը, գլուխ յաւիտենական անյայտութեան մէջ։ Այն օրուա ժամերը, որքան ծանր գլորուեցին և ամէն մի անցկացած րոպէում ինչ զարհուրելի մտքեր չհեղեղեցան Դաւթենի մտքում...։ Այնքան ատելի էր յուզում երբեմն, որ սրտի բորբոքումից քիչ էր մնում աչքերից բոցափայլ կարմիր արիւն նախանձ արտասուքներ հոսի, բայց պատանին, որի սիրտը վազուց սկսել էր բեռնաւորուել էլ դառն վըշտերով, վարժուել էր ատելու և դիմագրելու այդպիսի հարուածներին առանց ընկճուելու։

Օրն անցաւ, որի ամէն մի վայրկեանում Դաւթենը սրտի ամէն մի լարախտան հետ գգում էր թիւնաւոր սրի ծայրով կրծքում մեռած մի մի հարուածի կեղեքող ցաւն, որն պարտաւորուած էր այնքան անկեղքող ցաւն, որն պարտաւորուած էր այնքան անտարբերութեամբ տանել, որ դէմքի խազերի վրա ոչինչ չնշմարէին իրեն չըշտապող անծանօթ չինական կանոներն, որոնք լցուած էին աստիճանաբար բէխով ծեռնարկում, որպէսզի չոգորի միտքը լսեն և մի կերպ հանգստացնեն իրենց սիրտ՝ կատարելիք առաքելութեան մասին։

Դաւթենը իրիկնահայը ուտելուց յետոյ անմիջապէս պատկելու պատրաստուեց, պատճառ բռնելով իբր նախորդ գիշերուա անքնութիւնը և յաջորդ օրը վաղ ճանապարհորդելը։ Գիւղացիք ակամա առանց մի ուրիշ համոզմունք կազմելու առաւաւրի մասին՝ հեռացան և տանտէրը հիւրի հետ պատրաստուեց ինքն էլ հանգստանալ։

Բայց ի՞նչ հանգստութիւն...։ Գիւղացին իւր

Հիւրին մենակ չէ թողնում իւր ընդունարանում, ինքն է նրա պահապանը և եթէ մի փորձանք էլ պատահի, ինքն է պատասխանատուն։ Նա ասում է, առողջ և անվտանգ մտել է այս շէմքից, այնպէս էլ դուրս պիտի գայ,—այդ է իւր սրբազան պարտականութիւնը։ Տանտէրը խիստ զգուշութիւնով հսկում էր և մինչև անգամ իւր ձեռքով էր կապել ամէն դուռ։ Նա վախենում էր, որովհետև այն օրը ողջ գիւղը լսել էին, որ Գուրգէնը մալ առնելու էր եկել, իսկ մալ առնողի գրպանը միշտ լիքն է լինում փողով։ Գուրգէնը ինչպէս հասկացնէր տանտիրոջն իւր ցաւը...։

Գուրգէնը ակամա հանուեց և պառկեց։ Տանտէրը օջախի ածուխները նորոգելուց, մշտավառ հուրը բորբոքելուց և ծխացնելուց յետոյ ձիթի ճրագը մարեց, ինքն էլ ընկաւ պառկեց։ Բայց քունը երկուսի աչքերին էլ չէր մօտենում, երկուսն էլ տանջւում էին և դրա պատճառը կանուխ պառկելն և մտքի անհանգստութիւնն էր...։ Երկուսն էլ իրար կեղծեցին որ քնում են. թմրել են, քունը պատել է իրենց, բայց վերմակների տակ զարթուն սպասում էին ժամանակի սահելուն։

Վերջապէս մօտեցել էր կէս գիշերը և շինական տան տէրը անզգա քնել և խորթում էր։ Գուրգէնը բնաւ չէր էլ հանգստացել մինչև այդ ժամանակ, բայց արթուն մնալուց էլ իրեն մի օգուտ չէր նշմարում։ Նստեց Գուրգէնը, հազաց, խորխեց, բայց ծերունի տան տէրը անվրդով խորթում էր և տակաւին մշալով շնչում։

Այս միջոցին երբ օջախի կրակի նուազ լոյսով

Գուրգէնը դիտում էր սենեակի զանազան անկիւնները երթի քարը ետ անելով մի փոքրիկ ձիւնի գնդակ ընկուզի մեծութիւնով վար գցեցին։ Գուրգէնը աչքերը դարձրուց երթի կողմը, բայց մթութեան մէջ ոչինչ չնկատելով, անմիջապէս մի լուցկի վառեց, որի լոյսը ցոլալիս կրկին անգամ բացւեց երթը և մի դէմք տեսաւ Գուրգէնը։ Երկրորդ լուցկի վառեց և միևնոյն դէմքը կրկին անգամ նկատեց, բայց աւելի որոշ կերպով։ Գուրգէնը ուրախացած՝ չորերն հագաւ, շունչը կտրած առանց մի ամենափոքր աղմուկի և թաթերի ծայրին զգուշութեամբ ման գալով դիմեց դէպի դուռը։ Դռան ախերը թէև արձակեց, բայց դուռը չբացւեց։ Որքան հրեց, սխմեց, մատներով և դանակով ամէն կողմը շօշափեց, բայց դուռը չէր բացւում։

—Ի՞նչ ես անում, շտապիր, ասաց դրսից Ջէլխան, դուրս եկ։

—Դուռը չի բացւում, շշնջաց Գուրգէնը։

—Լա՛ւ, ասաց Ջէլխան, ախոռի տանիքից դուրս եկ։

Գուրգէնը ախերը կապեց և գնաց ախոռի պատից մագլելով տանիք բարձրացաւ առանց շատ նեղութեան։

—Գնա՛նք, ասաց Ջէլխան, մի սպիտակ բրդէ սաւանի մէջ պատելով Գուրգէնին, գնա՛նք թէ ոչ Ջահիրը մտատանջութիւնից հիմի կզժւի...

Գուրգէնը անմռունչ հետևեց։ Ցուրտը այնքան սաստիկ էր, որ հաւատարիմ շները տներն էին քաշւել, կամ ախոռների կտուրներին կուչ եկած, գլուխները կուրծքերի վրա յենած՝ շնչում էին առանց ըղ-

ներու փողոցներից անցնադներով մեզմ առնաձայնը: Շատ հեռու չէր Մասօի տունը և նրանք շուտով ոչ խարներից ոտից ներս մտան: Մասօի չներն անմիջապէս սոսկալի կերպով սկսեցին հոտիլ: Զէլիան թէև նրանց լռեցրեց իր գանագան ձևերով և խօսքերով, բայց նրանք վրդոված պրպտում էին անծանօթ հիւրի վրա: Վերջապէս ներս մտան և բոլոր անցան, որից յետոյ անմիջապէս ներս հրեց Դաւրգէնին Զէլիան դէպի այն սենեակը, որտեղ ինքն ու Ջաւահիրն էին ապրում:

Այս մէջոցին չների հաչոցից զարթեց Ծամիթին մինչև կէսին վառելն ու դուրս գալը, Զէլիան շտապեց սենեակում թողնելու Դաւրգէնին և շտերը թեթևացրած՝ ճրագը ձեռքին դուրս գնաց Ծամիթին գիմաւորելու:

— Ի՞նչ պատահեց, ինչի՞ են հաչում կօշնները, ասաց Զէլիան:

— Ձեմ գիտեր, ինչ գիտացան, ասաց Ծամիթին, չեն էլ լսում:

Շները մեկ սկսում էին ամսակից հաչել, յետոյ լռում էին ու մի տեսակ ոռնում: Ծամիթին Զէլիային հետ տան ամէն կողմը մտն եկաւ, ներսը դուրսը քննեց և բան չկա տեսով նա գարձան և ամէն մեկը մտաւ իր սենեակը:

Դաւրգէնի սիրտը այնպէս տրոփում էր, որ քիչ էր մնում թէ տրաքէր: Սոսկալի քրտինքն էր նրան պատել և չէր իմանում, ինչ էր լինելու նրանց վերջը:

Սրեք-չորս անգամ նրան մօտեցաւ Զէլիան

և կամաց նրա ականջում ասաց. Մի վախել, բան չկա: Կանայք թէև վախենում էին, բայց պատանիի կացութիւնը անհանդուրժելի էր: Քունը կտրած ջագի պատաը էլ չէր քնելու, շներն էլ իրենց ոռնոցով ու վնգոցով միշտ պիտի բարկացնէին քաւիտաւի ականջը:

— Մի վախենա, ասաց մէծնումը Զէլիան և բռնելով Դաւրգէնի ձեռքից բերեց և նստեցրեց Ջաւահիրի անկողնի վրա, ինքն էլ մօտերը նստելով շարունակեց..

— Ա՛յ տղա, դու խէնթ ես, խելառ ես, դու ինչ գործ ունես Ղարատու:

— Ձեզ փնտրելու եկա, Արշակը ինձ ուղարկեց, որ գամ որտեղ որ լինէք ձեզ գտնեմ:

Ջաւահիրը սրտի խորքերից հառաչեց:

— Ջաւահիր ջան, անտոզ կաց, ես քեզ պիտի ազատեմ, պիտի տանեմ, հասցնեմ եղբօրս, դու դադ երկուսդ պիտի նրան ազատէք բանտից:

— Արշակը բանտումը... ասաց Զէլիան գարմացմամբ:

— Այո, անմեղ Արշակը, նա որ կեանքումը ոչ թէ մարդու մի անասունի սիրտ անգամ չէ ցաւացրել, նա Ղարսի բերդի բանտումն է, մարդասպանների շարքին...

— Ասածդ սիրուն, ինչ ես խօսում, Դաւրգէն, ասաց Զէլիան չունչն սպառած:

Ջաւահիրը չէր խօսում տազար հետ, նա հարցնելիքն էր անում, բայց այս լուրը այնքան մեծ վերք հասցրեց նրա սրտին, որ նա կրկին անգամ հաչեց մի ճիչ ալձակելով ու ընկաւ նստեց... Դաւրգէնը մի ճիչ ալձակելով ու ընկաւ նստեց...

գէնը Զէլխայի օգնութիւնով ուշի բերեց Ջաւահիրին, բայց զգաց որ Զէլխայի էլ սիրտն այնպէս բարախում էր, որ նա էլ թուլանալու մօտ էր։ Ջաւահիրը դեռ յամառած չէր խօսում Դուրգէնի հետ։

—Ջաւահիր, դրանք բոլորը թող, ես գիտեմ, որ դու իմ պատիւս էլ, իմ օջախիս պատիւն էլ անչափ յարգում ես, ինձ հետ խօսելով ոչինչ չես կորցնի։ Ասելիք, խօսիր, ինչ որ ունես, ինչ ես անելու, ինչպէս անենք, որ ազատես դու և ազատես Արշակին։

—Ինչի՞ են Արշակին բանտարկել, ասաց դողդողալով Զէլխան...

—Մարդասպանութեան համար, իբր նա մի կօզակի Օֆիցեր է սպանել այն, օրը երբ Բէգօ բեգը Դամիկից վերադարձել է Ղէյրաթի Ջաւահիրի հետ։

—Ա՜խ Աստուած, ինչի՞ էդքան թողնում ես անօրէնն քրդին առաջ գնալու և անմեղին տանջել սատանան... մրմնջաց Ջաւահիրը։

—Ա՜խ, քո՛յր, եթէ գիտենաս, եթէ իմանաս, թէ ինչ խաղեր խաղաց անօրէնը Արշակի գլխին մինչև այսօր, թէ ինչպիսի խորամանկութիւնով մոլորեցրեց դատաւորներին և թէ ինչպէս տանջւում է եղբայրս, ախ... ինչ ասեմ ես, որ մեկը պատմեմ։

Դուրգէնը երկու թշւառ կանանց պատմեց այն բոլորը անցքերը, որոնք կատարւել էին իրենց բացակայութեան ժամանակ։ Ջաւահիրը պատմութիւնը լսելուց յետո նրանց պատմեց, թէ ինչպէս Բէգօ բեգը և ընկերներն կօզակի պաշտօնականին սպաննեցին, երբ իրենք անցնում էին Զէօմիւրլի գիւղի բարձունքից։ Ծրկար վշտերն ու ցաւերն հաղորդելուց յետո,

ասաց Դուրգէնը։

—Դուք երկուսդ էլ պիտի բարձրանաք դատաբանի առաջ, որ մերկացնէք Բէգօ բէգին իւր դիմակից ու կեղծ մորթից և Արշակին ազատելով՝ վրէժ լուծէք այդ գազանից, հասցնելով նրան իր արժանաւոր պատժին...։

—Գնանք, ասաց Ջաւահիրը, ինձ տար, եղբայր, տար, ես ամէն բան կպարզեմ դատաւորների առաջ և այնպէս փաստեր ունեմ, որ ոչ ոք իրաւունք չունի ինձ չլսելու...։

—Պէտք է երթանք, դուն էլ, Զէլխան էլ, բայց ինչպէս գործել՝ այդ պէտք է խորհել...։

—Այո՛, պէտք է գնանք, բայց էնպէս գործ բռնելու է, որ էլ ձեռք չընկնենք։ Այս անգամ եթէ մեզ ետ դարձնեն ճանապարհից, էլ Ալաշկերտում չեն թողնել, Զարսանջակ կամ Մ'ոկս կուղարկեն և կամ էն աշխարհը, որտեղից էլ ետ չենք կարող գալ և դատաւորների առաջ արդարացնել Արշակին։

—Ձեր կեանքն է պէտք, Արշակին պատուով պատելու համար պէտք է զգուշութեամբ անցնենք սահմանը և հասնենք Կարս, թէ ոչ ձեզ հետ կկորչի Արշակն էլ...։

—Ո՛չ, Արշակը պիտի ապրի, Արշակի վրա Բէգօի քաճ մուրը պիտի սրբուի և Բէգօն ինքը պիտի ընկնի այն փոսը, որ փորել է Արշակի համար... ասաց բորբոքած Ջաւահիրը։ Յետո քիչ մտածելով շարունակեց։

—Դուրգէն, ձիդ պատրաստ է։

—Այո՛, բայց տանս գուռը մինչև առաւօտ չէ

կարելի բանալ տալ։ Զէլխայի գալն էլ անհրաժեշտ է։ Զէլխան պիտի ապացուցանէ ամէն բան։ Բեգ կարող է բեգը ուրանալ և չճանաչել, բայց Զէլխային անկարող է ուրանալ. նրան ճանաչում են բոլոր Խէյրաթեցիք, Ղօզլուջեցիք, վերջապէս հայրը, եղբայրը պիտի ապացուցանեն, որ նա ինքը Զէլխան է։

— Ես գիտեմ, որ Զէլխան էլ հարկաւոր է, բայց դու ինչ միջոց ես մտածում մեր երկուսին էլ փախցնելու էս բանտից...։

— Այո, Գուրգէն, պէտք է որ երկուսս էլ գնանք, ես պիտի զգացնել տամ Բէգօին, թէ ինչ է նշանակում մարդ տանջելը։

— Ես կգնամ, ուրիշ օրից հինգ ձիաւորով կգամ, այս ժամանակ կմտնեմ մենակ գիւղ և դուք երկուսդ էլ պատրաստուած ինձ կսպասէք ոչխարի աղլում։

— Ո՛չ, այնտեղ շները կարող են մեզ խանգարել, մենք կգանք գերեզմանոցի ծայրը, ապառաժի տակ կպահուենք կէս գիշերին։

— Գիշերը կարելի է փորձանք պատահի, ասաց Գուրգէնը։

— Ոչինչ էլ չի պատահել...։

Ուրեմն այսօր ուրիշ օր, շաբաթ գիշեր լոյս կիւրակի ես կգամ մարդերով։

Մենք էլ այնտեղ կսպասենք...։

Կրկին սպիտակներում փաթաթուած դուրս եկան և Գուրգէնը գնաց իր տեղը պառկեց մինչդեռ խորթում էր իր տանտէրը։ Փաթին, որի քունը արդէն կտրուած էր և նոյն իրիկունը շների ոռնոցը բոլորովին փախցրել էին, կրկին անգամ դուրս եկաւ և

երկու սպիտակ սաւաններով երբ նկատեց Գուրգէնին ու Զէլխային, որոնք գերեզմանոցից անցնում էին տեղերը լաւ ճանաչելու համար, սաստիկ վախեցաւ, նորանց *խորթլաղներ* (ուրուական, գերեզմանից դուրս եկած մարդիկ) համարելով դռները կողպեց, շնչասպառ գնաց մտաւ տեղը։

ԻԳ

ԱՐՇԱԿԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Գուրգէնը երեք կամ չորս ընկեր գտնելու մտքով դիմեց դէպի Կաղզման։ Այնտեղ խելքի մօտ և բարի բուն նշանակութեամբ անձնուէր ընկեր չկարողացաւ գտնել, իսկ վարձկանի էլ վարձատրելու անկարող էր։ Բայց խոստացուած եօթ օրից երկուսը գլորուել էին։ Յոյսը իր եղբօրը մանկութեան և պատանութեան ամենասերտ ընկերների վրա դրած դիմեց իրենց գիւղը, նրանցից ցաւակցողները ոչ ձի ունէին, ոչ էլ զէնք, իսկ ունեւորներն էլ սիրտ չունէին...։ Վերջապէս վճռեց գնալ Ալէքսանդրօպօլ, գտնել Արշակի ուսանողութեան ընկերներին, որոնք կեանքերը միշտ պատրաստ դրած էին իրենց ընկերներին նեղ օրից և թշուառ

վիճակից ազատելու համար։ Սրարշաւ հասաւ Ալեքսանդրօպօլ և չախալեցաւ։

Բայց արդէն հինգ օր կորցրել էր, մնում էր միայն երկու օր։

Գուրգէնը անմիջապէս դիմեց իւր սիրելի ընկերոջ տունը և ձիուց իջնելու պէս գտնել տուեց Արշակի բոլոր մտերիմներին, որոնք, իրենց սիրելի ընկերի եղբօրը գալու օրը ուրախութեամբ անցկացնելու համար, սեղաններ սարքեցին մեծ շռայլութեամբ պէս պէս խմիչքների անթիւ շիշերով։

Պատերազմի տարին փողի առատութիւնը մեծ շռայլութիւն էր տարածել ժողովուրդի մէջ և ոչ մի ուրախութիւն առանց տակառներով գինի փչացնելու չէր կատարւում։ Գուրգէնի տխրութիւնը և մտմտունքը նկատելով բոլոր ընկերները՝ նրան ստիպում էին խմելու և արբելով իրենց նման մոռանալու վիշտը։ Գուրգէնը մերժեց և խնդրեց իրեն լսել և այդ իրենց ցանկացածի նման շարժուել։ Անվստահելի ոչ ոք չկար խմբի մէջ և Գուրգէնը պատմեց մանրամասն եղբօր վիճակը, գործի դրութիւնը և Ջաւահիրին քուրդի տանից ազատելու անհրաժեշտ կարիքը։

—Ընկերներ, ասաց Արշակին անչափ յարգողներից մէկը, երդւում եմ այս հացի ու գինու վրայ, որ չվերադառնամ այս տունը մինչև որ չազատեմ իմ թշւառ ընկերին անիրաւի տանջանքներից և նրա արդար վրէժը չլուծեմ արիւնարբու քուրդից։

—Սմբատ, Սմբատ, ասաց երկրորդը, ես էլ ձեզ հետ անբաժան կլինեմ մինչև գործի աւարտը։

—Սմբատ, Սեդրաք, երդւում եմ ես էլ ձեզ

հետ և խնդրում, որ եթէ չպահեմ խօսքս, եթէ թուլանամ կամ ետ մնամ, մի խնայէք ինձ մի գնդակով գլորելու՝ էլ չբարձրանալու համար։

—Սմբատ, Սեդրաք, Սարգիս, ես չեմ բաժանուել ձեզանից։ Գիտէք, որ Սիմօնը առանց ձեզ օր չունի...։

Եւ ուրիշ երեք հոգի էլ խոստացան ընկերակցել այդ խմբին։

—Որ այդպէս է, տղերք, ես մի կենաց եմ առաջարկելու, դեռ սեղանի մատակարար (թամադա) չունենք, կարծեմ ձեր բոլորից եմ իրաւունք խնդրելու, ասաց Սմբատը, որի հետ ակնածութեամբ էին վարւում բոլորը։

—Առաջարկիր, առաջարկիր, կրկնեցին ամէն կողմից։

—Ո՛վ որ սիրում է Արշակին, ով որ չէ ցանկանում, որ անմեղն և թշւառը արիւնարբու քուրդի ոտքերի տակ կոխռտւի, նրա մեքենայութիւնների մէջ ճմլւի, լցնէ լիքը իւր բաժակը, խմելու նենգաւորի կործանման, արդարութիւնը և անմեղութիւնը վերականգնելու և հաստատելու կենացը։

—Կեցցէ, ուռա, բաժակները բախելով կանչում էին։

Մինչև վերջին կաթիլն ամէնքը խմեցին։ Արդէն ժամանակ էր բոլորուելու և ընթրելու։ Չորս ժամից աւել տևեց ընթրիքը և լաւ ուրախութեամբ անցկացրին, միայն Գուրգէնի վրա չազդեց գինին, նա չհարբեց, թէև ամէնից շատ խմեց։ Սեղանի վրա էին դեռ, երբ Սմբատը հրամայեց, որ իւր ձին պատրաս-

տեն: Սմբատի օրինակին հետևեցին Սեդրաքը, Սարգիսն և Սիմոնը: Մնացեալները չի չունէին, մարդ ուղարկեցին չի գնելու կամ վաճառելու: Բայց ժամանակը ուշ էր, մէջ գիշերին չէր կարելի այդ բանը գլուխ բերել, իսկ յետաձգել անկարելի էր: Ուստի մնացողները խոստացան հետևեալ օրը չի գնելով նրանց հետևել, բայց այդ չկարողացան անել:

Կէս գիշերն անցել էր. Փուրգէնը չորս սրտակից ընկերներով անցաւ Արփա չայը: Արշալոյսի ժամանակ նրանք իջան Ջերմայու ձիերին կեր տալու և քիչ հանգստանալու: Երկու ժամ հանգստանալուց յետոյ շարունակեցին իրենց ուղին դէպի Կազման: Հոկտեմբերի վերջերքն էր, օդը ոչ այնքան ցուրտ, թէև տեղ-տեղ ալևոր պապը տարածել էր իր սպիտակ սաւանները: Թուրքերի բռնակալի ծառայող զօրականների ընտիր արաբական նժոյգներն աւարից անցել էր ձիաւորների ձեռքը, որոնք հասկանալով իրենց տէրերի դիտաւորութիւնները սլանում էին անտրտել և դեռ մութը չպատած խումբը Արաքսն անցաւ և բարձրանում էր զառիվերով դէպի Կազման...: Թէև անչափ կարիք ունէին ճանապարհորդները հանգստանալու և քնելու, բայց ընկերները չմոռին և լաւ կեր ու խումից յետոյ, երբ տեսան, որ էլ անկարող են գարթուն մնալու, գնացին պառկեցին:

Խումբը հետևեալ օրը դեռ կէս օր չեղած՝ անցաւ Ղարա-Չէհէննեմ գիւղը սլանալով և քիչ յետոյ մտաւ Ղաչլու գիւղը այն ժամանակ, երբ Ալաշկերտի Ղալմազամի գաբաիանները (ոստիկան) մի ծերունու վերջին դոյդ եզներն և մի կովը տանից դուրս էին

քաշել, Ալաշկերտ տանելու ծախելու անկուշտ վաշխառու հային ունեցած պարտքի համար: Սմբատը հետաքրքրեցաւ և գործի մանրամասնութիւնների հետ ծանօթանալուց յետոյ հանեց, վճարեց ծերին այնքան փող, որ տանի և պարտքը վճարելով վաշխառուին, ազատի: Զարտիանները յոյս ունէին, որ այդ առատաձեռն ազատ իրենց էլ կվարձատրի, բայց երբ տեսան, որ իրենք անբաժին են վերադառնալու, ըսպիսեցին գիւղացուն, որ անպատճառ առաջը խառնած տանի մալերն էլ: Ոչ մի կերպ չհամոզուեցան և պնդում էին, որ իրենց Ղալմազամ էֆէնդին հրամայել էր անպատճառ նրա անասունները տանել դէպի Ալաշկերտ: Սմբատի բարկութիւնը բորբոքուեց և սահմանից դուրս գալով մարակի հառաչաձներով գցեց գաբաիաներին ոտքերի տակ: Բորբոքումը առաջացաւ և ոստիկանները ճարահատեալ ընկան Սմբատի ոտքերըն ու ներողութիւն խնդրեցին: Գործը խաղաղութեամբ վերջացնելու համար Սարգիսը ձեռքը գրպանը տանելով մի քանի թուրքական արծաթի փող հանեց աւեց գաբաիաներին և ճանապարհ դրեց ծերուկի հետ դէպի Ալաշկերտ:

Բայց իսկոյն գաբաիաների գոռոզ սիրտը չկիջաւ, նրանք կատաղել էին գեաւուրի վրա, որն իրենց մբատակելուց յետոյ, ոտքերի տակ էր գցել և նրա ձեռքից միայն ներում խնդրելով էին ազատուել: Ծերուկին Ղալմազամին ներկայացնելուց յետոյ յաւելուածներով պատմել էին ամէն բան: Պաշտօնականը այդ հարուստ և կրակոտ ճանապարհորդների պատմութիւնը լսելուց, հրամայեց ձեռքի տակ ունեցած տասներկու ձիա-

ւորներին պատրաստուել, որ գնան նրանց դիմաւորելու։

Դուրգէնը Սմբատի այդ արարքից թէև շատ զայրացաւ, բայց ճար չունէր Սմբատին դիմաւորելու։ Վերջապէս իրենք հինգ հոգի էին և այնքան վախենալու էլ չէին։ Երբ զաբտիաները ուղղուեցան ծերուկի հետ դէպի Ալաշկերտ, Դուրգէնն ասաց.

—Տղերք, ճանապարհ ընկնենք, չտապենք։ Ալաշկերտից որ ձայն տան՝ Մաչլու կիմացւի։ Գնանք. քանի որ փորձանքի չենք պատահել։

—Ինչ ես վախենում, Դուրգէն, մէկ հոգի գալողներն ունեն, մէկ էլ մենք, ինչ կարող են մեզ անել։

—Բայց մենք զոր ունենք, ժամանակ կորցնելու չէ։

—Այդ խօսքիդ ինչ ասեմ, ճիշտ է պէտք չէ ժամանակն անցկացնել։

—Գնանք, չուշանանք, կրկնեցին Սարգիսն ու Սիմօնը։

Դուրգէնի ընկերները կէս օրից երկու ժամ անցկացած էր, երբ դուրս եկան Մաչլուից, գիւղացուց խաբելու համար դիմեցին դէպի Ամատ։

Մութ գիշեր էր, երբ նրանք հասան Ջալկանի։ Ժամացոյցին նայելով՝ ասաց Սմբատը.

—Տղերք, ժամը եօթն է դեռ, մտնենք գիւղ, ձիերս հանգստացնենք, փորերս կշտացնենք մինչև ժամը տասնմէկը, թէ ոչ էլ էգուց մինչև կազմուելը մտնելը թէ մենք թէ ձիերը հանգստանալու չեն։

—Այստեղ մի լաւ բարեկամ տան տէրը ունիմ, ասաց Դուրգէնը, Սմբատ, գուցէ պիտի ձևանաս նրա

տանը մալ առնող իմ պարոնս։

—Շատ լաւ, սրանք էլ մեր ընկերները։

Ջալկանի գիւղում երեք չորս ժամ հանգստացան, կերան կշտացան և ժամը տասն մէկը անցել էր, երբ ճանապարհ ընկան դէպի Ղարա-Սու։ Ղալմաղամի ձիաւորները Մաչլուից գիւղացիների ցուցմունքի համաձայն գնացին Ամատ, այնտեղ նրանց հետքը չգտնելով իջան դէպի Հարաւ՝ Ղալաբէգ, որտեղ նոյնպէս չէին երևացել։ Ղալմաղամը քիչ հանգստացաւ Ղալաբէգում և մարդ ուղարկեց Մամետան, Գիրքան և Քէշէ-Քէօյ։ Երկու ժամ յետո տեղեկութիւն բերին, որ նրանք Մամետանից ուղղուել են դէպի Բոլնան ձմեռանոցը Ջալգանիի ճանապարհով։ Թէև մթնել էր, բայց Ղալմաղամը չուզեց ձեռքից փախցնել մալ առնող հարուստ չօդարևները, որոնք աղքատի պարտքը վճարում էին անխնա և մարակում իրեն զբաղեցնում։ Ին էր դուրս էին եկել Դուրգէնի ընկերները, մի քառորդ ժամ էլ չէր անցել, երբ Ղալմաղամը Ջալկանի մտաւ և անճանօթ հիւրերին ընդունող տանտէրին կանչելով՝ նրանց տեղը հարցրեց։

—Ահա նոր տանից դուրս եկան, ասաց տանտէր էֆէնդին։

—Ո՞ւր գնացին։

—Ձգիտեմ, բայց նրանցից մէկը սրանից վեց եօթն օր առաջ Ղարա-Սու գնաց ու եկաւ։ Կարծում եմ Ղարա-Սու գնացին։

—Հաստա՞տ։

—Կարծիքս եմ յայտնում, էֆէնդի։

—Թէ չգտնեմ, կաշիդ քերթել կտամ։ Ձիդ

նստիր և առաջ անցիր, մեզ Ղարասուի ճանապարհը ցոյց տուր։ Տան տէրը Ղալմաղամի խմբին միացաւ։

Կէս ժամ սրընթաց արշաւելուց յետոյ, Ղալմաղամի ձիաւորները հասան Արշակի ընկերներին և երկու հարիւր քայլ տարածութիւն չկար երկու խմբի մէջ, երբ Ղալմաղամը հրամայեց մի գնդակ արձակել։ Սմբատն աներկիւղ՝ գնդակով պատասխանեց և ձիաւորներն առանց կանգնելու իրենց ձիանները առաջ էին քաշում։

—Տղերք, ասաց Սեդրակը կանգնեցէք, տեսնենք ովքեր են մեզ հետևողները, յետոյ նրա համաձայն շարժուենք։

—Ովքեր պիտի լինեն, աւազակներ են, որ մեզ կողոպտելու են գալիս, ասաց Սիմէօնը։

—Աւազակների չեն նմանում, ասաց Սարգիսը։ Անիծուած գաբախանները դնացին Ղալմաղամին բորբոքեցին մեր դէմ, կարծեմ նրա մարդիկն են, մեզ են հալածում։ Թէ գեղ գնանք մեզ բոլորիս կբռնեն, կտանեն ծակը։ Ձա դարձէք, սրանց կրակով գուցէ փախցնենք։

—Տղերք, հրացաններդ ուղղեցէք ձիու եկած կողմը։

Դիշերը սարսափելի մութն էր, երկինքը մութ ամպերով պատած։ Երկու կողմից անխնա սկսեցին գընդակներ արձակել։ Այդ միջոցին Ղալմաղամի երկու մարդիկն ընկան և Դաւրգէնի ձին մի գնդակի հարուածից սատկեց։ Ղալմաղամը որ արիւնից վախեցողներից չէր, իւր գնդի հետ առաջ էր գնում և երկու կողմից էրար վրա անխնա տեղացնում էին գնդակները, որոնք

օդի միջով սահում անցնում էին։ Այս միջոցին մի գնդակ եկաւ և Սեդրաքի թևը վիրաւորելով անցաւ։ Մինչ նրա թևն էին կապում ուղերքը, Սմբատի ձին էլ վիրաւորուեց և Սմբատը Սեդրաքի ձին նստած նորան թեռարքն առաւ։ Սիմօնն ու Սարգիսը անընդհատ գնդակներ էին տեղացնում Ղալմաղամի մարդկանց վրա, որոնց թիւը նոյնպէս աստիճանաբար նւազում էր։ Երկու ժամից աւել դիմադրեցին խմբերն իրար։ Սմբատն ու Սարգիսը մեռան, Սեդրաքը վիրաւոր, Սիմօնի և Դաւրգէնի էլ փամփուշտները սպառուեց։ Ղալմաղամը հրացանաւորներով նրանց չրջապատեց, բռնեց և անմիջապէս փոխադրեց քուրդական Ղօլա ամենամեծ ձմեռանոցը։

ԻԴ

ԴԱՏԱՍՏԱՆ

Արշակը եղբօր գարձին սպասելով տանջւում էր։ Դաւրգէնի և ընկերների անցքը պատահելուց երկու-երեք ամիս յետոյ, Գաղզմանցի մի կալանաւոր եկաւ միջնաբերդը և Արշակին պատմեց նրա եղբօր Ալէք-

սանդրապօլցի երիտասարդների հետ Ալաշկերտ գնալը և պատահած անցքը։ Յայտնի բան է, կալանաւորը չէր իմանում, թէ ինչ նպատակով էր եղել այդ արշաւանքը, բայց Արշակը իսկոյն հասկացաւ և անչափ ցաւեց, որ ինքը պատճառ էր եղել այնքան կորուստների։

Այս միջոցին նոր կարգադրութեան համաձայն Կարսի նահանգի քրէական գործերի քննութիւնը յանձնուել էր Երևանի նահանգական դատարանին և դատախազին (прокуроръ)։ Արշակի գործերը ուրիշ գործերի հետ պատերազմական քննիչը յանձնել էր Կարսի բաժնի հաշտարար դատաւորի օգնական քննիչին, որը նորից սկսեց քննել Դրօզդովի սպանման գործը։ Այս քննութիւնը կատարելուց յետոյ, քննիչը բոլորովին բաժանեց Արշակ Դելանովի Բէգօ բէգի դէմ բացած վիսական ամբաստանութեան գործը Դրօզդովի սպանութեան գործից և ամբաստանութեան գործը ապացոյցից զուրկ լինելով՝ աւելորդ համարեց ներկայացնելն անգամ Երևանի նահանգական դատարանին։ Իսկ Դրօզդովի սպանման գործը Արշակի վրա բռնած և նորա տանը գտնուած առարկայական փաստերով ներկայացրեց Երևանի նահանգական դատարանին։

Երևանի նահանգական դատարանը և դատախազը Արշակի պարբերապէս տւած խնդիրքներում ոչ մի փաստ, ոչ մի ապացոյց և ոչ մի հիմք չգտան, որ կարողանային Բէգօ բէգի դէմ քննութիւն բանալ։ Բացի այս, Արշակը իւր բոլոր խնդիրքներում աշխատում էր ապացուցանել, որ Դրօզդովի սպանողն էլ Բէգօ բէգն էր և ինքը անպարտ, անմեղ էր, իսկ դատարանը իրեն արդարացնելու համար մեղադրեալի յօրինած լոկ

խօսքերն և հէքեաթները լսելու անկարող էր։

Արշակը եղբօր և բարեկամների Թուրքիայում ունեցած վիճակից անտեղեակ, էլ բոլորովին յուսահատ սպասում էր, որ Երևանի նահանգական դատարանի քրէական բաժինը Կարսում կալացնէր իւր նստերը, որպէսզի մի օր առաջ որոշուէր իր վիճակն էլ և ազատուէր այն հոգեկան տանջանքներից։

1880 թ. Օգոստոսի մէջ նշանակուած էր Դրօզդովի սպանման գործի քննութիւնը։ Երեք ամիս առաջ Կարսի և Կաղզմանի գաւառապետի ձեռքով հրաւիրագիրները ցրուած էր բոլոր վկաներին։ Բէգօ բէգը գիւղից գիւղ ամէն մի վկայի մօտ երեք ամիս շարունակ ման էր եկել և խրատել ամէնին, ինչ որ պէտք էր խօսել էր։

Այս ճանապարհորդութեան ընթացքում մի սոսկալի արկած պատահեց Բէգօ բէգի տանը, որը մեր պատմութեան պատճառից առաջացած լինելով՝ անհրաժեշտ ենք համարում գետեղել այս պատմութեան ընթացքում։ Կեղծ Ջաւահիրը և Զէյխան իրենց վկայութիւնը պատերազմական քննիչի մօտ կատարելիս երկուսն էլ դիտմամբ ցոյց էին տւել իրենց դէմքերը քննիչին։

Պառաւ քրդուհին և նոր օգնական քարտուղարը այդ բանը պատմել էին Բէգօ բէգին։ Բէգօ բէգը ոչ միայն Ջաւահիրի և Զէյխայի սենեակները յատկացրել էր սորանց, այլև վախից մի քանի աստիճան բարձրացրել էր սորանց պատիւը, որպէսզի չլինի թէ բարկանան կամ ոխակալուեն իր դէմ և իւր գաղտնիքը պարզեն դատաւորների առաջ։ Կեղծ Ջաւահիրը Բէգի

քայլերը ոչ միայն դադարեցրել էր Գիւլ փէրիի ննջարանից, այլև ստիպել էր ասել, որ Փոլադ բէգի գոռոզ աղջիկը Բէգօ բէգի հարէմի իշխանուհին իւր ծառայութիւնները կատարի։ Գիւլ-փէրին հնազանդում էր իրենց հովւի աղջկան, որը Ջաւահրի դերը կատարելուց առաջ աղախին և բէգին հարճ էր…

Կեղծ Ջաւահիրը անչափ ատւած ու արհամարհւած էր Գիւլ-փէրիից, իսկ այժմ նորանից սանձած վրէժն էր լուծում, երբ արդէն կարողացել էր ընկճել իւր հակառակորդին։ Նա թիւնաւոր իժի նման փաթթւել էր Գիւլ-փէրիի մարմնով և բերանը բացած՝ ատամները մօտեցնում էր թշնամու սրտին՝ խայթելու, բայց չէր խայթում, այլ դիտում էր, թէ ինչպէս տանջւում էր իւր զոհը։ Ամէն օր, օրական մի քանի անգամ դառնագի արտասուքներ էր թափել տալիս թշուառ կնոջն և դրանցով չբաւականացած՝ հնարքներ էր խորհում էլ սոսկալի տանջանքներ տալու։

Բէգօ բէգը զգում էր, համբերում էր առանց ձայնը բարձրացնել կարողանալու։ Եթէ այդ կեղծ Ջաւահիրի սրտով չշարժւէր, կկործանւէր և անդունդը կգլորւէր։ Ամէնքը զարմանում էին, թէ ինչպէս բէգը կարողանում էր համբերել նորա արարքներին, բայց Գիւլ-փէրին գիտէր, թէ ինչի իւր որդւոց յանցաւոր հայրը սողում էր այդ հրէշի ոտքերի տակ։ Ամբողջ երկու տարի ու կէս տանջեց ու լացացրեց այդ շինծու Ջաւահիրը Բէգօ բէգի բոլոր սիրելիներին, իսկ Գիւլ-փէրին հալւեց ու մաշւեց, կմախք դարձաւ։

Ամէն բան տանում էր Գիւլ-փէրին, ամէն բռնութեան դիմանում էր և սպասում Արշակի գործի

վախճանին, որպէսզի կարողանային գաղթել Թուրքիա բէգի խոստման համաձայն։

Բայց Ջաւօն ուզում էր օգտւել իւր իրաւունքներից։ Այս կինը ուզում էր Գիւլ-փէրիի տասն ու մէկ տարեկան աղջիկը նշանել իւր եղբօր Հասանի վրա, որ տասն ու վեց տարեկան կլինէր և արածեցնում էր հօր հետ մէկտեղ Բէգօ բէգի խաշները։ Գիւլ-փէրին երբէք չէր զիջանել մի այդպիսի կապակցութեան նամանաւանդ դեռ իւր աղջիկը շատ փոքր էր։ Այս մասին ահագին վէճ կար։

Մի օր փոքր աղջկան կանչեց կեղծ Ջաւահիրը և մի քանի տանձ եւ խնձոր տալով խօսքի բռնեց։ Այդ ժամանակ Հասանը զգուշութեամբ մօտեցաւ և համբուրեց երեխային։ Քրդի աղջիկը զայրացաւ և մրգը Ջաւահիրի երեսին շպրտելուց յետոյ վազեց, եղելութիւնը մօրը պատմեց։ Գիւլ-փէրին կրակ կտրած քիչ մնաց, որ ատամներով բզկտէր Ջաւահիրին. ահագին աղմուկ էր գցել տան մէջ և ոչ ոքի չէր լսում։ Տան փոթորիկն այնքան սաստկացաւ, որ գնացին Բէգօ բէգին Քեօմիւրլի գիւղից Որիշի տանից կանչեցին։

Բէգօ-բէգը երբ լսեց ամէն բան, սաստիկ կատաղեց և մտնելով իսկոյն Ջաւօյի սենեակը՝ բացատրութիւն պահանջեց։ Ջաւօն աներկիւղ պատասխանելով ասաց, որ իրաւի ինքն էր խոստացել եղբօրն այդ քայլն անելու։ Բէգօ բէգը կատաղած հայհոյում և բըպոռնում էր։

Շատ մի խրոխտալ, ասաց Ջաւօն. թէ Սիբիր երթալ չես ուզում, թէ կախաղան բարձրանալ չես ուզում, այսօր կանչել տուր մօլլին և աղջկանդ

խոստացիր վկաների առաջ եղբօրս Հասանին...

—Լաւիր, գոռաց Բէգօ բէգը, թէ չէ շան սատակ կանեմ.

—Չեմ լսեր, հրամէ, տեսնենք, ես էլ Փլոհի աղջիկը չեմ, որ ինձ վախեցնես...։

—Սուս, թէ չէ, մէկ հարուածով հոգիդ...

—Գնա Գիւլ-փէրիին վախեցուր...

—Ա՜յ շան ծնունդ..., ասաց և մի դաշոյնի հարուածով Ջաւօյի աղիքները փորի հետ թափեց յատակի վրա։ Հարէմի խորքում ամէն բան անհետացաւ և Հասանին ու հօրը սիրտը բէգը իջեցրեց, իւր աղջկա ձեռքը խոստանալով....։

Որոշուած օրը Երևանի նահանգական դատարանը Տարանեանի նախկին Կազինօյում (Հիւրանոց) կազմեց իւր նիստը։ Բէգօ բէգը քանի չափ քուրդ երիկ մարդ և կնիկ մարդ վկաներով ներկայացաւ դատարան։ Ջաւահիրը եբր մեռել էր գաւառապետի զեկուցման համաձայն։ Բոլոր քուրդ վկաները առանց մի բան հասկանալու Ղադիի հետ կրկնեցին երդման թուղթը, և մատերը բարձրացրած։ Արշակը հրացանակիրներով կալ ատեան և մեղաւորների աթոռի վրա նստեց։

Դատաւորները կարդացին գործը սկզբից։ Նախագահը հարցրեց Արշակին, թէ փաստաբան չունէ՞ր և բացասական պատասխան ստացաւ։ Յետոյ յայտնեց որ իրեն մեղադրում են Դրօզդովին սպաննելու գործի

մէջ, անձը պաշտպանելու համար ինչ ասելիք ունի։

Արշակը սկսեց նկարագրել իւր, Բէգօ-բէգի և Ջաւահիրի մէջ պատահած տարօրինակ անցքը, նախագահը արգելեց ասելով, որ այդ վիպական գործը բոլորովին կապ չունէր Դրօզդովի մահուան գործի հետ։ Արշակը մերժեց ուրիշ կերպ պատասխանել։ Նախագահը իւր ընկերների հետ խորհրդակցելուց յետոյ, թոյլտուեց պատմել, միանգամայն խնդրելով, որ համառօտ և հարկաւոր կէտերը բացատրէ։ Արշակը ամփոփոխ բացատրեց ամէն բան, բայց առանց ապացոյցի։ Դատաւորները աւելի ուշադրութիւն դարձրին այն փաստի վրա, որ այդ օրը Արշակը գտնուել էր գիւղում և գրաւոր ապացոյցներով համոզեցան։ Դատախազի օգնականը պնդեց, որ նա այդ բանը կարող էր անել և ճաշից յետո, որովհետև չարագործութեան տեղից մի ժամից աւել հեռու չէր գտնւում մեղադրուածը։ Իսկ Դրօզդովի առարկաները Բէգօ բէգից նուէր ստանալը ոչնչով չկարողացաւ հաստատել։ Յակոն նոյնպէս որքան որ աշխատեց բացատրել իւր անմեղութիւնը, չկարողացաւ համոզել։

Դատաւորները մի ժամ խորհրդակցելուց յետո, մեղաւոր գտան Արշակին ու Յակօյին։

Մեղադրուածները չբաւականացան և իրենց գործի վճռի պատճէնը պահանջեցին։

Մինչ յուսահատ Կազինոյի սանդուխներից իջեցնում էին հրացանակիրները Արշակին, Գուրգէնը շտապում էր բարձրանալ դատարանում եղբօրը տեսնելու, երբ մի մօր արգանդի երկու ծնունդները իրար նկատեցին, էլ առանց սպասելու, առանց մտածելու գրկւեցին ու համբուրւեցին: Հրացանակիրները տեսարանից շփոթւած՝ քիչ մնաց երկու եղբօրն էլ գրնդակահար անէին, բայց շուտով հանգամանքն հասկանալով շտապեցին հրացանի կոթով զգաստացնել և իրարից բաժանել:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՁԵՌՔԸ

ԻԵ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

Արշակին Կարսից ուղարկեցին Թիֆլիս, դատաստանական պալատում նրա գործը կրկին քննելու էր: Գուրգէնը ուղեկցեց եղբօրը մինչև Կովկասի մայրաքաղաքը և ամէն փաստաբանի դիմեց, բայց հնարք չեղաւ, ուշ էր և պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը: Արշակը էլ չբողոքեց, բաւականացաւ Պալատի վճռով և Յակոբի հետ մի քանի ամիս յետո ճանապարհ ընկան դէպի Տօպօլսկ: Ուրախ էին ազա ու ծառա, որ գոնէ իրարից չէին բաժանւում: Գուրգէնը երբ տեսաւ, որ էլ հնարք չկար ա-

գտնելու եղբօրը, ինքն էլ վճռեց կամաւոր աքսոր գնալ նրա հետ և նորանց խմբին հետևելով կամաց կամաց ճանապարհներին աշխատելով, բանելով մուրալով մի կերպ հասաւ Տօպօլսկ։ Արշակը երբեմն երբեմն ճանապարհին եղբօր պատահելիս ասում էր· վրդովւած և կատաղած.

—Ախմա՛ր տուն դարձի՛ր, մեղք են երեխաները...: Ո՞ւր ես գալիս ինձ հետ....:

—Գաղթում եմ, պատասխանում էր ծիծաղելով Գուրգէնը:

Երբ Արշակին Կարսից հեռացրին, երբ նրան Թիֆլիսից էլ հեռացնելու լուրը տարածւեց, երբ արդէն մոռացաւ նրան աշխարհն, Բէգօ-բէգը Կարս գալով մօտեցաւ մի քանի հմուտ օրէնսգէտ պաշտօնականների և խնդրեց, որ իրեն համար մի խնդիրք գրեն, որպէսզի կարողանա վերադարձնել այն բոլոր Կայսերական շնորհներն ու պարգևները, որոնց արժանացել էր պատերազմի ընթացքում Ռուսաց կառավարութիւնից և գաղթել Թուրքիա: Ով որ լսում էր նրան, գժւած կարծելով երեսն էր շուռ տալիս և ճանապարհ գցում: Բէգօ բէգը իր ծանօթներից տանի դռնից համարեա վռնդւեց այս տեսակ տարօրինակ առաջարկութեան համար և շատերն էլ իրեն լրբորեցին, որ այդ տեսակ անմիտ խորհուրդներից և մտադրութիւններից ետ մնա: Ոչ ոքի չէր լսում բէգը:

նա հաստատապէս վճռել էր գաղթել....:

Դեռ խնդիրք տալուց առաջ Փաշէն էր գնացել, կալւածներ, ագարակներ և մարգեր էր գնել, տան մեծագոյն մասը, որդիքը և Գիւլ-Փէրին այնտեղ փոխադրել: Թուրքիա էր փոխադրել իր ոչխարների հօտերն և մալերի նախիրներն, այնտեղ էր տարել ընտանեկան թանկագին կարասիներն և իր հարստութեան մեծագոյն մասը: Վերջապէս Ալաշկերտում բանտարկւած իր երկու սիրելի կիներին ժամանակ էր տուն բերելու: Նա կարող էր գնալ և էլ չվերադառնալ, բայց նա ուզում էր օրինաւոր ճանապարհով հեռանալ....:

Մի օր նա ներկայացել էր մի հրաժարւած պաշտօնականի և խնդրել, որ իրեն ճանապարհ ցոյց տա վերադարձնելու իրեն շնորհւած պարգևները և ապա գաղթականի անցագիր ստանալով ճանապարհ ընկնելու դէպի իր կրօնակից պետութեան սահմանը....:

—Ախմա՛ր ինչպէ՞ս կարելի է, որ մարդ խնդրէ իրեն շնորհւած շքանշանները ետ վերցնել: Այդ շնորհների արժանանալու համար մարդիկ իրենց անձն են զոհում, մի քանի տասնեակ տարիներով ծառայում և իրենց պարտականութիւնը ճշտութեամբ կատարելով հազիւ արժանանում են մի մի պարգևի, իսկ դու մտածում ես խնդրել, որ ետ տաս այդ բոլորը և ինչ պատճառով...

—Ես ուզում եմ գաղթել, ես չեմ մնալու այս երկրի մէջ, իմ կրօնս ինձ ստիպում է գնալ խալիֆի դրօշի տակ, իսկ սրանցով չեմ կարող գնալ...

— Պատճա՞ռը. մի՞թէ Թուրքիայի պաշտօնականները, քեզանից էլ թունդ իսլամները խալիֆի գիտութեամբ չեն կրում մեր վեհապետից ստացած շքանշանները . . . ։

— Այո, կրում են, բայց նրանք ստացել են խալիֆի թոյլտուութեամբ, տալելով և ծառայելով իրենց Սուլթանի գերիշխանութեան տակ…։ Իսկ եթէ գնամ Թուրքիա, առանց կտրելու իմ բոլոր յարաբերութիւններս Ռուս կառավարութեան հետ. ինձ ոչ միայն լրտեսի տեղ են ընդունելու, այլ կրօնուրաց դաւաճան համարելով հալածելու են։ Թուրքիայում խաղաղութիւն գտնելու համար ես պարտաւորեալ պիտի ետ տամ իմ շքանշանները, գնդապետի աստիճանս և ինձ ցմահ շնորհուած տարեկան երեք հազար ռուբլի թոշակը…։

— Թոշակդ էլ. տարեկան երեք հազար ռուբլի թոշակդ էլ ես թողնելու…։ Այդ բոլորը կատարեալ գժութիւն է, մարդ պէտք է, որ խելքը կորցրած լինի, հրաժարուելու գնդապետի աստիճանից. Ստանիսլաւի, Վլադիմիրի կուրծքի և վզի խաչերից և նա մանաւանդ տարեկան առանց նեղութիւն կրելու ստանալիք այդքան մեծ թոշակից…։ Գեներալներին, որոնք երեսուն տարի ծառայում են հոգւով ու սրտով հայրենիքին, այդքան չեն վարձատրում։ Իսկ դու էլ ինչ ես ուզում, Թուրքիան քեզ երկինք է բարձրացնելու՞ ցնորուել ես, ա՜յ մարդ, հարկաւոր է քեզ գժանոց ուղարկել։

— Կրօնս ինձ ստիպում է գաղթել, խիղճս չի հանգստանում, չեմ կարող էլ մնալ, պէտք է գնամ

մինչև անգամ, եթէ այնտեղ ինձ կախաղան բարձրացնեն…։

— Մի՞ փախենալ և մի՛ կասկածել…։ Կարծում ես կարող ես այդպիսի մի քայլով նրանց աչքերը կապել…։

— Ես վճռել եմ և ինչ էլ որ պատահի, փոխելու չեմ իմ մտադրութիւնս… խնդրում եմ, գրեցէք այնպիսի մի խնդիրք…։

— Եթէ դու ցնդել ես, ես գժանոց գնալու բոլորովին կամք չունիմ։ Ես չեմ կարող քեզ նման լիմար խնդրատուների ամէն տեսակ աներևակայելի պահանջները մի խնդիրքի մէջ ամփոփել…։

Թէև շատ տեղերից փնտռեց, բայց վերջապէս գլուխ բերեց իր մտադրութիւնները, նա բաժանուած աստիճանից, շքանշաններից և թոշակից. իրաւունք ստացաւ գաղթել Թուրքիա։ Բէգօ բէգը կտրած իր բոլոր յարաբերութիւնները՝ Ռուսաստանից անցաւ Օսմանցւոց սահմանը և բնակութիւն հաստատեց Հասան Ղալայի մօտերքը Զ—գիւղում։

Երկու երկրի սահմանների ժողովուրդի մէջ խօսելու և վիճելու նիւթ դարձաւ երկար ժամանակ Բէգօ բէգի այս տարօրինակ գաղթականութիւնը, ամէն տեղ, ամէն մարդ մի բացատրութիւն էր տալիս, բայց ոչ ոքի յայտնի չէր իսկական պատճառը։ Բէգօ բէգի հետ գաղթեցին իր մարդիկն, իր ծառայողներն և էլիքի մեծագոյն մասը։ Այդ գաղթականութիւնից յետոյ Խէյրաթ ձմեռանոցը էլ հէնացաւ։

ԻԶ

ԵՐԿՈՒ ՄԱՏԵՐ

Դուրգէնի և ընկերներուն Ալաշկերտի Ղալմաղամից հալածուած գիշերը երկար ժամանակ Ջաւահիրը և Զէլխան սպասել էին գերեզմանոցի ապատաժի տակ և յուսահատոր վերադարձել էին լուսադէմին դէպի տուն։ Այդ գիշերային գերեզմանական լուռ֊մեան մէջ, մինչ նրանք շնչասպառ և սրտատրոփ ականջ էին դնում ձիերի քայլերի ձայները լսելու, հեռուից քամին հրացաններից արձակուած գնդակների խուլ ձայներն էր բերում բախելու նրանց ականջին ու սրտին։ Զգում էին թշուառ արարածներն, որ իրենց ազատելու համար էին կուռւում և բոնաւորի ձեռքերն հալածում էին այդ ազատասէրներին, հարէմական սարկական շղթաները կռելու, պնդելու և ամրացնելու համար։ Զուր տեղ ժամերով ցրտին ու քքին դիմադրելուց յետոյ՝ անճարացած տուն էին դարձել սպասելու մի ուրիշ պատեհ առթի։

Դուրգէնը Ալաշկերտի Ղալմաղամի ձեռքն անցնելուց յետոյ, ուղարկուել էր Արզուրումի միջնաբերդի բանտը, որտեղից խոյս տալու պէս հասել էր Կարս և

եղբօրն աքսորման դատավճիռը լսելով նրան ուղեկցել մինչև Սիբիր։ Արշակի և Դուրգէնի բացակայութիւնից յետոյ էլ ով էր մնում աշխարհի երեսին Ջաւահիրի համար, էլ ով էր մտածում, որ մի թշուառ արարած, մի տարաբաղդ կին Ալաշկերտի խորքերում տանջւում էր բռնաւոր քրդի գժոխային բանտում, աշխարհի աչքից աներևոյթ։

Հետևեալ օրը գիւղում ամէն տեղ խօսել էին, որ Ղալմաղամը գիշերը հալածել էր հինգ փախստական հայերի, որոնցից երկուսը ընկել էին, երեքը բռնուել։ Հասկացել էր Ջաւահիրը, որ նրանք իրեն ազատելու էին գալիս և սրբան տանջւեց, որ իւր համար երկու երիտասարդ, տուայդ տղամարդիկ էին գլորւել և երեքը բանտարկւել, դուցէ էլ չազատւելու յոյսով։ Քանի որ նա մտածում էր այն զոհողութիւնների մասին, որ իրեն համար կատարել էին Դուրգէնը, իւր նշանածի եղբայրը և նրա ընկերները, արտասուքները խեղդում էին նորան, խելագարի նման անզգա տարածւում էր ու լմնրում ժամերով ընկած տեղը...։

Երբէք նորա աչքերից չէր հեռանում իւր Արշակը, այն Արշակը, որ իրեն սիրել էր երեխա ժամանակից, փոքր հասակից, սիրել էր իրեն, երբ աշակերտում էր Ալէքսանդրօպօլում և մի օր, մի ժամ, մի րոպէ իրեն տեսնելու համար երկու օր ճանապարհ էր գալիս ոտքով, գազանի ձնողներից և վերադառնում ամէն վտանգն աչքն առնելով։

Ամբողջ տասը տարի կամաց կամաց արծարծւել էր այդ սէրը, տարածւել իրենց սրտերից երակներն ու մէջ և մարմնացել։ Ամէն մի բոպէ մի պատկերով

ներկայանում էր Արշակը նորա աչքերին երբեմն երեխա հասակում, հօրն օգնելիս գութանի սարքերը կազմելու, երբեմն ուսանողի շապիկն հագին, գողի նման գողգողալով իրենց կալումը, կամ տանը, երբեմն ազատ իրենց հարսների ընկերութեան մէջ և երբեմն էլ ձիու վրա չինովնիկի պագոնները ուսերին՝ իրեն խրախուսելիս ձին մտրակելու դէպի առաջ, դէպի Կարս:

Մինչ այս սիրտ քաղցր յիշատակները պատկերանում էին նորա երևակայութեան մէջ, մինչ դրանք մինչև իրականութեան աստիճան վերանորոգւում, կենդանանում և նորա զգացմունքները բորբոքում ու բռնկւում էին. յանկարծ իւր այդ ոսկի երազների հեքացնող սև քօղն, իրեն երևակայած երջանկութիւնից անջատող խաւարի վարագոյրը պարզւում էր աչքի առաջ և տեսնում այդ մութ պաստառի վրա նկարուած այն բոլոր արիւնահեղութիւնները, այն բոլոր կոտորածները, ան բոլոր զոհողութիւնները, որոնք կատարւել էին իրեն ազատելու, իւր ըղձին և բաղձանքին հասցնելու համար, և այդ բոլոր զոհողութիւններից յետո, դարձեալ մնում էր նոյն քօղի տակ, շնչում էր, ապրում էր միայն իւր համար եղած անթիւ կոտորածները սգալու և ողբալու... համար:

Այս սոսկալի րոպէներին նորա աչքին ներկայանում էր Միհրանն, իւր արիւնարբու հրոսակներով, որոնք անթիւ սպառնալիքով իրեն էին պահանջում հօրից ու եղբայրներից: Նա տեսնում էր ինչպէս կատաղած գազանը յարձակւում էր մերկ սուրը ձեռքին եղբօրն և իրենց գիւղացիների վրա, նա տեսնում էր այն արիւնահեղութիւնը, այն հրդեհը, որ այրում լա-

փում էր իրենց գիւղը, այն անմեղ զոհերը, որ կատարւում էին մի աղջկա համար: Նա մտածում էր, թէ ինչի՞ չէր զոհել իրեն նոյն ժամին իւր ծնողների և եղբայրների համար, ինչի՞ չէր յանձնել իւր անձը գազանին, ողջ գեղը փրկելու համար...: Ինչի՞ էր այնքան անգութ վարւել իւր սիրելիների դէմ... միթէ իւր գլուխը հարազատներից թանգ արժէր...: Ինչի՞ ապրէր այն սև օրից յետո, իւր սիրելիներին թրի ու կրակի մէջ թողնելուց յետո, որ պատճառ դառնար ուրիշների էլ զոհւելուն և տանջւելուն...:

Բայց երբ մտաբերում էր, որ Միհրանն իրեն պահանջելիս, նրա մարդիկն էլ իւր ընկերներին էին որոնում, գիւղի բոլոր կոյսերը բռնակալութիւն չէին տալու նրանից դժոխային պահանջին, այդ ժամանակ փիչ հանգստանում էր, նամանաւանդ երբ մտածում էր, որ ամէն տանջանքի և զոհողութեան դիմացել էր միայն իւր սիրու համար, իւր Արշակի համար...: Այդ դառն մտածութիւնների ժամանակ Բէգօ բէգն սատանայական դիմակով ներկայանում էր նորա աչքերին արհամարհելու իւր սէրը, ծաղրելու իւր Արշակին և կոխկրտնելու իւր բոլոր զգացմունքները...: Բէգօյի դէմքը նորա սիրտը բորբոքում էր, վրէժն ու ալգար բարկութիւնը սաստկացնում այդ գազանի դէմ և քունը կորած գիշեր ցերեկ այդ սոսկալի մտքերում ընկղմած տանջում էր թշուառ կնոջը...:

Ջէյխան, որ անբաժան ընկեր էր դարձել Զաւահիրին և երկուսի սրտերում եղած ամէն գաղտնիք իրար յայտնի էին, բացի Արշակի վրա ունեցած սիրուց, որ գաղտնաբար ընկել էր քրդուհու սրտի մէջ, սատի-

ճանաբար սաստկացել, զօրացել և էլ դուրս հանելն անհնար դարձել, չէր լռոզնում առանձնապէս տանջելու վշտահար կնոջն և զանազան քաջալերական յոյսեր արծարծելով համբերութիւն էր քարոզում, մին չև վրիժառութեան պատեհ առիթը ներկայանալը։

Ինքը քրդուհին, նւազ չէր տանջւում ներքնապէս, իւր ապրելը բոլորվին անյոյս և աննպատակ էր համարում...։ Արշակը սիրել էր մանուկ հասակից Ջաւահիրին, սիրւել էր և եթէ բազդի անիւը մի օր սխալւելով նրան լոյս աշխարհ գցէր, իրաւունքով Ջաւահիրը նրա սրտին տիրանալու էր, իսկ ինքը, ինքը դարձեալ քրդի յարկի տակ բազդի հարւածները կրելու էր մինչև սառը գերեզմանի դուռը...։ Ոչ մի յոյս նորան չէր ներշնչում կեանք, ապրել։ Ո՜նչ բաւականութիւն էր գալու այնտեղ, որտեղ իւր բացակայութիւնը երբէք նկատելի չէր դառնալու, կամ թէ ինչ ոգեկան վարձատրութիւն էր ստանալու ապրելով այն վայրի մէջ, որտեղ ամէն ժամ զանազան հոգեկան տանջանքներ էր բարգում իւր վիրաւոր սրտի վրա...։

Մեռնե՛լ... մեռնե՛լ այն թարմ հասակում.... տասն ութ կամ քսան տարեկան... մեռնել ու խաղաղել շատ ցանկանալի էր քրդուհու համար, բայց հոգեառ Ղաբրիէլը նորան մոռացել էր, նորա տոմարը կորցրել էր, գեռ չէր լրացել նորա քաշելիք տանջանքների թիւը...։ Ինքն իրեն մեռցնել չէր անցնում քրդուհու մտքից, նա իւր ձեռքը մի այդպիսի չարագործութեան մխելու անկարող էր....։ Այդ մեռելային կենդանութեան մէջ, մի միխիթարութիւն ունէր Զելխան, քաջալերել և խրախուսել Ջաւահիրը ապրելու

Արշակի վերադարձին սպասելու յոյսով...։ Յանկանում էր քրդուհին, որ Արշակը վերադառնալիս կենդանի գտնելով Ջաւահիրը չյուսահատւէր և իւր գլխին մի որևէ փորձանք չբերէր, բայց չէր իմանում, թէ Արշակը արդէն գատապարտւած էր յաւիտեան էլ չգտնալու Սիբիրից, սառնամանիքների աշխարհից։

Այս յուսով և մի թշւառ արարածի օգնելու և խնամելու ցանկութեամբ ապրում էր Զելխան և կարծում էր, որ եթէ Արշակն ու Ջաւահիրը ժամանակին կարողանային իրենց ազատութիւնը ձեռք բերել, իրեն էլ տանը մի անկիւն կշնորհէին նորանց բազդաւորութեանը մասնակցելու, միշտ թագուն պահելով իւր սրտի գաղտնիքը։

Զելխան ու Ջաւահիրը Մադոլի տանը Ղարասու գիւղում երեք ամբողջ տարի անցկացրին, որոնք թշւառների համար երեք դարից երկարացան և Գուրգէնից չոկ, ոչ մի մարդ չկարողացաւ տեսնել նորանց դէմքը, խօսել և հաղորդել նորանց երկու խօսք իրենց սիրելի Արշակի, կամ նորա եղբօր Գուրգէնի մասին։ Այդ երեք տարւա ընթացքում, որքան որ տանջւում էին թշւառները, կարողանում էին գոնէ վշտակցելով, լալով և արտասւելով անցկացնել ժամանակը և Բէգօ բէգի ներկայութիւնը չէր խանգարում նորանց ազատ ցանկութեան ժամերը։ Բայց լրացել էր թշւառ կանանց աքսորման օրերի թիւը, Բէգը ներել էր նորանց տանջանքները աստկացնելու պայմանով և եկել էր տանելու, որ ազատ ձողրալու ազատութիւնն էլ խլի նորանցից։

Բէգօ բէգը առաջին անգամ Ջաւահիրին ու

Զելխալին պատահելիս ասած գոռոզաբար.

—Էլ մի վախենալ. քեզ իմ ձեռքից փախցնողին ուղարկեցի Սիբիրի հանքերն աշխատելու, էլ ետ չեն թողնել նրան այնտեղից, ապահով եղիր...:

—Արշակը Սիբիր, ասաց և նստեց Ջաւահիրը:

—Այո, տաժանակիր աշխատանքի:

ԻԷ

ԲՒՂԴԻ ԱՆԻՒԸ ՁԱՒ Է ՊՏՏՒՈՒՄ

Էլ ժպիտն ու ծիծաղը չվերադարձան Ջաւահիրի երեսին, էլ երբէք նորա դէմքից չջաժանուեց թախիծը, Բէգօ բէգը գգաց, թէ ինչ սարսափելի հարուած էր տուել իւր սիրելի կնոջ սրտին, բայց ուշ էր, ուղղել էլ անկարելի էր: Ու ինչպէս չլայտներ Ջաւահիրին այն ցաւը, որ ինքը կրել էր ամբողջ երեք տարիների ընթացքում, մինչև գործի աւարտիլը և Թուրքիա գաղթելը: Միմիայն իւր գաղթականութիւնը այդ անաքանդ գործի համար չէր, եթէ չվախէր Դրօզդոի գործից, որի պատճառով Արշակին դատապարտել էր տուել, միմիայն կդաղթէր Ռուսաց տիրած երկրներից, միմիայն կվերադարձնէր այն պարգևները և նախանձելի թոշակը: Վախը զրկել էր նորան այդ բոլորից և նա ուրախութեամբ կմոռանար այդ բոլոր կորուստները, եթէ իւր ջրից ազատած կոյսը, հրեշտականման գեղանին սիրէր նրան, ժպտար, գգուէր ու փայփայէր այնպէս, ինչպէս երբեմն վայելել էր բէգը շատ կարճ միջոց...:

Ջաւահիրը այնքան վշտացել էր, այնքան կըսկիծ էր զգացել և այնքան ազի արտասունք թափել, "ր բոլորովին կերպարանափոխ էր եղել: Նորան տեսնողը և նորա դէմքն ու աչքերը քննողը կկարծէր, թէ ինքը վիշտը կնոջ դիմակով աշխարհ էր եկել, կոյր մարդկանց վշտի ահաւորութիւնը և սաստկութիւնը ցոյց տալու և զգացնելու համար...: Բայց Բէգօ բէգի կրքերը իրան անչափ կուրացնում էին, որ քուրդը միայն իւր ցաւն էր զգում և հայի ազգիկն անգութ ու անողորմ համարում, որ չէր զիջանում իւր անթիւ խնդիրքներին...:

Որքան որ տխրութեան քօղը սաստկանում էր Ջաւահիրի երեսին, որքան շատ կիզիչ հառաչներ էին թռչում նորա շրթունքներից, այնքան սաստկանում էր Բէգօյի ցաւը, այնքան մեծանում էր նրա տագնապն . . . : Ինչքան յուսահատութիւն էր արտայայտում Ջաւահիրի դէմքը, այնքան սաստիկ բորբոքում էր քրդի սէրը և երբ իւր սէրը արհամարած էր տեսնում, կեանքը դառնանում էր:

Բէգօ բէգը ոչ սրով, ոչ թրով, ոչ ոսկով — արծաթով և ոչ ազդեցանքով չկարողանալով համոզել Ջաւահիրին, ուզեց ոգիների և ջինների աջակցութեամբ հասնել նպատակին, բայց հայի յամառ աղջիկը չզիջաւ,

դերվիշների և մոլլաների թղթերն ու գրերն ազգությունից չունեցան ջրից դուրս բերած չքնաղ կոյսի հոգու վրա... Որքան յամառանում էր Ջաւահիրը, որքան անտարբեր էր շարժուում դեպի քուրդը, որքան արհամարհում էր այդ փքուած բեգը, այնքան սինդ կերպով ձգում էր իւր կողմը նրա սիրտը: Բաւական էր Ջաւահիրի երկու շրմունքների շարժիլը, Բեգօն պատրաստ էր գոհելու և նրա հրամաններըը կատարելու...

Այնքան ընկճուած էր Բեգօն Ջաւահիրի սիրով, որ բոլոր իւր գործերի կառավարութիւնը ձգել էր սրա վրա և մոռացել էր անգամ համարատութիւնը: Սա էլ առաջուան նման չէր դնում քննելու իւր խաշները ու հօտերը, ջոկերն ու նախիրները, վարն ու յանքը, մարգն ու արօտն: Ամէն բան յանում, քաղում, հաւաքում էին հաւատարիմների ձեռքով և եղբայրը մտամբ հսկում էր ել ու մուտին: Ծուխը նահապետական դիրքով, դռները բաց հիւրերի համար, ուտելիքն առատ և հագուստն ու կապուտը չափն անցկացրած:

Բեգօ բեգը Թուրքիա գաղթելու համար Կարսից ստացած առանձին անցագրով գաղթականների կոմիսիային էր ներկայացել Արզուրում, որի պաշտօնականները հեգնական կերպով զուել էին նրա կրօնասիրութիւնը, Սուլթանի հպատակութեան ու նրա հովանաւորութեան տակ մտնելու անկեղծ փափագն և արած գոհողութիւնները: Քուրդը իրը չնկատելով նրանց ժպտի տակ թագնուած կեղծաւորութիւնը, միամտաբար ընդունել էր գովասանքը, շնորհակալութիւն յայտնելով շռայլած բառերի համար և խոտացել էր ապագում անձնուիրութեամբ ծառայել ու իրապես արժանանալ նրանց այն համարումին, որ դեռ շատ վաղ կազմել էին իւր մասին: Պաշտօնեաները այնքան վարժ էին այդպիսի խորամանկ և պատիր խօսակցութեան, որ ոչ մի բառին ուշք չդարձրին, մեծ ցաւ պատճառելով քրդին:

Կարսից Արզուրում գաղթած նշանաւոր բեգերի և էֆէնդիների միջոցաւ շատ էր աշխատել մի կերպ ծանօթանալ և բարեկամանալ Բեգօ-բեգը վալիի՝ Փոսֆօր Մուստաֆա փաշայի հետ, բայց չէր յաջողել: Վալին հաստատապէս մերժել չէր էլ ուզել նրա երեսը տեսնել: Այս անյաջողութիւնը նրան սաստիկ վշտացնում էր և նրա ապագա գործունէութեան մի սարսափելի խոչնդոտ կարելի էր համարել այդ բանը... Թէև մի հարիւր ոսկի ծախսել էր վալիի մէքթուբջիի հետ ծանօթանալու համար, բայց նա վալիի երկիւղից նրան յայտնել էր.

—Բոլորովին զգուշանալ և ոչ մի պատճառ չտալ Մուստաֆա փաշային գրգռելու:

Այս սարսափելի նախազգուշութիւնը իմանալու համար հարիւր ոսկի էր ծախսել բեգը, նա, որ կարծում էր թէ խաբելու էր կրկին անգամ փաշաներին և հիւնքեարից իւր զոհողութիւնների փոխարէն Մէջիդիէ և Օսմանիէ պատուանշաններով էր վարձատրելու, Այս անյաջողութիւնը բաղդի անիւի ձախ պտոյտ գալն էր համարում բեգը...:

Բեգօ-բեգը Արզուրումի անյաջողութիւնից յետոյ, գիտենալով որ ամէն գործ կախում ունէր ստորին պաշտօնականների տուած զեկուցումից, որոնք

կուրաքար ընգուներում էին իրենց մեծաւորներից առանց կասկածի կամ բացատրութեան, աշխատեց որսալ Հասան-Ղալայի դայմադամին: Դայմադամը թէև յայտնի յարաբերութիւններից խոյս էր տալիս Բէգօ բէգից, բայց մի քանի ժամանակից յետո գաղտնի յարաբերութեան մէջ մտաւ: Բէգօ բէգը յաճախ գիշերները նրա տանն էր գանուում, երկար խորհրդակցում և ուրախ ժամանակ էին անցկացնում.... Այն ժամանակ դայմադամը Արգուբում Շէյխեան—Պապօյենց ունեցած երկու հարիւր լիրայի պարտքը, որ պաշտօն ստանալու համար վեր էր առել, վճարեց և ակնոցաւոր սեղանաւորը սխալմամբ իւր փաստաբանին հաղորդեց, որ այդ գումարը ստացել էր և հարկ չկայ խիստ միջոցների դիմելու: Փաստաբանը, որի գոյութիւնը Արգուբումի մէջ կախում ունէր վալիից, չուշացրեց զեկուցանել և այս դէպքը փաշային: Հասան Ղալայի դայմադամը մի ազդարարական թուղթ ստացաւ վալիից, որտեղ թէև անուն չէր գրւած, բայց հեռւից կարելի էր հասկանալ, թէ Բէգօ բէգի հետ պէտք է զգոյշ վարւել:

Դայմադամը բացատրեց հանգամանքը Բէգօ բէգին, միանգամայն խմացնելով, որ ինքը եղել է և կմնա միշտ նրա բարեկամը, բայց երկուսի օգտի համար մի ժամանակ պէտք էր դադարացնել բոլորովին իրենց անձամբ յարաբերութիւնները, լրտեսներին պատանձեցնելու համար և գործերը կատարել մի այնպէս երրորդ անձի ձեռքով, որ ոչ ոք կասկած չկարողանար կազմել: Բէգօ բէգը համաձայնեց, միանգամայն շնորհակալութիւնը յայտնեց, որ իրեն զգուշացնում

էր: Այս բոլորի պատճառը նա ինքը լաւ խմանում էր:

—Դեռ ձախ է պտույտ գալիս, դեռ պէտք է իւղոտել ճախարակները...:

1883 թ. այնքան առատ էր բուսականութիւնը, որ ինչպէս ասում են աշխարհք լիացաւ: Փասէնի եօթը տարով դատարկ մնացած ամբարները լցւեցին և ցորենի գինը համարեա պատերազմից առաջ եղած սովորական գնին իջաւ: Հայի, Թուրքի, Թուրքմանի, քուրդի բոլորի բաժինը Աստւած հասցրել էր, բայց Բէգօ բէգի բոլոր արտերը փչացան, որը կարկուտը տըրորեց, որը մրսեց, կամնալի հատիկները չևացան, որը մուկը կորեց, որն էլ արեգակն այնպէս սլրեց, որ ցորենը թափւեց մնաց արտի մէջ գալիք տարւան սերմացու: Բէգօ բէգը Պարսից բերած քսակի բերանը բացած ցորեն էր գնում մանր ու խոշորին կերակրելու. քչւոր չէին. ծառաներով և հովիւներով մօտ հարիւր հոգի էին: Դեռ կերածից ջոկ հետևեալ տարւա սերմացու էլ պէտք էր գնել, քանի էժան էր:

Այս դեռ բաւական չէր ձախորդութիւնները իրար էին յաջորդում: Աշնան մի գիշեր սաստիկ անձրևներից փլւեց գոմի և ախոռի պատը և քանի գլուխ եղ ու ձի մնացին ծածքի ծանր փայտերի տակ: Հակառակի պէս անձրևները չէանի պէս գալիս էին ամեն օր, կարծես երկնքում ջրերի ամբարների յատակը մաշւել, ճեղճղւել էր և հրեշտակները առատ թափում էին ջրերը առանց միջոց տալու որ Սողանլուխ

անտառից ատաղձ հասցնեն ու կարկտնեն, ձմեռն էլ վրա էր հասնելու և կենդանիները դուրս էին մնալու ձմեռուա բքերին։ Թեթև բաներ էին, այսպիսի աննշան վնասներով թէև Բէգօ բէգի Մէջիդիէ լիրաները, պօլու իմպերիալներն ու հարիւրանոց ասեգնացիները չէին հատնել, բայց լաւ նշան չէր, ձախորդութիւնը անհաճելի է, կուզէ մի ձու ընկնի փչանա, կուզէ մի ձի...։

ԻԲ

ԵՐՈՒՍԱՂԷՄՑԻ ՄՂԴԵՍԻՆ

Անցան տարիներ, բայց ո՛չ Զաւահիրի բարկութիւնը իջաւ, ո՛չ Բէգօյի գազանական սէրը մարեց։ Երկուսն էլ մաշւում էին և Բէգօն հայելուն մօտիկ տալուց յետո հառաչում և ասում էր.

—Այնքան մաշեցիր ինձ, Զաւահի՛ր, որ ճերմըկեցի։

Զաւահիրը փոխանակ պատասխանելու, մի խոժոռ հայեացք էր գցում ոտից գլուխ, դիտում էր արհամարական հայեացքով, փակում աչքերը և այդ հայեացքը բէգի սիրտը սրից էլ խիստ էր վիրաւորում։

1885 թուականի Յունիս ամսում մի մղդեսի էր

եկել Երուսաղէմից Հասան-Ղալայի Վանքը ուխտի և եկեղեցում խնդրուածը կատարելուց յետո, դուրս էր եկել և յայտարարել ժողովրդին թէ...

—„Վեց հազարեա ունեմ, Սողոմոնի բոլոր հմայութիւնները սովորել եմ. ապագան տեսնելու և իմանալու վարդապետութիւնների գաղտնիքը գիտեմ, կարող եմ սիրահարեցնել, խռովածներին հաշտեցնել, տասը տարով բաժանուածներին միացնել, կորուստը գտնել, գողացուածի տեղն իմանալ, հիւանդի դեղ տալ, չբեր կանանց դեղ անել՝ երեխա ունենալու համար, դէրվիշի ու մօլլի չար գրերից ազատել..., վերջապէս ով ինչ ցաւ ունի, կարող է ճարը գտնել ինձ մօտ„։

Այնքան երկայն էր Մղդսու ճառը, որ վերջ չկար։ Նա ասում էր, որ ամենակարող, ամենագէտ և ամէնից նշանաւոր գուշակողն էր աշխարհի երեսին... Ամէնքը ուշադրութեամբ լսելիս քննում էին այդ անծանօթը, որ մի երկայն սև մանուսա էնթարի ունէր հագին, մէջքին ձեռքի լայնութեամբ հաստ կաշի գօտի և որի մէջ խրած էր դեղին պղնձեա արաբական թանաքաման։ Գլխին մի տեսակ սև գտակ ունէր, սըրունքները մերկ կեղտոտ ոտները երևում էին սև եամանու միջից։ Երկայն մազերը ցիրուցան էին եղել ուսերին, կարծ մօրուքից դեռ չէր լուացել ճանապարհորդութեան ժամանակ նստած փոշին, աղտի հետքերը նկատւում էին երեսի և վզի վրա։

Գիւղացիները խորշում էին այդ անկոչ մարգարէից, երեխները շուռ տւած հեռանում, բայց նա առանց ուշադրութիւն դարձնելու շարունակում էր

իւր հրաւէրը, գիտենալով որ անպատճառ այնքան բազմութեան գոնէ մի քառորդը ցաւ ունէր և վշտահարը ուշ, կամ շուտ պիտի դար իրեն գոնէր: Հետաքրքիրները դեռ ժամաւորը դուրս չեկած բոլորել էին գուշակի շուրջը և ամէն մէկը զանազան հարցեր էր տալիս, որոնց պատասխանները իսկոյն ստանում էին: Մղդեսին այնքան ճարտար էր, որ ամէն մարդ նրան լսում էր հաճութեամբ և ամէնքը աշխատում էին մի կերպ օգնել այդ օտարականին: Վանքի բակում մի խուց էր տուել նրան վանահայրը բնակւելու:

Ուրբն օր չանցած Հասան-Ղալա քաղաքում, Փասէնի գիւղերում, ամէնի տանը խօսում էին Երուսաղեմցի մղդուսու մասին և արդէն գովում նրա հրաշագործութիւնները: Նա մի գիւղում մէկ գիւահարի էր ազատել, մի ուրիշ գիւղում եօթը տարուա ջերմողին մի քրչի կտորի կապով էր ազատել, մէկին մուրազին էր հասցրել և մի ուրիշին եօթը տարուա կուաճ կնոջ հետ էր հաշտեցրել: Ծօսում էին, գովում և գովասանքով մինչև երկինք բարձրացնում:

Մղդեսու Մկրտիչ անունը Մկրատի էին փոխագրել, ասելով որ մկրատի նման կտրում է մարդու ցաւը և դէն գցում:

Մղդեսի Մկրատի ձայնը հասել էր Բէգօ-բէգի ականջը, նա էլ ցանկացաւ օգտւել այդ բազդախնդրից:

Բէգօ-բէգի նւիրակները եկան վանք և Մղդեսի Մկրտչին տարան դէպի Ա.—գիւղը: Բէգօ-բէգը սիրով ընդունեց, ճոխ սեղանով կշտացրեց երեք ու կէս արշին սև մահուդ տւեց անմիջապէս դերձակին, որ մի ֆարաջա կարի Մղդեսու համար: Հաւ ընդու-

նելութիւնից յետո Մղդեսու հետ առանձնացաւ և յայտնելով իւր ցաւը՝ ճարը խնդրեց:

Բէգօ-բէգը խնդրում էր, որ իրեն հաշտեցնէ Ջաւահիրի հետ: Մղդեսին բաց արաւ իւր գիրքը և երկայն հաշւելուց յետո, երեք օր ժամանակ և տան մէջ լիակատար ազատութիւն խնդրեց:—Ի՞նչ որ քէյֆդ կուզէ, ասաց Բէգօ բէգը, տանը կա, Տրամայիր, թող բերեն, ինչպէս որ սիրտդ կուզէ, այնպէս շարժւիր, ամէն մարդ քեզ հնազանդելու է, թէ տանս մէջ և թէ հարէմում: Մի քանի ժամ յետո Մղդեսին փոխադրւեց Բէգօ-բէգի կանանոցը:

—Բէգ, ասաց Մղդեսին գիրքը բաւական շրջտելուց յետո, Ջաւահիր—խանումի և ձեր մէջ տարաձայնութիւն ընկնելիս դեր է խաղացել մէջտեղում մի կին, պէտք է մեւնոյն կինը խաղաղութիւն գցի ձեր մէջ: Այդ կնոջ անունն է.....Զէ.... գրքի երեսները կրկին անգամ ետ ու առաջ շուռ տւեց և մատը մի տեղ դնելով ասաց, Զելօ:

Բէգօ բէգը մտքումը ասաց, շատ ապրես, հիմի համոզւեցա, որ պիտի կարողանաս կապել իմ ու Ջաւահիրիս սրտերը...:

—Ես ուզում եմ Զելօյի սենեակը գնալ, ասաց Մղդեսին, բայց դու պէտք չէ որ գաս, մի պառաւ կին թող ներս գա ինձ հետ և հրամաններս կատարէ...

—Փաթի, Փաթի, կանչեց բէգը և պառաւն իսկոյն ներկայացաւ:

Մղդեսին ինչ որ կասի, շարունակեց բէգը հրամայելով պառաւին, այնպէս կկատարես ամէն բան,

առանց աւելորդ խօսքերի։

—Գլխիս վրա, բէգ, գլխիս վրա։

Մղդեսին պառաւի հետ մտաւ Զէլխալի սենեակը և բարևեց։ Զէլխան առանց երեսը ծածկելու, առանց բարևն ընդունելու, պատասխանեց.

—Դու ի՞նչ գործ ունես իմ սենեակում, քեզ ո՞վ իրաւունք տւեց այստեղ մանելու, դո՛ւրս, դո՛ւրս, դո՛ւրս կորի՛ր...

—Աղաչում եմ, ների՛ր ինձ, լսի՛ր երկու խօսք և յետո էլի կարող ես դուրս անել...

—Ես չեմ ցանկանում քեզ լսել, դո՛ւրս, դո՛ւրս...

—Բայց յետո շատ կզղջաս, թէ ինչի՞ Երուսաղեմցի Մղդեսուն դուրս արիր քո մօտից, թէ ինչի՞ ցաւերիդ մասին նրանից մի խորհուրդ չհարցրի՛ր... ապագայիդ մասին մի բան չտեղեկացար...

—Կարիք չունեմ... բանի պէտք չունեմ...

—Աշխարհի վրա մարդ չկա, որ ցաւ չունենա, թագաւորներն ու թագուհիներն անգամ կարիք ունեն, լա՛ւ իմացի՛ր, որ իմ գուշակութիւններից դու պէտք է շատ գոհ լինես և շատ չգիտցածդ բաներն իմանաս...։ Այնպիսի՛ դաղտնիքներ, որ հազար կիներից մէկն արժան չէ լինում լսելու...։

Զէլխան Մղդեսու ձայնը և խօսակցութիւնը ծանօթ էր համարում, աչքը, ունքը նմանեցնում էր մէկին, բայց չէր կարողանում համոզել և հաւատալ աչքերին ու ականջներին։ Նա վճռեց թոյլ տալ Մղդեսուն շարունակելու իր ճարտարախօսութիւնը և այնպիսի դիրք բռնեց, որ էլ լաւ կարողանա դիտել նրա դէմքը։

—Թէ գուշակութիւն անել գիտես, գանձերի տեղն իմացիր և հաստատի՛ր, էլ ինչի՞ ես դռնից դուռ մուրալով մարդ գալիս։

—Մենք զրկւած ենք վայելելու մեր աշխատանքի արդիւնքը, մեզ տալիս են միայն այդ արդիւնքից սովամահ չկորչելու չափ, Զէլո խանում...։

—Անունս էլ գիտես, դէհ, ասա տեսնենք, ես ո՞ւմ աղջիկն եմ, քանի՞ տարի է կին եմ, ո՞րքան եմ ապրելու։

—Դու ծաղրում ես ինձ, բայց շուտով պիտի համոզւես, որ ես այն քու կարծածդ չիմար գրբացներից չեմ... Ասացէք, թո՛ղ մի թաս ջուր բերեն և խընկամանով խունկ ու փորձեցէք...

—Փաթի՛ր, գուշակը մի թաս ջուր է ուզում և խունկ, բե՛ր, տեսնենք, ինչ է յայտնելու։

Մղդեսին գլխով նշան արաւ և Փաթին հեռացաւ հրամաններըը կատարելու։

—Ես յոյս ունեմ, որ դուք էլի առաջւա Զէլխան էք և չէք թոյլ տալ...

—Դու... ասաց Զէլխան և ձայնը ընդհատեց նկատելով, որ Մղդեսին մատը բերանին էր տարել...

—Դերեզմանից անգամ մեռելները բարձրանում են ինձ պատասխանելու և յայտնելու իրենց ցաւերը, մորմոքներն ու բողոքները... ասաց Մղդեսին։

—Բայց Աստւած իմ, ախո՛ր...

—Աստւած արդարին ոյժ կտա անիրաւին ոտքերի տակ գցելու և անմեղի վրէժը կլորբոքէ նենգաւորին ճմլելու համար։

—Բայց դուք...։

—Արգարութեան ձեռքը բաց է անում փականքները, քանդում է պարիսպները և հարթում է ճանապարհը, որ անմեղն անցնի, անպատիժ չարագործին տանջելու համար...

Փաթմանն ներս եկաւ մի ձեռքը խնկամանը, որից բարձրանում էր Արաբական ընտիր խնկի ծուխը, նորա ետևից երկու աղախիններ բերում էին երկու գեղիցիկ քանդակներով փայտի պատուանդաններ, գոյնզգոյն ներկած: Մղդեսին հրամայեց, որ սենեակի մէջ դնեն ու հեռանան: Փաթին իբր չլսեց այդ հրամանը: Մղդեսին մօտեցաւ Փաթիին և ականջում ասաց.

—Դնա՛, երկու կտոր ուռի ճիւղ գցիր կրակը վառիր և անուշն ու մոխիրը բեր լից խնկամանը:

—Փաթին հնազանդեցաւ:

—Բայց ինչ է միտքդ...

—Դիտէս, որքան տանջանքներ եմ քաշել,

—Դիտեմ, իսկ մեզնք...

—Անմեղ տանջուողը, կարող է զգալ...: Բայց ժամանակ է արդէն ազատելու և հատուցումը տալու...

—Բայց նա, նա որտեղ է...:

—Թէ շատ ցանկանում ես, կարող ես տեսնել՝

—Աստուած իմ, Աստուած իմ...

—Միայն այսպիսի տանջանքներից ազատելուց յետո, կարող ենք նրան հաստատապէս հաւատալ, նրա մեծութիւնը դաւանել, նրա ահաւորութիւնը խոստովանել...

—Ես գնամ, աւետիս տամ Ջաւահիրին...

—Զգույշ, դեռ ժամանակը չէ: Նախ նորան հանդարտութեամբ կլայտնես, յետո կասես, որ քիչ էլ համբերէ, մինչև գործը կանոնաւորապէս կարգադրւի: Ասա՛, որ ես դեղ անելու եմ գնալու նորա մօտ, իրեն ինչ որ պէտք է կխօսեմ: Թող սիրտը պինդ պահէ, ոչ մի ուրախութեան նշան ցոյց չտա:

—Բայց նա կգժւի, եթէ իմանա, որ նա եկ...:

—Դու հանդարտութեամբ կպատմես ամէն բան և նա պատրաստ կլինի ինձ...:

Փաթին ներս մտաւ:

—Կրակ չեղաւ,

—Աղախինները պատրաստում են, շուտով կբերեն...:

Բէգօ բէգի հաւատարիմը զգուշանում էր, որ դեռահաս մղդեսին չլինի, թէ զանազան աւելորդ խօսակցութիւն ունենա Ջելխայի հետ:

ԻԹ

ՂԱՋԱՂՆԵՐ

Մղդեսի Մկրտիչը մկրատի պես դեղ արաւ կտրեց բէգի սիրելի կնոջ ցաւը, ինչպէս խոստացել էր, երեք օրւա մէջ բոլորովին բժշկեց և երրորդ իրիկունը Ջաւահիրը այնպէս ուրախ դիմաւորեց Բէգո բէգին, որ կեանքումը քուրդը այդքան բերկրանք և հաճոյք չէր զգացել...: Այդ ուրախութիւնից յափշտակած՝ կեանքը, հոգին, գանձը, ամէն բանը դրեց գցեց Ջաւահիրի ոտքերի տակ, խոստանալով միանգամայն, որ եթէ իրեն այդպէս սրտանց շարունակէ սիրել, պատրաստ է նորա ստրուկը դառնալու:

Ջաւահիրը այնպէս շարժւեց, որ Բէգո-բէգը ուրախութիւնից թեթևացած, կազդուրւած և երիտասարդացած զգաց իրան:

Մղդեսին խո՛ մեծ մեծ վարձատրութիւններ ստացաւ, էլ պէս պէս շորեր, զանազան զարդեր, ոսկի ժամացոյց, շղթակ մատանի, մի քսակ լիքը ոսկի, ընտիր Արաբական նժոյգ, իրեն բոլոր սարքովը, խայի, կարպետ, մի խօսքով բէգի արժան նւէրներ... Նա այդ

բոլորը տեղափոխեց Արզուրում, այնտեղ տուն տեղ եղաւ և սկսեց աղավորի ապրել: Բայց Արզուրում երկար չմնաց, բոլոր ունեցածը Հաւատարիմ ծառաներին յանձնելուց յետո, նա ետ եկաւ և ութ տասն օր հիւր մնաց Բէգո-բէգի տանը, որտեղ գլխի վրա տեղ ունէր և ամէն օր զանազան ցաւի տէրեր էր ընդունում, կամ հրաւիրւում ուրիշ տեղ ճար անելու: Փասէնի ամէն բէգերը ու աղաները անխնա վարձատրում էին Մղդեսի Մկրտիչին և նա միշտ լիքը քսակներ ուղարկում էր Արզուրումի սարրաֆներին շահեցնելու: Ծասներկու տոկոսով բոլոր սեղանաւորները պատրաստ էին փող ընդունելու, բայց Մղդեսին լոյս տեսած արդար մարդ էր, տասը տոկոսով էր տալիս փողը սարրաֆ Դաւիթին:

Այդ օրերը Բէգո-բէգի մի նախիր (հարիւր գլուխ) ընտիր եզները քշել էին Նարիմանի միջից տանելու Օլթի և ցրւել: Բէգո-բէգը հետքը գտել էր, բայց էլ չէր կարող Ռուսահան հողը ոտք կոխել, իսկ այնպէս հաւատարիմներ էլ չունէր, որ կարողանար նրանց ձեռքով վրէժ լուծել: Մ՛անրամասնութիւնները իմանալու և իւր թշնամիների անձնաւորութիւնների հետ ծանօթանալու համար բէգը Նարիման գնաց և ճանապարհներին գիւղից գիւղ ամէն տեղ մտնելով, ում որ տեսել էր, կամ մի բան իմացել էր, նրան պատմել էր տալիս գիտեցածները: Սակայն աւազակները սովորական մարդիկ չէին երևում և այս բանը աւելի հետաքրքրում էր Բէգին: Նա դեռ շարունակում էր իւր խուզարկութիւնները, երբ Օլթիից ճանապարհորդներ անցկացան և սկսեցին նկարագրել Քէրեմ աւազակի

արարքները Բօրչալուի Քեարվանսարա գիւղի մօտերքը, Փամբաքի ձորում և ուրիշ տեղեր, թէ ինչպէս յանկարծակի նա երևում էր առաւօտ մի գաւառում, ճաշին մի ուրիշում և երեկոյեան բոլորովին աներևակայելի մի գիւղում հանգստանում։ Թէ ինչպէս որոնում էին այդ աւազակին և կարծում էին, որ անցած լինի սահմանը դէպի Թիւրքիա։

Այս լուրը բաւական հանգստացրեց բէգին, նա վեր կացաւ գնաց իւր գիւղը համոզւելով, որ Քեարիմի ձիաւորները քշած տարած կլինեն իւր նախիրը և բէգի տեսակէտով քաջը արժանի էր իւր այն վարձքին, որ արի զօրութեամբ տանում էր։ Մի նախիրը արժէր երեք չորս հարիւր ոսկի, այդ էլ մեծ կորուստ չէր բէգի համար, եթէ մի կերպ կարողանար ծանօթանալ Վալիի, կամ Վիլայէթի ժողովականների հետ, մի տարում իւր կորուստների տասնապատիկը ետ բերելու հնարը գիտէր, նա միայն ցաւում էր, որ Փօսֆօր Մուսթաֆա փաշային չէին փոխում իւր պաշտօնից...

Մղդեսի Մկրտիչը ոչ միայն ազատ համարձակ ման էր գալիս բէգի տանը, նա միշտ աներկիւղ մտնում էր և բէգի հարէմը։ Փաթին թէև դժգոհ էր այս ազատ ել ու մտից, բայց իրաւունք չունէր հակառակելու, բէգը ասել էր, որ Մղդեսին դեռ դեղերը շարունակում էր, թող երբ ցանկանում է մտնի։

Միայն Փաթին միշտ լրտեսում էր։ Իսկ Ջաւահիրը, կամ Ջէլխան էլ այնպէս չէին շարժւում, որ բռնւէին։ Մղդեսին, երբ բէգը տանը չէր լինում, էլ ազատ էր շարժւում և Փաթիին հարկաւոր

դէպքերում հեռացնելու համար շատ չէր մտածում։

Բէգօ բէգը Նարիմանից ետ դարձած իրիկունը մի ձիաւոր եկաւ և մի թուղթ տալով Մղդեսուն, ասաց որ Ռոստոմ բէգը ուղարկեց։

—Հա՛ն, ասաց ծանրութեամբ Մղդեսին, ինչ կա, խօ էլի խանումը չէ փրփրել...

—Չգիտեմ, ասաց ձիաւոր քուրդը, ինձ ասաց, որ առանց քեզ չդառնամ...

—Լա՛ւ, գիշերս կաց, էգուց գնանք։

—Գիշերս պէտք է գնալ...

—Մութ է.

—Ինձ հրամայեց.... ասաց թղթաբերը և կանգնեց դէմ ու դէմ։

—Մղդեսի՛, ասաց բէգը, ով գիտէ ինչ անճար հիւանդ ունի, վեր կաց գնա։ Քանի մարդ կուզես հետդ տար, մի՛ վախիր։

Չեմ վախենում, բայց ուզում էի գիշերս չը չարչարւել։

—Այդ շնորհքն ունեցողը պէտք է քիչ չարչարւի որ տանջւողներին ազատի։

—Վախենամ Քեարիմի խմբին պատահեմ, նա մեր սահմանն է անցել։

—Քեարիմից մի՛ վախենալ, նա քեզ կվարձատրէ մինչև անգամ։

—Եա՛ բաղդ, պիտի երթամ,

—Ո՞վ է այդ Ռոստոմ բէգը.

—Ջալալենցի է Ալաշկերտի սարերում...

—Մի օր կծանօթացնեմ։

Մի ժամ վերջը Մղդեսին քուրդ ձիաւորի հետ

Փասէնը թողած մտնում էր Ալաշկերտի սահմանը։ Կէս գիշերն անցկացած էր, երբ նրանք տեղ հասան։ Գամփռներն ու կօլօները նրանց ճանապարհը թէև կտրեցին, բայց պահապանները շներին զսպեցին և Մղդեսին ներկայացաւ Ռոստոմ բէգին։

—Բարօ՜վ, Մղդեսի, դու հազար բարի եկար...

Ռոստոմ բէգը հայերէն էր խօսում։

—Ձեզ էլ բարով տեսանք, առո՞ղջ էք, անվը-նա՞ս...

—Հա՛ւ, յաջողակ։ Դու ի՞նչ արի՛ր, ի՞նչ եղաւ։

—Նարիման պատմել են, որ Քէարիմը քաջագործութիւններ է անում և նա համոզւել է, որ նրա մարդիկը նեղութիւն ունենալով, տարել են իրանց ծախսի փողը դուրս բերելու...

—Այդ ոչինչ, ի՞նքը...

—Հիմվին անհոգ, մինչև անգամ մտածում էր մարդ ուղարկել Քէարիմի մօտ նւէրներով և խընդրել, որ նեղութիւն ունենալիս մարդ ուղարկէ և որքան փողի կարօտութիւն որ ունենա, տանի։

—Դու ինչ խօսեցար։

—Խորհուրդ տւի շտապելու և բարեկամութիւն կապելու։ Հաւ աստղի տակ է ծնւած ասի Քէարիմը և ժամանակին մեծ մարդ դառնալով կարող է պէտք գալ...

—Հա՜ւ. չոդարներն (կենդանիների վաճառական) ինչ եղան։

—Շամցին իրիկուն մարդ էր ուղարկել իմանալու, թէ Բէգօն վերադարձել էր։ Բէգը պատասխանեց, որ երկու օր յետո գան և սկսեն խօսակցու-

թիւնը։

—Եղբօրից տեղեկութիւն կա՞.

—Այո՛, Սագօն ոչխարը ճանապարհ հանելու հրաման ստանալու համար մարդ էր ուղարկել բէգի մօտ, պատասխան տւեց. որ կամաց-կամաց իջան դէպի հարաւ։

—Շամցի չոդարը քանի՞ սւրի գնելու միտք ունի։

—Բոլորը պիտի գնէ, որ մրցող չունենա իւր դէմ Հալէբի և Շամի վիլայէթներում։

—Հաստատ իմացա՞ր, քանի՞ սւրի ոչխար ունի։

—Երեսուն։ Բայց տասը սւրին ընկերովի է, քաղաքացի երկու երեք հարուստ հայեր ընկեր են։

—Աւելի լաւ։ Բայց Շամցին այդքան փող կարող է հասցնել, որտեղի՞ց պիտի տա։

--Շամցին երկու, երեք անգամ ինձ մօտ կըրկնեց, որ փողս պատրաստ է, կանխիկ ստացիր և յետո ճանապարհ հանիր ոչխարները։

--Այդքան փող ինչպէս կարելի է մօտն ունենալ կանխիկ...

—Կարծում ես, որ փողը հետը Շամի՞ց է բերել, երբէք. հիմի այս դարում ո՞վ է հետը փող ման ածում։ Շամցին Եկաւեկաւների բարեկամն է, Հալէբում փողը յանձնել է Եկաւեկաւների սնդուկին և մի կըտոր թուղթ ձեռքը՝ եկել է Արզրումում Տէյթան—Պապօյի մօտ, որի կասսում ուզածդ ժամին միշտ կա այնքան կանխիկ ոսկի, որքան որ պէտք լինի....

—Այդ լաւ չէ, փողը կմնա Տէյթան-Պապօյի սնդուկում և կտոր կտոր դուրս կգա, որքան հարկա-

ւոր լինի քրդին: Այդ լաւ չեղաւ:

— Նրբէք, Արաբկեցին քրդին ոսկոս չի տալիս, քուրդն էլ չի խեղդւում: Նա մանաւանդ քուրդը չի էլ ուզում Շէյխ-Պապոյի երեսը տեսնել. մէջերը մի ինչ որ անհամաձայնութիւն կա...: Շամցիին բէգոն ասաց, թէ ես փոդս իմ տանս մէջ կոտանամ, Շէյխ-Թանի, Նկաւեկաւի տունը չեմ մտնել: Ձոդարն համաձայնեց:

— Նթէ այդպէս է, քու այստեղ մնալդ աւելորդ է, դու պիտի առաւօտ ետ դառնաս և այսօրւա մարդուն հետդ տանելով՝ հարկ եղածները պիտի հաղորդես: Հիմի ուշ է, եթէ սոված ես, քիչ կաթ խմիր, պառկիր: Առաւօտ մեսին նախաճաշ կանենք և յետո կերթաս:

— Ես դադրած եմ, պէտք է հանդստանամ:

— Այստեղ անկողնում պառկիր, ասաց Ոստոմը, ես կաթնատանը կքնեմ:

Մղդեսին պառկեց և թէև շատ էլ յոգնած էր, բայց երկար ժամանակ չկարողացաւ քնել:

Ոստոմի վրանները տարածւում էին Ջրաբաշի սարերի վէշերի վրա, Հայաստանի կեդրոնում և Այրարատի սրտում: Օդը քաղցր, մեղմ և առողջարար, բերքերով ու բարիքներով լիքը, նրա արօտատեղիներում ու հարթութիւններում արածող խաշների ու հօտերի ոչ թիւը կա, ոչ համարը...: Մղդեսին քուն ընկնելիս լուսաբերի գալուն քիչ էր մնացել:

Արշալոյսը արագ քայլերով Մասիսից թռել, Բարդող սարերի Ջաղակ լճակի սառը ջրերում լողացել ու զովացել, մանիշակագոյն սաւանումը փաթաթած բարձրացել էր Սուկաւէտի ալևոր վառահեղ գագաթին (Ջէօսա—դաղ)՝ աւետելու Փասէնի գաւառներին իւր հօր Լուսո գալուստը և առանց կանգ առնելու շտապել էր Բարձր—Հայք: Լուսաբերը դշխուհուն տեսնելու սէս նոր կեանք առած թմրութիւնից, քնից ու նիրհից սթափել էր ողջ աշխարհն, ամէն կողմ եռ. էր գալիս կեանքի շարժումը, ոչխարների և կովերի որոտագին ձայներ էին լսւում, որոնք մայելով ու բառաչելով որոնում էին իրենց ձագերին: Դոմերից, վրաններից, փակւած ու կապկպւած տեղերից իրենց սնուցանողների ձայներից զարթած անհամբեր նրանց գտնելու և նրանց կենսատու ստինքների կենսաբար կաթնովը կշտանալու, սիրելու և լիզելու համար աղիողորմ ձայներով արձագանք էին տալիս գառներն ու հորթերն: Այնքան էին շտապում անմեղ արարածները, որ առանց զգալու իրենց վզերի կրկալն ու կրկապը, դէպի իրենց ծնողները ցատկրտելիս, քիչ էր մնում գլորւէին և խեղդւէին: Մինչ ժլատ պառաւները դանդաղ կերպով արձակում էին հորթերի կապերը, որ չլինի ծծեն և տէրերի բաժին կաթը քիչ թողնեն, ուժեղները կարաւում էին իրենց կապերն և գնում իրենց սնուցանողներին: Ամէն կողմ տարածւած հաբս, աղջիկ քուչաները թևերին, կթում էին կթամաններին և քշում դէպի նախիրը: Փոքրիկ հովիւները մահակները ձեռքերում առաջները խառնած իրենց խաշներն ու հօտերը՝ սկսեցին սփռւել ջրառատ

սարերի զանազան արօտներում։ Օդը զով, երկինքը պարզ, բոցափայլ արևն էլ արևելքից մի միւնուճի բարձրութեան բարձրացել էր, երբ մեկը զգուշութեամբ բաց արաւ Մղդեսու քնած վրանի մուտքի վարագոյրը։

Մղդեսին քնած էր, գիշերը հոգնել էր, հանգստութեան կարօտ էր։ Կրկին ծածկեց վարագոյրը կոճկեց և հեռացաւ։ Բայց համբերել չէր կարող, ինչպէս երևում էր, նա անհանգիստ էր, նա ուզում էր տեսնել Մղդեսուն։ Նրևի վիշտ ունէր, երևի սիրած աղջիկը մերժում էր ձեռքը, կամ անգութ ծնողները չէին զիջանում... թղթի գրի պէտք ունէր... Այնքան գնաց ու եկաւ, որ Մղդեսին զարթնեց։

—Օրը կէս է եղել, տնաշէնի տղա, այդքան էլ քնե՞ն։ Այնքան Մղդեսի, Մղդեսի, կանչեցին, որ դու էլ հաչի աղայութիւնը վրադ առար։

—Ի՞նչ անեմ, աղբէր, ուր որ գնում եմ, բլբուլ դաշակի վրա են պատկեցնում։ Քառասուն ձեռք ծառայութեանս են կանգնում, յարգս ու պատիւս իմ չափը կորցրել, է։ Այնքան փքեցնում են որ սովորութիւն է դառնում իմ մէջ այս մոլութիւնները։ Զգիտեմ, երբ են վերջացնելու դորձերս, որ ազատւեմ այս մոլութիւնից։

—Լաւ, դրանք կանցնի։ Դու ինձ ասա, ինչպէ՞ս է Ջաւահիրը։

—Շատ ու շատ բարև ունի, ասում է՝ գործերը այնպէս կարգի դրէք, որ Բէգօ բէգը էլ չկարողանա ետ տանել նորան... Շատ բանի համբերեցի, ասում է քաջասիրտը, պատրաստ եմ նրանց տասնապատիկն էլ տանել և տոկալ, միայն թէ իմ տանջանքների, իմ կրած զրկանքների, իմ կորուստների, իմ զոհերի ու զոհողութիւնների փոխարէնը անհրաժեշտ և սուրբ պարտքս է վերադարձնել Բէգօլին...։

—Այդ մասին թող անհոգ լինի, բայց պիտի կարողանա՞ տոկալ...։

—Ինձանից, քեզանից լաւ... Նորա մէջ մի այն պիսի սիրտ կա...

—Բայց ինչ յարմարել է քեզ քրդի շորերը...

—Ինչպէս որ քեզ Մղդեսու շորերը... Ա՛յ տըղա՛, վերջը տէրտէր չդառնաս...

—Ով շատ է կարդացել, նրանից վախենալու է։

Լ

ՁՈԴԱՐ

—Բարի լոյս, այդքան շո՞ւտ զարթեցրին քեզ, ասաց ներս մտնելով Ռոստոմ Բէգը։

—Ձթողին քնելու, ձեր վրաններում իմ պա-

տիւս այնքան շատ չեն պահում, ինչպէս Բէգօ բէգի տանը։

— Որ այդպէս է, գնանք կնոջս վրանը, փորձով տեսնենք, քեզ պատւելու համար ինչ ուտելիք է պատրաստել մեր տանտիկինը։

Մղեսին Ռոստոմի հետ հետացաւ։ Նրանք լուռ գնում էին։ Ամէն կողմ, ամէն մարդ իւր գործին էր, պարապ և անգործ ոչ ոք չէր երևում։ Մղեսին ճանապարհին աչքը չորս կողմը շուռ տալով, հիանում էր այն կարգ ու սարքի վրա, որ տիրում էր Ռոստոմ բէգի վրաններում։

Մի քանի քայլ յետո նրանք կանգնած էին տանտիկնոջ վրանի դռանը։ Մղեսին աչքերը ապշած այն ընդարձակ տեսարանի վրա, որ ներկայանում էր վրանի դռան առաջ, անհնում էր այն անթիւ ծխերն, որ բարձրանում էին դաշտի և բարձրաւանդակների զանազան գիւղերից։

— Հերիք, հերիք դիտես այդ տեսարանները, շտապիր փորդ կշտացրու և հետացիր...։ Գնա գործիդ և ինձ մի տեղեկութիւն շուտ հասցրու։

Մղեսին նեղս մտաւ։ Նահապետական սեղանը բաց էր և Մղեսին Ռոստոմ բէգի հարցերին պատասխանելով՝ նախաճաշեցին։ Այդ նախաճաշը մի ժամից աւել տևեց, որի ընթացքում աւելի խօսեցին, քան թէ կերան։ Սեղանը հաւաքեց Ռոստոմ Բէգի աղջիկը Նաղուէթը։ Մղեսին աչքի տակով դիտում էր այդ շուտ անմեղութիւնը, դիտում էր նրա կուսական անարատ դէմքը, հրացայտ սև սև աչքերը, լայն վերգակի նման ոդորկ և թափանցիկ ճակատը, վարդ

նախանձը զրդուող այտերն ու շրթունքները, պտտում էր ազահութեամբ և չէր կշտանում։ Այնքան էր զբաղած մտքով Նաղուէթի մասին, որ Ռոստոմ բէգի վերջին հարցերին անմիտ ու անկապ պատասխաններ էր տալիս։

— Գնամ, ասեմ՝ ձիդ պատրաստեն։

Մղեսին վազ էր սպասում նրա հետանալուն։ Դեռ Ռոստոմ բէգը երեք քայլ չհետացած, սարի ետևում Մղեսին և վրանի վարագոյրը բանալով նշաններ Նաղուէթին... Անտիկան օրիորդը կարողով կանչեց

գրկեց օրիորդին և գլուխը տեղաւորելով նորա կրծքի մէջ՝ շարունակեց, տեսնո՞ւմ ես, այրուում, տոչորուում եմ, և հնարաւորութիւն չկա սրտիս կրակը մեղմացնելու և միակ ուրախութիւնս, որ քեզմով սկսեց և քեզ մօտ միայն կարողանում եմ զգալ, այնքան կարճատև է լինում միշտ, որ պապակս չյագեցրած պարտաւորւում եմ հեռանալու...:

—Գիտեմ, զգում եմ, հոգիս, իմ էլ միակ ուրախութիւնս ու մխիթարութիւնս էն է, որ քո զգայուն սիրտը իմ սիրոյս տեղ է տւել, քո գառնութեամբ և վշտերով լի սիրտը ինձ կանչել է սպեղանի լինելու իրա դժւարաբոյժ վէրքերին: Միակ երջանկութիւնս է խնամել այդ վէրքերը և այնպէս բուժել, որ նրանց հետքերն անգամ չնչին... իմ էլ...: Իմ սրտիս ամէն մի բաբախումն էլ քեզ է կանչում, քու անունդ է հնչում, աչքերս թէ քուն թէ զարթուն միայն քեզմով են զբաււած... Գնա, գնա, Դուրգէն ջան, այդ գործիդ, բայց լաւ գիտցիր, որ մինչև վերադարձդ միայն քեզմով է զբաղւած լինելու այս սիրտը: Այս ասելով դէյուհին մի այնպիսի համբոյր դրոշմեց Մղդեսու ճակատին, որ վերջինս արծւի նման թև առաւ սլանալու դէպի այն գործը, որի յաջող վերջաւորութիւնից յետո, նրան բաղդը խոստանում էր երջանիկ և խաղաղ կեանք:

—Մղդեսի, ձիդ պատրաստ է, ասաց ներս մտնելով Ռոստոմ բէգը:

—Մայրիկ, մնաք բարով, ասաց Մղդեսին և Նաղուեի ձեռքը շրթունքներին մօտեցնելուց յետո, դուրս եկաւ վրանից լիայոյս և բաղդաւոր...:

Իրիկնադէմ Մղդեսին մտնում էր Ա—գիւղը մենակ, Բէգօ բէգի ծառաները անմիջապէս նրան դիմաւորեցին և նա տան անդամի նման ամէն կողմ մտնելով իւր վերադարձն էր յայտնում:

—Մղդեսի, դու որ մեր տունն ես գալիս, ուրախութիւն, ծիծաղ և խնդում ես բերում: Ալլահը գիտէ, որ քեզանից առաջ ես միշտ տխուր էի անցկացնում:

—Ես ուր որ գնացել եմ, բաղդը հետս է եղել և միշտ յաջողակ ամէն բանած գործիս մէջ:

—Ջու գալուց յետո, գիտես թէ բաղդիս անիւն էլ դարձաւ. առաջ միշտ ձախ էր գնում, հիմի յաջողութեան նշաններ է երևում...:

—Նրա համար, որ ձեր տանից լացը կարեցի, ողբի և անէծքի առաջն առա, հիմի, որ առաւօտները էլ թախծալի տխուր դէմքեր չես տեսնում, գործիդ աջողելուն էլ կասկած մի ունենալ:

—Հոգի ես, հոգի, Մղդեսի, Ալլահը գիտէ, որ ուղիղ եմ ասում: Էգուց Շամցի Զոդարը գալու է, թէ ոչխարը ծախեցի, երկու հարիւր ոսկի պիտի տամ, որ Արզուրում քրէհածդ տները գնես և այնտեղ բնակես սարսափելի անել ու փողերս շահեցնել...:

—Գլխիս վրա, բայց Սարսափութիւն անելը լաւ չէ, էլ չեմ կարող քեզ նման բէգերի ցաւին ճար անել ու նրանց սիրտը գրաւել ...:

—Ծնաչէնի տղա, ասաց բէգը ծիծաղելով, ով է ձեռքդ բռնելու, այն էլ արա, այն էլ ....

—Դու ողջ եղիր, ինձ էլ ինչ կպակասի...:

—Ես գիտեմ, ես ինչ որ կասեմ, դու այնպէս

շարժուիր: Փողերը ինձ պէտք չեղան ժամանակ շահեցուր, ինչ որ բերէ, քեզ էլ, ինձ էլ...: Աստուծուն փառք, գիր ունիս, դալամ ունիս, մէկ ցիների համար հմայիլ գրիր, մէկ էլ տոկոսով դուրս տուած փողերիդ մուրհակ, երկուսն էլ օգտաբեր են: Ջիներից ստացածըդ քուկդ է ու քուկդ, տոկոսները ինձ հետ կիսիր:

—Օրը դա, բէգ, բարին էլ հետը, հեշտ է եթէ սկսենք, ամօթով չեմ մնալ...

—Ես գիտեմ, մի քիչ համբերէ: Միտքս շատ բան կա, Ալլահը թէ յաջողէ...

—Էգուց չոգարները գալու են:

—Այո, իրիկնադէմ մեզ մօտ կլինեն: Դու էլ էգուց տեղ չես գնալ, որ օգնես փողերն համարելուն: Ոսկիները պէտք է լաւ քննել, մաշուածները նեղութեամբ է ծախսւում հինգ տոկոս զեղչով:

—Անհոգ կաց, այդպիսի գործերում շատ վարժ եմ, աչքից չեմ փախցնի ոչ մի հատ:

Նոյն իրիկունը Մգդեսին Փաթիից մի քանի դեղեր առաւ և քուրդ ձիաւորի հետ ուղարկեց Ռոստոմ բէգին:

Հետևեալ իրիկունը երկու չոգար, երեք Արզրումցի վաճառականներ իրենց վեց ծառայողների հետ եկան իջան Բէգօ բէգի տունը: Ընդունելութիւնը և զանազան կեղծ ձևերը կատարուեցան արևելեան նենգաւոր խորամանկութեամբ: Բէգօ բէգը հրամայեց, որ

անմիջապէս չայով պատուեն իւր հիւրերին: Մգդեսին հսկում էր, որ ամէն բան կարգին լինի: Հիւրասիրութիւնը պատշաճ կատարելուց յետո, քաղաքից եկած վաճառականներից մէկը սկսեց ճառամաբանական մի ճառով բացատրել իրենց գալու նպատակը: Իբրև թէ յայտնի չլինէր նրանց ոչխար գնելու համար գալը, Բէգօ բէգը ծանր ու մեծ նոր բան իմանալու ձևով լսում էր նրանց առանց ընդմիջելու: Երբ վերջացրեց այդ առաջարանը, բէգը պատասխանեց.

—Ոչխարները ծախուելու համար են հաւաքուած, ինչս նրանց մեծացնում եմ, անթիւ հոգսերը քաշում, այնքան տանջւում նրանց համար, որ էլ ես չեմ կարող հրամայել նրանց սպանդանոցներում մորթել և միսը ծախել, այդ իմ գործս չէ: Վերջ առաջ ես ծախելու եմ: Բայց իմ բաւականութիւններից մէկն էլ այս է, որ ես հօտերս տանեմ դէպի հարաւ, ճանապարհորդեմ նրանց հետ, ման գամ ճանապարհի վրա գտնուած զանազան իշխանները և քաղաքները, տեսնեմ իմ բոլոր այն ծանօթներին, որոնց տներում աղ ու հաց եմ կերել: Մարդ է, էլ ինչ ասեմ, բաւականութիւն է զգում, երբ մի այդպիսի ճանապարհորդութիւնով նորոգւում է... Ձեզ պէս աղաներն, որ եկել են դուռս. չեմ կարող մերժել նրանց առաջարկութիւնը, կոտրել ձեր սիրտը. այդ բոլորովին դէմ է բնաւորութեանս, չգիտեմ ինչ ասեմ, վարուեցէք ինչպէս ձեր կամքն է, ձեզ նուէր որ տամ իմ երեսուն սիւրին, էլի կորուստ չեմ ունենալ: Ես ձեզ պէս թանկագին բարեկամների եմ կարօտ...:

—Բէգ, ասաց Տամցի չոգարներից մէկը, այդ

ոչխարները էլի ձերն է, էլի կարող էք գնալ նրանց հետ, որպէս ձեր ապրանքի հետ, ձեր անունով կանցնեն դրանք քաղաքից քաղաք, ձեր անունով կմտնեն Հալեբ, Շամ, Երուսաղէմ, Ալէքսանդրիա և Գահիրէ, իսկ մենք որպէս ձեր գործակատարները, ձեր շքի տակ և ձեր անունով կգործենք և կպարծինք: Մենք ձեր անունով եկել ենք Շամից, ձեզ ենք դիմել և յուսով ենք, որ չէք մերժիլ մեզ ձեր հովանաւորութիւնը:

Ամբողջ ժամերով կողմերը իրար շողոքորթեցին և վերջապէս առաջարկեցին գները: Գների մասին էլ մի ժամ խօսակցութիւնից յետոյ, որոշեցին մի զոյգ ոչխարին մէկ ամբողջ և մէկ քառորդ Օսմանեան ոսկի՝ կանխիկ վճարելու պայմանով: Բէգօ բէգը անմիջապէս իր հովիւները դնում էր չոգարների հրամանի տակ, որոնք մինչև ոչխարը Շամ հասցնելը ոչ մի վարձատրութիւն ստանալու չէին չոգարներից: Հովիւների Շամից վերադառնալու ծախսը և պատշաճաւոր նպաստութիւնը պիտի անէին չոգարները: Երեսուն սիրի ոչխարի պակասորդին մինչև համարելը, որ պիտի կատարուէր հետևեալ օրից սկսեալ, երկու կողմի հաւատարմատարների համաձայնութեամբ, պատասխանատու էր Բէգօ բէգը և հազարին տասը ոչխար վերադիր տալու պարտաւոր էր:

Անմիջապէս պայմանները գրեցան, կողմնակի կնքեցան և իրար յանձնելուց յետոյ, նստան ընթրիքի: Ճոխ ընթրիքը վայելելուց յետոյ վեր կացան պայքաները խմեցին և աւելորդ ծառաները դուրս եկան նրանց սենեակից: Այս միջոցին դահլիճն յատակի մե-

ծութեամբ մի թաղիք փռեցին և երկու չոգար իրենց *ներքինաները* առաջ բերելով երեք վաճառականի հետ մի կողմ, Բէգօ բէգը և մղեսին մի կողմ նստան թաղիքի վրա: Չոգարները բաց արին *ներքինաները* և դուրս տուին ոսկու կապոցները:

Մղեսին մաքուրը հաշուեց ստանալիք փողն և մի քանի անգամ ափշած կլկնեց—տասն և ութ հազար եօթը հարիւր յիսուն օսմանեան լիրա (մօտ 180,000 րուբլի):

Երկու ձիաւորի հեռքից մօտ երկու պուդ ոսկի դուրս եկաւ, ութ հազար լիրա: Այս գումարը յիսունական հատ իրար վրա դրած շարած էր իրար մօտ թաղիքի վրա տասն և վեց կարգ: Յետոյ չոգարներից մէկը արխալուղի կոճակները քանդեց և մէջքից բաց արաւ մամպատ կտաւից շինած մի գօտի, որը քանդեց և մէջը զետեղած հինգ հարիւր հատ ծիածանագոյն Ռուսական հարիւրանոցներն հանեց ու համարելով յանձնեց Բէգօ բէգին, ասելով.

—Հինգ հազար լիրա, մնայն տարբերութիւնը պէտք է հաշուել և աւելացնել:

—Այդ հեշտ է, ասաց բէգը:

Մինչ նրանք գեռ հարիւրանոցներն էին համարում, մեւս չոգարը իւր ծոցից հանում էր նոյնպէս մի կապոց, որտեղ զետեղած էին հարիւր ոսկեանոց յիսուն հատ Օսմանեան բանկայի *բանկ-նոտաները*: Երբ չոգարը այդ յիսուն կտոր թղթերն երկնցուց Բէգօ բէգին, վերջինս մի *տեսակ* շարժում արաւ, երբ հարցնել ուզելով, թէ դրանք ինչ թղթադրամներ էին:

—Բանկ—Օտտոմանի կանխիկ վճարելի տոմսեր,

ասաց չոգարը, չխուն հատ հարիւր ոսկիանոց, հինգ հազար լիրա։

Բէգօ բէգի կասկածը դեռ չփարատւեց, նրա հայեացքը տարակուսանք էր արտայայտում։

—Կանխիկ ոսկիներ են, ասաց վաճառականներից մէկը, տէրութեան բան չկա, ում որ ներկայացնես, իսկոյն կարող ես ստանալ, եթէ մօտդ էլ պահես միշտ հինգ տոկոս կստանաս։

—Անհոգ կաց, ասաց Մղդեսին, Ինկլիզի բոլոր գանձարանները երաշխաւոր են Բանկ—Օտտոմանին։ Օսմանցու՝ կուլի տարին հրատարակած թղթերից չէ։

—Ուրեմն, ասաց չոգարներից աւագը, ութ հազար լիրա՝ ոսկով, հինգ հազար՝ Ռուսական թղթադրամով, հինգ հազար՝ բանկ—Օտտոմանի բանկատոմսերով, ընդ ամէնը տասն ութ հազար լիրա։

—Այո, տասն և ութը հազար լիրա, միայն Ռուսաց փողի տարբերութիւնը իւրաքանչիւր ոսկուն մի ռուբլի քառասուն կոպէկից կպահանջեմ այս հաշւով։

—Ոչ մի ռուբլի երեսունով, ասաց չոգարը, եթէ քաղաքում չծախէք, կարող եմ պակասորդը լրացնել։ Կարելի է թողնել մնացեալ հաշիւը ոչխարը համարելուց յետո լրացնել։

—Անկասկած, մի ամիս էլ յետո նշանակութիւն չունի։

—Ո՛չ, միայն երեք օր, ասաց չոգարը։

ԼԱ

ՔԷԸՐԻՄԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հետևեալ առաւօտ չոգարներին լաւ նախաճաշ տալուց յետո, պատրաստութիւն տեսաւ Բէգօ բէգը նրանց հետ գնալու մինչև սարերը և եղբօրը հրամայելու, որ անձամբ առաջնորդի ծախւած ոչխարը մինչև Խարբերդ։ Բէգը գոհ իւր յաջող առուտուրից՝ երիտասարդացել, թռչկոտում էր։ Չոգարները ուրախ էին, որ յաջողացրել էին ամբողջը միանգամից առնել, և այսպէս շուտ վերջացնելով գործը, կարող էին իրենց մրցողներից վաղ դառնալ հայրենիք և մինչև նրանց գալը, ծախել և փող շինել իրենց հօտերը։ Միջնորդները ուրախ էին, որ այդ գործը յաջողութեամբ գլուխ բերելով գրաւել էին թէ գնողների և թէ ծախողի սիրտը։

—Մղդեսի, ասաց բէգը մօտենալով դուշակին, երեք հարիւր ոսկի քու գնելիք տանդ, բաղդիս անիւը յաջողութեան դարձրիր։ Մի զոյգ ոչխարում կէս ոսկի օգուտ ունեմ... քէյֆ արա, մոռացիր աշխարհի բոլոր ցաւերը...։

—Շնորհակալ եմ, բէգ, ինչ, միթէ քու առատասրտութեան համար պիտի քեզ յարգեմ...։

—Լաւ, դրանք իմ բանս է, մի սրանց յաջողութեամբ ճանապարհ գցեմ...։

—Ես այսօր կանչած եմ, ուզում եմ ձեզ հետ ճանապարհ ընկնել...

—Էլի մի ինչ որ հիւանդ ունեմ...։ Թող, հոգիդ սիրես... Դու այսօր տանը պիտի մնաս մինչև իմ գալս, իմացա՞ր... Ես չեմ ուզանալ, տունը մենակ թողնելը լաւ բան չէ։ Ես կաշխատեմ իրիկուն ետ դառնալ։ Փողն այնպէս բան է, որ հազար ու մի թշնամի ունի։ Պէտք է զգոյշ մնալ...

—Բայց խօսք եմ տւել, պէտք է գնալ...

—Մղեսի՛, ինձ մի՛ նեղացնել, դու գիտես, որ քեզ իմ երկու աչքիս չափ սիրում եմ։ Ասացի գիտէ, երկու օր եաև գնա՛, վնասն ինչ...։

—Զգիտեմ, ինչ ասեմ, ձեզ հակառակել չեմ կարող։

—Ինձ լսի՛ր, այսօր տանը կաց։

Բէգօ բէգը գնաց չոգարների հետ, իսկ Մղեսին մնաց տանը։ Տանը կառավարութիւնը թէև Փաթիի ձեռքն էր, բայց բէգի վերջին կարգադրութեան համաձայն Փաթին Ջաւահիրին լսելու պարտաւոր էր։ Բէգօ-բէգի մեծ որդին գտնւում էր հօրեղբօր հետ սարերի վրա, ոչխարի հօտերի մօտ վարչական մասն էր սովորում փորձառութեամբ, իսկ նրա մայրը՝ Գիւլ-փէրին՝ նոյնպէս մի ուրիշ սարի վրա կը թաններն տնտեսական մասն էր կառավարում, իւղ պանիր, սարէկատոր՝ նրա իշխանութեամբ էր կատարւում։

Տանից դուրս չէր գալիս Բէգօ բէգի ծերունի խորթ եղբայրը, որ մեկ նահապետական սովորութեան համաձայն, օրական իրենց հիւրանոցը դիմած անցորդին դիմաւորելով, միասին ուտում, խմում, քնում և ճանապարհ էր դնում։

Նա չէր էլ հետաքրքրւում թէ ինչ էր կատարւում իրենց տան մէջ, նա միայն խստիւ պահանջում էր, որ լաւ կերակուրներ բերէին հիւրերի համար և սուտ գարի տային նրանց ձիերին, որ գնացողը անկեղծ սրտով կրկնէր.

—Աստուած շէն ու հաստատ պահի այս օջախը։

Օգոստոսի սկզբներումն էր, ամէն մարդ բանի գործի հետ էր, ազատ մարդ գիւղում չէր կարելի գտնել բացի ծերերից։ Այս էր պատճառը, որ բէգը որքան որ վստահ էր իւր գանձարանի ամուր պատերին, նրա գաղտնի ճանապարհին, որ իւր հարեմի մի անլայտ խորշից էր, որ հսկում էին Ջաւահիրը, Զէլխան և նորանց վրա Փաթին, չուզեց այն օրը տանից հեռացնել Մղեսուն։

Փաթիին մի կողմ հեռացնելու պէս ժամերով փսրտում էին Ջաւահիրը, Զէլխան և Մղեսին։ Սրանցից մէկը միշտ հսկում էր, երբ միւսները զբաղւած էին խօսակցութեամբ։ Փաթին միշտ գտնում էր Մղեսուն իւր վեց հազարեայի ընթերցման մէջ կղմած։ Ուր որ գնում էր Ջաւահիրի ջադու-պատաւը, մի ականջը, մի աչքը տան կողմն էր, թէև երբէք Մղեսին կասկածանքի տեղ չէր թողել։

Այդ օրը մի անգամ նկատեց Փաթին, որ Մղեսին դուրս էր գալիս Ջաւահիրի սենեակից։ Այդ

դէպքից պառաւի սրտում կասկածներ բարձրացաւ, բայց շուտով այդ կասկածների առաջը առան։ Յանկարծ Ջէլխան դուրս վազեց և կանանց սկսեց հրամայել, որ Փաթիին կանչեն։ Պառաւը իսկոյն ներս մտնելիս, Ջէլխան նորան դիմաւորեց ու ասաց․

—Ջաւահիրը էս երրորդ անգամն է, որ ուշքը կորցնում է, խնդրում եմ, Մզգեսուն ասա, գա մի ճար անէ։ Քիչ առաջ ես կանչեցի, վրաս սաստիկ նեղացաւ, թէ Բէգօ բէգը տանը չլինելիս, նա ոտք չի կոխիլ Ջաւահիրի սենեակը։ Մինչև համոզեցի բերի, հոգուս հասցրեց։ Աղաչում եմ, գնա բեր, մեղք է կնիկը, տանջւում է։

Փաթին Մզգեսուն առաջնորդեց Ջաւահիրի սենեակը, որտեղ կախարդը քիչ յօրանջելուց և պըտտալուց յետո, մի քանի կաթիլ ջուր ածեց Ջաւահիրի երեսը ու սթափեցրեց։ Փաթիի կասկածները մասամբ փարատեցան և երկիւղը վերջացաւ, երբ լսեց, որ բէգը վերադարձել էր ճանապարհորդութիւնից։ Մզգեսին անմիջապէս դիմաւորեց քրդին և նրա հետ դահլիճը առանձնանալով, սկսեցին ծրագիրներ կազմել Արզուրում սարրաֆութիւն անելու մասին։

Դեռ երիկնահացի չէին նստել, երբ երեք ձիաւոր եկան իջան Բէգօ բէգի դուռը։ Ծառաները եկան իմացրին, որ հին ծանօթներից Չլգըրի կողմերից մի բէգ է եկել և խնդրում է բէգին տեսնել։

—Տարէք հիւրանոց, թող մեր ծերուկը շահի, ճանապարհ գնի, ասաց Բէգօ բէգը, ինչ կարիք կա ինձ տեսնելու։

—Ամէն մարդի հետ ինչպէս կարելի է տեսնուել՝

ով է իմանում ինչ տեսակ մարդ է, ասաց Մզգեսին։

—Մենք տարինք հիւրանոց, ձեր եղբօր մօտ նստած է, բայց խնդրում էր ձեզ տեսնել և սովորական հիւրերից չէ երևում, ասացին ծառաները։

—Մզգեսի, Մզգեսի, ասաց բէգը, մի գնա իմացիր, թէ ինչ մարդիկ են։

Մզգեսին հինգ րոպէ յետո վերադարձաւ և զգուշութեամբ մօտենալով՝ ասաց բէգի ականջում.

—Քէարիմն է։

—Վա՜յ շան որդի, ժամանակը գտաւ։ Գնա մենակ բեր ինձ մօտ, թո՛ղ մարդիկ նստեն եղբօրս մօտ։

—Բայց չես մտածում....։

—Բան չկա։ Այս րոպէին կանանոցի բոլոր երկաթի դռները կապել կտամ և մինչև առաւօտ Փաթին սատանա էլ ներս չի թողնել...։

—Զգուշութեան համար գնա, կողպիր, բանալիները վեր առ, պահիր, յետո ես կերթամ կբերեմ։

Բէգօ բէգը լսեց Մզգեսու խօսքը և հարեմի բոլոր դռները պինդ կապելով բանալիները դրեց մի պատուհանի մէջ, որ բոլորովին աննկատելի էր։ Մըզգեսին Քէարիմին բերեց Բէգօ բէգի սենեակը և նըրանց առանձին թողնելուց յետո հեռացաւ։ Անմիջապէս բէգի պահած բանալիները տեղից հանեց և մօտեցաւ բէգի կապած դռան։ Երկու անգամ հազաց, երկու անգամ էլ պատասխան ստացաւ։ Անմիջապէս դուռը բացեց և բանալիները տուեց Ջէլխային, որ կանանոցի կաթնատան մարաքի մէջ բացուած գաղտնի դուռը բանալուց յետո յետ բերեց և յանձնեց Մզգեսուն, որ կրկին փակեց դուռը և տեղը դրեց բա-

նալները: Մղդեսին երբեմն երբեմն մտնում էր Բեգօ բէգի մօտ, այնտեղից էլ հիւրանոցը: Նա նեղութիւն չպատճառելու համար Բէգին և նորա ծպտեալ խօսակցին, աշխատում էր չխանգարել նորանց խորհուրդները: Ժամերը սաստիկ դանդաղ էին շարժւում և այնպէս էր տրոփում Մղդեսու սիրտը, այնպէս էր բաբախում, որ խեղճը քիչ էր մնում գլորւի:

Յաճախ կանանոցի դռան էր մօտենում և ականջները սրած՝ լսում էր այնտեղից եկած ձայները:

Մինչ Բէգօ բէգը Քէարիմի հետ, իր առանձնասենեակում խորհրդի մէջ էր, մինչ Մղդեսին տագնապած գնում գալիս էր դահլիճից հիւրանոց և հակառակը, մի տարօրինակ տեսարան էր անցնում կանանոցում: Ջէլխան կաթնատան դուռը բաց անելուց յետո ներս էր մտել և յայտնել այնտեղ իրեն սպասողին, որ պատրաստ են: Այդ տեղից նորան ընկերակցել էր մի անծանօթ մարդ լէզգու շորերով և եկել պինդ կողպանքով կապել էր այն դուռը, որտեղից կարելի էր մտնել բէգի ընդունարանն և հիւրանոցը:

Բարեբաղդաբար տանը գտնւում էին բացի Ջաւահիրից և Ջէլխայից երկու աղախին, մի արաբ ստրուկ և Փաթին....: Ներս մտնողը անմիջապէս դիմեց Ջէլխայի հետ Ջաւահիրի սենեակը, որտեղ Փաթին նստած խօսակցում էր անտիական տիկնոջ հետ,

ոլ ցաւերը մոռանա: Անծանօթը ներս մտնելու պէս Փաթին տեղից թռաւ ծղրալով:

—Արշակ աղան:

Արշակն էր ներս եկողը, որն իսկոյն բռնեց Փաթիի թևից և ասաց.—Այս անգամ չեմ խնայել, պէտք է քեզ խեղդեմ, որ էլ Մստօյին չուղարկես Բեգօ բէգի մօտ կանչելու և Ջաւահիրիս ձեռքիցս խըլելու...:

Իսկոյն լարը գցեց պառաւի վիզը, որն անմիջապէս շնչագուրկ ընկաւ գետին:

Ջաւահիրը Արշակին տեսնելով երիտասարդական հասակում ամենասիրելի լէզգու շորերում, վազել էր նրան գրկելու և ուրախութիւնից ուշաբերւել էր և ընկել Ջէլխայի գրկում: Արշակը Փաթիից ազատւելուց յետոյ, մոռանալով ամէն ցաւ՝ գրկել էր Ջաւահիրին, ջուր ածել նրա վրա, սեղմել իր կրծքին և անունը կանչել, բայց չէր կարողացել սթափեցնել: Երկար սրտատրոփ նրան խնամելուց յետոյ վերջապէս ուշքի էր եկել Ջաւահիրը:

—Աղաչում եմ, Ջաւահիր, բոլոր ուժդ ժողովիր, դիմացիր մի երկու ժամ էլ, մենք բոլորովին ազատւած կլինինք և վրէժներս լուծած...

—Պիտի համբերեմ, Արշակ ջան, պիտի աշխատեմ, որ էլ չթուլանամ:

Երկու աղախիններին և արաբուհուն կապկպել էին Արշակի մարդիկը և սպասում նրա հրամանին:

—Ջէլխա, ո՞ր կողմն է գանձարանը, շուտ, ժամանակ կորցնելու չէ:

—Ահա՛ նորա դուռը, ցոյց տուեց Ջէլխան:

—Աչա՛ բանալիները, երկնցուց Ջաւահիրը Արշակին, բաց արաւ Արշակը գանձարանի դուռը և երկու կիների հետ միասին ներս մտաւ: Հինգ տասը վայրկեանում մի քանի հարիգէներում զետեղեց և տեղաւորեց Արշակը Բէգօ բէգի բոլոր հարստութիւնները և ընկերներին բեռնաւորած՝ ուղարկում էր գաղտնի դռնով դէպի կաթնատուն,

—Գիւլ-փէրիի սնդուկը չես կոտրել, ասաց Ջէլխան նախանձելի սրտով Արշակին:

Դժւար չէր այդ մակարեա կոչւած և բարակ թիթեղներով պատած սնդուկի կոտրելը: Նորա թանկագին զարդերն էլ ամփոփւեցան:

Բոլոր աւարը հաւաքեցին և դուրս եկան:

Տասն և հինգ քուրդ ձիաւորներ մարաքի դուռը պաշտպանում էին, անմիջապէս հերիգէները կապեցին ձիերի գաւակին, Ջաւահիրին և Ջէյխային էլ երկու ձիերի վրա նստեցրած՝ սկսեցին սլանալ դէպի Սուկաւէտի փէշերի վրա ապրող Ռոստոմ բէգի չագիրները:

ԼԲ

ՄԵԿԻ ՓՈԽԱՐԷՆ ԵՐԿՈՒՍ

Բէգօ- բէգը զաչաղ Քէարիմի հետ խորհրդակցելիս և ապագային իրենց բռնելիք ընթացքի մասին ծրագիրներ կազմելիս, չէին կարող երևակայել անգամ, թէ ինչ էր կատարւում հարէմում: Կանանոցի բոլոր դռները բէգն ինքն էր կապել, երկիւղ չունէր, որ մարդ կարողանար թափանցել իւր ամրոցը: Մզգեսին անընդհատ էլ ու մուտքից իբր տաղտկացած, գնացել տանից հանւելու ընկել էր անկողնի վրա և սուտ քուն եղել: Անմար երբ կտանէր նրա քունը, նա սրտատրոփ սպասում էր գործի վախճանին և նրանից յառաջանալիք հետևանքներին...:

Արշակը հարէմում բէգի գանձերը կողոպտելուց և իւր ձիաւորների հետ ճանապարհ ընկնելուց յետո, մի ուրիշ ձիաւոր եկաւ իջաւ Բէգի դռան, ձին ծառաներից մէկին պահ տալուց յետո, իսկոյն ներկայացաւ Քէարիմին և ասաց.

—Բօյաջի Մարտիրոս քէհի տունը իջնողները, մինչև մեր հաց ուտելը և ձիերը կշտացնելը՝ դուրս

են եկել և դիմել են Հասան-Ղալա...

—Հասան-Ղալա՞...

—Այո՛, ճանապարհին նրանց տեսել են,—անցորդներն ինձ ասացին։

—Ի՞նչ տեսակ անցորդ։

—Երկու քուրդ հովիւ, որ Ալաշկերտի կողմն էին գնում...

—Ո՛վ տեսաւ քուրդերին։

—Ես խօսեցրի.... ես...

—Բէգո՛ բէգ, շատ շնորհակալ եմ։ Ձեր տանը կերածս աղ ու հացը մինչև գերեզմանիս դուռը մոռանալու չեմ։ Վատահ եղիր տղամարդու տւած խօսքի վրա, բաւական է, որ ես քեզ նման մի թիկունք ունենամ սահմանի մօտ, էլ ինձ ոչինչ չի պակասել...

—Տունը քուկդ է, որ ժամին ինչ հրաման որ անես, հոգւով պատրաստ եմ կատարելու։

—Ես գնալու եմ, էլ չեմ կարող հանգստանալ։ Այսօր մի քանի ձիաւորների պատահեցի, որոնք, ինչպէս շորերից նկատեցի, Ռուսի ծառայող հայեր էին, իմ եաւէից ընկած։ Բաները բուրդ էր, եթէ մի ուրիշ կողմից քսանի չափ ձիաւոր քուրդեր չդուրս գային։ Քրդերի հետ մի կերպ կարող էինք համաձայնել, յանկարծ հեռից մի խումբ էլ ասքեար (թուրքական զօրք) երևաց։ Ել հնար չկար, խոյս տւինք, բայց ճանապարհները սկսեցինք պահել։ Մթանը այդ հայերը մտան գ—գիւղը Բոյաջի Մարտիրոս քէհյի մօտ։ Ես կարծում էի, այնտեղ էլ կմնան, բայց դուրս են եկել, երևի Հասան-Ղալա են գնալու, Ղալմազամից օգնութիւն խնդրելու համար։ Դիշերս զգաստ մնալու եմ...

յոյս ունիմ դրանց Օսմանցու հողի մէջ հօրելու։

—Հօրելս գիտէ, գցիր մի քարի տակ, թող գազաններն էլ կշտանան...

—Բաղդը տեսնենք ի՞նչպէս պիտի յաջողէ...

—Շատ ուրախ պիտի լինէի, եթէ գիշերս մեզ մօտ լինէիք և մեր խօսակցութիւնը վերջացնէինք, բայց լուսով եմ, որ մեզ չէք մոռանալու, շուտով կրկին կտեսնուենք։ Մղդեսի՛, Մղդեսի՛...

Մղդեսին հանգստանում էր։

—Մղդեսի՛, Մղդեսի՛, սկսեց կանչել բէգը հիւրանոցի դուռը բաց անելով։

Ոսկոյն երեք չորս մարդ ներկայացան և ասին.

—Մղդեսին մեզ մօտ չէ, նա ներսը պիտի լինի...

—Ասացէք, ձիերը պատրաստեն, Բէգի ձին դուրս քաշեն։

Բէգօ-բէգը մտաւ պատի օդան, երբ տեսաւ Մղդեսին քնած է, մօտեցաւ և ձայն տւեց կրկին անգամ...

—Քեզ ինչ եղաւ, այդքան էլ շատ քնեցե՞ն...։

—Գիտեմ, մենակութիւնից թէ ինչից քունը պատեց ինձ, թմրած ընկել մնացել էի, պատասխանեց Մղդեսին։

—Գնանք, Քէարիմ բէգին ճանապարհ գցենք։

—Այս ժամանակ գնում է՞, հարցրեց աչքերը ճմրելով Մղդեսին և բոլորը դուրս եկան։

Մինչև նրանք ձիերը նստելը երկու ձիաւոր էլ եկան և յայտնեցին, որ Հասան-Ղալայի կողմից զինւորներ էին գալիս։

—Շտապեցէք, ասաց Քէարիմը, ձին մտրակելով։

Ղաչաղների խումբը ոլացաւ։ Լուսնեակ գիշեր էր, Բէգօ-բէգը և Մղդեսին դռան քարի վրա նստած խօսակցում էին։

Տասը րոպէ չանցած հինգ-տասը ձիաւոր զինուորներ եկան Բէգօ-բէգի դուռը և նրանց գլխաւորը բէգից հարցրեց.

—Քէարիմը ձեզ մօտ է իջել, շտապեցէք նրան մեզ յանձնել, թէ չէք ցանկանում, որ այս ժամին պաշարուի ձեր տունը։

—Ի՞նչ Քէարիմ, ինչ էք խօսում...։

—Կովկասից փախած Քէարիմը, աւելորդ է սըտել, նրա այստեղ իջնելը շատ աչքեր տեսել են..

—Մի՞թէ նա Քէարիմն էր...։ Գնաց, աղա, ահա նոր ճանապարհ ընկաւ, ասաց քուրդ բէգը։

—Ո՞ր կողմը գնաց։

—Մեծ ճանապարհով գնացին։ «Զիմին եմ գընալու» ասում էր։ Բայց մի՞թէ նա Քէարիմն էր...

—Մի՞թէ չէիք ճանաչում նրան, ասաց ծիծաղելով սպան։

—Ի՞նչ գիտենամ, եկաւ, հիւր եղաւ, մի կտոր հաց կերաւ և հեռացաւ։

—Այս ժամանակ էլ հիւրը ճանապարհ ընկնի՞, չհարցրի՞ք ինչի՞ էր վռազում։

—Կարս գործ ունէր, պէտք է էգուց իրիկուն հասնէր, ասաց քուրդը կակազելով։ Ինքն էլ զգում էր, որ այդ ստերը չէր կլանում սպան։

—Առաջ քշեցէք, հրամայեց սպան զինուորնե-

րին, որոնք իրենց կմախք ձիերին մտրակեցին և հեռացան։

—Մղդեսի՛, այս լաւ նշան չէր, այսքան էլ շուտ, այսպէս էլ արագ տեղեկութիւն հասցնել...

—Ո՞վ պիտի իմացրած լինի Հասան-Ղալա այդ բանը, ո՞վ գիտէր, թէ մեզ մօտ էր իջել Քէարիմը... ասաց Մղդեսին բէգի կասկածները բորբոքելով։

Այդ միջոցին հեռուից հրացանի գնդակների ձայն լսեց։

—Լաւ է տուն մտնել և պատսպարուել, ասաց Բէգօ-բէգը, գէշ հոտ է գալիս։

Նրանք ներս գնացին։ Հրացանաձգութիւնները շարունակւում էր։

Գիւղից դուրս գալու պէս, Քէարիմին շրջապատեց իր խումբը, որ տասն և հինգ լաւ ձիաւորներից էր կազմուած և դիմեցին դէպի Գ.... գիւղը։

—Բօյաջի Մարտիրոսը մեզ կյայտնէ, թէ ովքեր էին նրանք, ասաց Քէարիմը։

Այս միջոցին կրճից դուրս եկաւ խումբը դաշտի մէջ, որտեղ ճանապարհը մի քանի կողմ ճիւղաւորւում էր։

—Տեսնո՞ւմ էք, ասաց Քէարիմը իր ընկերներին, մատով ցոյց տալով մի խումբ ձիաւորներ, որ սըրարշաւ գնում էին դէպի Քէօփրի—Քէօյ։ Ալաքբէր, քու աչքերը շատ սուր է, լաւ աչէ... Ես նրանց մէջ

տեսնում եմ այսօրուա մեր տեսած սպիտակ ձիաւորը… նա չէ…

—Նա է, կարծիք պէտք չէ, ասաց Ալաքբէրը:

—Քշեցէք, տղերք, մի՛ վախենաք, քշեցէք, դրանց ճանապարհը կտրենք և ցոյց տանք: Մի այնպիսի դաս տանք, որ էլ մեր ետևը ընկնելու սիրտ չունենան:

—Անխոհեմութիւն է դրանց հետևելը, գուցէ Հասան Ղալայից մարդ հանել տուած լինեն, որոնք մեզ են փնտռում: Թողնենք պատեհ առիթ…

—Սրանից լաւ ժամանակ էլ չեն գտնել: Քշեցէք դէպի Քէօքքի—Քէօյ. Քէարիմն ու իր աստղը ձեզ հետ է, մի՛ վախենաք:

Քէարիմը ձին մտրակեց և ընկերներից հինգ տասը քայլ առաջ անցնելուց յետո, առանց երեսը ետ դարձնելու ասաց.

—Տղերք առա՛ջ, թոյլ մի շարժուիք:

Ղաչաղների ձիաները բոլբոքուած հետևում էին Քէարիմի ճերմակ լովտակին, առանց հնազանդելու սանձերը վարողներին և խումբը սլանում էր կայծակի արագութեամբ: Քսան րոպէ չանցած՝ արդէն այնքան մօտեցել էր Քէարիմի խումբը իր նպատակին, որ կարելի էր հրացանի գնդակ հասցնել իրենցից խոյս տուողներին:

Ռոստոմ բէգի ձիաւորներն էին փախչողները՝ որոնք մօտ քսան հոգի էին, բացի երկու կանանցից՝ որոնց ազատել էին Բէգօ-բէգի տարկական հարեմից: Ամէն ձիաւոր բեռնաւորուած էր իր ձիու գաւակը Բէգօ-բէգի կանանոցից և գանձարանից դուրս բերած

հարստութիւնով: Բայց առանց ուշադրութիւն դարձնելու արշաւում էին՝ մինչև առաւօտ վրանները հասնելու համար:

Ռոստոմ բէգը ինքն էր առաջնորդում խմբին, բայց բոլորը միասին ակնածում էին մի ուրիշ անձնաւորութեան առաջ, որ այդ օրը քրդական շորերի փոխարէն լէզգու երկայն չուխա ու արխալուղ էր հագել և գլխին նրանց ձևի գդակ դրել: Ամէնքը նրան թէև Թոփփուզ բէգ էին կանչում, բայց Փաթին նրան ճանաչեց Արշակ աղա կանչելով:

Թոփփուզը մինչև Քէարիմի խմբի երևալը ձին քշում էր երկու կանանց ընկերութեամբ և նրանցից տեղեկանում այն ամէնը, ինչ որ կատարուել էր իր բացակայութեան ժամանակ: Այնքան գրաւուած էր այդ խօսակցութեամբ, որ Ռոստոմ բէգը նրան նրանցից անբաժանելու համար, պարտաւորուել էր երեք չորս անգամ կանչելու: Թոփփուզը ներողութիւն խնդրելով վերջապէս մօտեցաւ Ռոստոմ բէգին:

—Կարծեմ մեզ հետևում են, ասաց Ռոստոմ բէգը, կրկին վտանգի չենթարկուելու համար պէտք է մի բան մտածել…

—Ինչպէս յարմար էք գտնում …

—Պէտք է երկու խմբի բաժանուել, մի խումբը կանանց հետ հարստութիւնը մինչև վրանները հասցնելը, միւսն յարձակողներին դիմադրելու և զբաղեցնելու է այստեղ:

—Շատ բարի, դու տար այդ հարստութիւնը, որին ներկայումս մեծ կարիք ունինք և ես կմնամ խմբի հետ դրանց դիմաւորելու:

—Աւելի լաւ է, որ դու տանես, ես մնամ...

—Ամբի ուժեղ մասը, իմ կարծիքով, դիմադրելու է սրանց, իսկ փոքր մասը տանելուէ, դանձերն: Աւելի մեծ դժւարութիւն է փոքր մասի հետ մի որ և է ուրիշ փոլձանքի դիմադրելը այնքան բեռնաւորւած քան մեծ մասի հետ թեթև ալստեղ խաղ անել:

—Բայց...

—Մի վախենալ, էլ չեն կարող թռչնի պէս ինձ թռցնել և ձեռքիցս սիրականիս փախցնել, այն սիրխալիս մեղքը արդէն քաւել եմ... երեք տարի բերդում և երեք տարի տաժանակիր աշխատութեան մէջ...

—Ջեզ չեմ կարող արդելել, կաց, բայց լաւ գիտցիր, որ իմ ամէն մի ձիաւորի գլուխը քառասուն թէարաքեամի հետ չեմ փոխել... Զգոյշ գործիր և ես շուտով ձեզ օգնութիւն կհասնեմ մօտիկ գիւղերից... Սանանց հասկացուր հանգամանքը, ես մինչև ձիաւորներին բաժանեմ:

Թոփփուչը մօտեցաւ Ջաւահիրին և պատմեց նրան իրենց մտադրութիւնը: Ջաւահիրը աներկիւղ պատասխանեց.

—Ես էլ կմնամ քեզ մօտ, մի վախենալ, ծանրութիւն չեմ դառնալ, կաշխատեմ օգնել ձեզ, եթէ ոչ թևերով գոնէ լեզուով և սրտով...

—Ես էլ ձեզանից չեմ բաժանւել, պատասխանեց Զէլխան, որտեղ դուք, այնտեղ էլ ես, իմ արիւնս ձեր արիւնից կարմիր չէ: Որտեղ ձեր արիւնն է թափուելու, այնտեղ էլ թափւի իմս:

—Մենք բաժանւում ենք երկու խմբի, որ

կարողանանք ազատել թէ ձեզ և թէ մեզ: Եթէ դուք չգնաք, էլ ինչի ենք բաժանւում: Մեր ազատութիւնն ատիպում է, որ դուք հեռանաք...:

—Արշակ, ես չեմ կարող էլ քեզանից մի քայլ հեռանալ, մի... մի բորբոքել սրտիս կրակը...:

—Ուրեմն հէգօլից մեր վրէժը լուծենք, թէ ինչ է, էլ ինձանից մի քանի ժամ հեռանալու ճար չունիս... Թողնենք, որ այն գազանը դարձեալ խրոխտա և գոռոզանա իր նոր նոր յաղթութիւններով և յաջողութիւններով...

—Բայց ես էլ եմ ցանկանում այդ վրէժառութեան մասնակցել... ես ուզում եմ, որ նրա կըրծքում իմ դաշոյնն էլ խրւի և ծակեմ այն սիրտը, որ խախալի պէս ծածկել է սիրտս...:

—Քու ձեռքերդ չպիտի պղծես նրա արիւնով, նա այնքան վախկոտ է, որ ինքը չի համարձակւել մեզ մօտենալ...: Դու ինձ լսիր, Ջաւահիր, և գնա Ռոստամ բէգի հետ մեր վրանները, ես կգամ մէկ երկու ժամ ձեզանից յետո...

—Արշակ, Արշակ, եօթը տարի եօթը ամիս այնքան դառնութիւնները կրեցի էսօրւա համար, իսկ էսօր դու ինձ զրկում ես այդ բաւականութիւնից... որ սիրտս չի գնում, ես ինչպէս հեռանամ...

—Ուրեմն իմ զոհւելու պատճառն ես դառնում, առանց մտածելու, որ մենք պարտաւոր ենք հատուցում տալու հէգօլին:

—Արշակ, ախար ես չեմ ուզում քեզ բեռ դառնալ, ես ուզում եմ կիսել այն բեռը, որ դու մենակ ես բարձում...

—Ջաւահիր, դու ինձանից այսքան թախանձանքով ոչինչ չէիր պահանջել, ես քու այս առաջին խնդիրքդ մերժելու անկարող եմ: Բայց չես մտածում, որ այդ խնդիրքդ սկիսի գժտեցնել ինձ իմ ընկերներիս հետ: Ձես երևակայում, թէ այս գիշեր ես սոսկալի կացութեան մէջ ենք գտնւում: Քու խնդիրքդ մերժելու համար չէ այս խօսքերը....:

—Լա՛ւ, կղնամ, Արշակ, բայց անհամբեր քեզ եմ սպասելու:

—Ջաւահիր, ես յոյս ունեմ, որ ցաւ չէ պատճառելու քեզ այս մերժումը, անշուշտ հաւատացած ես, որ միայն մեր բարու համար ստիպւած եմ կատարել...

—Ես քեզանից ցաւեմ, բոլորովին մի մտածել էլ այդ բանի մասին:

Արշակը Ջաւահիրի ձեռքը շրթունքներին էր մօտեցնում, երբ Ռոստոմ բէգը խումբը բաժանած, իւր հետ տանելիք մարդկանց հետ շրջապատեց կանանց:

—Թոփփուզ բէգ, ասաց Ռոստոմը, ձեզ են ըպասում, շտապեցէք և կառավարեցէք: Յանումները, մենք գնանք:

Մնաք բարով և գնաք բարովը միայն մրմնջացին և հեռացան:

Թոփփուզը խոյն մտաւ իրեն յանձնւած խմբի մէջ և սկսեց քաջալերական խօսքեր խօսել նրանց և հանդարտ քայլերով առաջ գնալ: Ռոստոմ բէգը սլացաւ իր խմբի հետ ոանձարձակ մտրակելով իրենց երիվարներին...: Դեռ հարիւր քայլ իրարից չէին բա-

ժանւել, մի գնդակ սուլելով Քէարիմի խմբից եկաւ, ընկաւ Թոփփուզի գնդի մօտերքը: Այդ գնդակի ձայնը լսեց Ռոստոմ բէգը, նորա ձայնը զօդանջեց և Ջասհիրի ականջում, սաստիկ բաբախելով նորա սիրտը: Բայց հարկ էր հեռանալ և սպահովել կիներն ու գանձերն... հարստութիւնը, որին Ռոստոմ բէգը մեծ կարօտութիւն ուներ...:

Թոփփուզը հրամայեց չպատասխանել հրացանի գնդակին, մինչև թշնամու բաւականաչափ իրենց մօտենալը: Սրանց լռութիւնը աւելի վախեցրեց Քէարիմին, որը նոյնպէս իր քայլերը դանդաղեցնելով՝ դադարեցրեց հրացանաձգութիւնը: Թոփփուզը առանց փոխելու իր շարժումը քիչ քիչ առաջ էր գնում դէպի Հովւի կամուրջը և շատ ուրախ էր Քէարիմի խմբի ծանր շարժւելուց. նոքա մինչդ էին տալիս Ռոստոմի խմբին հեռանալու, որն արդէն հասել էր Հովւի կամուրջն և անցել: Բայց Քէարիմը շուտով էլի հրամայեց արաւ գնդակներ շաղ տալ Թոփփուզի վրա և սանձարձակ առաջ մղել ձիերին:

—Տղերք, ասաց Թոփփուզը, բոլորդ մի անգամից ուղղեցէք ձեր հրացանները այդ խմբի վրա. մինչև նրանցից մէկին չգլորենք, նրանք չեն դադարել մեզ հալածելուց: Պատրա՞ստ էք:

—Բոլորս էլ:

—Լսեցէք, մէկ, երկո՛ւս, երե՛ք...

—Բնդ՛.... սը՛ս....

Տասն և հինգ գնդակ միանգամից արձակւեց Քէարիմի խմբի վրա, որոնք երկու ձի գլորեցին իսկոյն և մի մարդ շնչասպառ ընկաւ: Սրա վրա կատաղած՝

Ջէարիմը հրամայեց մտրակել ձիերին և անընդհատ արձակել գնդակները։ Թովփուզը շարունակում էր իր ուղին առանց քայլերը շտապեցնելու և երբեմն երբեմն ետ դառնալով՝ խմբովին արձակում էին գնդակները։ Քսան րոպէ շարունակ իրար հետևելով կռեցին և այդ միջոցում Ջէարիմի խմբից վիրաւորուեցին ևս երեք մարդ ու գլորուեց մի ձի, իսկ Թովփուզի խմբից ընդամէնը մի ձի գլորուեց և երկու մարդ թէև վիրաւորուեցին ձախ թևից ու ազդրից, բայց իսկոյն վէրքերը կապելով շարունակեցին իրենց ընթացքը։ Հովւի կամուրջին հասնելու հարիւր քայլ էր մնացել, երբ սկսեցին կատաղի կերպով իրար վրա կրակ թափել։

Թովփուզը քիչ քիչ առաջ գնալով՝ իր խմբով կամուրջի քովի թումբը բռնեց, իսկ Ջէարիմը մնաց ցածրում։ Սոսկալի կերպով կռւում էին իրար հետ խմբերն...։ Այս միջոցին կարծես լուսինը վրդովուած՝ երեսը ջրջեց ու անհետացաւ, բոլորովին մթութեան մէջ թողնելով աշխարհին։

Ռոստոմ բէգի խումբը Հովւի կամուրջն անցնելիս արդէն լսում էին Ջէարիմի խմբի արձակած գնդակների ձայները։

Ջաւահիրն անընդհատ ետ էր դառնում դիտելու իր շուրջը կատարուածները։ Երբ կռիւը սաստկացաւ և գնդակների սուլող ձայներն օդը դղրդացնելով հասնում էին Ջաւահիրի ականջին, խեղճ կնոջ շունչը կտրուեց և էլ չդիմանալով այնքան արագութեամբ ձիու սլանալուն, նւաղած ընկաւ։

—Փորձանքը իրար ետևից է գալիս, մրմնջեց Ռոստոմ բէգը։

Իսկոյն խմբին հրամայեց առանց կանգ առնելու առաջ գնալ, իսկ ինքը Ռոստոմը թշւառին էջեցրեց Արաքսի ափը մի աներևոյթ տեղ, երկու ձիերը կապեց իրարու, ճանապարհորդական թաստովը վեր առաւ անմահական ջրից և սրսկեց ուշաբերուածի երեսին և կրծքին։ Ձորս հինգ րոպէ ոչ կանոնաւոր կերպով շնչում էր տարաբաղդ կինը, ոչ էլ աչքերը բաց անում, սթափւում նւաղումից։ Գնդակների որոտումը բորբոքեցնում էր Ռոստոմի սիրտը, նա ցանկանում էր մի կերպ գտնւել Թովփուզի խմբում և ընկերանալ քաջերին, բայց տարաբաղդաբար իրեն վիճակւել էր պառաւի նման հիւանդ խնամել։

Հինգ րոպէ չանցած՝ աչքերը բացեց Ջաւահիրը և երբ նկատեց իր կացութիւնը, լսեց շարունակւող գնդակների ձայնը, կարճ միջոցում բոլորովին սթափւելով, ասաց Ռոստոմ բէգին.

—Ինչի՞ ենք այստեղ մնացել, գնանք օգնենք Արշակին։

—Դուք հանգստացէք, նա օգնութեան պէտք չունի...։

—Աստծու սիրուն, մի՛ ետացնէք, գնա՛նք, ես լաւ եմ և էլ լաւ կզգամ ինձ, եթէ Արշակն աչքիս առաջ ունենամ...։

—Գնա՛նք, գնա՛նք, ասաց Ռոստոմ բէգը, որ ինքն էլ արդէն ցանկանում էր գնալ մտնել խմբի մէջ։ Իսկոյն ձիերը նստան և ուղղեցան դէպի կամուրջը։

Գիւղի ամենաստսկալի ժամանակն էր. Թովփուզի խումբը գրաւած էր կամուրջը և աներկիւղ թափում էր գնդակները Ջէարիմի խմբի կողմը, բայց

սաստիկ մթութենից ոչինչ չէր նկատում։

Ռոստոմ բէգի ձայնը, որ լսեցին Թովփուղի ընկերները, կարծելով, որ մեծ խմբով օգնութեան էր հասնում, ամրապնդած էլ քաջութեամբ յարձակուեցին Քէարիմի ղաչաղների վրա աղաղակներով, այնպէս որ նրանք պարտաւորուած թուլացան, սկսեցին ետ գնալ։ Քէարիմի յորդորներն ու սպառնալիքները ապարդիւն մնացին։ Այդ միջոցին թուրքի ոստիկանական գունդը Քէարիմին հէգօ բէգի տանը չգտնելով նրանց հետեւեցան և գնդակի ձայների օգնութեամբ եկան, հասան այն րոպէին, երբ նրանք խորհում էին ետ դառնալ այդ ապարդիւն յարձակումից։

Էլ ճար չկար, Քէարիմը զգաց, որ պէտք էր խոյս տալ, երկու կողմին դիմադրել անկարող էր։ Մի վայրկեանում փախուստի ծրագիրը կազմելիս, կամուրջի մէջտեղ մթութեան մէջ նրա աչքերին պատահեց այն սպիտակ ձին, որին նոյն օրը իր հակառակորդն էր նստած։ Իսկոյն նա ուղղեց իր հրացանը այդ ձիաւորին, որն արագ արագ այս ու այն կողմը հասնելով խրախոյս էր տալիս կուռդներին, արիացնում ամէնքի սիրտը իր քնքոյշ խօսքերով և բորբոքում վրէժխնդրութեան հոգով։

Թովփուղի ձին այդ գիշեր նստել էր Ջաւահիրը, որ Ռոստոմի հետ վերադառնալուց յետո եռ էր գալիս կուռդների շուրջը։ Այդ շփոթ դրութեան ժամին, երբ Ռոստոմ բէգը ուղղում էր խմբի դիրքը, Քէարիմի գնդակը ծակեց ու անցաւ Ջաւահիրի ձիու գանկը, որն իսկոյն գլորուեց գետին։

Թովփուղը վազեց իր սիրուհին գրկելու, նրան

գտաւ ձիու արիւնում թաթախուած՝ նժոյգի ոտքերի տակ։

—Արշակ, Արշակ, ներիր ինձ, որ ես քու կամքի հակառակ ետ դարձա քեզ մօտ...։ Վախենում էի, որ չլինի թէ գժոխային գնդակը դա քեզ վիրաւորէ... Բայց գնդակը քիչ մնաց ինձ գլորէր։ Մի շփոթիլ, ինձ բան չէ պատահել, շարունակիր գործդ, ես ոտքով էլ կգամ ձեզ հետ։ Արշակը նրան առաւ իր գաւակը և խումբը սլացաւ դէպի լեռները։

ԼԳ

ԱՆՄԵՂ ՋՈՀԵՐ

Այս անյաջողութենից Քէարիմը սաստիկ կատաղած՝ ետ դարձաւ խմբով թուրքական զաբտիաների վրա յարձակուեց և մի քանի գնդակներ գցելուց յետո նրանց բաժանեց ու ցրուեց։ Քսան հոգուց էր կազմուած այդ խումբը, բայց թուրքական տնտես կառավարութիւնը այդ օրը նրանց Քէարիմի դէմ ուղարկելիս, շռայլութեամբ ընդաքանչիւրին հինգ հինգ փամփուշտ էր բաժանել...։ Ջուր տեղը նրանց սպան գո-

ռում էր հրացաններն արձակել թշնամու դէմ, ամէնքը անմռունչ մի մի կողմ էին քաշւում։ Վերջապէս չավուշը (урядникъ) մօտեցաւ և ասաց սպայի ականջում...։

—Այս սատակած ձիերով մենք ինչ կարող ենք անել, սրանց նստած ժոլդիներին պիտի հասնենք...։

—Գնդակներդ արձակեցէք, ձեզ հրամայում եմ, գնդակներդ, ուրիշ խօսք պէտք չէ...

—Ախար գնդակները խօ գիտես, որքան էր բաժանւած ամէն մէկին։ Դեռ շատերն իրենց գընդակները պայտառին են տւել ձիերի պայտերն ամրացնելու համար...։

—Էլ ինչի էին գալիս, երբ գնդակներ չունէին և ձիերը մարդ գալու անկարող էին...։

—Ծառայութիւնից չվերադառնալու համար, նրա համար որ Ղայմաղամը Վալիին ասի, որ քսան ձիաւոր է ուղարկել Քէարիմին բռնելու...

—Դուք ձեր պարտքը կատարեցիք... կասենք, որ չկարողացանք բռնել, հեռու էին և փախան...։

—Բայց դուք ինձ տրաքացնում էք, ես սրան եթէ բռնեմ, գիտէք, Վալին ինձ...։

—Ի՞հ, բան չունես, ափսոս չէ սիւննին բռնել և յանձնել Ռուսին, որ կախել տա, կամ գնդակահար անէ...։

—Ո՞ւր են գնում այն անիծւածները, գնդակներդ, գնդակներդ... արձակեցէք։

Ծարահատեալ մի մի գնդակ գցեցին, բայց Քէարիմի յարձակումը նրանց ցրւեց և շւարեցրեց։ Քէարիմը ձին խաղացնելուց յետո մի քանի գնդակ էլ

արձակեց և երեք զաբտիաներ գլորւեցան։ Սրանց աղաղակի և շփոթութեան ժամանակ Քէարիմի Ղաչաղները ճանապարհ բացին ու հեռացան...։

Բայց Քէարիմի բարկութիւնը չիջաւ, մի քանի զաբտիաներ գլորելով չհանգստացաւ, նա ուզում էր պատժել այն ամէնին, որոնք աշխատել էին իրեն բռնել և գցել ոստիկանութեան ճանկը։ Երբ արդէն բաւական հեռացել էին Հովւի կամուրջից, Քէարիմը ասաց ընկերներին.

—Գնանք Բօյաջի-Մաչօի տունը, իմանանք, թէ ինչ վարձատրութիւն է ստացել մատնութեան համար Ռուսներից։ Այս օրւա չինովնիկը նրան մի հարիւր հատ պօլիմպերիալ տւած կլինէր...։

—Այս ձախորդութիւնների պատճառը այդ անիծւածն էր, կակազեց Ալակբերը։

—Քշեցէք, քանի չէ լուսացել։

Քէարիմը առաջ ընկած մտախոհ գնում էր, միշտ հայհոյելով Բօյաջի Մարտիրոսին։

—Եթէ այդ անիծւած զաբտիաները չգային, ասում էր իւրովի Քէարիմը, ես գիշերս նրանցից ոչ մէկին կենդանի չէի թողնել...։

Երեք ժամ վերջը Քէարիմը իր խմբով մտաւ գ—գիւղը և ուղղակի գնաց շրջապատեց Բօյաջի Մարտիրոսի տները։

Այդ օրը երբ Թոփփուզ բէգը Ռոստոմ բէգի ձիաւորների հետ իջաւ Բօյաջի Մարտիրոսի տունը, վերջինս կասկածեց, թէ դա ինքը Քէարիմն էր կեղծ անունով։ Այս կարծիքը մասամբ հաստատելուն նպաստեց Թոփփուզի քրդական շորերը հանելը և Բօյաջիի

տանը լեգզու շորերը հագնելը։ Այդ օրերն էլ խստիւ հրաման էր արել Ղայմաղամը գիւղական տանուտէրերին մեծ մեծ սպառնալիքներով, որ ոչ ոք չհամարձակուի հիւր ընդունել Ջէարիմին իր տանը։ Ով որ նրա տեղը իմանար և կամ եթէ յանկարծ մէկի տունը իջնէր, պարտաւոր էր իսկոյն իմացնել Ղայմաղամին։ Բօյաջին վախենալով, որ չլինի իրեն մի փորձանք սպառնայ այդ դէպքից, ուղղակի որդուն ուղարկել էր Հասան-Ղալա՝ հանգամանքը Ղայմաղամին իմացնելու։

Երբ Բօյաջիի տանից մթնով դուրս եկաւ Թովփուզը, դեռ ծերուկի մեծ որդին չէր ետ դարձել, ուստի ծերունին ստիպեց երկրորդ որդուն գնալ գըտնել եղբօրն և իմացնել հիւրի դնացած տեղը։

Ծերունին չէր կարող չկատարել գաւառական իշխանութեան այդ հրամանը, հակառակ դէպքում նրա ինը որդիքը կբանտարկուէին մի այդպիսի անկոչ հիւր ընդունելու համար։ Թէև ծերունին ուղարկել էր այդ լուրը Ղայմաղամին, բայց սարսափահար սպասում էր ամէն րոպէ մի այդպիսի յարձակողական փորձանքի։ Նա այդ դիշերը բոլորովին չէր քնել և ամէն անգամ մի փոքր աղմուկ լսելիս բարձրանում էր և զգուշութեամբ քննում ամէն կողմ։

Ջէարիմի ձիաւորները երբ մօտեցան Բօյաջիի դռան, իսկոյն ոտք ելաւ ծերուկը և զգուշութիւնով տեսան իրենց պատրաստութիւնը. որը դանակ վեր առաւ, որը կացին, որը գերանդի, որը մահակ, քար, փայտ, մաշա, մկրատ, ինչ որ պատահեց, ինչ որ առջին անգամ նկատեցին իրենց շուրջը։ Ոչ մի զէնք

չկար նրանց տանը։ Վալիի վերջին կարգադրութեան համաձայն հայերի տներից ամէն տեսակ զէնք հաւաքել էին, մինչև անգամ մսի մեծ դանակներն և ատրճներն (միս մանրելու մի տեսակ դանակ) էլ տարել էին։ Անդէն պարտաւորւած էին դիմադրելու Ջէարիմի խմբին։ Բարեբախտաբար Բօյաջին իր պապերէ սովորութեան համաձայն դռները հաստ տախտակներից էր շինել տւել, պատերը լեռ. քարերից ամուր, լուսամուտները չունէր և երթերի ծակերը այնքան մանր էին, որ կատուներն անգամ դժւար էին ներս ու դուրս անում, ուր մնաց Ջէարիմի Ղաչաղները։ Բարբարոս Մահմէդականութեան ստրկական լուծի տակ ճնշւած թշւառ և տգէտ ժողովուրդը երկնքի օդն ու լոյսն անգամ իր յարկի տակ առատ վայելելու բախտից զրկւած էր։

Արիւնարբու աւազակներին երկար չկարողացան դիմադրել սկինդ դռները, չարագործները կոտրեցին տախտակները։

Մարտիրոս ափարը և որդիքը կուրծքերը սրին ու գնդակին դէմ տւած կռւեցին մինչև իրենց վերջին շունչը, չթողին իրենց պապերից աւանդւած սուրբ յարկի անարատ շէմքից ժանգոտ սրտով ու կեղտոտ ոտքերով ներս սպրդելու արիւնկզակ գազաններին..... Բայց իրենց վրա էլ էժան չնստաւ այդ դռան պահպանութիւնը. հայրը երեք որդուց հետ ընկել էին շէմքի վրա, որոնց արիւնից լճակներ էր կազմւել բակի մէջ և դռան առաջ...։

Արշալոյսը ուրախ ուրախ բարձրանալով փախցրել էր ու աներևութացրել խաւարի սերունդներին

և լուսաւորել սրբութեամբ պարտականութիւնները կատարողների զարթ դէմքերը։

ԼԴ

ՍԱՏԱՆԻ ՏՐԵԽԸ ԾԱԿԻԵՑ

Բէգօ բէգը Մղդեսիի հետ տուն մտնելուց յետո, արդէն ժամանակ էր հանգստանալու։ Մղդեսին դիմեց իր ննջարանը, իսկ բէգը բանալիները պահարանից հանելով մօտեցաւ բանալու հարէմի դուռը։ Սովորական երկու պոոյտը դարձնելուց և երկու անգամ լեզուակի մղումից առաջացած ձայնը լսելուց յետո՝ ուսովը դուռը հրեց, փեղկը յամառեցաւ, ետ չգնաց։ Կրկին անգամ հրեց քիչ էլ ուժգին, բայց զուր։ Կարծելով թէ գուցէ սխալուած է, բանալին նորից աշխատեց շուռ տալ, բայց չգարձաւ բանալին։ Ցետ դարձրեց, առաջ ոլորեց, հրեց ամենայն ուժով, դուռը չկարողացաւ բանալ...։ Նեղացած կանչեց.

—Մղդեդեսի՛, Մղդեսի՛, արի՛ մի այս դուռը բաց։

Մղդեսին իր սենեակն էր մտել և թէև շորերը ձևի համար հանում էր պառկելու. բայց սիրտը սաս-

տիկ բաբախում էր և շունչը կտրած սպասում էր բէգի այդ հրաւէրին։ Որպէս թէ չէր լսել բէգի խօսքերը, իսկոյն պատասխանեց.

—Հրամայի՛ր...

—Մղդեսի՛, մի արի տես, այս դուռը ինչի՞ չի բացւում։

—Այս րոպէին, ասաց, մօտեցաւ բէգին և լսկսեց աչ ու ձախ շուռ տալ բանալին։ Սաստիկ տրոփում էր Մղդեսիի սիրտը, բէգը նրանից նւազ անհանգիստ չէր...։ Քիչ չարչարւելուց յետո Մղդեսին ասաց.

—Ներե՛ փչացել է և լեզուակը չի շարժւում... Դուք շատ բացած ու կապած էք, փորձեցէք, տեսէք սովորականի նման շուռ գալիս է բանալին, շարժո՞ւմ է լեզուակը։

—Առանց զանազանութեան սովորական ձևով, պատասխանեց բէգը։

—Ուրեմն ներսից ախած է, որ չի բացւում։

—Ներսի ախը պատւիրել էի չգցել, պատասխանեց զարմացական նշանները անելով բէգը։

—Դուցէ վախեցել են Քէարիմի անունից և զգուշացել...։

—Նրանց ո՞վ ասաց, որ Քէարիմն էր գալողը։

—Ցան մէջ ո՞վ չի իմանում, որ նրանք իմացած չլինին։ Վատ լուրը շուտ է տարածւում։

—Փաթի՛, Փաթի՛, կանչեց բէգը վրդովւած...

Ի՞նչ իմանար բէգը, որ Փաթին սառած ընկած էր մի անկիւնում այդ ժամում, յաւիտեան էլ չլսելու պայմանով։ Բէգօն չէր կարողանում համբերել,

նա մի քանի րոպէից կրկին անգամ կանչեց Փաթիէին, Զէլխային, Ջաւահիրին։

Երբ պատասխան չստացաւ, նա էլ բարձր ձայնով կանչեց, այնպէս որ հիւրանոցից ծերուկի եղբայրն անկողնի շորերով եկաւ ճրագը ձեռքը և ասաց.

— Այդ ինչ է պատահել, ումմ էիր կանչում...

— Դու գնա քո հիւրերի մօտ, գնա, քեզ ով կանչեց...։

— Այս ժամանակ տանը աղմուկ հանելը լաւ չէ, հիւրերն ինչ կասեն, պատասխանեց հեռացաւ։

Բաւական չէր Բէգօլին իր սրտի տագնապը, եղբօր խօսքերն էլ մի կերպ վիրաւորեցին նրա սիրտը։ Ինքը չէր ուզում դուրս գալ և ապառաժի գլխի փոքր լուսամուտներից ձայն տալ, ուրիշի էլ չէր ցանկանում ուղարկել։ Ինկոյն մեռք արաւ և գնաց խոհանոց, պառաւներից մէկին զարթեցրեց և ուղարկեց, որ գնան ապառաժի վրայի լուսամուտներից ձայն տան Փաթիէին կամ Ջաւահիրին։ Պառաւը վերադարձաւ և ասաց.

— Ո՛չ ճրագ կայ, ոչ էլ ձայն է լսւում։ Ինչքան կանչեցի, պատասխան տուող չեղաւ։

— Էլի գնա, էլ ամուր կանչիր և պատուհանից խփիր այս փայտով։

Պառաւը հեռացաւ, բայց Բէգօ բէգն արդէն իր հանգստութիւնը կորցրել էր։ Կայինը վեր առաւ, փորձեց մի կերպ քնանալ, բայց չէր ուզում դուրը կոտրել, հարէմը, մանաւանդ գանձատունը, չէր ցանկանում թողնել առանց փականքի։ Պառաւը դարձաւ այս անգամ յուսահատ...։

— Ո՛չ մի ձայն չի լսւում, մեռելի նման քնել

են, պատասխան չեն տալիս...

Բէգօ բէգի սրտում կասկած բարձրացաւ, թէև վստահ էր, որ իր ամրոցի վրա ոչ մի կողմից ոչ ոք կարող էր յարձակւել, ոչ մարդ կարող էր ներս մտնել, ոչ էլ մէկը կարող էր դուրս գալ, բայց նեքին մի գող միշտ կարող էր եղն երթից դուրս հանել։ Քիչ այս ու այն կողմը մտաւ եկաւ, մտքերի մէջ տատանւեց և վերջապէս վճռական ասաց.

— Մղեսի, գնա թւանքդ և ռէօլւերդ լից բեր։

Մղեսին գնաց հրամանը կատարելու։

Բէգօ բէգը կացինը ձեռքը առաւ և սկսեց դուռը փշրել։ Միայն այնպէս սլինդ էր շինել տւել լեռնականը իր ամրոցի դուռը, որ շատ էլ հեշտ չէր փշրել։ Երբէք չէր մտածել, որ մի օր իր վանդակում պահած թռչնիկները կարող էին իր դէմ ապստամբել և դուռը իրեն դէմ փակել։ Բորբոքւած սրտով, աչքերը արիւնով լցւած, ամենայն ուժով կացինը խփում էր երկաթի թիթեղներով պատած դռան և ամէն մի հարւածը թղթի թանձրութեամբ տաշեղներ հազիւ էր պոկում։ Երբ այնքան հարւածները ձայնին անդամ պատասխան չտւին, էլ կասկածները բորբոքւեցին և Բէգօն կանչեց երկու երեք մշակ, որոնք օգնեցին նրան դուռը փշրելու։ Դռան տախտակները և թիթեղները թէև թափւել էին, բայց հաստ փայտերից կազմւած դռան թեք և հորիզոնական կապերը իրենց երկաթի կցաններով արգելում էին մուտքը։ Բէգօն գլուխը ծակերից ներս կոխեց և երբ տեսաւ որ ոչ միայն ախած էր դուռը, այլև ախի վրա մի

պինդ անճանօթ կողպանք էլ էր գցած, էլ տարակոյս չմնաց սրտումը, զգաց, որ մի մեծ փորձանք էր պատահել, դորա համար իսկոյն հրամայեց մշակներին.

—Ի՞նչ էք կանգնել բերաններդ բացած, ջարդեցէք, փշրեցէք...

Մղեսին ներսը երկիւղից ողջ մարմնով դողում էր, չէր իմանում ինչպէս հեռացնել զգացած սոսկումը, որ կարող էր իրեն մատնել... Նա իրրև թէ լցնում էր արդէն լիքը ըէօլէրը, դարտակում, փորձում և կրկին լցնում։ Զգալով որ թուլութիւնը և երկչոտութիւնը աւելի վտանգաւոր էր իր կացութեան մէջ, բոլոր ուժովը զսպեց իր ջղերն և զէնքերը ձեռքը մօտեցաւ Բէգօ բէգին։ Զգուշութեան համար չէր մոռացել լայն վերարկուի երկայն գրպաններում զետեղելու կրկին ատրճանակներն տասներկու գնդակով։ Այնքան շփոթւած էր Բէգօն, որ արած հրամանը մոռացել էր, աչքերն էլ ոչինչ չէին զանազանում։ Երբ բոլորովին թափեցին դռան բոլոր կապերը, բէգօն էլ առանց այս ու այն կողմը մտիկ տալու վազեց մտաւ Ջաւահիրի ննջարանը։ Նա չնկատեց ոտքերի տակ գըլորւած փաթիլ դիակը, իսկոյն մօտեցաւ սենեակի անկողնին և երբ նկատեց աղախնին կապկպած պառկեցրած, յուսահատ գոռաց վագրի նման.

—Ջաւահիրս չկա, ու էլ առանց այս ու այն կողմը մտիկ տալու վազեց դէպի գանձարան, և երբ դուռը բաց, սնդուկները դատարկ տեսաւ,

—Նամեհրդ, հարճորդի, ասաց կրճտնելով եղբօրն ու Մղեսուն, հացս կերաւ, հիւրասիրութիւնս ընդունեց և գանձերիս հետ կինս էլ փախցրեց... Ափսոս իմ երեսուն տարւա աշխատութեան, մի գիշերում տարաւ...

Քէալիմի Թուրքաց սահմանն անցնելը կարսի և Երևանի նահանգապետները կարինի Ռուսաց կայսերական կօնսուլին իմացրած լինելով, վերջինս յայտնել էր վաղվընից, որ անմիջապէս ամէն միջոց ձեռք առնէ, այդ փախստականին ձերբակալելու։ Երբ Հասան-Ղալայի Ղալմաղամին նկարագրում էր Բօյալէի Մարտիրոս ափարի որդին աւազակապետի իրենց տունը յանկարծակի հիւր իջնելը, արդէն Արզուրումից այդ գործի համար եկած պաշտօնեան Ղալմաղամի հետ խորհրդակցում էին Քէալիմին որոնելու մասին։ Այս համբաւը իսկոյն յայտնեցին հեռագրով Արզուրում և Վալին անյարձակւել աւազակների վրա։ Այս յարձակման ունեցած աջողութիւնը արդէն ընթերցողները կարդացին։

Սպան զաբտիաների յամառութիւնից յուսահատած՝ այն գիշերը ոչ կարողացաւ Քէալիմի խըմբին հետևել, ոչ էլ Թոփփուզի. ճարահատեալ գնաց Քէօբրի-Քէօյ գառի մսով, բրինձի փլաւով (գիւղացու հաշւով) փորը կշտացնելու։ Զաբտիաները ակամա գիշղից գիշերով սայլ վեր առան և սայլորդների հետ գնացին ընկերների դին բերին գիւղ։ Սպան իր քաջագործութեան տեղեկագիրը գրեց և գիւղացի երկու ձիաւորի հետ ուղարկեց Հասան Ղալա, անմիջապէս օգ-

նութիւն և փամփուշտ պահանջելով։ Արզուրումից եկած պաշտօնականը ոստիկանական սպայի տեղեկագիրը ամբողջապէս հեռագրով հաղորդեց Վալիին, որ հրամայեց իր լիազօրին, գնալ Ղայմաղամի հետ, Քէաբիմին հիւրասիրող Բէգօ բէգին ձերբակալել և տանել Արզուրում։

Հուսադէմին ճանապարհ ընկան Ղայմաղամն ու պաշտօնականը դէպի Ա—գիւղը, արշալոյսի հետ իջան Բէգօ բէգի դռան առաջ։ Բէգը զանազան կողմեր մարդիկ էր ուղարկել Քէաբիմի հետքը գտնելու, բայց որոշ տեղեկութիւն չստանալով, վճռել էր անձամբ գնալ Ղաչաղների ետևից։ Բէգօ բէգը ձիերը դեռ դուրս չքաշած՝ Ղայմաղամը ոստիկանական պաշտօնէի հետ ներս մտաւ Բէգի շէմքից։

Պաշտօնականը խոհոյն սկսեց քննութիւնը և մանրամասն ամէն պարագա մտցրեց իր արձանագրութեան մէջ։ Պէտք է լմանալ, որ այս պօլիցիական պաշտօնականը, որպէս մոլի մահմեդական, սարսափելի կերպով ատում էր Բէգօ-բէգին, պատերազմի ժամանակ նրա խալիֆի դէմ կատարած դաւաճանութեան պատճառով։ Նա խստիւ կատարում էր իր պաշտօնը, աշխատելով մի կերպ յանցանքը բարդել Բէգօյի վրա։

—Դուք առաջուց ճանաչո՞ւմ էիք Քէաբիմին, հարցրեց քննիչը բէգից.

—Ըրբէք, ես նրա երեսը երէկ իրիկուն առաջին անգամ տեսա։

—Դրաւոր կամ պատգամաւորով երբ հետ երբէք ծանօթութիւն չէք ունեցել։

—Ըրբէք, երբէք, ասեց Բէգօ բէգը։

—Որ այդպէս է, ինչպէս էր նա համարձակուել ձեզ մօտ իջնելու։

—Ես նրան չէի ճանաչում և նա կեղծ անունով մտաւ իմ յարկիս տակ։

Պաշտօնականը արձանագրում էր Բէգօյի բոլոր պատասխանները։ Յետո սկսեց խուզարկութիւնները. բէգի տան ամէն կողմը մանրամասնութիւնները իրենց տեղերում արձանագրեց։ Խուզարկութեան ժամանակ գտան Քէաբիմի ինքնագիր մի նամակը ուղղուած Բէգօ բէգին իրեն ուղարկած նամակի և նէբերների համար, խոստանալով նրան ցմահ երախտապարտ մնալ։ Այդ նամակը բէգի բոլոր խոստովանածները ջրում էր, նրա ստերն ու կեղծիքները մերկացնում ու խայտառակում։ Քուրդի լեզուն կապուեց և սկսեց կակազել։ Պաշտօնականը պինդ պահեց այդ գրաւոր ապացոյցը։ Բէգօն ասաց մտքում.

—Սատանի մաշած տրեխը ծակուեց և ճանկերը դուրս եկաւ, էլ կարկատելն հեշտ չէ...։

Իրերի դրութեան ծանրութիւնը զգաց Բէգօ բէգը։ Ղայմաղամին աչքով անելով առանձնացան և սկսեց թախանձել մի կերպ գործը վերջացնելու։ Ղայմաղամը, որ երկու տարի շարունակ բէգին զանազան յոյսեր տալով փետրել էր, աներկիւղ կրկին յուսադրեց և խոստացաւ Քէաբիմի նամակը ետ առնել Վալիի ուղարկած պաշտօնականի մօտից, հանգամանքը պարզեց

և խորհուրդ արին երկուսով մի լաւ պոպկել Բէգօլին և ապա բոլոր մանրամասնութիւնները յայտնել Ալլէնին։ Այդ միջոցին Բէգօ բէգը սեղան էր պատրաստել տալիս Հիւբերին հաց տալու համար, երբ Ղայմաղամը դուրս եկաւ և ասաց.

—Բէգ, շուտ արա, շտապում ենք գնալու։

—Պատրաստ է, պատրաստ, հրամայեցէք նըստենք ճաշի։ Ի՞նչ արիր, շարունակեց բէգը Ղայմաղամի ականջի տակ, գործը կարգի բերի՞ր...

—Հինգ հարիւր լիրա է ուզում անօրէնը, աշխատում եմ երեք հարիւրով գործը կարգի բերել. դու մի կապոց շինիր, անմիջապէս բեր լինձ։

—Տարան, տարան, գարտակել են դանձարանս, հինգ փարա չեն թողել մօտս...։

—Դժբէր, խօսելու ժամանակը չէ, ամէն բան կկորչի, շուտ արա, որ իսկոյն Քէալիմի եաւեից հարիւր ձիաւոր զօրք և մէկ երկու հարիւր քուրդ հանել տամ և մի կերպ տարածները գնանք ետ բերենք։

—Մի ուշացնէք, Ալլահի սիրուն շտապեցէք։

—Մինչև սեղանից բարձրանալը կապոցը բերես, կրկնեց Ղայմաղամը։

—Ջունեմ, գիւղումն էլ այնպէս մէկը չկայ, որ կարողանամ վեր առնել... գնանք Հասան-Ղալա, մէկից վեր առնեմ, տամ...։

—Մտիր հալէմ, գարդերից, դէսից դէնից հաւաքիր, մի թոյլ տալ գործը հօտելու...։

—Պիտի աշխատեմ... բայց այն աւազակը տանս, հարէմիս բոլոր հարստութիւնը տարել է. ոչինչ չկայ, չէ թողել... հասկանում ես...։

Բէգօ բէգը կեանքում այսպէս չէր դարտակւել, նրա լեզուն առաջի անգամ „չունեմ“, „չկա“ բառերն արտասանելիս դողում էին և ինքը ամօթից ու կատաղութիւնից շանթի նման բորբոքած ու կարմրած՝ անձի մխն էր ուտում, աչքերից արիւն կրակ էր ցայտում։ Անճարացած մօտեցաւ Դիւլ-փէրիի սնդուկին բայց այն էլ դատարկ գտաւ։

Սեղանից բարձրանալու պէս Ղայմաղամը պաշտօնականի և Բէգօ բէգի հետ դիմեցին Հասան-Ղալա, որտեղ Բէգօն յոյս ունէր փող գտնելով գործը վերջացնել։ Մի ժամ չանցած պօլիցիական պաշտօնականը հեռագրով Արզուրում Ալիին հաղորդեց գործի նշանաւոր մանրամասնութիւնները։ Ալիից մինչև հրաման գալը Բէգօ բէգը իր ծանօթներից վեր առաւ հինգ հարիւր ոսկի և մօտեցաւ Ղայմաղամին։ Քէահիյէի նամակի իսկականի մի պատճէնը գրել, պատրաստել և ծոցն էր դրել Ղայմաղամը։ Հինգ հարիւր ոսկին ստանալու պէս ներկայացաւ պաշտօնականին, որտեղ կանչուեց և մի քանի րոպէ յետո Բէգօ բէգը։

—Բէգ, ասաց քաղցրութեամբ պաշտօնականը, խնդրեմ պատրաստուիր տեսնէք, գնանք Արզուրում. Ալիին ձեզ կանչել է։ Այնտեղ Ղայմաղամ էֆէնդիի հետ ես էլ կպատմեմ բոլորը, ինչ որ կատարել է ձեր տանը Քէահիյէի և յոյս ունեմ, որ ամէն մեղք ձեռք առնել տամ ձեր վնասները ետ բերելու։ Այստեղ են եկել հարիւր յիսուն ձիաւոր և գնում են աւազակին բռնելու, եթէ նրանց ձեռքը չանցնի, Ռուսաց կառավարութիւնը նրան կբռնէ և ձեր տանից տարածները համոզուած եմ, որ կվերադարձնէ։ Էլ սպասելու ժամա-

նակը չէ, պէտք է անձամբ ներկայանալ և պատմել բոլորը Վալիին։

Ղայմաղամը մտաւ առանձնատեղեակը և աչքով կանչեց եւևից Բէգօ բէգին։

Սենեակում մոմը վառեց և ծոցումը դրած Քէարիմի նամակի պատճէնը նրան ցոյց տալուց յետո խոկոյն այրեց։

Նոյն երիկունը պաշտօնականը Վալիին ներկայացրեց Բէգօ-բէգին, որին հրամայեց իսկոյն բանտարկել միջնաբերդի խորքերում։

ԼԸ

ՎԱԼԻԻ ՎՃԻՌՔԸ

Քէարիմի սահմանն անցնելը սարսափ էր տարածել ամէն կողմ և Կարնի ժողովուրդի գլխաւոր խօսակցութեան նիւթ դարձել։ Ծուզուած ամբոխը երբ լսեց, որ Բէգօ բէգը իր տանն է ընդունել այդ աւազակապետին, բորբոքումից քիչ էր մնում, որ մտնի միջնաբերդ և իր ձեռքով դատապարտի չարագործի պաշտպանին։ Ծայտնի բան է, թուրքերը այնքան էլ

հոգս չէին անել. ամէն դառնութիւն կուլ էին տալու Փասէնի և Ալաշկերտի թշւառ հայերն։ Իսկ նրանց համար հոգալու շատ կարիք չկար, նրանց գլխից հարուածը մի շատ անպակաս պէտք է լինեը, որպէս զի աչքերը բանալու անկարող լինէին։

Ծուզումը կատաղութեան փոխուեց, երբ լսեցին Բօյաջի Մարտիրոս քէահի և նրա որդիների մահը։

Ժողովուրդը ամէն կողմ սփռւած վշտակցում էր իր և իր եղբայրների անապահով վիճակը և չունէր ոչ միջոց, ոչ էլ յոյս ազատւելու այդ սոսկալի կացութիւնից։

Թուրքերի կառավարութեան ծպտեալ ոստիկանները ժողովրդի խօսակցութիւնները և արդար զայրոյթը տեղեկացնում էին Վալիին։ Ամէնքը մի կերպ նկարագրում էին անցքերի մանրամասնութիւնները և հաւատացած էին, որ Բէգօ բէգը ընկերակցել էր չարագործին նրա ամէն քայլում։

Հասարակաց դատախազը քննիչի հետ գնաց չարագործութեան կատարւած տեղը և ամէն մանրամասնութիւնները քննելուց յետո կայացրին արձանագրութիւնը, որտեղ մեղադրւում էր Բէգօ բէգը, որպէս ընկեր փախստական աւազակապետի։

Վալին առանձնապէս հետևում էր այդ գործին և կարգալով դատախազի պահանջը՝ նկատել էր, որ նահանգական դատարանը մի թեթև պատիժ միայն սահմանելով աւարտելու էր Բէգօ բէգի գործը առաւելն երկու կամ երեք տարի բանտարկութեամբ, ուստի ինքն անձամբ ուզեց ձեռնամուխ լինել գործին և Բէգօ բէգի պատերազմի ընթացքում խալիֆի դէմ կա-

տարած դաւաճանութեան արդար պատիժը հատուցանել: Իսկոյն դիմեց Սադրազամին (նախարարին) խընդրելով, որ Բէգօ բէգի գործի վճիռը դատարաններից հանելով իրեն յանձնեն, առարկելով որ սաստիկ յուզուած ժողովրդին խաղաղեցնելու համար պէտք էր շուտ և խիստ պատժել չարագործին: Նամանաւանդ Ռուսաց Կօնսուլը ստիպում էր չարագործին բռնելու համար պատժել նրան հիւրասիրողներին:

Սուլթանը իսկոյն Իրադէ (հրովարտակն) ուղարկեց վալիին, որ Բէգօ բէգի գործը վճռահատէ, ինչպէս որ յարմար տեսնի:

Մինչ պօլիցիականները և զինուորականները խուզարկում էին Փաշէնն ու Ալաշկերտը Քեարիմին գտնելու յոյսով, Վալին քննիչի և դատախազի հետ մանրամասն ուսումնասիրում էր Սուլթանի հրատարակած օրէնքները, որի զօրութեամբ կարողանար մի արժանաւոր պատիժ սահմանել այն սիւննիին, որ Խալիֆից ստացած հրացանն ու գնդակը բանեցրել էր Խալիֆի զօրքերի վրա թշնամու բանակից:

Օրից օր Վալին խստացնում էր Բէգօ բէգի դրութիւնը բանտում. ոչ ոք չէր կարողանում յանդգնել նրան այցելել, փաստաբանները չէին յանձն առնում նրա դատը պաշտպանել, նկատելով վալիի սրտմտութիւնն ու զայրոյթը:

Բէգը արդէն յուսահատուել էր:

Բէգօ բէգի հետ այն օրը քաղաք մտաւ Մըրդեսին և ուղղակի գնաց այն տունը իջաւ, որը զարդարել էր բէգից ստացած նուէրներով: Տան տէրը մի նեխուած թուրք էր, որ երազում էր ծախել տունը և

մեկնել դէպի հարաւ, տաք, բարեխէց երկիրներ:

Մըրդեսին դեռ չհանգստացած՝ նա մտաւ նրա սենեակը դանդաղ քայլերով և մի կողմը նստելով ասաց.

—Հա՛ն, Մըրդեսի՛, այս անգամ փող շատ բերի՞ր, որ տունս քեզ ծախեմ և ինքս ճանապարհ ընկնեմ...:

—Հայդէ աղա՛, փող չկա, չէ մնացել...: Որ կողմը գնացի, մի այնպէս եղաւ բաժին ձեռք չկարողացա բերել:

—Լա՛ւ, լա՛ւ, ես քեզ ճանաչում եմ, որ ուզենաս այծի եղջիւրից իւղ կքամես:

—Հարիւր յիսուն ոսկիս երկու հարիւր շինեցի, եթէ ուզում ես, գնա առաւօտ Ղադիի մօտ, տան թըղթերը դարձրու ինձ վրա և ստացիր երկու հարիւր ոսկի:

—Ա՜խ, ա՛խ, ա՛խ... ժամանակին Փատրմաջին հազար ոսկի տուեց չառի, Թիւրքջի բաշին հազար երկու հարիւր ոսկի էր ուղարկել, ես ուղարկեցի, կուսի տարին Ալէքի տղան քսան հազար Ռուսի մանէթ համբեց մերժեցի, հիմի՛, հիմի՛ ինձ առաջարկում ես դու երկու հարիւր ոսկի...:

—Դու գիտես, ես հարուստ չեմ նրանց պէս, իսկ այժմ Էրզրումում երկու հարիւր ոսկով հաւանածս տները կգնեմ...:

—Հինգ հարիւր ոսկի որ տուել էի, դա իմ տան գնի իսկական չորս բաժնից մէկն է, հիմի որ շինել տաս, երկու հարիւր ոսկի ծախսես գլուխ չի գալ:

—Լաւ է, խո չես շինել տուել, չես ծախսել այդքան փողը...:

—Պատկեւիչը երբ քաղաքը դատարկեց, այս տները մեզի պահ տւեց մեր դրացին, Սայան Մղդեսի Սուքիասը, գնաց ռուսի մէջ, էլ ետ չեկաւ։

—Տեսնում ես, ձրի ստացել ես, ձրի էլ տուր, երկու հարիւր ոսկին էլ քեզ ճանապարհածախս։

—Հանաքը թո՛ղ, թէ ուզում ես գնել, գին տուր։

—Աւել փող չունեմ։

—Ձորս հարիւր ոսկի տուր։

—Ձունեմ։

—Ներեք հարիւր տուր։

—Ձունեմ։

—Մի բան աւելացուր։

—Երկու հարիւր ոսկի և ծախսերը, ուզում ես —տուր։

—Տւի գնաց, ասաց թուրքը շարժելով Մղդեսու թևը, խէրը տես։ Դու Շրուսազէմից Էրզուրում եկար, այսպէս տուն գտար, Ալլահը մեծ է, ես էլ Էրզուրումից Շամ կերթամ, սրա կէսու չափ էլ է կը գտնեմ։

Մղդեսին հեռևեալ օրը Ղադիի առաջ դուրս գալով ստացաւ տան թղթերը և վճարեց երկու հարիւր ոսկին։

Տուն վերադառնալիս գտաւ Բէգօ բէգի եղբօրը Սագօին և մեծ որդուն Փօլադին, որոնք իր գարձին էին սպասում։ Սագօն ու Փօլադը յայտնեցին իրենց գալու պատճառը և խնդրեցին, որ նրանց օգնէ Մըղդեսին, ճանապարհները ցոյց տա, որ կարողանան մի կերպ ազատել բէգին։

—Սագօ բէգ, ասաց ծանրութեամբ Մղդեսին, դու ինքդ տեսնում ես, որ ես օտարական եմ այս երկրում, ինձ անծանօթ է քաղաքը, բնակութիւնը և սովորութիւնները։ Ինչքան որ ես կարողանամ գործել այնքան էլ դուք կարող էք անել, դեռ աւել, քանի որ դուք Իսլամ էք, իսկ ես Հայ։ Ինքներդ դիմեցէք Փաշային, նրա ծառայողներին, ձեզ ճանապարհները ցոյց կտան։

—Ո՛չ, Մղդեսի, մենք այդպիսի գործերում բոլորովին չենք եղել, դուք մեզ պիտի ցոյց տաք դրբանց ճանապարհները։ Բէգը ասաց մեզ, որ գանք ձեզ գտնենք և դուք մեզ ճանապարհը ցոյց տաք։

—Փօլադ բէգ, ասաց Մղդեսին, գիտէք թէ Հայերի վրա երնէ աչքով են մտիկ տալիս Վալի Փաշան և ծառայողները, ինձանից ձեզ վնաս կհասնի, եթէ դուք ինձ հետ ման գաք, իմ պատճառով ձեզ վնասելուց յետո ինձ էլ կսկսեն հալածել, ես ձեզ օգնել չեմ կարող...

—Մենք ձեզ հետ ոչ ման կգանք, ոչ կտեսնենք և ո՛չ քու անունը կտանք մի տեղ, ասաց Փօլադը, դու միայն ծածուկ մեզ ասա՛ ինչ անենք, ո՛ւմ դիմենք և որ կողմը գնանք, մնացեալը առանց քեզ մենք կկատարենք...

—Շար չունեմ ձեզ չօգնելու, բայց չգիտէք, հիմի օրէնքները խիստ են, գատաւորներն անզուլթ և անթիւ լրտեսներն անխիղճ, շատ զգուշութիւն է հարկաւոր։

—Քու հրամանից դուրս չենք գալ...։

Մղդեսին նրանց համար գտաւ այնպիսի մար

դիկ, որոնք ուղղակի յարաբերութեան մէջ էին Ալի Փաշայի հետ։ Երկու երեք ամիս ձգձգուեց գործը և Ալին իր վճիռը տալուց առաջ դեռ ուզում էր տանջել։ Բէգօ բէգը, որ կաշառքով ամենաերևելի փաշաներին գլուել էր, ամենաաններելի յանցանքները բաշխել տուել, անհնարինը կարելիացրել, ամէն օր կրկնում էր իր որդուն ու եղբօրը.

—Գտէք փաշայի այն մտերիմ մարդուն, որի ձեռքով կարելի է կաշառել նրան։

Իսկ այդպիսի մի մարդ չունէր այն ժամանակւա Ալին։

Մինչ այս մարդու հետ մտերմանալը, մինչ այն պաշտօնէի հետ ծանօթանալը, մինչ մտերիմների հետ նիստ ու կաց անելը, դատարանների և բանտի ծառայողների սիրտը գրաւելը, արդէն Բէգօ բէգի կենդանիները և կանանոցում գտնուած բոլոր թանկագին զարդերը ծախուած, գրաւի դրուած, հազարի չափ ոսկու փոխարինուած ու ծախսուած էին։ Անդադար դունից դուռ ման էին գալիս Բէգօյի հարազատներն և իրանց բէգի ազատութեան համար ոչինչ չէին խնայում։

Այդ երկար ժամանակի ընթացքում Գիւլ-փէրին տասն անգամից աւել քաղաք էր եկել և իւր տնտեսութեամբ շահած ու ձեռք բերած բոլոր առարկաները զոհել ու փչացրել էր իրեն երեսից գցած ամուսնի և սիրականի ազատութեան համար և ոչինչ չէր շահել։ Վերջին անգամ նա նուէր էր բերել Փաշայի խանումին մի մեծ աննման ընտիր ծաղիկներով գորգ, որի վրա աշխատել էր ինքը երեսուն քրդուհիների օգնութեամբ վեց ամսից աւել, բայց վիլայէթի մեծ խանումը չէր

ընդունել։

Այս միջոցին Մղդեսիի վերջին խորհուրդն էր մնացել կատարելու, այն փորձն էլ արին։ Բէգի բոլոր կալուածները գրաւ դրին Շէյթան Պապօյենց մօտ և վեր առան երեք հազար օսմանցու լիրա։ Այդ գումարի վրա աւելացրին մի ընտիր մուշտուկ աստեղաքարից պատրաստուած, զարդարուած երեսուն ընտիր շողակներով և մի ոսկի ծխախոտի տուփ, նոյնպէս զարդարուած թանկագին քարերով, և Փօլադն ու Սադօն ամէն վտանգը աչքերը առած ներկայացրին Ալի փաշային։

Փաշան ընդունեց։

Ուրախութիւնը անչափ էր և յոյս ունէին որ շուտով Բէգօ բէգն ազատուելու էր։

Հետևեալ օրը Ալին վիլայէթի ժողովում հրաւիրեց բանտից Բէգօյին և իրեն նուէրները ներկայացնողներին։ Ժողովի առաջ երկար բարակ քննութիւնից յետո, Ալին ժողովականներին յայտնեց և իրեն բերուած նուէրները ներկայացրեց։ Բէգօ բէգը, որդին և եղբայրը սկզբումը ստիպուեցան լռելու և մեղքը վըրանները չբարդելու համար վերջը ուրացան իրենց արարքը։ Ալին առաջարկեց ետ տանել նուէրները և երբ նրանք չհամաձայնեցան, Ալին կայացրեց իր վճիռը.

«Բէգօ բէգին հարիւր մէկ տարի բանտարկութիւն Արզրումի միջնաբերդում, երեք հազար լիրան Օսմանեան կառավարութեան սնդուկին, (որ շատ կարիքներ ունէր հոգալու), իսկ մուշտուկն ու տուփը Ալիին գործածելու՝ չարագործին արժանաւորապէս

պատժած լինելու յիշատակի համար»։

ԼԶ

ՌՈՍՏՈՄ ԲԷԳԻ Վ.ԲԱՆՆԵՐՈՒՄ

Ութն օր Արշակը լսեց Ջաւահիրի, Զելխայի պատմութիւնները և այն բոլոր անցքերը, որոնք պատահել էին նրա ձերբակալելուց յետո։ Քրդուհին արտասուալի աչքերով, ողբագին ձայնով նկարագրեց մանրամասնութեամբ այն բոլոր յիշատակներն, որոնք անջնջելի կերպով դրոշմուել էին իւր սրտի և ուղեղի ծալքերի վրա։ Այդ արկածները պատմելիս քրդուհին այնքան զգածուում էր, այնքան բորբոքւում, որ լսողը երևակայութեամբ տեսնում էր այն բոլոր սոսկալի տեսարանները, որտեղ տանջուղի իրական դերերն էին կատարել այդ թշուառ կինները։ Զելխային երբեմն երբեմն լսում էին Ռոստոմ բէգն և նրա աղջիկ Շաղուէը։ Վերջինս յաճախները կամ լաւ չէմբռնաճները կրկնել էր տալիս, երբ առանձին էր մնում Զելխայի հետ...։

Աննախանձելի դրութեան մէջ էր գտնուում Զելխան։

Արշակի մտքում այդ եօթը օրւա մէջ վերա-

նորոգուեցան Ղէլաթի գիւղի բոլոր յիշատակները։ Մինչ Զելխան նրան պատմում էր մանրոյն թախծալի դէմքով հին հին յիշատակները, ինչ եղանակով որ նա նկարագրել էր մի ժամանակ խրամատում իր տանջանքները Բէգօ բէգի ճանկերում, Արշակը մտքումը կրկնում էր Զելխայի այն բոլոր բառերն, որոնք քրդուհին մրմնջացել էր նրա ականջի տակ։ Այն ժամանակ նա հակուած էր Զելխայի խօսքերին ուրիշ նշանակութիւն տալ կամ պարտաւորուած էր ուրիշ կերպ հասկանալ, քանի որ նրա սիրտը ալեծփուած էր Գոհարի սիրով։ Այժմ նա լուրջ կերպով քննում էր թշուառ կնոջ հոգեկան տանջանքները։ Արշակը երկար մտածելուց յետո, եկաւ այն համոզման, որ քրդուհիի սրտի խորքերում մի ուրիշ կրակ էր բորբոքւում, այնտեղ սէր էր բռնկել և մրկում էր...։

Մինչ այս միտքը շրջում էր Արշակի գլխում, մինչ նա ուզում էր ինքն իրեն համոզել, որ Զելխան իրեն խրամատի տեսութիւններից սկսած սիրել էր և այդ բոլոր զոհողութիւնները այն սիրո հետևանքն էր, նրա աչքերում ներկայանում էր քրդուհին դիւցազնուհու պատկերով, Զելխայի տխրագին աչքերը, թախծալի դէմքը կորատում էին Արշակի սիրտը և թշուառ երիտասարդը լեռնական դստեր ճակատի վրա կարդում էր միայն նորա սիրաբորբոք տանջանքը...։ Արշակը քանի քանի անգամ աշխատեց խօսակցութիւնը հասցնելու իրենց խրամատում ունեցած տեսակցութիւններին, բայց ճարպիկ Զելխան կարմրած և շըփոթուած մի տեսուր արկած սկսեց նկարագրել իրենց կեանքից և թոյլ չտուեց Արշակին էլ տեղ բորբոքե-

լու իր մորմոքած սրտի ցաւը: Բայց այս պարագան Արշակի մտածութեան էական կէտը դարձաւ, մինչեց նրա գլխում և նա չէր կարողանում ուրիշ նիւթի մասին խորհել:

Մի առաւօտ Արշակը վազ մտաւ Զէլխայի վերանը, երբ քրդուհին, թէև վաղ վեր կացած հագուած էր, բայց թուլութիւն զգալով բազմոցի վրա պառկել էր բարձերին յենած: Արշակը նկատեց, որ քրդուհին տակաւ էր և թևը բռնելով՝ ասաց.

—Զէլխա, տաքութիւն ունե՞ս:

—Ոչինչ, կանցնի, ասաց քրդուհին, մեղմօրէն դաստակը ազատելով Արշակի ափից:

—Զէլխա, ես վաղուց մտածում եմ մի բանի մասին...:

Հկարողացաւ շարունակել, նրա լեզուն բռնեց և կզակը դողդողալուց ընդհատուեց բառերը:

Զէլխան կարմրեց և երկու ձեռքերով երեսը ծածկեց չմատնելու համար: Այս միջոցին Շաղութը եկաւ և Արշակին տեսնելով ասաց.

—Նզբայը, տաքցրած կաթը այստեղ բերե՞մ...:

—Բե՛ր, ասաց գլուխը շարժելով Արշակը:

Շաղութն հեռանալուց յետոյ Արշակը շարունակեց.

—Զէլխա, դու այնքան հոգեկան ոյժ ցոյց տուիր այս եօթը տարում, որ չպիտի սարկանաս կրքերիդ: Ես էի և կամ միշտ քեզ համար որպէս հարազատ եղբայր: Մենք կապուած ենք աւելի քան եղբայրական սիրով և դու չպիտի հեռանաս այս տանից: Ես, Զէլխա, այն ժամանակ չէի կարող քեզ որևէ

առաջարկ անել, քանի որ դու Բէգօ բէգի ճիրաններում էիր: Բայց այժմ ազատ ես. կամենաս կանչել տամ քո լեռնականին և տալիս նրա հետ անկախ, ինչպէս ցանկանաս: Կուզե՞ս, մեր Մարտիկի հետ ամուսնացիր, դու գիտես, որ նա քեզ համար գլուխը զոհելու պատրաստ է: Այսօր քո վիճակը պիտի որոշուի:

—Արշակ, ես քու գերիդ եմ, վարուիր ինձ հետ, ինչպէս որ կամենաս, ես երջանիկ կլինեմ, աշխարհի ամենաերջանիկն, երբ քո յարկի տակ մէջ թէ որպէս եղբօրդ կին, այլ որպէս ազախին ապրելու անպամ բազդն ունենամ...:

—Ազաչում եմ, ասա՛ ինձ, ասա, Մարտիկին սիրո՞ւմ ես...:

—Արշակ, Արշակ, մի՛ կեղեքել թօքերս, սրտիս խորքերի գաղտնիքն էլ չեմ կարող ծածկել...

—Ա՛խ, Զէլխա ջան, դո՛ւ, դո՛ւ տանջեցիր ինձ հետ եօթը տարի և իմ բազդաւորութեան համար անձդ չխնայեցիր, քեզ զոհեցիր իմ երջանկութեան համար...: Դու անգին ես ինձ համար. Մարտիկը պիտի բազդաւորի քո խնամքի տակ...:

—Դա՛ւ, ասաց Արշակը շարունակելով, դու իմ քոյրս ես, այս տան տիկինն և մեր հարազատը: Ջահիերի և քո մէջ զանազանութիւն չկայ, քանի որ դու էլ մեզ նոր կեանք ներշնչեցիր: Զէլխա, Զէլխա, դու որ առանց յոյսի, առանց ակնկալութեան, առանց քննական բարի զգացմունքով, ընկերուհուդ ու ինձ տանջանքներից և վշտերից ազատելու համար զոհել պատրաստ էիր, մի՞թէ մենք մինչև գերեզմանի դուռը

պիտի կարողանանք մի այդպիսի փոխադարձ զոհողութեամբ ազատուել այդ պարտականութիւնից...:

—Բաւական է, բաւական է, Արշակ, ձեզ համար, ձեզ բաղձանքի հասցնելու համար, ես կատարեցի պարտականութիւնս: Պարտականութիւնս էլ ո՛չ թէ զգալով էի կատարում, այլ սիրում էի ձեզ և չէի ուզում, որ դուք տուչորւեք և չհասնէք բաղձալի նպատակին: Թշւառը թշւառին օգնելիս իր վշտերը թեթևացած է զգում և ես ձեզ համար գեգերելիս՝ մոռանում էի իմ տանջանքները:

Մայիսի գալարներն երբ հրաշագեղ կերպով զարդարում են Ջրաբաշխ սարերի ձորերը, լանջքերն ու փէշերն, երբ անուշաբոյր գոյնզգոյն ծաղիկներով զարդարւում են արօտատեղերն, երբ քքալի ցրտի, սառույցի և սառնամանիքի հետ անհետանում է ձիւնի սպիտակ սաւանը սարահարթերի և բարձրադաշտերի վրայից, երբ հեռանում են ազէհները, գայլերը, շընագայլերն և արջերն այդ վայրերից, քաղցրախօս ծիծառների և բազմաթիւ թռչնիկների երամների հետ Սասունի տաք հովիտներից, Ռոստոմ բէգը, իր բազմաթիւ խաշներն ու հօտերն առաջը խառնած գալիս է Հայրենի կեդրօնական աշխարհի բարձունքների վրա բաց անելու իր վրանները: Անթիւ խաշների սիւրինները, կովերի և եզների նախիրները, ձիերի իլխինները սփռւում են ջրառատ բարձունքի ամէն կող-

մը և մեռած բնութիւնը կենդանացնում իրենց ձայներովը և շարժուձեւերովը...:

Ուրախ են հովիւները, ուրախ են հալս աղջիկները, ուրախ են բոլոր այն բան անողները, որոնց կառավարում է խելացի Ռոստոմ բէգը, երջանիկ են ամէնքը, և նրանց բաղդաւորութեան չափ չկայ: Նրանց բոլորի շահն ընդհանրական է և սգում են ամէնքը, եթէ իրանցից մէկը վիշտ ունենայ: Ոդջ սարերում տարածւել է Ռոստոմ բէգի և նրա հովիւների բարեբաղդ վիճակի հռչակը, ամէնքը գովում են նրա կարգը, սարքը և կառավարութիւնը: Այն բոլոր հովիւները, որոնք որ և է կերպով հալածւում կամ հարստահարւում են իրենց տէրերից, թողնում են ամէն բան և մահակները ձեռքերը դիմում են Ռոստոմ բէգի վրանը օգնութիւն և պաշտպանութիւն խնդրելու: Ով մտնում է բէգի իշխանութեան տակ, նա զգում է իր բաղդաւորութիւնը: Շատերն արդէն Ռոստոմ բէգի վաններում հաստատել էին իրենց բնակութիւնը. Մղեսի Մկրտա Մկրտիչը կամ Արշակի արիասիրտ եղբայրը՝ Գուրգէնը՝ Կարինում բնակութիւն էր հաստատել և սեղանաւորութեամբ պարապում: Ռոստոմ բէգը այնպէս էր կարգադրել, որ փեսան առժամանակ իր աղջկա Նազուժի հետ ապրի վալեի քթի տակը: Գուրգէնի և Նազուժի վիշտը անչափ էր, որ հեռու էին ապրում իրենց հարազատներից, չունէին և չէին կարողանում վայելել լեռնական կեանքի ազատութիւնը: Բայց այս ցաւը մասամբ մոռացնում էր իրենց փոքրիկ Վարդանիկը:

Բէգօ բէգի վերջին պարտքի պատճառով նրա

տունը, տեղը, կալքերը, կալսածները, տնական բոլոր կարասիները աճուրդով ծախեցան և նրա պարտատերներին լիովին բաւականութիւն տուեցաւ։ Սադօ բէգը իր եղբօր որդուն Փօլադ բէգին և նրա մօրը Գիւլփէրիին որքան որ խնդրեց, թէ իրենց հնաւանդ սովորութեան համաձայն, մի տասին մանդան քրդական համայնքում մուրալու, նոր կարողութիւն ձեռք բերելու համար, նոքա չհամաձայնեցին։ Փօլադ բէգը չզիջաւ այդ առաջարկութեան, թէև դա իրենց մէջ ընդունուած ձև էր։ Այդ պատճառով մեծ գժտութիւն ծագեցաւ Սադօյի և Փօլադի մէջ և նոքա բաժանուեցին։ Սադօն ինքը գիտէր, որ միայն իրեն մեծ օգնութիւն չէր անել համայնքը։ Բէգօ բէգի խաթեր համար Փօլադին պատրաստ էին առատաձեռն ամէնքը օգնելու, իսկ Փօլադը մերժում էր այդ ողորմութիւնը։

Անճարացած Սադօն մենակ հաւաքեց, բայց հազիւ կարողացաւ լիսուն գլուխ եզ, կով, արջառ, երինջ և երկու հարիւր գլուխ կճան ոչխար և այծ ձեռք բերել։ Այդ կարողութեամբ շուտով էլի բէգի դիրք ստանալը դժուար էր, բայց եթէ Փօլադն երթար խո՞ հազարից աւել ոչխար կարող էր ժողովել։

Գիւլ-փէրին, իր երեք որդիքը և մի աղջիկը Զուլօն առանձին էին ապրում երկու աղախինների հետ միասին, որոնց բերել էր Գիւլ-փէրին հայրական տանից։ Բէգօ բէգի միւս կիներն ու հարճերը մնացին Սադօյի ձեռքը։

Փօլադ բէգը իր երկու եղբայրների հետ երեք տարի զանազան քուրդ բէգերի մօտ հովութիւն արաւ, բայց ամէն տեղ նրանց զրկեցին, ամէն տեղ

չվճարեցին իրենց խոստացած վարձատրութիւնը։

— Գիւլլի, ասաց մի օր Փօլադը իր մօրն, ես ուզում եմ գնալ Ռոստոմ բէգի մօտ, նրան շատ բարի և արդար մարդ են համարում։

— Ես վաղուց էի մտածել այդ բանը, ասաց Գիւլլին և իրենց վրաններն ու կահկարասիները բեռնաւորած իրենց եզների և գրաստների վրա՝ դիմեցին դէպի Ռոստոմ բէգի վրանները։ Բէգօ բէգի բանտարկութիւնից հինգ տարի էր անցել այդ ժամանակ։ Փօլադը և Գիւլլին ուղղակի ներկայացան Ռոստոմ բէգին և խնդրեցին, որ իրենց վարձէ հովութեան և կամենատնտեսութեան ծառայութիւնների համար։ Ռոստոմ բէգը նրանց ճանաչեց։

— Ես ծառա չեմ վարձում, ասաց Ռոստոմ բէգը, բայց հովիւ ընկերների պէտք շատ ունեմ։ Քանի եղբայր էք։

— Մենք եղբայր ենք, մայրս, քոյրս և երկու էլ աղախին ունենք։

— Լաւ, ես ձեզ կտամ երկու եղբօրդ մի սիւրի ոչխար՝ այն պայմանով, որ ուտէք, խմէք ձեր հաշւով, ոչխարը պաշտպանէք և ոչխարը ծախելուց յետո մայր գումարն ինձ վերադարձնէք, իսկ օգուտը երեք մաս անէք, երկուսը երկու եղբօրդ և մինը ինձ իմ դրամագլխիս շահ։ Համաձա՞յն էք։

— Բէգ, դուք ծիծաղում էք մեզ վրա, եզած շահի տասնից մէկն էլ որ տաք, մենք գոհ ենք։

— Ո՛չ, դուք ինձ չէք ճանաչում, ես ոչ ոքի չեմ զրկել, ամէն մարդ ստանում է մեզանում իր աշխատութեան մասը։ Իսկ մօրդ և փոքր եղբօրդ կյանձ-

նեմ երկու Հարիւր կթան ոչխար, թող կթեն, պանիր մերեն, բուրդը խուզեն, գառները մեծացնեն, դա ընեալ նոյն պայմանով, երկուսը ձեզ, մէկն ինձ։

—Բայց մարդու Հայրն անգամ այդ պայմանով իրեն որդոցը չի յանձնել իր Հօտերը, դուք Հօրից աւել գթառատ աչքով էք նայում ձեր Հովիւների վրա…։

Որովհետև ես էլ քեզ նման Հովիւ եմ եղել ինձ էլ են զրկել իմ արդար իրաւունքներից, իմ աշխատութեան վարձքից, իմ ճակատի քրտինքով վաստակածը փչացրել, կերել են տէրերս և ինձ իմ դատածից այնքան չեն տւել, որ փորս կշտացնեմ, մերկութիւնս ծածկեմ, ուր մնաց ընտանիքիս և զաւակներիս պէտքերը Հոգայի։ Այն բոլոր դառնութիւնները զգալով ես վճռել եմ, իմ բոլոր ծառայողների և ոչ մէկի իրաւունքից մի կաթիլ կաթն, մի Հատ ցորեն և մի մազ բուրդ անգամ չխլրացնել։ Բայց ես գնում եմ նրանց վզին մեծ մեծ պարտականութիւններ։ Նախ պէտք է իմանաս և ապա մտնես իմ Հովանաւորութեան տակ։

—Խնդրեմ, յայտնեցէք, ես կանխապէս յայտնում եմ ձեզ, որ ընդունում եմ ձեր բոլոր պայմանները։

—Նախ պէտք է իմանաս, որ ով որ իմ չադիրների կողքին բարձրացնում է իր վրանը, պէտք է Հնազանդի այն սովորութիւններին, ինչ որ կատարւում է մեզանում։ Մեր ծերերին և պառաւներին, կաղերին և կոյրերին, Հիւանդներին և ցաւագարներին առողջներն ու աշխատաւորները տալիս են բաժին,

այնպէս որ նրանք ոչնչի կարօտութիւն պէտք չէ զգան։

—Այդ շատ լաւ է, ես ուրախութեամբ կտամ նրանց բաժինը։

—Եթէ մեր կենդանիների մէջ ցաւ ընկնի, կորուստը Հաւասարապէս բոլորի վրա է բաժանւում և ամէնքը օգնելով կորստի տէրոջ չեն թողնում, որ նրա վիճակը դառնանա։

—Այդ մեզանում էլ կա, դրանով բոլորի վիճակը ապաՀովացնում էք։

—Ձեզանում դանից դուռ մուրալու են կոստի տէրերը, մենք մեր կամքովը Հաւաքում ենք և տալիս։ Հա՛, դու կարգւա՞ծ ես։

—Ո՛չ, ասաց կարմրելով Փօլադը։

—Աղապ մարդ մենք չունենք, պէտք է ամէնքը կարգւած լինեն։

—Բէգ, պատասխանեց Գիւլին, նշանած է որդիս և աշնանը եթէ գործերս յաջող գնա, նրա նշանածին կբերեմ Գէօլայից, ռուսի միջից։

—Ինչի՞ Հիմի չես բերում։

—Կարիքներ շատ կա, մեծ օջախի աղջիկ է, մեծ նւէրներ պէտք է տանել…։

—Մեր մէջ ով որ կարգւում է, նա նեղութիւն չի քաշել, նրան ինչքան որ կարիք կա մենք տալիս ենք, առանց ետ ստանալու պայմանով։ Դու, խմնում շուտ պատրաստութիւն տես, ինչ որ Հարկաւոր է, ստացիր ինձանից, գնա Հարսիդ բեր, միւս որդուդ էլ կորգիր, նա էլ տասնութ տարեկան կլինի։

—Աստուած քու էլ որդիքդ քեզ բաշխէ, ես երկու քույր եմ բերելու նրանց երկու եղբօրը։

—Հա՛, մեզանում ոչ ոք իրաւունք չունի երկու կնիկ պահելու, ով որ երկու կնիկ առնէ, նրան դուրս ենք անում մեր միջից, ասաց Ռոստոմ բէգը և աչքերը յառեց Փօլադի երեսին։

—Ես համաձայն եմ, ասաց անկեղծ սրտով Փօլադը, որ բազմակնութեան սոսկալի աղէտները անձամբ տեսել, զգացել էր և թշուառ մօրը հետ վշտակցութեամբ անցկացրել իր կեանքը, ես առանց ձեր այդ առաջարկին էլ վճռել էի միայն մի կին ունենալ մինչ ի մահ։

—Մեզանում երկու կին թոյլատրւում է միայն այն դէպքում, երբ առաջին կինը հիւանդ է, կամ անկարող՝ որդիներ ծնելու։

—Այդ դէպքում էլ ես չեմ ցանկանել երկու կին առնելու, ասաց հառաչելով Փօլադը։

—Ուրիշ պայման չունեմ. ուր գնամ, հետս գալու էք, ում հետ կուեմ առաջ ընկնելու էք զինուած, սովորական կարգերի համաձայն։

—Մենք պատրաստ ենք զոհել մեր անձը, եթէ դուք հրաման անէք, ասացին երկու եղբայրները միաձայն։

—Ուրիշ ասելիք չունեմ, գնացէք և ձեր վրանը բարձրացրէք, մատով ցոյց տալով շարունակեց Ռոստոմ բէգը, այն երեք չադիրների մօտ. ես կը կարգադրեմ, որ խոստացածներս ձեզ յանձնեն։

Նոքա դուրս գնացին։ Գիւղի որդիքն առաջը խառնած՝ գնում էր Ռոստոմ բէգի ցոյց տուած կողմը՝ Ճանապարհին ասաց.

—Որդիք, ասում էին՝ սա Եզիդի է, Փլահ է,

քեաֆիր է. բայց ինչ ուզում են ասեն, սա Աստծու սիրած մարդն է.... սրա վրանի շուրջը խաղաղ կարող ենք ապրել...։

—Վատակի երեք բաժնից երկուսը ո՞վ է իմացել վարձք տալ մշակին, ասաց զարմացած Ջաւադ բէգը, Փօլադի երկրորդ եղբայրը։

Մինչ նրանք գնում էին, եաւնսերից կանչեցին Փօլադին։ Փօլադը ետ դարձաւ և կրկին մտաւ Ռոստոմ բէգի վրանը։

—Փօլադ բէգ, մոռացա քեզ հարցնել ձեր հօր վիճակը, նա ի՞նչ եղաւ, ո՞րտեղ է. վաղուց է նրան չենք տեսել։

—Բէգ, ասաց, խաղաղած սիրտս մի՛ վրդովէք, մոռացէք նրան, նա Արզրումի բանտում քաշում է իր յանցանքների արդար պատիժը։ Այդ տանջանքները տեսնելով՝ Արդարադատը գուցէ ների նրան և այն կեանքում թեթեւացնէ նրա դատավճիռը։

ՎԵՐՋ

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԵՐԸ ԾԱԽՈՒՈՒՄ ԵՆ

Վ Ի Պ Ա Կ Ա Ն

ՍԱՄՍՈՆ, *Թրքահայերի կեանքից, երկրորդ տպագրութիւն Երկու հատոր, իւրաքանչիւրի գինն է* 1 ր. — 5 գռ.
Ընտիր թղթի վրա 2 *րուբլի — կամ* 10 ղռ.

ԽԵԹ - ԿԱՐԱՊԵՏ. Թրքահայ. կեանքից „ 1 ր. 5 „
ՔՈԹ - ԵՂԻԿ „ „ 30 կ. 30 շհ.
ՑԽՆՈՑ „ „ „ 30 կ. 30 շհ.
ՃԱՌԱՆԳՆԵՐ „ „ „ 30 կ. 30 շհ.
ԲԼՐՍԱԻ ԱՌԱՔԵԼԸ „ „ „ 25 կ. 25 „
ԹՈԽԻ ՈՍՄԲ ՋԻՆԵՐ „ „ „ 10 կ. 10 „
ՎԻՔԵՐԼԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ „ „ 1 ր. 5 գռ.
Ընտիր թղթի վրա 2 *րուբլի — կամ* 10 *ղռան*

ՋԱԽՐԱՀԻՐ 77-8 *թ. Ռուս Թուրք. կռւից արկած* 1 ր. 5 գռ.
Ընտիր թղթի վրա 2 *րուբլի — կամ* 10 *ղռան*

ՊԱՏԿԵՐՆԵՐ *Տասը Պատ. թրքահայերի կեանքից* 1 ր. 5 գռ.
Ընտիր թղթի վրա 2 ր. 10 գռ.

ՎԻՊԱԿՆԵՐ *Երկու վէպ. Թրքահայերի կեանքից* 1 ր. 5 գռ.
Ընտիր թղթի վրա 2 *ր. — կամ* 10 ղռ.

Ո Ղ Բ Ե Ր Գ Ա Կ Ա Ն

ՑՈԻՑԱՆ *Երեք արարուած. Թրքահայ կեան.* 1 ր. 5 գռ.
ՍԱՐԻԱՓ *Հինգ* „ „ „ 30 կ. 30 շհ.

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԽԱԼԻՖԱԹ *Պատմական տեսութիւն.* 30 կ. 30 „

Դիմել Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցը և Կովկասի քաղաքների հայ գրավաճառներին։
Գրավաճառները կարող են դիմել նոյնպէս.

TAURIS (Perse) ATRPET

Որոնց կը լինի սովորական 20 % զիջումն։

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ժ. ՀԱՏՈՐ

ԻՐԱՆԻ ՊԱՏՈՒՀԱՍՆԵՐԸ

21154
21155

891.99